55. Նշել այն դարձվածքների համարները, որոնց բացատրությունները ճիշտ են.
- 1.ձյուն գալ զլխին-զլխարկ չդնել, 2.մուկ դառնալ-խեղճանալ, 3.շան նման-  
շարքաշաբար, 4.ոտքի ելնել-ապստամբել, 5.սառը ջուր լցնել-անտարբեր լինել,  
6.ոռորիկոնն անցնել-մեծանալ:
56. Նշել այն համարը, որում դարձվածքները նշանակում է **բարձրություն.**
- 1.միջնադար, 2.դարեղար, 3.դարավանդ, 4.դարամուտ, 5.ոսկեղար:

**57. Նախադասություններից քանիսո՞ւմ ընդգծված բառերը փոխաբերական իմաստով գործածված չեն:**

Լուր հեկեկանքը ալեկոծում էր նրանց, և <<Արտասուրի աղբյուրը>> յուր տիտուր հառաջանաներով ձայնակից էր լինում նրանց դաշը հառաջանքներին:

Այդ միտքը վրդովեցնում էր նրան և սիրտը լցնում մի խոլ տարակուսանքով:

Բարկությունը խեղդում էր նրան, եթե մտարերում էր վաղեմի ժամանակները:

Բոլոր դրսների պատուհանները փակ էին և պատված ու պաստառներով:

**58. Նախադասություններից քանիսո՞ւմ չկա փոխաբերական իմաստով գործածված բառ:**

Ամենքը շտապում էին մահամերձ միլիոնատիրոց տուն, որ վերջին անգամ տեսնեն նրան և գուցե մի բան իմանան կտակի մասին:

Այդտեղ օդն այնքան խեղդուկ էր, որ մարդիկ հազիվ էին կարողանում շունչ քաշել:

Այսօր բաց էին պատուհանների ապակե փեղկերը, և փողոցի տորթն առատորեն հոսում էր ներս:

Բայց նախանձը կորացրել էր մարդկանց, և հնարում էին ամեն ինչ, որ կարող էր քիչ թե շատ հանգստացնել իրենց:

**59. Նախադասություններից քանիսո՞ւմ կա փոխաբերական իմաստով գործածված բառ:**

Ես շատ եմ լսել սոխակի երգեր, լսել ու հիացել, բայց այսպիսի մի երգ կյանքիս մեջ առաջին անգամ էի լսում:

Անցնում էր մի ժամանակ, և մի օր էլ մենք տեսնում էինք երեք-չորս փոքրիկ ձագերի, որոնք բնից գլուխներն օրորում էին:

Բախեց դուռը, բախեց, բայց բացող չեղավ. հավիտյան գոց էր դոյակի մուտքը նրա համար:

Խորշոնած ճակատը սեղմեց չոր ծնկներին, մաշված ձեռքերը հյուսեց մրրկածեծ գլխի վրա և սպասեց դրան բացվելուն:

**60. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1.կարապ, 2.կնունք, 3.աչք, 4.օրորոց, 5.հայդուկ, 6.հնազանդ, 7.հրովարտակ, 8.վայրի, 9.զվարք:

**61. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1.անուրջ, 2.փետուր, 3.վարագույր, 4.քաղքենի, 5.առավոտ, 6.խոսք, 7.որսորդ, 8.գանգուր, 9.կիսատ:

**62. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1.կարևոր, 2.դավանանք, 3.զդակ, 4.կիսատ, 5.ազռավ, 6.քարափ, 7.նամակ, 8.հայելի, 9.արեգակ:

**63. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1.աղամանդ, 2.նոնենի, 3.որևէ, 4.զարտուղի, 5.լուսավառ, 6.ահեղ, 7.մահակ, 8.տարբեր, 9.հյուլե:

**64. Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ ածանցավոր են.**

1.շրջունք, 2.անկյուն, 3.ցանցկեն, 4.դիմում, 5.անջատ, 6.աշխատանք, 7.վրիպակ, 8.անձավ, 9.զրգիռ:

**65. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն մեկից ավելի ածանց.**

1.անպարտելի, 2.անկոտրում, 3.միջնորմ, 4.վարչական, 5.գիտնական, 6.ապուշություն, 7.ուսուցիչ, 8.կիսալուսին, 9.քամբակենի:

**66. Նշել այն բառերի համարները, որոնք ունեն մեկից ավելի ածանց.**

1.ինքնըստինքյան, 2.ծակոտկեն, 3.կրավորական, 4.նախապատվություն, 5.վայելչագիր, 6.իրարանցում, 7.ստորգետնյա, 8.տարանցիկ, 9.հրատարակիչ:

**67. Շարքերից քանիսի՝ բոլոր բառերը և բառաձևերն ունեն երկու ածանց:**

- 1) համալսարան, առանձնատիպ, անկանխիատելի, ազգայնական
- 2) տարկետում, անրութելի, սպիտակեղեն, համտեսել
- 3) բաղդատական, տմարդի, ամենահմայիչ, ապաշավանք
- 4) ենթակայական, չխոսկան, առինքնում, չսիրել

**68. Նշել այն բառերի համարները, որոնք նախածանցավոր են.**

1.հարանուն, 2.ապերասան, 3.ենթասպա, 4.նախահայր, 5.գերեվարել, 6.գերձայն, 7.առձեռն, 8.համտես, 9.չընադար:

**69. Նշել այն բառերի համարները, որոնք նախածանցավոր են.**

1.տհաս, 2.վերադարձ, 3.չխոսկան, 4.անիմաստ, 5.անազ, 6.նախնադար, 7.մակագիր, 8.անթացուակ, 9.հակամետ:

**70. Տրված բառաշարքում աճ- նախածանցով քանի՞ բառ կա.**

անգութ, անազ, աննման, անողոք, անհույս, անագորույն, անօդ, անոդ, անազնիվ, անոք:

**71. Տրված բառաշարքում ապ- նախածանցով քանի՞ բառ կա.**

ապակի, ապականել, ապուշ, ապաբախտ, ապահով, ապաստան, ապարդյուն, ապերախտ, ապարանջան, ապուր:

**72. Տրված բառաշարքում – ակ վերջածանցով քանի՞ բառ կա.**

դանակ, լճակ, ագարակ, աթոռակ, պատգարակ, ձորակ, ալյակ, ավանակ, նամակ, դիտակ:

**73. Տրված բառաշարքում -գոյյա վերջածանցով քանի՞ բառ կա.**

վարդագույն, լավագույն, վեհագույն, դարչնագույն, կարմրագույն, հզորագույն, հնագույն, ոսկեգույն, ստորագույն, մեծագույն:

- 74. Նշել այն բառերի համարները, որոնցում եղեն վերջածանցը ածականակերտ է.**
- 1.ժայռեղեն, 2.ձյունեղեն, 3.կայծակեղեն, 4.կոշկեղեն, 5.հազուստեղեն, 6.լուսեղեն,  
7.հրեղեն:
- 75. Նշել այն բառերի համարները, որոնք վերջածանցավոր են.**
- 1.կծու, 2.հեռու, 3.ազդու, 4.ստնտու, 5.օծյալ, 6.նամակ, 7.ելուստ, 8.դանակ,  
9.մասնաբաժին:
- 76. Նշել այն բառերի համարները, որոնք վերջածանցավոր են.**
- 1.տեսուչ, 2.քնատ, 3.դիմում, 4.փափուկ, 5.արջուկ, 6.բանուկ, 7.մասունք, 8.փոխնախփոխ,  
9.գուշակ:
- 77. Նշել այն բառերի համարները, որոնք վերջածանցավոր են.**
- 1.ցտեսություն, 2.ազեռու, 3.համընդհանուր, 4.վերլուծական, 5.փոխնախագահ,  
6.գերբնական, 7.հյուսվածք, 8.զազրելի, 9.քաղհան:
- 78. Նշել այն բառերի համարները, որոնք վերջածանցավոր են.**
- 1.նրբին, 2.ամաչկոտ, 3.բացակա, 4.առանձին, 5.բարեհնչյուն, 6.փոխսադարձ,  
7.ապերախստ, 8.հարսնացու, 9.հոնեղ:
- 79. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**
- մանր-մունք, դեղ-դարման, առոք-փառոք, գիշեր-ցերեկ, այսօր-վաղը, հաց-մաց, կաս-կարմիր:
- 80. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**
- դատ ու դատաստան, մեծ ու փոքր, զլուխ տալ, իրարով անցնել, աման-չաման, անթիվ-անհամար, մարդ-մուրդ:
- 81. Բառերից քանի՞սն են կրկնավոր բարդություն.**
- ալան-թալան, այսօր-վաղը, նոփ-նոր, լեփ-լեցուն, տուն-թանգարան, դիոլ-զուտնա, լավ-վատ:
- 82. Բառերից քանի՞սն են հողակասով.**
- աղեկտուր, առևտուր, բանիմաց, ուղեվճար, կիսաքանդ, ծաղկաման, հաղթանդամ, ամպամած, կղզյակ, գինեգործ:
- 83. Բառերից քանի՞սն են հողակասով.**
- ուղեկցորդ, վրիժառու, ձայներիզ, փոթորկահույզ, որոտընդոստ, փառատենչ, հպատակ, բարեգործ, անարգանք, շնորհակալ:

**84. Բառերից քանի՞սն են *հողակապով*.**

լուսանցք, բառախաղ, վայրէջք, ինքնաեռ, զինեմոլ, հարսնատես, սերես, լուսաշող, այրուձի, մարդանման:

**85. Բառերից քանի՞սն են *անհողակապ*.**

աղցան, լուսամուտ, գծագիր, լավատես, գարեհաց, այգեբաց, սողանցք, հորդառատ, վազանց, սակագին:

**86. Բառերից քանի՞սն են *անհողակապ*.**

սարսափագոլու, թափանիվ, շաքարավազ, միզանուշ, ջրկիր, գարկերակ, կարոտակեզ, բարեգործ, այգեկտ, առապար:

**87. Բառերից քանի՞սն են *անհողակապ*.**

սիրամարգ, փոշեկուլ, աստվածատուր, փշարմավ, քաջառողջ, ոսկեզօծ, տոմսարկոյ, հոգեմաշ, հրահանգ, հոգաբարձու:

**88. Բառերից քանի՞սն են *անհողակապ*.**

նկարագիր, պատուհան, հրանոք, գնդացիր, հրատարակիչ, դյուցազուն, ոգեղեն, բազմանկյուն, այգեպան, անձնանուն:

**89. Բառերից քանի՞սն են *բարդ*.**

աշխարհագետ, բարեկիրք, աստղադիտակ, փշարմավ, արգելափակոց, դեսպանատուն, արևայրուք, բազմաթիվ, բանտապետ, բոցավառ:

**90. Բառերից քանի՞սն են *բարդ*.**

դիմակագերծ, լաջվարդ, դեղնակարմիր, դերասան, պատմագետ, սալահատակ, աշակերտասեր, գեկուցագիր, ապակեպատ, տախտակամած:

**91. Բառերից քանի՞սն են *բարդ*.**

ատենակալ, ատամնարույժ, ցորմամրիկ, կիսանջատ, ժումկալ, քառակոսի, բաղաձայն, թվարկելի, արդարադատ, տրամաշափ:

**92. Բառերից քանի՞սն են *բարդ*.**

անասնարույժ, հետագիծ, անարժեք, միջնապատ, թուլակազմ, բյուրեղապակի, լեռնագագաթ, արծարաթասեր, հնավանդ, գոյամարտ:

**93. Բառերից քանի՞սն են *բարդ*.**

միջնորմ, գործազուրկ, կորստարեր, գարտուղի, հանգստավայր, հիսունվեց, հեռադիտակ, խոսքաշեն, տնաքանդ, զնացուցակ:

**94. Բառերից քանի՞սն են բարդ.**

ուազմակոչ, շնչասպառ, սիրամարգ, աշակերտ, մակաբույծ, կարմրագույն, դաշունահար, ալեծուփ, ընչացք, պատշար, հացրուխ, վեհագույն:

**95. Նշել այն բառերի համարները, որոնք բարդածանցավոր են.**

1.գունափոխություն, 2.դառնաղի, 3.դավադրորեն, 4.դարչնագույն, 5.դեղամիջոց, 6.դեղնակտուց, 7.վիպասան, 8.դասալիք, 9.արտասուր:

**96. Նշել այն բառերի համարները, որոնք բարդածանցավոր են.**

1.դյուրահնչյուն, 2.ձնծաղիկ, 3.դպրատուն, 4.օգտակար, 5.աշխատումակ, 6.լիալուսին, 7.նշանաբան, 8.քաղադրություն, 9.մեխակաբույր:

**97. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր ածանց չունի.**

1.համտես, 2.համարձակ, 3.համբերել, 4.համընդհանուր, 5.համախմբել:

**98. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.քենի, 2.քաշափ, 3.քահամ, 4.քաշիք, 5.քաջեմ:

**99. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.անակնկալ, 2.կալանավոր, 3.ործկալ, 4.հյուրընկալ, 5.դնչկալ:

**100. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.դաստակերտ, 2.աշակերտ, 3.քարակերտ, 4.մարմարակերտ, 5.տուֆակերտ:

**101. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.ավանային, 2.ավանաբնակ, 3.ավանակ, 4.քանավան, 5.մերձավան:

**102. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.արամբի, 2.արամյան, 3.արամեացի, 4.արամեերեն, 5.Արամաշոտ:

**103. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր ածանց չունի.**

1.արտաքերել, 2.արտագնա, 3.արտագաղթ, 4.արտատեր, 5.արտաշունչ:

**104. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.մենապար, 2.պարահանդես, 3.առապար, 4.խմբապար, 5.զուգապար:

**105. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.**

1.քանվոր, 2.քանագնաց, 3.քանսարկու, 4.քանիմաց, 5.քանագետ:

106. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.

1.սևակ, 2.դասակ, 3.խաժակ, 4.ակնոց, 5.բյուրակն:

107. Նշել այն բառի համարը, որը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի.

1.սպառնալիք, 2.ուժասպառ, 3.սպառնալից, 4.սպառնագին, 5.սպառնացող:

108. Նշել այն բառերի համարները, որոնց ընդգծված մասն առանձին արմատ է.

1.անասնակեր, 2.արտասուր, 3.ասպետ, 4.ասպար, 5.ասպազեն:

109. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-ուկ* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի) և բառ կազմել.

1.փափկասիրտ, 2.թզաչափ, 3.մանկահասակ, 4.աչքածակ, 5.բանվոր, 6.ջերմաչափ, 7.ծածկամիտ, 8.հեղինակային, 9.գերեվարել:

110. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-իկ* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի)և բառ կազմել.

1.խաղամոլ, 2.պատաճեկան, 3.այգեգործ, 4.գերագույն, 5.այրուծի, 6.ծերուճական, 7.այրաբնակ, 8.տարկետում, 9.ծառատում:

111. Նշել այն բառերի համարները, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *-ամ* վերջածանցը (առանց երկրորդ ածանցի)և բառ կազմել.

1.պատվիրատու, 2.գարնանային, 3.քնքշօրոր, 4.գերեվարել, 5.հուզախոռվ, 6.ոլորապտույտ, 7.չարագույժ, 8.անվանացանկ, 9.մենապար:

112. Բառերից քանիսի՞ն կարող է միանալ *ան-* նախածանցը (առանց երկրորդ ածանցի) և բառ կազմել.

պատեհապաշտ, մոլեգին, խելակորույս, բթամիտ, անուշեղեն, հանգստավայր, լավագույն, գերազանց, գնացուցակ, փորագրություն:

113. Բառերից քանիսի՞ն կարող է միանալ *արտ-* նախածանցը (առանց երկրորդ ածանցի) և բառ կազմել.

պարտատեր, անժամանակ, երկրագործ, տարադրամ, քսայուղ, հագուստ, ցոլցլուն, կարկտարեր, գնացք, սահմանապահ:

114. Բառերից քանիսի՞ն կարող է միանալ *տար(ա)-* նախածանցը (առանց երկրորդ ածանցի) և բառ կազմել.

հանքափոր, ձևական, ուղերեռ, կուսակցություն, կետադրություն, գիրանալ, երկսեռ, դժբախտարար, կցկոտուր, կարգապահ:

115. Բառերից քանի՞սը միևնույն արմատն ունեն.

երդիկ, երդմնազանց, երդվյալ, երդում:

116. **Բառերից քանիսո՞ւմ կա պատ արմատը.**

պատվեր, պատշար, պատվիրան, պատմուճան, պատգարակ, պատշաճ:

117. **Բառերից քանիսո՞ւմ կա զիմ արմատը.**

սակագին, հեշտագին, լալագին, թանկագին, հիվանդագին, ցավագին:

118. **Բառերից քանիսո՞ւմ կա տար արմատը.**

տարասեռ, ջրատար, տարակույս, տարուբերել, գործակատար, տարանցիկ:

119. **Բառերից քանիսո՞ւմ կա առ արմատը.**

խելառ, առաջին, առևտրական, առտնին, առարկել, արևավառ:

120. **Բառերից քանիսո՞ւմ կա ամեն արմատը.**

ամենագետ, ամենակուլ, ամենասուլ, ամենահաղթ, ամենաքիրտ, ամենաքող:

## ԳԼՈՒԽ III ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 1. Նշել գոյականների քանակը:

Մենք՝ հայրենակիցներս՝ մի մեծ խումբ, ուրսունվեցի հոկտեմբերին վայրէջք կատարեցինք Բուենոս Այրեսի օդանավակայանում. հյուրընկալվելու էինք տեղի հայկական համայնքի կողմից: Մեր ուղեվարը Վահանն էր՝ բարձրահասակ, հաղթ կազմվածքով, գեղահոն, փայլփող աչքերով մի երիտասարդ: Գեղեցիկ տղա է ու մերն է: Ծնորհակալ եղա մեր պապերին, որ մեզ համար ծնել են վայելչատես այս հայորդուն:

### 2. Նշել գոյականների քանակը:

Ե՞վ հայոց մեր շարժուձեզ, որն այնքան բան է ասում, և ծնկներին խփելն ու պայթուն ծիծաղը, և հայերեն բառը, նայվածքը, ժախտը զարմանալի այս ցեղի զրավոր հառնումն են ցուցադրում, թեև քաղաքները՝ ավերվել, զավակները սպանվել են, աղոթքները մնացել են անպատասխան, և հոգիները ոխից սևացել են:

### 3. Նշել գոյականների քանակը:

Կործանե՛ք Հայաստանը, մարդկանց իրենց շեներից քշե՛ք անապատ՝ չմոռանալով ձեռքներից խլել ճամփի հացն ու ջրի վերջին ումարը, կրակի՝ տվեք իրենց և իրենց Աստծու տները, տեսե՛ք նրանք դարձյալ չախտի՝ ապրեն:

### 4. Նշել հոգնակի թվի կազմության սխալների քանակը.

բեռնակիրներ, փայտահատեր, հետազծեր, ամսարվեր, երևանցիներ, դերբայեր, դուստրեր, գրաշարեր, հացատներ, որմնադիրներ, ժամացույցներ, սպաներ:

### 5. Նշել հոգնակի թվի կազմության սխալների քանակը.

խցանահաներ, կողմնացույցեր, մաքսատներ, վերջնագիրներ, հետախույզեր, գրաբերներ, հարացույցներ, կարմրահերներ, օրապահներ, սպիեր, մատենագրեր, բաղաձայներ, վաչկատուններ:

### 6. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում են -եղ վերջավորությամբ.

կուսակալ, տրամաչափ, պատճեն, ֆիդայի, աղբարկդ, ճարտարապետ, հայագետ, երկրամաս, բուրմ, թևատակ, գրագիր, լեռնաշար, լյարդ, խաչափայտ, կղմինդր:

### 7. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում են -եղ վերջավորությամբ.

մեներգ, ազգասեր, կինոաստղ, ջրմուղ, լողափ, ձիարեն, մաքրամոլ, տակրիր, տանուտեր, մատոսկը, միջնաշերտ, գեղագետ, բառզիրք, օրավարձ, ֆիլմաշար:

- 8. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում էն -եր վերջավորությամբ.**

մականակիր, ճառախոս, ճիմաթումբ, մարզաձող, միլիմետր, ներքնահարկ, յուղաներկ, նախատիպ, ստորոտ, ներքնաշոր, սյունակալ, վարքագիր, ծիապան, ծածկակար, լորախոս:

- 9. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում էն -եր վերջավորությամբ.**

խառնածին, լրտես, ժողովատեղ, գարեհաց, բայածն, գազանյութ, եզրաշերտ, երգեհոն, համհարզ, համազարկ, կցարերք, մարզատոն, նախրապահ, քարայր, սուզանավ:

- 10. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում էն -մեր վերջավորությամբ.**

օրենսդիր, քննացանկ, ֆելիետոն, փոստատար, քառանկյուն, ցողաշիթ, ջրկիր, տողասկիզբ, տափածուկ, վերադիր, տանձաչիր, սիզարույս, սպայակազմ, ռուսամոլ, ջրաճանճ:

- 11. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում էն -մեր վերջավորությամբ.**

միլիարդատեր, ճառագիր, ճեռնակապ, կարգավար, համածին, բարեգործ, ափեզը, արևածին, զրահակիր, ըմպան, թիապարտ, ժամկետ, լծափոկ, խնկածառ, խորանարդ:

- 12. Նշել այն գոյականների քանակը, որոնք հոգնակի թիվը կազմում էն -մեր վերջավորությամբ.**

խորագիր, խոտհարք, ծանրաչափ, խոչափող, ծովախույզ, կավահանք, հեռախոս, ձայնատառ, հրաբուխ, ճահճաջուր, մակդիր, շամբահավ, պարենահարկ, ռազմերք, ջրաշերտ:

- 13. Նշել այն գոյականների քանակը, որոնք գործածվում են միայն եզակի թվով.**

կմախք, սպիտակեղեն, անազ, ռոմանտիզմ, գուրգ, աստղագիտություն, ձանձրույթ, բուրվառ, պարույկ, հայություն, վրացերեն, քրիստոնեություն, ձեղուն, զինեզրծություն, ֆուտրոլ:

- 14. Թվարկված քառերից քանիսի<sup>o</sup> հոգնակի թիվը կարող է ցույց տալ երևույթի տևականություն.**

քամի, տարի, շոգ, սպունգ, ատաղձ, կոհակ, անձրև, ծոայ, սլաք, երեխա, ցուրտ:

- 15. Նշել հավաքական գոյականների քանակը.**

ցանկություն, տեսականի, նամականի, ցասում, պարս, վտառ, հողագործություն, մորթեղեն, հիշողություն, բույլ, կամայականություն, ուսում, ամանեղեն, փորոտիք, մեծամասնություն:

**16. Նշել ներքին հոլովման ենթարկվող բառերի քանակը.**

շարժում, արյուն, հենասյուն, ազգանուն, կնքահայր, ամառ, կարկաչյուն, հնչյուն, եռանկյուն, հացատուն, վաչկատուն, գալուստ, դոփյուն, շնաձուկ:

**17. Նշել աճ և վա հոլովումներին ենթարկվող բառերի քանակը.**

ծնունդ, հումկար, առավոտ, մանուկ, դերանուն, մահ, կիրակի, ցերեկ, ամիս, արևագալ, զեկուցում, քաղաքադուռ, տարի, եռանկյուն, ժամանակ:

**18. Նշել այն շարքերի թվահամարները, որոնցում ու հոլովման ենթարկվող բառեր չկան:**

1. ուխտատեղի, ապակի, հացենի, սպի
2. Քութախսի, Անի, Թթիլխսի, Պագանինի
3. շվի, անդրի, տատ, Ժյուրի
4. թշնամի, ընդարձանալ, կիրակի, բոխի
5. Սոչի, անկողին, հավաքատեղի, Վերդի

**19. Նշել այն շարքերի թվահամարները, որոնցում միայն ոչ հոլովման ենթարկվող բառեր են.**

1. հորաքույր, աներ, պարզնկեր
2. տալ, տիկին, սկեսրայր
3. տանտիկին, պարտատեր, զուգընկեր
4. սկեսուր, տեղը, եղբայր
5. բուժքույր, կնքահայր, երեցկին

**20. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում որոշիչ հոդի սխալ գործածություն կա:**

1. Հեքիաթային երազն դեռ նոր էր սկիզբ առել, երբ հանկարծ լսեց մի ահասարսուռ ձայն:
2. Բարձրացավ մի հոնքը իմաստուն երգչի, թրի պես կեռվեց ճակատի վրա:
3. Անպարփակ վիշտն հոգու մեջ՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում:
4. Սեպուհներն՝ ամենքն էլ խրոխստ, կորովի, պիրկ կեցվածքով, տարվել էին զինախաղով:
5. Մրամարտողներն ինքնամոռաց միսրճվել էին թեժ կռվի մեջ:
6. Սպարապետն եկավ իր բնօրրանը՝ թեթև շունչ քաշելով:

**21. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում որոշիչ հոդի սխալ գործածություն կա:**

1. Մութն որ իջավ, թևերը քարշ տալով հայր արագիլը հասավ բնին:
2. Խեղճը փողել էր զետնին, և արյունը անընդհատ հոսում էր քնքուշ բերանից, աչքերն հանգել էին արդեն:
3. Հյուսիսից բարբարոս հրոսակները ներխուժեցին մեր դրախտային հայրենիքը:
4. Ես անտառումն էի. որոտում էին երկինք ու երկիր, ամպերը քարի ծանրությամբ կախվել էին գլխիս:
5. Հալվեցին ձմռան սառուցները, գարունն եկավ, ծիծեռնակները վերադարձան իրենց ըները:
6. Սմբակների տակ տրորում էին ծաղկած արտերն ու այգիները, ավերում էին բարգավաճ քաղաքներն ու ավանները:

**22. Նշել հողերի սխալ գործածության դեպքերի քանակը:**

1. 1927 թվականի ամառն է, իմ հայրենի Շիրակի դաշտումն եմ:
2. Ահա լեռներն, ուր աղջիկների ու տղաների հետ բանջար էինք քաղում, երբ ընկերներին հետ հովիվ էի:
3. Ամաշում էի, երբ մտածում էի, որ իմ՝ տարիներով ստեղծած գրքերս պիտի փողով ծախսվեն:
4. Հերոսը սիրում ու կարեկցում է մեզ բոլորին, որովհետև նա իրեն շատ է սիրում:
5. Եվ դուք չե՞ք լսում տիեզերքի լեզուն՝ լրությունը, որ իմ հոգումս ամենի երգ դարձավ:
6. Հայր աշխարհից է, բայց աշխարհին օտար մարդկանց ավագ եղբայրն է, բայց մարդկանցից ազատված:

**23. Նշել ստացական և դիմորոշ հողեր ունեցող բառերի քանակը:**

1. Երեխաներս աշքներս չենք հեռացնում արագիլներից և ուշիուշով դիտում էինք նրանց ամեն մի շարժումը:
2. Ավա՞ն, խավարն ու չարը դժոյա և աշխարհիս զոռ հզորների սուրբն ու բռունցքը խորտակեցին քեզ:
3. Ողբում եմ դառը վիճակդ տխուր, ո՞վ իմ վիրալից, խոցված հայրենիք:
4. Եվ վերքդ պոկիիր, տուր ինձ, սիրելին, գոտեապնդվիիր և խրոխտ ու վես կոչնակդ հնչեցրու:
5. – Ինչո՞ւ ես տխուր, ամենաերջանիկդ մահկանացուներիս մեջ:
6. Ամենայն երևույթ, ամենայն առարկա իր պատճառն ունի և իր հետևանքը, և մահկանացուներս կանգնած ենք պատճառների սանդուղքի մի անհայտ աստիճանի վրա:

**24. Նշել դիմորոշ հող ունեցող բառերի քանակը:**

1. Եքե արքան մեզ՝ ստրուկներիս, կարողանա տեսնել իրեղեն, թևավոր նժույգին նստած, այն ժամանակ նա իրեն պարտված կզա:
2. Դու ինքդ ես, ո՞վ մահ, ծերությունն ու ախտերը բոլոր, կախաղան, պատերազմ և հուսահատություն:
3. Երբ լսեցի նրա մարտահրավերը, սիրտս թնդաց, թողեցի ծնողներիս, զինավառվեցի և բազեի պես թռա նրա մոտ:
4. Մեր կոհվներն ավարտվեցին, և բոլորս ցրվեցինք մեր տները:
5. Ես զայրացա ապերախտ հայրենակիցներիս վրա, որբ թռոանս վերցրի և հեռացա հայրենիքիցս:
6. Երբ պահակները հեռանում էին միջանցքից, բանտարկյալներս մոտենում էինք դրներին և սկսում էինք խոսել:

**25. Նշել ցուցական և ստացական իոդ ունեցող քառերի քանակը ընդգծվածներում:**

1. Են ժամանակ հարուստը կինի աղքատ, աղքատը՝ հարուստ. **աշխարհիս մեջ ամեն բան կփոխվի:**
2. Դեռ խոսքերս չէի ավարտել, երբ Հասան աղան երկու ձեռքով ամուր ծափ զարկեց ու գոռաց:
3. Եվ հուշերիս զմրուխտյա գետը քո նվիրական դաշտերով տանում է **մոլորվածիս դեպի երջանիկ մանկությունը:**
4. Ես կանգնում էի վագոնի դռների մեջտեղում և պատուհաններից նայում էի դուրս. երբեմն՝ աջ կողմս, երբեմն՝ ձախ:
5. Երբ նայում եմ քեզ, Շիրակի՝ երկինք, հրաշքի պես փոխվում է ամեն ինչ. **աշխարհս դառնում է երազ:**
6. Եվ հիշում եմ միշտ քո անմոռաց զրույցները, և քո համբերանքի շիրուխի խաղաղ ծուխը **աչքերիս առջևն է դեռ, և քո հանգիստ ձայնը ականջումս է տակավին:**

**26. Ընդգծվածներից նշել ածականների քանակը:**

1. Օժտի՞ր այնպիսի շենք ու շնորհքով,  
Որ ես քո հասկի շշուկը դառնամ,  
**Եվ վաղանցավոր իմ միակ կյանքով**  
Հավիտենության միջուկը դառնամ:
2. Եկել է մրրիկը ասիական,  
Եկել է **ասիական մարախող,**  
Խժել է մեր հունձքը վաստակած,  
Դատարկել մառանն ու մարագը:
3. Թեժ որ պահեցիր, **ամենաահեղ**  
Սառնամանիքն է քեզնից խրտնելու,  
Հոգուդ կրակը թեժ այսի պահես,  
Եղանակները **վաղ են ցրտելու:**
4. Մի սուլոց եկավ **հեռու** մի բակից,  
Խլացավ այզու դարպասի վրա,  
Նստարանն ասես փախավ մեր տակից,  
Եվ մնացինք թեժ ավագի վրա:

**27. Նշել տրված հատվածի ածականների քանակը:**

Սի օր մեղմաշունչ մի քամի, բարձունքներից վար սահելով, անցավ փարավոնների բուրգերի վես ճակատների վրայով, իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի վայելչակազմ ու դեռասի արմավենու ոտքերի տակ փուլեց հիմին:

- Իմ հրաշագենի թագուհի, ես՝ աշխարհի անսանձ ու ըմբոստ ոգին, հավերժ կմարեմ ոտքերիդ տակ:

Արմավենին լրելյայն խոնարհում էր գլուխը և արհամարհում:

Հեծծեց քամին և մեղմիվ գրկեց նրա նուրբ իրանը, ուզեց համբուրել, բայց արմավենին զայրացած հրեց նրան:

**28. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի ածական կա:**

1. Գիշեր է իշել. լրել են բոլոր  
Աղմուկները չար, խոսքերը պատիր,  
Չրերը մեղմիվ երգում են օրոր:
2. Եվ իմ սրտի մեջ, այլ խավարում էլ  
Սի քաղցր վիշտ է մեղմաբար խոսում,  
Մեկն այնտեղ իր հեռուն է վառել:
3. Ես մի ճամփորդ եմ՝ մթնում մոլորված,  
Ու հոգնած սիրտս դարձել է խոնարի,  
Չեմ ուզում կանչել ցնորդս մեռած:
4. Դառնություն է լցված ու թախիծ  
Քեզ օտար պրեսի երգերում.  
Ո՞ր կողմից եկար դու, որտեղի՞ց  
Նետեցիր քո նետերն իմ հեռուն:
5. Ես գիտեմ հիմա՝ ամենքի նման  
Սի սովորական աղջիկ էիր դու,  
Ես պճել էի փայլով դյութական  
Գորշ պատկերը քո կյանքի ու հոգու:
6. Տանջանք են ու խոց հուշերս բոլոր,  
Մտքերս ամեն՝ անամոք ցավեր,  
Խավար է շուրջս, և՝ մահ, և՝ ավեր,  
Մութով է լցված իմ ուղին մոլոր:

**29. Նշել գոյականաբար զործածված ածականների քանակը:**

1. Եվ լալիս է անցորդը լույս,  
Եվ գնում է դառը լացով,  
Օրհնի՛ր, օրհնի՛ր, Հիսո՛ւ,  
Երկիրն իմ՝ երկնքի ծով:
2. Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,  
Նենգ ու դավ եմ տեսել ես,  
Տարել, ներել ու սիրել,  
Վատը լավ եմ տեսել ես:
3. Ես շատ սերեր ունեի,  
Ո՞ր մնացին սերերս,  
Կանաչ-կարմիրս թռավ,  
Երես առան սևերս:
4. Ես ինձ չեմ ներում: Ի՞նչ անեմ, ասա՛,  
Ի՞նչ պատասխան տամ քեզ ու հավերժին:

### **30. Նշել գոյականարար գործածված ածականների քանակը:**

1. Մաղթանքս նորերին ասեմ,  
Չահածս տամ հովերին,  
Կորածս ծովերին ասեմ:
2. Ու տեսնեմ արցունքն ուրախ  
Սեռոնի մերանը տատիս,  
Աշխարհիս տատերի մեջ  
Էլ չկա տատիս նմանը:
3. Կակաչի կարմիր թևին  
Մի կարմիր զատիկ է նստել,  
Կակաչի սև սրտի մեջ  
Սև բողոք-զավթիչ է նստել:
4. Աչքդ միշտ կուշտ կմնա,  
Հոգիդ՝ զոհ քեզ հասած քշց,  
Բոլորին բաժին կտաս  
Քո մաքուր, մաքրված խղճից:
5. Դարեր են կուլ տալիս կիրճերը,  
Ի՞նչ անեն ինձ նման խեղճերը...

### **31. Նշել թվականների քանակը.**

տասնյակ, հարյուրական, մեկ չորրորդ, քառորդ, հինգհարյուրամյա, միլիոնավոր, իննուկես, հազարավոր, հնգակի, քառապատիկ, երիցս, երկակի, հիսունական, տասը-տասը, իննսուներորդ:

### **32. Նշել թվականների գրության սխալների քանակը:**

1. «Ընկողադ» բառն առաջի անգամ Եվրոպայում լսել են խսպանացիները ացտեկների հնագույն մայրաքաղաքը քալանելիս:
2. Լու Անջելեսի կենդանաբանական այգում գիշատիչների համար վերակացուներ են կարգվել քսանից-հիսուն տարեկան կանայք:
3. Օձը թույնը դուրս չի ցայտեցնում մինչև զոհի՝ մեկուկես-երկու մետր հեռավորության վրա գտնվելը:
4. Ստոկհոլմում բացվել է նոր տիափի կինոթատրոն. այն բաղկացած է երեք փոքրիկ դահլիճներից, որոնցից յուրաքանչյուրն ունի հինգից մինչև մի քանի տասնյակ նստատեղեր:
5. Կատունների թիվը հասել է վաթսուն միլիոնի, դեղձանիկներինը՝ քառասուն միլիոնի, շներինը՝ երեսուն միլիոնի:

### **33. Նշել գոյականարար գործածված թվականների քանակը:**

1. Հին Ռուսաստանում հաշվի հիմքը եղել է քառասունը, հռոմեացիներինը՝ տասներկուսը, բարելոնցիներինը՝ վարսունը:
2. Անիշելի ժամանակներից սկսած՝ այդ գյուղում մշտապես ապրում էր հարյուր քսանյոթ մարդ. նրանցից քսանինը տղամարդիկ էին, մնացածը՝ կանայք ու երեխաներ:
3. Այդ գիտնականը թարգմանություններ էր անում հարյուր տասնչորս լեզվից, վարժ խոսում էր երեսունինը լեզվով, մասնակի տիրապետում տասնմեկին:
4. Ներկայումս երկրի տարբեր անկյուններում աշխատում են երեսուն գիտարշավախմբեր, որոնցից տասներկուսը եղել են արտասահմանից:
5. Երկրագնդում կան տասը հազար արենատական ծովեր և լճեր, որոնց ընդհանուր տարածությունը մոտ հինգ հարյուր հազար քառակուսի կիլոմետր է:

**34. Նշել այն շարքերի թվահամարները, որոնց բոլոր բառերը դերանուններ են:**

1. ինքներս, այնքան, ոմանք, ինչպիսի
2. ոչ ոք, ամենայն, միմյանց, մի քանի
3. ամեն ոք, մյուս, համայն, որևիցե
4. յուրաքանչյուր, մինչդեռ, նույն, որոշ
5. նույնչափ, ինչ-որ, ինչպիսի, նախքան
6. միևնույն, իրար, ոչինչ, մյուս

**35. Նշել տրված հատվածի դերանունների քանակը:**

Ես մտքում պարծենում էի բարեկամովս, երբ տեսնում էի, թե ինչպես նա մտնում է եկեղեցու գավիթը: Այդ ժամանակ նրա քայլվածքը բոլորովին տարբեր էր ուրիշների քայլվածքից, հանդարտ էր, հանդիսավոր: Աջ ու ձախ բարեսում էր բոլորին հպարտորեն, որպես վայել էր սեփական արժանապատվությունը զգացող մի նշանավոր քաղաքացու: Յուրաքանչյուրը սիրով էր պատասխանում նրա բարեներին: Իմ անվատակ բարեներին հազիվ էր պատասխանում: Կիրակի օրերը ես վախենում էի նրան մոտենալ՝ վախենալով շարժել նրա զայրույթը: Այդպիսին էր իմ խնամատարը:

**36. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերանուն չկա:**

1. Նորից կրողնեմ քաղաքն աղմկոտ  
Ու ճամփա կրնկնեմ հավետ միայնակ:
2. Աշխարհում այս աղոտ ես քնքուշ  
Սի հերիաք հյուսեցի քո մասին:
3. Մեկով հիացա, մեկից խոցվեցի,  
Այնքան փորձեցի, այնքան փորձվեցի,  
Բայց էությունս, ավաղ, մինչև վերջ  
Բաշխել, բաժանել չկարողացա:
4. Խելազարվել է տիեզերքն ամբողջ,  
Խսկ ինձ ասում են, թե խելոք մնա:
5. Եկողները քող չիմանան  
Սոված օրեր ու սև տարի:  
Ինձպեսները գան ու գնան,  
Աշխարհին ոչինչ չպատահի:
6. Բոլոր ահերն ինձնից վանում,  
Պարզ եմ նայում ապագային:

**37. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում բոլոր ընդգծված քառերը դերանուններ են:**

1. Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում  
Կերպի շուտով երգն իր կարապի,  
Քան չի փոխելու, **ինչքան** տառապի  
Իմ բաժին աշխարհն **այս** մեծ աշխարհում:
2. Ամեն տարիք, ամեն պայման,  
**Ամեն** սահման պիտի հերքեմ,  
Ես ծնվել եմ երգի համար  
Ու **մինչև** մահ պիտի երգեմ:
3. Ու ես շասացի **ոչ ոքի** ոչինչ,  
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ,  
Ու կարդալու ես դու երկար, երկար  
Եվ թրջելու ես արցունքով **քո** զինջ:
4. Հանդիպելիս **քող** մոռանան  
Ամեն տեսակ ցավ ու մորմոր.  
Ինձ պես այրվածն ու քեզ նման  
Տառապածը՝ **որիշ** անգամ:
5. Ասա՛, մեզ որիշ ի՞՞նչ է հարկավոր,  
Որ մենք իրարից կարոտ չմնանք:

**38. Քանի՞ ցուցական դերանուն կա տվյալ հատվածում:**

Այն, ինչ գոյություն ունի աշխարհի տակ ու նրա վրա, մշտապես փոփոխվում է, քանի որ հենց ինքը՝ երկիրն էլ կենդանի արարած է և նույնպես հոգի ունի:

**39. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ցուցական դերանուն կա:**

1. Թվաց՝ երբեք այդ հեռու-հեռու  
Բնեոներն իրար չեն հանդիպելու:
2. Վերջացավ կոփվը... ինչքան ժամանակ  
Քեզնից ոչ մի լոր ու ոչ մի նամակ:
3. Ու հանդիպեցինք մենք արևելքում  
Ինչ-որ հարկի տակ, ինչ-որ համերգում:
4. Քայլերս նույն տունն են բերում,  
Ինչքան ճամփաս շեղում եմ ես:
5. Խորհուրդն այնքան խրթին,  
Եվ խաղն այնքան բարդ է,  
Որ կարող է հանկարծ  
Սարդը իր տունը քանդի:
6. Զրվեմի ծիծաղ, մամուռի արցունք,  
Հավքերի երամ, ժայռեր՝ ծանր ու մեծ,  
Ամեն ինչի մեջ՝ ինձանից մասունք,  
Եվ ամեն ինչից մասունք կա իմ մեջ:

**40. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում հարաբերական դերանուն կա:**

1. Ինչու է այդպես՝ գլխի չեմ ընկնում,  
Եվ գլխի ընկնող կա՞ մեկը տեսնես:
2. Երբ հոգնած օրը կորչում է մքնում,  
Հոգնած լեռները ձորերն են մտնում:
3. Սինչև նրանք հասցնեին  
Հանգույցալից պատմել մի հուշ,  
Չարթնած հավը կանչեց քարին.  
Ծնվող օրվա ճիշն էր անուշ:
4. Փակ աչքին ի՞նչ, թե ջրվեժի  
Ուլունք-ուլունք արցունքի մեջ  
Մի ծիածան կպակասի:
5. Շնորհակալ եմ իմ բախտից  
Եվ քեզանից՝ շնորհակալ,  
Որ կարող ես իմ տունը գալ  
Նորագյուղան քո դրախտից:

**41. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում որոշյալ դերանուն կա:**

1. Ամեն տեղ ես իմ չափն իմացա,  
Պարտք տալով պարտքի մեջ խրվեցի:
2. Բաշխեցի, ինձ ոչինչ չմնաց,  
Հրճվանքից ես իմ մեջ փլվեցի:
3. Ամեն ինչ պարզ չի ասվում,  
Ողջո՞յն ձեզ, չակերտ, փակագի՞ծ:  
Խելագար կիրքը չկա,  
Իմաստուն խոհին եմ բասակից:
4. Դառնացած լեզվիս վրա  
Դրախտի նեկտար է կաթում,  
Ուրիշ ի՞նչ բախտ որոնեմ,  
Բոլորին այս բախտն եմ մաղթում:
5. Նստել եմ, լաց եմ լինում  
Ման եկած վայրերիս համար,  
Սեկմեկու մերժած, լրած,  
Այս խոռվ ծայրերիս համար:
6. Շա՛տ ապրեք, շատ ապրեցի,  
Ցամաքներ ու ծովեր անցա,  
Փորձեցի ինչքան ասես,  
Մի աշխարհ փորձի տիրացա:

**42. Ընդգծվածներից նշել անորոշ և ժխտական դերանունների քանակը:**

1. Եվ հետո ինչքան հեռացա,  
Ես **քո** իշխանաց իշխան  
Կարուտի ստրուկը դարձա:  
2. Էլ ջրի ճամփին կուժ չի կոտրվում,  
Էլ մաճի համար ծառ չի կտրվում:  
**Ոչ ոքի** առջև էլ վիզ չի ծռվում,  
Ահա թե ինչի համար եմ հրճվում:  
3. Ոչ **մի** երգիչ **այս** երկրի մեջ  
Քեզ չի հիշել իր երգի մեջ,  
Եվ չի տեսել մինչև անգամ  
Իր երազի եզերքի մեջ:  
4. Շինել ենք **մենք** տունը ուրիշի,  
**Ուրիշը** մեր տունը քանդել է:  
5. Ինձ թվում է, թե **մի քանի** անգամ  
Հերքել եմ արդեն  
Ես անդարձության օրենքն անողոք,  
Մի քանի անգամ գնացել - եկել,  
Ապրել եմ **այսպես** և ապրում եմ դեռ:  
6. Կիզում է քեզ մի հուր կնիք,  
Մի հմայող ու հին խոստում,  
Եվ մի՞թե այդ վշտիդ համար  
Չեմ սիրում **քեզ** այսպես քննուշ:

**43. Նշել այն դերանունների քանակը, որոնք հոգմակի թիվ չունեն.**

ամենը, ոմն, ոչինչ, դու, յուրաքանչյուր, ինքը, ոչ ոք, ամենքը, միմյանց, ուրիշը, բոլորը, որոշ, ինչ-որ մեկը, մի քանիսը:

**44. Նշել չհոլովվող դերանունների քանակը.**

մենք, ինչ, ոմն, ինքս, իրենք, իրար, ոչ մի, ամեն, բոլոր, ոչինչ, ոչ ոք, որոշ, այնքան, մեկը, ամենքը, ովքեր, դուք, յուրաքանչյուր ոք:

**45. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերանվան գործածության սխալ կա:**

1. Նախկին դպրոցների ուսուցիչներից ոմանք մնացին իրենց գյուղերում՝ նվիրվելով մանուկ սերնդի ազգային կրթությանը:
2. Եվ քանոնի հավասար բախումներին ներդաշնակ՝ ամբողջ աշակերտները սկսեցին բարձր ձայնով երգել:
3. Հանցագործներից քանիսները վիրավորված բողոքել էին քանտի վարչությանը:
4. Նրանց հայրերն ու մայրերը պարծենում էին իրենց կտրիճ որդիներով:
5. Մինչև քառասուն տարին Օհան ամին ապրել էր իրեն պապերի գյուղում:
6. Նստեցինք ծառերի ստվերում. Ասլանը սեղանակից էր մեզ՝ մի փոքր հեռու պազած:

**46. Նշել այն շարքերի թվահամարները, որոնցում բոլոր բայերը են խոնարհման են:**

1. փախանք, լալիս է, կվախենա, հազած
2. զվարճացել ենք, հիացնում է, նկարած, խոտող
3. չկանգնեն, սառչող, ասացինք, կերանք
4. ելած, ընկրկում է, ըմբոշխնող, սպրդեցինք
5. ուղարկում ենք, առանք, կորչեն, մեռա

**47. Նշել առ խոնարհման բայերի քանակը.**

զվարճացել ենք, ուրախացան, զարգացած, խաղացող, սփրթնած, գոջացել եք, բազմանում են, հեռացե՛ք, տվեց, ծիծաղում, եկ, շողացող, ծխացել են, սառավ, դարձել է:

**48. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայեր կան:**

1. Աղբյուրն անուշ հերիաթի պես  
Իր լույս երգով ժպտում էր մեզ.  
Դու մոտեցար մեղմ, համրաքայլ.  
Որպես քննուշ իրիկվա փայլ:
2. Լույսն էր մեռնում, օրը՝ մթնում,  
Մութք տնից տուն էր մտնում,  
Ես տեսա քեզ իմ ճամփի մոտ,  
Իմ մտերիմ, իմ անծանո՞ք:
3. Եվ ես արթնացա խնդության ցավից.  
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,  
Մութք հեռաստանն էր դժկամ նայում ինձ,  
Սենակությունն էր քարի պես լրում:
4. Թովիչ քննությամբ հանգչող աշխարհում  
Երեկոն վառեց լույսեր դժգունակ.  
Մութք հյուսում է տրտմության ժանյակ,  
Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում:
5. Սեռած լուսնյակը՝ մենակ ու աղոտ,  
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ,  
Հավետ լրում է մի տխուր խորհուրդ:

**49. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայեր կան:**

1. Որպես ծաղիկն է անխոս գունատվում  
Ցուրտ շվաքի մեջ արևից հեռու,  
Այնպես թող սերը մեռնի իմ սրտում,  
Որ քաղցր կյանքիդ տիսրանք չըերի:
2. Օտար դաշտերի անանց մշուշում  
Տխուր լուրջյան գիշերն է իջել.  
Իմ սիրտը հավետ թախիծն է մաշում,  
Մի լուսե երգ է իմ հոգում ննջել:
3. Սև գիշերն իջավ իր անհայտ զահից  
Եվ մուրով լցրեց երկինք ու գետին,  
Խավարեց հեռվում փարոսը հետին,  
Սասանվում եմ ես ջրերի ահից:
4. Շողում են, դողում աղմուկով զվարք,  
Անխոս քարանում ու նորից խաղում,  
Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,  
Խոլ շառաչում են, լարում են թակարդ:
5. Կանգնած եմ նորից ահեղ անտառում  
Շանապարհների քաժանումի մոտ,  
Հանգչում են վերջին կրակներն աղոտ,  
Ու մուրն է կրկին իջնում ու փոփում:

**50. Նշել սոսկածանցավոր բայերի քանակը:**

1. Մարդոց ժխորը քողնեմ ու հեռանամ,  
Լիք-լցված սրտով նստեմ միայնակ,  
Գրկեմ վարդերս՝ դալուկ, դժգունակ,  
Սեռնող վարդերս փայփայեմ ու լամ:
2. Աշխ, այս ցուրտ երկրի անհայտում անհուն  
Ընկնել ու կորչել և ննջել հավետ,  
Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,  
Ավերված երազ հայրենական տուն:
3. Կեսզիշերն անցավ: Ես տուն չեմ գնում,  
Երկար, անդադար մայթերն եմ մաշում.  
Շրջում եմ անվերջ, երբեք չեմ հոգնում,  
Ոչինչ չեմ հիշում, ոչինչ չեմ հիշում:
4. Սակայն ուզում եմ, որ ինձ չտեսնես,  
Չգիտեմ ինչու ձեր զանգն եմ տախս,  
Փախչում եմ, գնում և հեռանալիս  
Փառաբանում եմ, օրիներգում եմ քեզ:

**51. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կա մեկից ավելի սոսկածանցավոր բայ:**

1. Անցած օրերս շարքերով դալուկ,  
Շողրում են ահա և անհետանում,  
Զգիտեմ՝ կյանքը ինձ ուր է տանում,  
Ամեն ինչ հարց է, մրին հանելուկ:
2. Կար մի դյուքական ուրիշ ժամանակ,  
Ես թողնում էի օրերս մենակ  
Եվ այս աշխարհից պլանում հեռու:  
3. Անծիր աշխարհի դժկամ ու դաժան  
Ուղիների մեջ իմ սերը կորած  
Էլ չորոնես: Մընում մոլորված՝  
Դառը խոհերս գրկեմ, հեկեկամ:
4. Որքան էլ զիշերն ահավոր իջնի,  
Եվ ուր էլ գնամ գլուխ դնելու,  
Հարազատ մի հող ես չեմ գտնելու  
Սև ճանապարհիս օրերում դժնի:
5. Այս ցուրտ երկրի անհայտում անհուն  
Ընկնել և կորչել և ննջել հավետ,  
Ոչնչանալ ու մոռացվել քեզ հետ,  
Ավերված երազ, հայրենական տուն:

**52. Ընդգծվածներից նշել սոսկածանցավոր բայերի քանակը:**

1. **Փախչում** է հեռուն թոխքով անտես,  
Դառնում է անկեղծ ճիշով խելազար,  
Ահարեկում է և կանչում է քեզ,  
Հեծկլտում է խեղճ, անզոր ու տկար:
2. **Եվ իջնում** է մի անսահման թախիծ,  
Հիշում եմ նորից օրերս մեռած,  
Տիրություններս անուշ ու անբիծ  
Եվ ընդմիշտ անդարձ անուրջ ու երազ:
3. **Դանդաղ սահում** են օրերը դժկամ,  
Անձրև՝ ու քամի՝, տրտո՞ւնջ ու թախի՞ծ,  
Լույսերս ոսկի ընկան ու հանգան,  
Ցաված է սիրտս, փայփայեցե՞ք ինձ:
4. **Ինձ ահեղ թվաց** խնդրությունս նոր,  
Կարծես մի վերին ու նուրբ հրաշքով  
Լուսացավ իմ մեջ առավոտն անհուն:

**53. Նշել թագմապատկան բայերի քանակը.**

Ժեծկոտել, փետրատել, մրտել, հիհոալ, զողոզոալ, ճանկոտել, ճիւլտել, նստոտել,  
Ժանգոտել, վազվել, փայլվիլել, փշրտել, կտրատել, զրոտել, ցեխոտել:

**54. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում բազմապատկան քայ կա:**

1. Լեռնային անընդհատ շղթաներն իրենց բազմաթիվ ճյուղավորություններով կտրատել էին երկրի մակերևույթը:
2. Երկար փնտրտելուց հետո նրանք վերջապես գտան կորած հարազատներին:
3. Չայրույթից այլայլված դեմքին աչքերը փայլվում էին դանակի շեղի նման:
4. Ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցաբույր զեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը:
5. Լուսադեմին հողմը կայմից կտրեց մի քանի պարան և պատռեց չորրորդ առագաստը:
6. Բուխարուց, որտեղ բոցկլտում էին վերջին ածխակորերը, մերքընդմերթ ներս մտնող ծիսի քուլաները ավելի էին բարձրացնում սենյակի խավարը:

**55. Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում պատճառական քայ կա:**

1. Ամեն առավոտ, բերելով օրվա ուտելիքը և թարմացնելով կժի ջուրը, սպասավորը միշտ կրկնում էր նույն խոսքերը:
2. Արեղան տխուր ժպուում էր, հանգստացնում պատանուն՝ ասելով, որ ինքը լավ է զգում:
3. Գետնափորի թանձը խավարն ու գերեզմանային լուրջունը հիշեցնում էին, որ այդ բոլորն արդեն անդարձ երազ է:
4. Երկար ժամանակ քարացած հայացքով նայում էր խավարի մեջ. հետո նրա պրկված դիմագծերն ասես քուլացան:
5. Վերջացնելով նախադասությունը՝ նա ավագ ցանեց վերջին տողերի վրա և նայեց Ուկանին:
6. Լինում էին վայրկյաններ, երբ նա ուզում էր բողնել սքեմը, հեռանալ և անհայտության մեջ մոռացության տրվել:

**56. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում պատճառական քայ կա:**

1. Նրան իր հոր տանը պահել, մեծացրել էին այնպես փափուկ, ինչպես արքայական բուրաստանի գողտրիկ շուշանին:
2. Եգերացիները ուռենու դալար ճյուղերով կապկապում էին գերանները, միացնում և լաստեր կազմելով՝ հիշեցնում գետը:
3. Մի քանի կետերում հապճեառորեն քարաբեկորներ կուտակել տվեցին, որոնցով պետք է հարվածեին զորքին:
4. Մի ջերմացնող համակրանք պատեց նրան Առաքելի և մյուս շինականների նկատմամբ:
5. Վարդանը զինվորներին դանդաղ մոտեցրեց Տղմուտի ափին:
6. Նա հիշեցնում էր հոռետես նկարչի քմահաճ վրձնի տարօրինակ ստեղծագործություն:

**57. Տրված հատվածում նշել չեզոք սերի քայերի քանակը:**

Զոհրապը մտավ Լատինական թաղամաս: Հանդիպելու էր Արշակ Զոպանյանին, որը բնակվում էր Մոնե փողոցում: Պոլսից հետո, որտեղ երկրորդ ձերբակալումից Զոհրապը մի կերպ էր խոսափել, Փարիզում կյանքը փոխվել էր գրող-իրավաբանի համար: Հիմա նա պարզապես յուրաքանչյուր նյարդով զգում էր ապրելու հրճվանքը: Այստեղ մարդկանց աչքերի մեջ տագնաապ չկար:

Զոպանյանը մի հաճելի անակնկալ մատուցեց Փարիզի շնչով արքած Զոհրապին՝ տանելով նրան Մոնմարտը:

**58. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում չեղոք սեռի բայ կա:**

1. Բացվում է կրկին Նախրին տրտում,  
Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,  
Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:
2. Եվ մայրս ահա հիվանդ,  
Միտում է, արև ուզում,  
Նստած է հետս դրսում  
Անխոս ու մեղմ, հնազանդ:
3. Չեմ դավաճանի իմ Նվարդին,  
Որքան էլ դյուրես, օ՝, Շամիրա՛մ,  
Որպես արքան այն՝ մանուկ Արան,  
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
4. Ժեռ սարի կրծքից դու դուրս ես թռչում,  
Սառույցը ճեղքում, գոհարներ ցողում,  
Ծաղրանքով ձյունի երեսն ես թքում,  
Մոհայլ երկնի դեմ պայծառ ծիծաղում:
5. Լոել են արդեն երգերը հզոր,  
Ու էլ չեն հնչում խոսքերը հպարտ,  
Խավարն է գերել մեր հոգին այսօր  
Եվ լուրջունը՝ հավետ մահապարտ:

**59. Ընդգծված բայերից քանի՞սն են չեղոք սեռի:**

1. Որքա՞ն փոխված եք, պանված ճոխ,  
Ճեմում եք որպես դշխոն հպարտ,  
Եվ մի հեզնանք կա նուրբ ու զիջող  
Նայվածքում Ձեր խոր ու անզվարք:
2. Երբ դառն օրերի անխինդ խոհերում  
Վհատություն է տիրում իմ սրտին,  
Մեր ճեմարանն եմ ես մտաքերում,  
Որպես հոր տունը՝ անառակ որդին:
3. Իմ երկինքը հիմա բացված է,  
Իմ աչքերը հիմա լցված են,  
Լցված են զվարք ոսկով:
4. Եվ աղոքեց նա հիվանդ որդուն,  
Օրինեց երկրային ուղիս դժվար,  
Եվ լուսեղեն էր զիշերն արթուն,  
Եվ սիրտս ցալին պարզվեց հոժար:
5. Արևն արքնացավ, արևը մեզ ի՞նչ,  
Նա մեզ չի բերում իր շողերը զինջ,  
Մեզ մոայլ կամարն է հեզնում,  
Անսիրտ մեքենան ելնում ու ընկնում:

**60. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում կրավորական սեռի բայ կա:**

1. Իմ թախիծն էլ այն ամպի պես  
Ցնորում է քնքշաբար,  
Բոցավառվում՝ հիշելով քեզ,  
Եվ արտասպում քեզ համար:
2. Իմ հոգին որպես քափառիկ մի շուն,  
Մոլորված քայլով ու մահն աչքերում՝  
Ահարե՞կ, աճօ՞գ փախչում է հեռուն:
3. Կփակվեմ, կփակվեմ իմ խցում  
Ու մենակ, մեն-մենակ կմնամ,  
Խոհերի, մտքերի օվկիանում  
Մինչև լույս, մինչև մութ կլողամ:
4. Օրորված է հոգիս ձմեռվա  
Օրերի օրորով, ու անուշ  
Թախիծն է ծավալվել ինձ վրա:  
Եվ նուրբ է իմ կյանքը՝ որպես հուշ:
5. Ես չար հոսանքից մղված եմ հեռուն,  
Եվ անվերադարձ փակված է ուղին,  
Սի որք մանուկ է հոգիս մոլորուն՝  
Մատնված մութին ու մառախուտին:

**61. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կրավորական սեռի բայ չկա:**

1. Փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ և երրորդ հարկերի մեջտեղում: 2. Նեղլիկ պատուհանը բացվում էր դեմ հանդիման ցցված երկհարկանի տան կտորի ուղղությամբ: 3. Ամբողջ հորիզոնը ծածկված էր երկնածիգ թթենու փարթամ սաղարթով: 4. Երկնի լազուրը փերք-փերք երևում էր միայն երբեմն-երբեմն ծառի՝ զովաբեր քամուց օրորվելիս: 5. Այդ մենաստանում եմ գրել իմ առաջին տպագրված ուսանավորը: 6. Կարդացել եմ Դուրյան և լաց եմ եղել, ապա հափշտակված ըմբոշիսնել Սեծարենցի քնարը: 7. Սենք զայրույթով հետևում էինք չարախոս գրչակների կողմից նրա դեմ սկսված պայքարին:

**62. Նշել կրավորական սեռի բայերի քանակը:**

1. Երեքունիի պատկերագրությունները շուրջ երեք հազար տարի ծածկված են եղել հողի տակ:
2. Նրանցում արտացոլված են կյանքի՝ միմյանց հետ սերտորեն կապված բազմապիսի պատկերներ:
3. Կապույտի, դեղինի, կարմիրի նրբերանգներով պատկերված են որսի տեսարաններ, խաղողագրծության և խաշնարածության դրվագներ:
4. Վերցնելով պատի խոռոչում ամրացված մոմը՝ Ուսկանն զգուշորեն մոտեցավ նրան:
5. Նրանց մեջ կային զանազան գեղաքանդակ պնակներ, ափսեներ, թասեր, հայկական սև ու կարմիր կավից շինված նկարակերտ սափորներ:
6. Քազմոցները, գորգերը, բարձերը ցողված էին վարդաշրով, լուսամուտների գոգերին մեծ ծաղկամաններով դրված էին ծաղիկներ:

**63. Տրված հատվածներում նշել ներգործական սեռի բայերի քանակը:**

Սակայն նրան տանջում էր մի այլ հոգս ևս: Դա անձանոք ու հիվանդ հայի ծանր ու դժվարին վիճակն էր, որ ճակատագրի բերումով դարձել էր նրա մտատանջության առարկան: Ինչպե՞ս բողնել նրան օտար այս քաղաքում: Գնալ վաճառականների՞ն խնդրել, թե՞ հենց վաղը դիմել իր ընկերոջը՝ խնամելու հիվանդին: Գուցե ավելի լավ կլիներ հիվանդին ինչ-որ ժամանակ բուժելու համար մի որոշ գումա՞ր տալ իջևանի տիրուհում: Որոշեց լույսը բացվելուն պես դիմել իտալուհուն: Այդ էր պահանջում խոհեմությունը: Հիվանդի հանկարծական հառաջանքը կտրեց նրան իր խոհերից:

**64. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ներգործական սեռի մեկ բայ կա:**

1. Թեկուզ աշունն է տանս տիրանում,  
Եվ ձմռան հոտ եմ իմ տանից առնում,  
Բայց աշնանային մքնած մուրի մեջ  
Դու գարնան լույսն ես բերել ինձ նվեր:
2. Եվ ապրում ենք ափսոսալով  
Եվ դժվար ենք ուշքի գալիս,  
Որ ուշացած ուշքի գալով,  
Մի ողջ կյանք ենք տանով տալիս:
3. Քարերն այնտեղ մանկան աղբյուր՝  
Արցունքներն են քամում,  
Եվ ձկնիկներն արցունքի մեջ  
Ծիածան են ծամում:
4. Հոգու ծանր բեռն ուսերիս՝  
Ես տարիքս մոռանում եմ:  
Որոտանի կիրճ ասելիս  
Ես կիրճի պես խորանում եմ:
5. Հատակից քար ես հանում,  
Մաքուր է այնքան,  
Քարից բուրմունք ես առնում  
Կարմրախայտ ձկան:
6. Կոռում է նա զենքեր պես-պես  
Ու երկնչում ինքն իրենից,  
Ո՞ւր է գնում աշխարհն այսպես,  
Ո՞ւր է փախչում ինքն իրենից:

**65. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ներգործական սեռի մեկ բայ կա:**

1. Թող ազգերի կամքն անվարան  
Մահվան բերանը պատրի,  
Ինձպեսները գան ու գնան,  
Աշխարհին բան չպատահի:
2. Չարերի հետ նասում հացի  
Ու ժխտում է չարը,  
Այս չարչարված, չարագուշակ  
Ու չարիսափան դարը:
3. Ծլել ենք: Ապրել ենք ու բացել  
Մեզ համար մեր հոգու խորունկը  
Եվ էլի դժվար ենք հասկացել  
Մեր ցեղի գոյության խորհուրդը:
4. Եկել է մրրիկը ասիական,  
Եկել է ասիական մարախը,  
Խժոել է մեր հունձքը վաստակած  
Դատարկել մառանն ու մարագը:
5. Ապառաժներ են հոշոտում  
Ժամանակի ժանիքները,  
Իրար զլիսի փուլ են գալիս,  
Իրար հերքում հիխորտալով  
Ժամանակի ալիքները:

**66. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում մեկից ավելի ներգործական սեռի բայ կա:**

1. Սանձահարել, սանձել է պետք  
Ժամանակի չարիքները,  
Քանի դեռ մեր զլուխը կա,  
Եվ դեռ կան այդ զլուխի վերև  
Մեր սեփական տաճիքները:
2. Ու ես չասացի ոչ ոքի ոչինչ  
Սինչև այս երգը լույս աշխարհ եկավ,  
Ու կարդալու ես դու երկար, երկար  
Եվ թրջելու ես արցունքով քո ջինջ:
3. Տեսնենք՝ ջրերն ինչ են բերում,  
Տեսնենք՝ ինչ է անում քամին,  
Եվ ամփոփենք ամբողջ օրվա  
Առարածը ուրիշ անգամ:
4. Գարնան լույսի պես իմ տունը մտար,  
Եվ քո ձայնի մեջ զարնան լույսը կար,  
Թեկուզ աշունն է տան տիրանում,  
Եվ ձմռան հոտ եմ իմ տնից առնում:
5. Եթե չեք իջել թեկուզ մի ժամ,  
Խաղաղ չեք ննջել թեկուզ մի ժամ  
Իշխանասարիս վրաններում,  
Չվո՞ղ բոշուններ, ձեզ չեմ ներում:

**67. Նշել այն շարքերի թվահամարները, որոնցում միայն անկախ դերքայներ են:**

1. աղացել, հեռանալ, տեսնել, իջնել
2. վխտալ, փախչել, ընթերցել, հազել
3. ուրախացնել, մոտենալիս, ծիծաղել, նստած
4. ծխալիս, հանգչող, կպած, մեծանալ
5. վախեցել, թվալ, տեսնել, բուրել

**68. Նշել այն շարքերի քանակը, որոնցում միայն անորոշ դերքայներ են:**

1. կորցնել, թռչկոտել, թոցնել, իմացվել
2. մեծացնել, ծանոթանալ, գրալ, վախեցնել
3. գրացել, արագացնել, գտնել, պսպղալ
4. կպչել, սառել, բարմացնել, հանգչել
5. լինել, խոսել, ուշչել, հպարտանալ

**69. Նշել անորոշ դերքայների քանակը:**

1. Եթե չեք իջել դուք երբեք  
Ու չեք անրջել դուք երբեք  
Աղոթարանիս լճակներում,  
Չփո՞ն կարապներ, ձեզ չեմ ներում:  
2. Արդեն չես ուզում դրսում երևալ,  
Չես ուզում, որ քեզ տեսնեն քայլելիս,  
Չես ուզում արդեն մայրին երերալ,  
Ցուպով բազմակետ դնել քայլելիս:  
3. Մեկ-մեկ այնպես է թվում,  
Թե ջահել եմ դեռևս.  
Ուզում եմ վեր պանալ,  
Եվ չեն բացվում թևերս:  
4. Զուրն ընկանք, կրակն ընկանք,  
Զմեռանք, բայց և չամրացանք,  
Խլացանք շատ լսելուց  
Եվ շատ լսելուց համրացանք:  
5. Ստվերիս վրա փլվել,  
Փովել եմ հայրենի արտում,  
Հայրենի արտի վրա  
Արտույտն իմ հայրենն է կարդում:

**70. Տրված հատվածում նշել անկախ դերքայների քանակը:**

Հաջորդ գարնանը մեր արագիլը եկավ մեն-մենակ: Բույնը դիտելուց հետո գնաց կանգնեց ճահիճը, կանգնեց կնոջ զարկված տեղի վրա, կանգնեց ու նորից եկավ բույնը: Եվ ամեն օր գնում էր նա այնտեղ, մի ոտքի վրա ժամերով տխուր կանգնում՝ վիզը ծռած, գլուխը թևերի տակ դրած: Տեսնում էինք հաճախ, թե ինչպես մի արագիլ մոտենում է նրա քնին, սկսում է նրա հետ խոսել ու դժվար հեռանում է: Երբեմն էլ այդ եկվոր արագիլները փորձում էին նատել բնի մեջ, բայց նա մերժում էր և բույն մտնելիս նրանց հեռացնում: Քանի մեր արագիլը վանում էր նրան, նա նույնքան համառությամբ գալիս էր, նորից թևերը փոռում արագիլի վրա:

**71. Ընդգծվածներից նշել ձևաբայերի քվահամարները:**

Չատ դարեր առաջ արևելքում մի փառահեղ իշխան 1. է լինում: Անունը 2. **Մոռացվել** է, բայց գործը 3. **հիշվում** է: Չարունակ դավեր 4. է նյութել դրացի իշխանների դեմ՝ 5. **գրավելու** նրանց սեփական երկրներից մասը ու խոշոր հողամասեր, և դավերի ու կորիվների մեջ 6. **հաջողելով՝** 7. **դարձել** է բոլորից մեծ և բոլորից ուժեղ: Այդ կովասեր իշխանը շրջապատի իշխանությունները 8. **փոքրացնելուց** ու հարկատու դարձնելուց հետո 9. **ելնում** է աշխարհակալության:

**72. Ընդգծվածներից նշել ձևաբայերի քանակը:**

1. Աղջիկը **հոգնած՝** մի փշակի մեջ  
Կուչ եկավ, քննեց մինչև լուսաբաց,  
Գյուղը **դառնալու** ճամփա որոնեց,  
Բայց դարձյալ ծառեր, անտառ անթափանց:
2. Երգում է քամին, **լալիս** է նորից,  
Անհույս ու անվերջ **մղկանում** է նա,  
Այս մութ գիշերում այնքան կա թախիծ,  
Այնքան տրտունջ ու գանգատ կա հիմա:
3. Տիսուր ամպերը կամար են **կապել,**  
Անձրևն՝ ու քամի՝, տրտո՞ւնջ ու թախիծ,  
Դուք կարող եք գեր սուս սիրով **խաքել,**  
Հիվանդ է սիրտս. փայփայեցե՛ք ինձ:
4. Աղոթքս պարզ է և նրբահյուս,  
**Սեռնողի** վերջին կանչ,  
Հայտնվի՞ր որպես լույս արշալույս  
Իմ հոգուն մահատանջ:
5. **Քացված** է արդեն մի ուրիշ երկիր,  
Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա,  
Ուկի հայացքով կախարդել է նա,  
Այլ սիրով լցրել հոգիս վշտակիր:
6. Եվ **արքած** կյանքի անուշ գաղտնիքով,  
Ողջույն կտամ ես ջրին ու հողին,  
Կկանչեմ զվարք ու արթուն երգով  
Անցուղարձողին:

**73. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում հարակատար դերքայ կա:**

1. Մութ գիշերում կնստեմ՝  
Լցված սիրով խնդազին,  
Քո գաղտնիքը ես գիտեմ,  
Բայց չես ասի ոչ ոքի:
2. Ամայացած իմ սրտում,  
Սենության մեջ իմ սև տան  
Փոխ՝ քնքուշ ու տրտում  
Ժայռը քո խնդրության:
3. Սի գարնան հերիաք՝ քեզ վրա հյուսված,  
Հնչում է դարձյալ իմ դյութված սրտում,  
Եվ լուսեղեն է զիշերս արթուն,  
Եվ սիրտս տիսուր սիրով է լցված:
4. Նայվածքով խորին եկար, ներո՞ղ,  
Եկար կրկին գերող, խորհրդավո՞ր,  
Եկար հուշիկ, անշար ավաղներով,  
Օրորներով ամենօրոր:

**74. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում փոխանվանաբար գործածված հարակատար դերքայ կա:**

1. Զրի բերածը տանք նորից ջրին,  
Թող թեփը տանի, ոսկին լոկ մնա:
2. Ծառերը մրսած մատների վրա  
Իրենց քրքրված ստվեր-կմախրի  
Ցողերն են հաշվում:
3. Ստվերները խեղդվում են շոգից,  
Բարդիները մրսում են,  
Սեր տանը մեռածներն են, հոգին,  
Ապրողները դրսում են...
4. Ինձ՝ երգի տաժանքն ու գերությունը,  
Մնացածը՝ ձեզ,  
Ձեզ այս աշխարհն ու այս տերությունը:
5. Երե մինչև անգամ ինձ վտարած լինես,  
Վերհուշերիդ վերջին խոնավ քարանձավից,  
Սիևնույն է, կգամ, ինչ էլ լինի, կգամ:
6. Խելքս քո խրատից չկշտացավ,  
Տված ու խվածից չկշտացավ,  
Աշխ, կրակված սիրտս, անսի՛րտ աշխարհ,  
Անսիրտ քո կրակից չկշտացավ:

**75. Նշել ենթակայական դերբայների քանակը:**

1. Չվող թռչուններն անցան-գնացին  
Շարան առ շարան,  
Մնացողները կծիկ են դառնում  
Թրջվելու վախից:
2. Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ  
Լույսի խտութից զարթնած սարերը:
3. Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու  
Փնտրել անհնարն ու անկարելին:
4. Նստեցեք, հով անեմ շոգին,  
Մրգերս քաղեցեք մեկ-մեկ,  
Տնկողիս ողորմի՝ տվեք:

**76. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ենթակայական, հարակատար և համակատար դերբայների կազմության սխալ կա:**

1. Սեր քաջարի որսորդները վտանգավոր որսի հանդիպելուց հրացանը հենում էին գետնի մեջ տնկած եղջյուրների վրա:
2. Հոնքերը խոժողացրած և աջ ձեռքը դաշույնի կորի վրա դրած՝ ընկերս նայում էր հեռավոր հորիզոնին:
3. Մորեղբայրս պիտի զբաղվեր իմ վիճակով. ուրիշ հովանավորող չունեի:
4. Ինձ թվում էր՝ գնացողները խոճում էին մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:
5. Նավամատույցի ծայրում նստացրած մի խումբ աշակերտներ ապշանքով նայում էին իրենց առջև սփոված անծայրածիր ծովին:
6. Ծովի վրա ինձ համար ամեն ինչ նոր էր, բարմացնող, գրավիչ, ինչպես մի երազ:

**77. Տրված հատվածում նշել վաղակատար դերբայների քանակը:**

Տասնյակ տարիներ էին անցել: Բաքու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչի: Որքա՞ն փոխվել էր նա: Նրա զգացված մորուքը ճերմակ էր բամբակի պես, արագաշարժ ոտքերը բուլացել էին: Նա մեջքից կորացել էր, վառվորուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես: Բայց նա հպարտությամբ փորձեց պատասխանել իմ բարեկն, ուղիղ ու ճիգ կանգնել, ու ես զգացի, որ սիրում ու հարգում եմ նրան:

**78. Ընդգծվածներից նշել ապակատար դերքայների քանակը:**

1. Արժե՞ր, որ այդքան ժայռեր փշրեիր  
Քարքարոտ մի հուն մտնելու համար,  
Պարզ ու նախնական  
Մի ճշմարտություն կրկնելու համար:  
2. Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր,  
Երբ որ ուժերդ չէին ներելու՝  
Քո իսկ էության  
Փախած քենոներն իրար քերելու:  
3. Երբ ամպրոպի պես չէիր պայթելու,  
Չէիր վանելու այս մեղկ մարդկության  
Եվ մարդու մեղքերն աշխարհից հեռու,  
Արժե՞ր, որ այդքան դու որոտայիր:  
4. Խոնարհվիր նրանց շիրմաքարերին,  
Ով գնաց, գնաց, ել ետ չի գալու,  
Ու եկողներն ել խորհուրդ չեն տալու,  
Փնտրել անհնարն ու անկարելին:  
5. Ու բաժանվելիս տիրենք ես ու նա,  
Ինքը հոտոտի հետքերը ներու  
Կամ իր վիթիկին կուրծք տալու գնա,  
Ես գնամ նորից՝ ինձ որոնելու:

**79. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում մեկից ավելի անկատար դերքայ կա:**

1. Երբ ձյուն է նստած սարերի վրա,  
Եվ դեռ չեն պայթել հունդերը հողում,  
Որոտնաբերդի քարերի վրա  
Օձերն այդ պահին շապիկ են փոխում:  
2. Որոտանի կիրճ ասելիս  
Ես կիրճի պես խորանում եմ,  
Ես սրբերի խորանում եմ  
Որոտանի կիրճ ասելիս:  
3. Հատակից քար ես հանում,  
Մաքուր է այնքան,  
Քարից բուրմունք ես առնում  
Կարմրախայտ ձկան:  
4. Օվկիանոսները ելնում են ափից  
Եվ պատառոտում իրենց անխնա,  
Խելազարվել է լյանքը տագնապից,  
Իսկ ինձ ասում են թե՝ խելո՛ք մնա:  
5. Ապառաժներ են հոշոտում  
Ժամանակի ժանիքները,  
Իրար զլիսի փուլ են գալիս,  
Իրար հերքում հոխորտալով:  
6. Երկրպագում եմ ստվերը հասկի,  
Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը  
Հասկի ստվերում ննջած մրջունը:

**80. Ընդգծվածներից նշել ժխտական դերբայների(ձևաբայերի) քանակը:**

1. Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի  
Բան չի դրել մեր բախտի ամանում,  
Եվ չդրածն էլ շատ է համարում:  
2. Եթե չեք իջել դուք երբեք  
Ու չեք անրջել դուք երբեք  
Աղոթարանիս լճակներում,  
Չվո՞ղ կարապներ, ձեզ չեմ ներում:  
3. Ես ձեր խիղճն եմ, ինձ մի՛ խարեք,  
Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք,  
Ինձ մի՛ կտրեք, ձեր երակն եմ:  
4. Չե՛, աստված չկա: Լիներ՝ անպատճառ  
Սեզ իր մեծության սրբազն ծառից  
Կտար բարության այնպիսի պաշար,  
Որ հող չմնար խափանված չարից:  
5. Մենակությունն է քայլ պահում քեզ հետ,  
Երբ չունես արդեն ուրիշ լճակից,  
Որպեսզի դու քո դեմքը չտեսնես,  
Փախչում ես անգամ լիճ ու լճակից:

**81. Քանի՞ դիմավոր քայ կա տրված հատվածում:**

Հասկանալ տրված է միայն նրանց, ովքեր գիտակցում են ամբողջ պատասխանատվությունը: Պատկերացրո՛ւ, թե ինչ կատացվի, եթե ամեն մեկը, ով չի ծովանում, սկսի կապարը ոսկու վերածել: Միայն համառներին և գիտակներին է հասու Մեծ արարման գաղտնիքը:

**82. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում սահմանական եղանակի քայածն կա:**

1. Ես շատ սերեր ունեի,  
Ո՞ւր մնացին սերերս,  
Կանաչ-կարմիրս թռավ,  
Երես առան սերերս:  
2. Չե՛, ամայությունը, ասենք ուղղակի,  
Կապերն է կտրել, երես է առնում:  
3. Հավքե՛ր, երևի գիտեիք նրան,  
Չվելուց առաջ լա՞ց եղաք վրան:  
4. Տուն կգան, բուն կդնեն  
Քո Լորի լորերը նորից,  
Ափսո՞ս, որ հետ չեն գալու  
Քո ապրած օրերը նորից:  
5. Բաշխել եմ, ինչ ունեի,  
Ինձ համար նշխար չեմ պահել,  
Իմ ապրած երկար կյանքից  
Չգիտեմ, թե ինչ եմ շահել:

**83. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում սահմանական եղանակի մեջ ավելի բայաձև կա:**

1. Այնքան եմ հեռացել ես  
Իմ սիրո հպարտ հասակից,  
Որ ձայնս հետ չի գալիս  
Չրիորի խորունկ հատակից:
2. Քեզանից նամակ չկա.  
Փոստատարն ամոթով մնաց,  
Իրենն էր մեղքը կարծես,  
Ծփոթվեց, բողեց ու գնաց:
3. Ու տեսնեմ արցունքն ուրախ՝  
Մեռոնի մերանը տատիս,  
Աշխարհիս տատերի մեջ  
Էլ չկա նմանը տատիս:
4. Երկրպագում եմ ստվերը հասկի,  
Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը:
5. Դաշտերին, դաշտերին բոերով  
Տանում են ջուր տալիս կիրճերը,  
Սի պարան-առվակի ջրով  
Քերծերն են ջուր տալիս կիրճերը:

**84. Նշել ըղճական եղանակի բայաձևների քանակը:**

1. Ի՞նչ անեմ ես՝  
Սոլորյալս՝ խեղճ ու կրակ,  
Որ դառն ու տոք,  
Ինքնազլուխ իմ օրերում  
Իրար քերեմ քևեռները իմ հակառակ,  
Մեկմեկու հետ հաշտեցնեմ:
2. - Արդա՛ր բաշխիր հացդ արդար  
Սովյալներին ու անկյալին,  
Տո՛ր, բող ուտեն, չխնայես  
Ոչ մի պատառ,- ասեմ, գնամ:
3. Քանի դեռ ելք ու հնար  
Չես գտել՝ մահդ կանխելու,  
Դու պիտի մնաս այսպես,  
Աչալուրջ, ակնբա՛ց աշխարհ:
4. Նեղություն շատ եմ քաշել,  
Որ մարդկանց նեղություն չտամ,  
Խավարին և կասկածին  
Հոգուս մեջ տեղուտուն չտամ:
5. Թե մի կում ջուր խմես դու  
Սալվարդի աստղահամ լճից,  
Սինչև մահ քեզ կփրկես  
Հոգնության ծանրակիր լժից:

**85. Ընդգծվածներից նշել ըղձական եղանակի բայաձների քանակը:**

1. Գլուխներս առած գնում ենք այսպես,  
Մինչև մոլորված մեր ոտքը **զայթի**,  
Եվ **ընկենաք** ամստակ անդրւնուն անհատակ:  
2. Մինչև նրանք **հասցնեին**  
Հանգուցյալից պատմել մի հուշ,  
Զարթնած հավը կանչեց քարին.  
Ծնվող օրվա ճիշն էր անուշ:  
3. Ինձ **կիշեն** ամեն անգամ,  
Երբ ամպը **բաղրի**,  
Եվ քարափի բամբից կախված  
Սասրենին ծաղկի:  
4. **Գիտեմ**, որ հետ եք գալու  
Դուք հոգնած ու լուռ, կռունկնե՞ր:  
**Չտխրեք**, թե որ տեսնեք  
Իմ տեղը թափուր, կռունկնե՞ր:  
5. Լուսաբացի թավշյա փեշով **սրբեմ**  
Ծիր-կարինոտ ճակատն իմ Սալվարդի,  
Հոգնած իմ տարիքից չնեղսրտեմ,  
Խմեմ պաղ ջուրն ու կաթն իմ Սալվարդի:

**86. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ենթադրական եղանակի բայաձն կա:**

1. Որտեղից եկանք և ո՞ւր ենք գնում,  
Երեկ չկայինք, վաղը չենք լինի,  
Զրից դուրս գալիս կրակն ենք ընկնում  
Խոկալով խորհուրդն այս երկրայինի:  
2. Ինձ կիշեն ամեն անգամ,  
Երբ մտնեն անտառ,  
Լսեն խելոք կաղնիների  
Հերիաթներն անբառ:  
3. Քեզ այցի կգամ, ապրում եմ քանի,  
Ու լաց կիհնեմ հուշերիս վրա,  
Եվ կհեռանամ՝ քո գերեզմանի  
Քարի ծանրությունն ուսերիս վրա:  
4. Կոիվ տայի անդադար,  
Որ փրփրեի ջրի պես,  
Թափառեի քարեքար,  
Քար փշրեի ջրի պես:  
5. Չէ, աշխարհի սարերի մեջ  
Չուներ հավասարը  
Հարգանքը մեծ ու սիրտը մեծ  
Աղոթարան սարը:  
6. Հավը ուզեիր, նա քեզ կտար  
Մեկի տեղ հազարը,  
Հավքի բույն էր փեշից կատար  
Աղոթարան սարը:

**87. Տրված հատվածում նշել հարկադրական և ենթադրական եղանակների բայաձևերի քանակը:**

Լուսաբացին արտատերը արտղ ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա, մատներով տրորի հողը՝ տեսնի՝ խո՞րն է ծծել ջուրը:

Լառ-Մարգարը, զիշերվա ջրտուքից բեզարած, պառկում էր բարդիների տակ, ոտն ու ձեռը փոռում լայն ու հանգիստ:

Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը հեռու սարերի հետև պահված իրենց գյուղը կտեսներ՝ կտուրները եղեգով ծածկված:

Լառ-Մարգարը, ծիրանուտի տակ պառկած, ցերեկվա շոգին ծիրանի ճյուղերի արանքով կնայեր երկնքի կապույտին, ամպի սպիտակ քուլային, որ ճերմակ լարի պես պետք է սուզվեր կամ պոռունկները պետք է հաներ:

**88. Նախադասություններից քանիսո՞ւմ կա հարկադրական եղանակով դրված բայ:**

1. Ամենափափառ պետք չէ մարդկանց նեղացնել մանրութների պատճառով:
2. Այնպիսի երգեր են պետք, որ հուզեն ամենքի հոգիները:
3. Նա հայտնեց, որ իրեն մի քանի անհրաժեշտ իրեր գնելու գումար է պետք:
4. Նա անպայման պետք է ինձ հետ աշխատի:
5. Նա խոստացավ, որ պիտի մի քանի օրից գործընկերներին հանդիպի:

**89. Նշել հրամայական բայաձևերի քանակը (առողանության նշանները դրված չեն):**

1. Երեկոն փոեց իր քերը մութ,  
Անուշ նիրիեցին երկինք ու երկիր,  
Աչքերդ փակիր, ինձ քննուշ գրկիր,  
Սուտ կյանքին խառնիր երազանքը սուտ:
2. Դժկամ նայում են ժայռերը խոժոռ,  
Տխուր խաղում են ալիքները ժիր,  
Ընդունիր հոգիս մոլոր, մենավոր,  
Վերջին աղոթքիս խոսքը մի մերժիր:
3. Լաց վերջին լացդ, սիրտ իմ մենավոր,  
Վերջին արցունքդ հեկեկա, թափիր,  
Երազ երգ ու սեր, օրոր ու օրոր,  
Սիրտ իմ, հանդարտվիր:
4. Անցեք հուշեր իմ ապարդյուն,  
Դարձեք ընդմիշտ մոռացված էջ,  
Անհուն փովիր, սև լուություն,  
Միայնության իմ հոգու մեջ:
5. Դանդաղ է քայլում հոգնատանց իմ ձին,  
Եվ տաղտկալի է այս ուղին մոլոր,  
Չիշել, մերժել տենչերս բոլոր  
Եվ ցնորքներս, որ ինձ խարեցին:

90. Ընդգծվածները տրված եղանակներից որո՞նց են համապատասխանում  
(նշել թվահամարները՝ հաջորդականությունը չխախտելով):

Որքան էլ զիշերն ահավոր իջնի,  
Եվ ուր էլ գնամ գլուխ դնելու,  
Հարազատ մի հող ես չեմ գտնելու  
Սև ճանապարհիս օրերում դժնի:

- 1) Ենթադրական
- 2) ըղձական
- 3) սահմանական
- 4) հարկադրական

91. Ընդգծվածները տրված եղանակներից որո՞նց են համապատասխանում  
(նշել թվահամարները՝ հաջորդականությունը չխախտելով):

Դառն օրերի տառապանքում սրտմաշուկ,  
Խավար կյանքի ուղիներում շարական  
Հոգիս լսեց սիրակարոտ մի շշուկ,  
Սեկը սրտիս քաքուն ժպտաց. «Ես կգամ»:

- 1) սահմանական
- 2) հարկադրական
- 3) ըղձական
- 4) Ենթադրական

92. Նշել անկանոն և պակասավոր բայերի քանակը:

1. Զգիտեմ՝ որտեղից է գալիս  
Չութակի հեկեկանքը տրտում  
Եվ լալիս է անվերջ ու անվերջ  
Եվ անվերջ ծավալվում իմ սրտում:
2. Աշխ, երանի չէ՞ր բյուր և բյուր անգամ,  
Որ կույր ու անգետ լինեի կրկին:
3. Դու անցնում ես ամեն օր,  
Անցնում, ինձ չես նկատում,  
Եվ դարձել եմ ես սովոր  
Քամահրանքիդ անհատնում:
4. Տարիներն անցան, և իին օրերին  
Նայում եմ ահա անտարբեր սրտով,  
Եվ որպես գերին հլու իր բեռին,  
Տանում եմ կյանքի օրերն անվրդով:
5. Էլ ոչ մի կանչի ես ձայն չեմ տալիս,  
Ու եթե հանկարծ խոսքերդ հնչեն,  
Եթե տեսնեմ քեզ վերադառնալիս,  
Քեզ ինչպե՞ս կանչեմ....

**93. Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում պակասավոր բայ չկա:**

1. Վառվում է մոմք դողդոջ փայլերով  
Հեռու անկյունում,  
Ելնում ես անխոս, հպարտ քայլերով,  
Մահապարտի պես այնտեղ ես գնում:
2. Բոլոր հույսերին օրոր է ասում,  
Օրոր է ասում,  
Բարախուն սիրտս գրկել է ուզում.  
Անխար խնդրություն ոսկե երազում:
3. Չկան օրերն ահարկու,  
Չկա ժամ ու ժամանակ,  
Ուրվական ենք մենք երկու  
Սիշտ իրար հետ, միշտ մենակ:
4. Ոսկեհանդերձ եկար և միզասքող,  
Տխուրաչյա՛ աշուն, սիրա՛ծ աշուն:
5. Տեսն՞ո՞ւ ես՝ որքան, որքան արագ  
Անցնում են բոլորն ու դառնում հուշ:

**94. Նշել պակասավոր բայերի քանակը:**

1. Կա միայն մի խնդրություն՝  
Արժան և հավետ,  
Լինել անզեն ու անտուն,  
Չարչարվել անվերջ:
2. Ի՞նչ ունեմ ես,  
Սի՞րտ իմ անքուն, մրրկուն,  
Սի՞րտ անարզված, սի՞րտ հրակեզ,  
Իմ երկրի պես, իմ երկրի պես հավետ նկուն:
3. Արժե՞ր, որ այդքան դու քեզ քրքրեիր,  
Երբ որ ուժերդ չեն ներելու:
4. Ինչ եղել եմ, եղել,  
Սիայն չասեք, թե ես  
Ավելորդ եմ եղել:
5. Գալիս ես որպես իրարանցում  
Եվ անցնում ես որպես երազ,  
Կյա՞նք իմ, դու ձրի ներկայացում,  
Բայց ինչքան քանի ես նստում վրաս:
6. Ես կզամ, կնսուեմ հողիդ,  
Եվ հողդ զորանալ կտա,  
Ամեն մի քարդ ինձ կառնի,  
Մտքիս մեջ խորանալ կտա:

**95. Ընդգծվածներից նշել պակասավոր բայերի քանակը:**

1. Իմ այս երկար կյանքում  
Շատ եմ տեսել, մարդիկ,  
Մայրամուտի կարմիր հոգեվարքից հետո  
Քարափները երկար կարմրին են տալիս:
2. Ամպրոպից հետո  
Բարի է լինում արևն ավելի,  
Եվ մենք ավելի սիրով ենք իրար  
Բարի լուս ասում:
3. **Տվել եմ քեզ բախտս անխառ,**  
Արևս, երկինքս  
Եվ ինչքս, որ մինչև անգամ  
**Չունեի ես ինքս:**
4. Եթե մինչև անգամ  
Լսած լինես, թե ես այս աշխարհում չկամ,  
Սիևնույն է, կօամ, ինչ էլ լինի, կգամ:
5. Ի՞նչ են շշնջում  
Ակներից փախած  
Իմ առվակները:  
Վեր կենամ զնամ,  
Քարեքար ընկնեմ,  
Գտնեմ ակները:

**96. Նախադասություններից քանիս՞ւմ մակրայ կա:**

- 1) Վերջապես զիշերն ընկավ:
- 2) Գիշեր-ցերեկ նա հանգիստ չուներ:
- 3) Գիշերվա քունը նա ոչ մի քանի հետ չէր փոխի:
- 4) Նա որոշեց ճամփա ընկնել զիշերով:
- 5) Միանգամից չկարողացավ հարցերին պատասխանել:

**97. Նախադասություններից քանիս՞ւմ մակրայ կա:**

- 1) Արտաքուստ նա մեր աշքին շատ հանգիստ էր երևում:
- 2) Նա խոստացավ առհավետ հավատարիմ մնալ իր խոստումին:
- 3) Մանկուց նա դրսնորել էր իր արտակարգ ընդունակությունները:
- 4) Նորից չեն սիրում, սիրում են կրկին:
- 5) Բազմիցս խոսել էինք այդ մասին, սակայն արդյունքի չեինք հասել:

**98. Որո՞նք են ձևի մակրայներ (նշել համարները).**

- 1.հազիվ, 2. առաջ, 3. դանդաղորեն, 4. միշտ, 5. ձեռաց, 6. մանկուց, 7. երիցս, 8. հոտնկայս, 9.վերջերս:

99. Որո՞նք են ժամանակի մակրայներ (նշել համարները).

1.հավետ, 2. բացեիբաց, 3. եռակի, 4. հազիվհազ, 5. խստիվ, 6. օր օրի, 7. մոտավորապես, 8. հաճախակի, 9.այլն:

100. Տրված նախադասություններում ընդգծվածներից քանի՞ն են կապ:

- 1) Բաժակը **ձեռքիցս** պատահաբար ընկապ:
- 2) Գրիչը վայր ընկավ նրա **ձեռքից**:
- 3) Քո **ձեռքից** ես կրակն ընկա:
- 4) Նրա հողվածը **ձեռքից ձեռք** անցավ:
- 5) Նա **ձեռքով** արեց, և մենք մոտեցանք:

101. Նախադասություններից քանիսո՞ւմ է **առաջ-ը** կապ:

- 1) Առաջ նա այդպես չէր ընկալում իմ խոսքերը:
- 2) Դուն առաջ նստած շունը ուշադիր նայում էր մեզ:
- 3) Նա կպատասխանի քեզնից առաջ:
- 4) – Առաջ, - հրամայեց զորավարը:
- 5) Երիտասարդը մի փոքր էլ առաջ գնաց, և մի չքնաղ տեսարան բացվեց նրա առաջ:

102. Տրված բառերից քանի՞ն են կապ.

Վաղ, տակ, հետ, դեպի, ապա, իր, այլնս, ուրեմն, առթիվ, նույնիսկ, կամ:

103. Տրված բառերից քանի՞ն են կապ.

հանդերձ, միջև, երիցս, երբ, գրեթե, շնորհիվ, պատիվ, ի հեճուկս, հօգուտ, վրա:

104. Նախադասություններից քանիսո՞ւմ է շաղկապը կապել նախադասության անդամներ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Միլիոնատիրոջ և աղքատ աղջկա միջև չի կարող լինել ոչ մի առնչություն:
- 2) Հանկարծ մի լույս ցայտեց և սկսեց պտտվել վանքի խոժոռ պատերին:
- 3) Չեկա և չիմացա ոչինչ:
- 4) Կին թե տղամարդ դուրս էին եկել շաբաթօրյակի:
- 5) Չիմացավ թե երբ նրա սրտում բույն դրեց այդ զգացմունքը:

105. Նախադասություններից քանիսո՞ւմ է **որ-ը շաղկապ**:

- 1) Ու նորից լոեց երգը, **որ** սավառնում էր կտրիճ դյուցազունների գլխավերևում:
- 2) Այդ միջոցին մի հումկու արծիվ, **որ** սավառնում էր նրանց վրայով, շեշտակի իջավ:
- 3) Նա զգում էր, **որ** շղթայված են իր միտքն ու հոգին:
- 4) **Որ** դու ճիշտ ես, ոչ որ չի կասկածում:
- 5) Խոռվ աղմուկը, **որ** ելնում էր ճահճուտներից, նինջի նման իջնում էր գյուղի վրա:

106. Թվարկվածներից քանի՞ն են համադասական շաղկապ.

բայց, թեկուզ, մինչև որ, հետևաբար, սակայն, որոնք, իսկ, եթե, երբ:

**107. Թվարկվածներից քանի՞ն են ստորադասական շաղկապ.**

Հնայած որ, թեկուզ, թեև, բայց, ոչ միայն....այլև, հենց որ, ու, թեպետև, նույնպես, քանի դեռ:

**108. Ընդգծվածներից քանի՞ն են վերաբերական:**

- 1) – Այ հիմաք անմիտ, - հայիոյեց ծերունին:
- 2) Նա երկի այսօր չի զա դասի:
- 3) Թանձր քողի նման ծուխը նատում էր կտորի վրա:
- 4) Հենց ավարտես աշխատանքը, տեղյակ պահիր:
- 5) Հենց քեզ էի ուզում տեսնել:

**109. Նախադասություններից քանիսո՞ւմ կան վերաբերականներ:**

- 1) Եթե այդպես կարծես, կսխալվես:
- 2) Կարծես երեկ լիներ մեր ծանոթության օրը:
- 3) Ինչպես մի մոայլ ուրվական, խավարի միջից նայում էր վանքը:
- 4) Ինչպե՞ս պիտի այսուհետ ապրեմ:
- 5) Ամենահասարակ հարցն անգամ չկարողացավ լուծել:

**110. Թվարկվածներից քանի՞ն են վերաբերականներ.**

անշուշտ, գեթ, մոտ, փոքր-ինչ, արդյոք, իբր, չգիտես ինչու, մյուս, անկասկած, ինչ-ինչ, նույն:

**111. Թվարկվածներից քանի՞ն են վերաբերականներ.**

Երկի, գուցե, պատահաբար, եռակի, արդեն, իսկապես, հիրավի, հանկարծակի, գեթ, այս, անիրաժեշտաբար:

**112. Նախադասություններից քանիսո՞ւմ ձայնարկություն չկա (նախադասությունները կետադրված չեն):**

- 1) Վայ նրան ով կդավաճանի իր հայրենիքին:
- 2) Այս մեր սիրտը լիքը դարդ ցավ:
- 3) Ինչ ես այ պառավ էլ ինձ անհծում...
- 4) Շուտ փախեք եկավ....
- 5) Տո անգամ ինչ ես կանգնել դուրս գնա...

**113. Թվարկվածներից քանի՞ն են ձայնարկություն.**

Չան, ախալեր, լավ, հարայ, հեյ, հիմա, տեսնես, թրղխկ, այ:

#### **114. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալների քանակը:**

Կանաչության անորոշ բույրերով հագեցած թմրաբեր օդից և երկար ժամանակ պառկած լինելուց նա քայլում էր հաճելի մի գիտապույտով և մերթընդմերթ թիկունքի տակ զգում սպիտակած վերքի թույլ տնքոցը:

1. **զգում էր** – սահմանական եղանակ, անկատար անցյալ
2. **հագեցած** - հարակատար դերբայ, ներգործական սեռ
3. **լինելուց** - պակասավոր բայ, անորոշ դերբայ
4. **տակ** - կապ, հետադրություն
5. **կանաչության** - գոյական, ան արտաքին հոլովում

#### **115. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալների քանակը:**

Դեռ մի քանի ժամ կար մինչև ճաշը, բայց դահլիճն արդեն կազմ ու պատրաստ էր. պատուհանների ու դարակների մետաքսյա վարագույրները վեր էին բարձրացած, և նրանց միջից երևում էին բոլոր թանկագին անոթները:

1. **կար** - պակասավոր բայ, ըղձական անցյալ
2. **մինչև** - կապ, նախադրություն
3. **բոլոր** - անորոշ դերանուն
4. **երևում էին** - սահմանական եղանակ, ներգործական սեռ
5. **նրանց** - անձնական դերանուն, հոգնակի թիվ
6. **բարձրացած** – պատճառական բայ, հարակատար դերբայ

#### **116. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալների քանակը:**

Մոլաց իշխանը՝ Արտակը, իջավ նժույզից, սանձը տվեց թիկնապահին և զգուշորեն մոտ գնաց այն խրճիթին, որտեղ ապաքինման էր բողել Անահիտին՝ թունավոր նետից վիրավոր:

1. **տվեց** - դիմավոր բայ, պարզ ժամանակաձև
2. **թիկնապահին** – հասարակ գոյական, որոշյալ առում
3. **բողել** - անդեն բայ, անորոշ դերբայ
4. **գնաց** – կանոնավոր բայ, չեզոք սեռ
5. **իջավ** - է խոնարհման պարզ բայ, անցյալ կատարյալ ժամանակաձև

#### **117. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Օգոստոսի արևը կիզել էր վտիտ բուսականությունը, և զորշ տափաստանն իր ամայությամբ ճնշում էր բոլոր ճամփորդների հոգիները:

1. **օգոստոսի** – հատուկ գոյական, սեռական հոլով, **և** - համադասական շաղկապ
2. **կիզել էր** - դիմավոր բայ, բաղադրյալ ժամանակաձև, **վտիտ**- ածական
3. **բուսականությունը** - գոյական, **ան** հոլովում, **իր** - անձնական դերանուն, սեռական հոլով
4. **ճնշում էր** - դիմավոր բայ, ներգործական սեռ, **բոլոր** - անորոշ դերանուն
5. **զորշ** –ածական, **հոգիները** - գոյական, **ի** հոլովում

**118. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Չատ տարիներ են անցել այն օրից. այժմ իմ արածն ինձ որոշ չափով դոնքիշոտություն է թվում, և ես գրականության մեջ գտել եմ իմ նշանարանը:

1. **այն** – ցուցական դերանուն, **թվում է** - անկատար ներկա, ներգործական սեռ
2. **անցել են** – սահմանական եղանակ, չեզոք սեռ, **այժմ** – ժամանակի մակրայ
3. **իմ** - անձնական դերանուն, սեռական հոլով, **արածն** – հարակատար դերբայ, անկանոն բայ
4. **որոշ** – որոշյալ դերանուն, **ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով
5. **տարիներ** – հասարակ գոյական, **ի** հոլովում, **գտել եմ** - դիմավոր բայ, ածանցավոր

**119. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Գնացքն ընթանում էր դանդաղ, որովհետև մի տարի չկար, որ երկարուղու գիծը շինվել էր, և մեքենավարը վախենում էր սպասվող արկածներից:

1. **ընթանում էր** – սահմանական եղանակ, ածանցավոր բայ, **մի** – անորոշ դերանուն
2. **որովհետև** - համադասական շաղկապ, **չկար** – պակասավոր բայ, սահմանական եղանակ
3. **որ** – հարաբերական դերանուն, **երկարուղու** - գոյական, սեռական հոլով
4. **շինվել էր** - բաղադրյալ ժամանակաձև, վաղակատար անցյալ, **վախենում էր** - անկատար անցյալ, չեզոք սեռ
5. **սպասվող** - անդեմ բայ, ենթակայական դերբայ, **արկածներից** - գոյական, բացառական հոլով

**120. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Նրա դեմքը գունատվել էր, աչքերը կայծակներ էին արձակում հակառակորդի վրա, իսկ նա մերք ցատկում էր տեղից հանկարծակի խայթվածի պես, մերք քարանում:

1. **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով, **գունատվել էր** – սահմանական եղանակ, կրավորական սեռ
2. **աչքերը** – հասարակ գոյական, որոշյալ առում, **քարանում էր** - անկատար ներկա, սուլկածանցավոր բայ
3. **վրա** - կապ, հետադրություն, **իսկ** – համադասական շաղկապ
4. **մերք** – ժամանակի մակրայ, **ցատկում էր** - դիմավոր բայ, անկատար անցյալ
5. **խայթվածի** - գոյական, սեռական հոլով, **պես** – կապ, հետադրություն

**121. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Բարձրանալով քարե փոքրիկ սանդուղքներով՝ մտա մի ընդարձակ սենյակ՝ ցածր առաստաղով. այնտեղ կային ինչ-որ անծանոք դեմքեր, որոնք վիճարանում էին:

1. **բարձրանալով** - անդեմ բայ, չեզոք սեռ, **դեմքեր** – հասարակ գոյական, հոգնակի թիվ
2. **մտա** - պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ, **մի** – քանակական թվական
3. **սանդուղքներով** – գոյական, գործիական հոլով, **այնտեղ** – տեղի մակրայ
4. **կային** - դիմավոր բայ, անկատար անցյալ, **ինչ-որ** – հարաբերական դերանուն
5. **որոնք** – հարաբերական դերանուն, **վիճարանում էին** – սահմանական եղանակ, ածանցավոր

**122. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Արձրունու միհարկանի տնակը շրջապատված էր չքեղ պարտեզով, որի մի մասը ծաղկանց էր, որը անխնամ վիճակում էր, իսկ մրգանոցի հասուն պտուղները, ծառերից պոկվելով, ծածկել էին ծառուղիները:

1. **Արձրունու** – հատուկ գոյական, **ու** հոլովում, **միհարկանի** - ածական
2. **ծաղկանց** – հասարակ գոյական, անորոշ առում, **որի** – հարաբերական դերանուն
3. **իսկ** – համադասական շաղկապ, **մրգանոցի** - գոյական, սեռական հոլով
4. **վիճակում էր** - դիմավոր բայ, անկատար անցյալ, **պոկվելով** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
5. **ծածկել էին** - դիմավոր բայ, բաղադրյալ ժամանակաձև, **ծառուղիները** - գոյական, **ու** հոլովում

**123. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Ինձ դիմավորեց գունատ դեմքով մի պատանի և առաջնորդեց մի ուրիշ սենյակ, և այդ վայրկյանին այնտեղից արագ քայլերով դուրս եկավ մի կարճահասակ ծերունի:

1. **ինձ** - անձնական դերանուն, սեռական հոլով, **դիմավորեց** – և խոնարհման բայ, չեզոք սեռ
2. **պատանի** – հատուկ գոյական, **ու** հոլովում, **առաջնորդեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև
3. **ուրիշ** - անորոշ դերանուն, **և** - համադասական շաղկապ
4. **այնտեղից** - ցուցական դերանուն, **արագ** - ձևի մակրայ
5. **դուրս եկավ** – հարադիր բայ, չեզոք սեռ, **ծերունի** - անձնանիշ գոյական, **ու** հոլովում

**124. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Արձրունին ինձ ընդունեց բարեկամաբար, և կարծես առաջին անգամը չէր, որ հանդիպում էինք իրար. այդ հանգամանքը ինձ գրավեց:

1. **ընդունեց** – սահմանական եղանակ, պարզ ժամանակաձև, **բարեկամաբար** – ձևի մակրայ
2. **կարծես** – վերաբերական, **առաջին** - դասական թվական
3. **հանդիպում էինք** - դիմավոր բայ, չեզոք սեռ, **իրար** - փոխադարձ դերանուն
4. **այդ** - ցուցական դերանուն, **հանգամանքը** – հասարակ գոյական, որոշյալ առում
5. **ինձ** - անձնական դերանուն, առաջին դեմք, **գրավեց** – սահմանական եղանակ, ներգործական սեռ

**125. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միշտ տարրերակների թվահամարները:**

Գրասեղանի մոտ նստել էր հայ երիտասարդության մտքի ամենասիրելի դեկավարը, նա, որի անունը տարածված էր ամենուրեք, ուր կար զեթ մի բուռ հայություն:

1. **տարածված** – դիմավոր բայ, հարակատար դերբայ, **մոտ** – կապ, հետադրություն
2. **նստել էր** - դիմավոր բայ, վաղակատար անցյալ, **երիտասարդության** – հասարակ գոյական, **ա ներքին հոլովում**
3. **նա** - անձնական դերանուն, ուղղական հոլով, **ամենուրեք** – տեղի մակրայ
4. **որի** – ստորադասական շաղկապ, **կար** – պակասավոր բայ, անկատար անցյալ
5. **ուր** – հարաբերական դերանուն, **գեթ** – վերաբերական

**126. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների բվահամարները:**

Բաֆֆին պատասխանեց.

-Այո՛, շատերն են ինձ խանգարում, բայց այժմ ես որոշել եմ ավելորդ այցելուներ չընդունել, նաև գիտեմ, որ Դուք իմ անկեղծ երկրագուներից եք:

1. **պատասխանեց** - դիմավոր բայ, պարզ ժամանակաձև, **այս** - հաստատական վերաբերական
2. **շատերը** - գոյական, հոգնակի թիվ, խանգարում են - անկատար ներկա, չեզոք սեռ
3. **բայց** - համադասական շաղկապ, **գիտեմ** - ըղձական եղանակ, առաջին դեմք
4. **որոշել եմ** - սահմանական եղանակ, ներգործական սեռ, **այժմ** - ժամանակի մակրայ
5. **չընդունել** - անդեմ բայ, ածանցավոր, **անկեղծ** - ձևի մակրայ

**127. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների բվահամարները:**

Նույն վայրկյանին ներս մտան երկու մութ պատկերներ՝ լուռ, ինչպես գիշերային ոգիներ, հապճեա գրկեցին ճերմակ տեսիլն ու չքացան նրա հետ:

1. **նույն** - ցուցական դերանուն, **վայրկյանին** - գոյական, ի հոլովում
2. **ներս մտան** - հարադիր բայ, չեզոք սեռ, **նրա** - դերանուն, սեռական հոլով
3. **ինչպես** - հարաբերական դերանուն, **ոգիներ** - հասարակ գոյական, **ու** արտաքին հոլովում
4. **հապճեա** - ձևի մակրայ, **գրկեցին** - պարզ ժամանակաձև, անցյալ կատարյալ
5. **չքացան** - ա խոնարհման բայ, սոսկածանցավոր, **իետ** - մակրայ

**128. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերի բվահամարները:**

Հասկանալի էր, որ նման պայմաններում ինձ անկարելի էր հանգիստ հոգով զրադվել իմ գործով. զգում էի, որ իմ նյարդերը սկսում էին բողոքել, բացի դրանից, օրիորդը աստիճանաբար անտանելի էր դառնում ինձ համար:

1. **դառնում էր** - անկանոն բայ, անկատար անցյալ, **որ** - ստորադասական շաղկապ
2. **նման** - կապ, **ինձ** - անձնական դերանուն, տրական հոլով
3. **զրադվել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ, **զործով** - գոյական, գործիական հոլով
4. **զգում էի** - դիմավոր բայ, սահմանական եղանակ, **բացի** - կապ, երկդրություն
5. **աստիճանաբար** - վերաբերական, **համար** - կապ, հետադրություն

**129. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերի բվահամարները:**

Գրականությունն արդեն ամբողջովին կլանել էր իմ միտքն ու հոգին, և ոչ մի ուրիշ զրադմունք այլևս չէր հետաքրքրում ինձ:

1. **զրականությունն** - հավաքական գոյական, **արդեն** - ժամանակի մակրայ
2. **ամբողջովին** - ձևի մակրայ, **կլանել էր** - սոսկածանցավոր բայ, վաղակատար անցյալ
3. **հոգին** - ու հոլովման գոյական, որոշյալ առում, **ոչ մի** - միտական դերանուն
4. **ուրիշ** - որոշյալ դերանուն, **այլևս** - ժամանակի մակրայ
5. **չէր հետաքրքրում** - դիմավոր բայ, անկատար անցյալ, **ինձ** - անձնական դերանուն, տրական հոլով

**130. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Բաքու գալով՝ մի օր հանդիպեցի ուսուցչիս. որքա՞ն փոխվել էր նա. զգգված մորուքը ճերմակել էր բամբակի պես, արագաշարժ ուղերդ բուլացել էին, վառվուն աչքերը մարել էին մեռած աստղերի պես:

1. **գալով** - անկանոն բայ, անորոշ դերբայ, **մի** - անորոշ դերանուն
2. **բուլացել էին - ե** խոնարհման բաղադրյալ բայածն, վաղակատար անցյալ, **որքա՞ն** - հարցական դերանուն
3. **զգգված** - հարակատար դերբայ, չեզոք սեռ, **պես** - կապ, հետադրություն
4. **արագաշարժ** - մակրայ, **մարել էին** - դիմավոր բայ, սահմանական եղանակ
5. **վառվուն** - ածական, **մեռած** - ե խոնարհման բայ, չեզոք սեռ

**131. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Սի քանի անգամ փորձեցի խոսել հետո՞ գիտենալու համար՝ արդյոք հա՞մր է, բայց նա աչքերը չոռում էր, նայում էր երեսիս ապուշի պես, ապա ժպտում էր և նորից գլուխը կրծքին թեքում:

1. **մի քանի** - որոշյալ դերանուն, **խոսել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
2. **գիտենալու** - ապակատար դերբայ, ածանցավոր, **համար** - կապ, հետադրություն
3. **արդյոք** - վերաբերական, **թեքում էր** - սահմանական եղանակ, չեզոք սեռ
4. **բայց** - համադասական շաղկապ, **պես** - կապ, հետադրություն
5. **նորից** - մակրայ, **նայում էր** - անկատար անցյալ, ներգործական սեռ

**132. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Ես շարունակ նայում էի հետ, ինչպես մերձավորներից բաժանվող աքսորական, որ հույս չունի երբեւ նրանց կրկին տեսնելու:

1. **ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով, **շարունակ** – ածական
2. **նայում էի** - բաղադրյալ ժամանակածն, անկատար անցյալ, **հետ** – կապ, հետադրություն
3. **ինչպես** – կապ, **բաժանվող** - ենթակայական դերբայ, ածանցավոր
4. **որ** - ստորադասական շաղկապ, **հույս չունի** – հարադիր բայ, ներգործական սեռ
5. **երբեւ** - անորոշ դերանուն, **տեսնելու** - անորոշ դերբայ, ածանցավոր

**133. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության ճիշտ տարրերակների քանակը:**

Այդ լրին ու ինքնամփոփի մարդը երբեք իր հայրական սերը չէր արտահայտում սովորական գորգուրանքով, բայց նայելով նրա մոայլ դեմքին՝ ես զգացի՝ որքան խորն է նրա վիշտը:

1. **այդ** - ցուցական դերանուն, **ինքնամփոփի** - ածական
2. **երբեք** - անորոշ դերանուն, **զգացի** - սահմանական եղանակ, պարզ ժամանակածն
3. **չէր արտահայտում** - անկատար անցյալ, ներգործական սեռ, **բայց** – համադասական շաղկապ
4. **նայելով** - անորոշ դերբայ, չեզոք սեռ, **դեմքին** - գոյական, որոշյալ առում
5. **որքան** - հարաբերական դերանուն, **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով

**134. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Սի քանի ամիս անցած՝ հայրս վերադարձավ ‘Ղուբայից, ուր լինում էր տարվա մեծ մասը. նա, իհարկե, բարկացավ ինձ վրա, երբ մայրս հաղորդեց նրան իմ հանդուզն արարքի մասին:

1. **մի քանի** - անորոշ դերանուն, **անցած** – հարակատար դերբայ, ածանցավոր
2. **վերադարձավ** – սահմանական եղանակ, անցյալ կատարյալ, **լինում էր** – անկանոն բայ, ներգործական սեռ
3. **իհարկե** - վերաբերական, **երբ** - հարաբերական դերանուն
4. **նրան** - անձնական դերանուն, տրական հոլով, **բարկացավ** - ա խոնարհման պարզ բայ, չեզոք սեռ
5. **հաղորդեց** – ե խոնարհման պարզ բայ, ներգործական սեռ, **մասին** – կայ, հետադրություն

**135. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Ինձ պաշարեց մի տարօրինակ տրտմություն. զարիվայրից իջնելիս թվաց ինձ, թե իջնում եմ մի տեսակ գեհեն, ուր պիտի հավիտյան տանջվեմ այդ թանձը ծխի ու մրի մեջ:

1. **թվաց** - անցյալ կատարյալ, ներգործական սեռ, **մի** - անորոշ դերանուն
2. **տարօրինակ** – ածական, **իջնելիս** – համակատար դերբայ, պարզ բայ
3. **թե** - ստորադասական շաղկապ, **իջնում եմ** - անկատար ներկա, չեզոք սեռ
4. **ուր** - հարաբերական դերանուն, **պիտի տանջվեմ** - դիմավոր բայ, ենթադրական ապառնի
5. **հավիտյան** – ժամանակի մակրայ, այդ - ցուցական դերանուն

**136. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Մորեղբայրս պատվիրեց ինձ մի որևէ բան գրել խնամքով և տալ իրեն, իսկ ես տողացույցը դրեցի մի մեծ թերթի տակ և ամենայն զգուշությամբ ընդօրինակեցի գեղագիտական տեսրակի ամենագեղեցիկ էջերից մեկը:

1. **պատվիրեց** - անցյալ կատարյալ, պարզ, **որևէ** - անորոշ դերանուն
2. **գրել** - անորոշ դերբայ, ներգործական սեռ, **իրեն** - անձնական դերանուն, տրական հոլով
3. **իսկ** – համադասական շաղկապ, **տակ** – կապ, հետադրություն
4. **ամենայն** – որոշյալ դերանուն, **զգուշությամբ** - զոյական, զործիական հոլով
5. **ընդօրինակեցի** – պարզ ժամանակաձև, սահմանական եղանակ, **մորեղբայրս** – ո ներքին հոլովնան զոյական, որոշյալ առում

**137. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Ամեն ինչ ինձ համար նոր էր, գրավիչ, ինչպես մի երազ. նայում էի մեղմիկ սահող մակույկներին, որ կարապների նման լրելյայն սահում էին այս ու այն կողմ:

1. **ամեն ինչ** - որոշյալ դերանուն, **համար** - կապ, հետադրություն
2. **մի** – անորոշ դերանուն, **ինչպես** – շաղկապ
3. **նայում էի** - անկատար անցյալ, չեզոք սեռ, **ոք** – ստորադասական շաղկապ
4. **մեղմիկ** – ձևի մակրայ, **սահող** - անդեն բայ, ենթակայական դերբայ
5. **նման** – կապ, հետադրություն, **լրելյայն** - ածական

**138. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Ես նախանձում էի ամենքին, ով գնում էր այդ նավերով, և ինձ թվում էր, որ գնացողները խղճում են մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:

1. **նախանձում էի** - դիմավոր բայ, չեզոք սեռ, **ամենքին** – որոշյալ դերանուն
2. **ով** – հարաբերական դերանուն, **նավերով** - գոյական, գործիական հոլով
3. **թվում էր** – սահմանական եղանակ, չեզոք սեռ, **որ** – ստորադասական շաղկապ
4. **գնացողները** - գոյական, հոգնակի թիվ, **խղճում են** - բաղադրյալ ժամանակաձև, **այսուհետում**
5. **որպես** – կապ, նախադրություն, **զրկվածների** – հարակատար դերբայ, **ե** խոնարհում

**139. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Մի բան, որ ես սիրում էի այդ գեր ու կենսախինդ մարդու մեջ, այն էր, որ երբեք ինձ խրատներ չեր տալիս, որը ինձ համար հազվագյուտ շնորհ էր:

1. **որ** – ստորադասական շաղկապ, **ես** - անձնական դերանուն, ուղղական հոլով
2. **այդ** - ցուցական դերանուն, **սիրում էի** – պարզ բայ, ներգրծական սեռ
3. **մարդու** - գոյական, **ով** հոլովում, **մեջ** – կապ, հետադրություն
4. **երբեք** – ժամանակի մակրայ, **չեր տալիս** - անկանոն բայ, անկատար անցյալ
5. **հազվագյուտ** – ձևի մակրայ, **շնորհ** - գոյական, ուղղական հոլով

**140. Նշել նախադասության ձևաբանական վերլուծության միջտ տարրերակների թվահամարները:**

Նրա՝ ածուխի պես սև ու խիտ մորուքն սկսվում էր համարյա աշքերի տակից ու ծածկում ամբողջ երեսն ու կոկորդը, իսկ արծվային քիթն անգամ ծածկված էր մազերով:

1. **նրա** - անձնական դերանուն, սեռական հոլով, **պես** – կապ, հետադրություն
2. **սկսվում էր** – սահմանական եղանակ, կրավորական սեռ, **համարյա** - մակրայ
3. **ամբողջ** - անորոշ դերանուն, **երեսը** - գոյական, ուղղական հոլով
4. **ծածկված** – ա խոնարհման բայ, չեզոք սեռ, **արծվային** – ածական
5. **անգամ** – վերաբերական, **մազերով** - գոյական, գործիական հոլով

**ԳԼՈՒԽ IV****ԾԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ**

**1. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց կազմում համառոտ նախադասություն կա:**

1. Գնում էի մի երկիր, ուր գնում էին շատ-շատերը՝ բախտ որոնելու:
2. Բարեբախտաբար, հայրս բացակա էր, ապա թե ոչ ինձ պիտի պատժեր:
3. Ա՞հ, երջանիկ չի եղել ո՞չ իմ մանկությունը, ո՞չ էլ պատանեկությունը, որովհետև միջավայրը, ուր ծնվել եմ, անթափանցելի խավար էր:
4. Իմ մանկության և պատանեկության տվյալանքների աղբյուրը միջավայրն էր, մթնոլորտը, որ ես շնչում էի:

**2. Տրված հատվածում նշել համառոտ նախադասությունների քանակը:**

Մտա խանութ: Որքա՞ն դաժան երևացին ինձ այդ մարդիկ, որոնք իսկապէս դաժան էին: Սի պահ կամեցա դուրս գալ, բայց արդեն ուշ էր. առջևս մալականի սպառնալի կերպարանքն էր: Նա փակում էր փախուստի ճանապարհը: Ով չի կրել այդ վայրկյանները, չի կարող երևակայել նրանց դառնությունները: Սիրտս բարախում էր. կարծես մտել էի հիվանդանոց: Երբ բերանս բաց արի, ճայնս դողաց, և նրա հնչյունն ինձ օտարուտի թվաց:

**3. Ընդգծվածներից քանի՞սը նախադասություն չեն:**

Մուղանի անապատն է: Ոչ մի ծառ, ոչ մի կանաչ թուփ, ոչ մի բռչուն: Կարծես մի սոսկալի հրդեհ լափել էր երկրի կյանքը՝ քողնելով միայն միլիարդավոր մոծակների, որոնք, թվում է, երկրի տերերն են և ամեն ինչ կարող են անել: Իրիկնադեմին նրանց փոխարինում են ճահիճների գորտերը՝ իրենց կվկվոցներով վրդովելով երկրի լոռությունը: Սի ինքնատեսակ համերգ, որ ինչ-որ համակրանք է ներշնչում ինձ դեպի այդ անարդարացի անարգված կենդանիները:

**4. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածները պարզ լնդարձակ նախադասություններ չեն:**

1. Աջ ու ձախ երևաց բուսականություն, որին կարուել էին իմ աչքերը՝ չոր ու ցամաք թարգվում ապրելով:
2. Այսօր եթե ինձ հարցնեն, թե ինչ է հարստությունը, կասեմ, որ դա անհոգ երիտասարդությունն է՝ երջանիկ հասակ մարդկային կյանքի:
3. Նավը հետ էր ցատկում, կարծես շունչ էր առնում, որպեսզի նորից դիմադրի զայրացած թշնամուն:
4. Մրրիկից հալածվող անձրևի շիթերը ճիպոտում էին նավապետի պղնձյա դեմքը, սակայն ես, չգիտես ինչու, հանգիստ էի:

**5. Ընդգծվածներից նշել նախադասությունների քանակը:**

1. Ամբողջ ժամանակ նրանք անբաժան էին. իրամայողը թզուկն էր, **հպատակողը՝ հսկան:**
2. Ինձ թվում էր, որ այս պատիկ մարդը ճիգ էր անում **իր հասակից քարձը երևալ:**
3. **Քանի քաղաքից հեռանում ես, այնքան նա պայծառանում է՝ անընդհատ պտտվելով ինքն իր շորջը:**
4. **Ահա թե ինչ. ուրեմն երազս վերջապես իրականանում է, և ես պիտի ճամփորդեմ:**

**6. Տրված հատվածում նշել համառոտ նախադասությունների քանակը:**

Առաջին եվրոպացին էր, որին հանդիպում էի: Նա ամեն ինչով տարբերվում էր տեղացիներից: Ես գլուխ էի խոնարհում նրա առջև, թեև երիտասարդ էր: Ինչ զիտեի, որ պետք է հիասքափվեմ: Հաճախ գործերով նրա առանձնասենյակը մտնելով՝ չզիտես ինչու, հուզվում էի:

**7. Նշել քաղաքից ընդարձակ նախադասությունների թվահամարները:**

1. Շտապում էի, 2. որպեսզի ուրախալի լուրը հաղորդեմ, 3. բայց ում հանդիպում էի, 4. ինձ հիասքափեցնում էին, 5. ասում, 6. թե ծովը մարտ ամսին վտանգավոր է, 7. և ես կարող եմ խորտակվել:

**8. Քանի՞ պարզ (քաղաքից) նախադասություն կա տրված հատվածում:**

Ուզում էի մեկ էլ փորձել, սատանան տանի, որ էլ ոչ մի կասկած չմնա: Դուները իրելով՝ ներս մտա, և անձանորը դուրս փախավ: Իհարկե, ասիացի էր, կարող էր դաշույն բերել: Բայց ես, անշուշտ, չվախեցա: Ես առհասարակ վախկոտ մարդ չեմ. զինվոր եմ եղել:

**9. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց տեսակը սխալ է նշված:**

1. Շատերն էին գալիս այնտեղ թե՛ գործով, թե՛ այնպես՝ զրոյց անելու և ժամանակ անցկացնելու համար: (*քարդ*)
2. Այս անգամ իմ տերը հայ էր՝ այն ժամանակվա խոշոր գործարանատերերից մեկը: (*քարդ*)
3. Այստեղ ես ավելորդ չեմ համարում մի քանի կրծատումներով և առանց փոփոխելու վկայակոչել իմ այն ժամանակվա հատուկ ոճն ու լեզուն՝ քառասունութ տարի առաջ գրված իմ մի ակնարկը: (*քարդ*)
4. Չնայած որ գործարանները միմյանցից հեռու են, ծխերը, իրար խառնվելով, կազմում են մի անթափանց թանձրություն: (*քարդ*)

**10. Նշել քարդ նախադասությունների քանակը:**

1. Մեր առջև Արձրունու միհարկանի տնակն էր՝ շրջապատված շքեղ պարտեզով, որի մի մասը ծաղկանոցն էր, մյուսը՝ մրգանոցը:
2. Ուղիների վրա սփռված դեղնագոյն դեղձերն ու ծիրանները, արծաթագոյն տանձերը, իրար խառնվելով, գույնների քմահաճ ներդաշնակությամբ հիշեցնում էին Սպահանի զմայլելի գորգերը:
3. Խոսելով Փարիզի այն ժամանակվա հայ գաղութի մասին՝ ես չեմ կարող մոռացության տալ իմ հայրենակիցներին՝ ժամանակավոր այցելուներին՝ մի քանի ամսով Փարիզ եկած:
4. Երբեք մենք միանգամից չենք հաշտվում մեր զիսին եկած չարիքի հետ՝ մեր սնուտի հույսերը, պարզ է, դնելով նույնիսկ աներևակայելի հրաշքների վրա:

## **11. Նշել բարդ նախադասությունների քանակը:**

1. Նա լոեց՝ իր պաղ հայացքը դարձնելով դեպի անորոշ տարածություն՝ դեպի, ով գիտե, ինչ մքություն:
2. Այս փոքրիկ դեպքը ես պատմեցի ցույց տալու համար՝ երբեմն կյանքի մեջ ինչ տարօրինակ զուգաղիպուններ են լինում:
3. Համակրանք, կարեկցություն, սեր դեպի նա, ատելություն դեպի ծերունին. ամեն ինչ խառնվել ու շփորվել էր իմ հոգու մեջ:
4. Մի ամիս բժշկվելուց հետո ես, մեծ որդիս ու աղջիկս (կինս ու հիվանդ որդիս չեն թունավորվել), ամբողջովին կազդուրված, վերադարձանք հտալիայից:

## **12. Ո՞ր թվականարների նախադասություններն են բարդ:**

1. Ուշքի գալով հիվանդը չգիտես ինչ մեղքի համար մի քանի անգամ հայինեց հորս: 2. Նա, ինչպես երկում է, մոտ երկու ամիս պետք է տառապեր անկողնում: 3. Այժմ ավելի հանգիստ էր, քան աղետը պատահելուց առաջ, ինչպես հիվանդը՝ անխոսափելի անդամահատությունից հետո: 4. Իր մարմնավոր ուժով մի քացառիկ կին էր տատս՝ բարձրահասակ, հաղթանդամ, ինչպես մի ըմբիչ: 5. Մի քանի ամիս անցնելուց հետո հորեղբայրս վեր կացակ անկողնուց՝ երկրորդ անգամ վիրավորվելով իր նման մեկի հետ կռվելիս:

## **13. Տրված հատվածում նշել ներդրյալ միավորների քանակը:**

Ավարտելով քաղաքային դպրոցի դասընթացը՝ ես, պարզ է, ստիպած եղա խեղդել իմ մեջ ուսման ծարավը և մի գործի մտնել: Բայց ի՞նչ գործ կարող էի գտնել մի կիսավեր քաղաքում, որ ո՞չ արդյունաբերություն ուներ և ո՞չ թիշ թե շատ խոշոր վաճառականություն: Մեկը մեր հարևաններից, ինչպես ինձ հայտնի էր, ուներ աղի պահեստ: Նա ինձ հրավիրեց՝ իր մոտ ծառայելու աղ կշռողի պաշտոնով: Աշխատավարձի մասին խոսք չբացելով՝ ուրախությամբ ընդունեցի նրա հրավերը (չընդունել չեի կարող):

## **14. Ընդգծվածներից քանի՞սն են նախադասություն:**

1. Քենիս փիլիսոփա էր, ինչպես առհասարակ բոլոր դերձակներն են լինում, բայց ոչ հոռետես:
2. Հաճախ նրա անփոյթ արտասանած խոսքերը, թվում էր, նույնիք սուր էին, որքան ասեղի ծայրը, և թունավոր, բայց ոչ շարամիտ:
3. Ես միշտ կանգ էի առնում և հաղորդում նորություններ ծովից ու ցամաքից կարկուտի արագությամբ:
4. Հայրս ներողամտաբար ժպտաց՝ հասկացնելով ինձ, թե որանից ավելի դյուրին բան չկա իր համար:
5. Ես սկսեցի նկարագրել իմ մոտակա վիճակն այնպիսի փայլուն գույներով, որ ես արդեն երջանիկ զգացի ինձ, և թվաց՝ ուզում էի համբուրել նրա մշտապես խճճված մորուքը:

**15. Ո՞ր թվականաբների՝ փակագծերում տրված բացատրությունները չեն համապատասխանում ընդգծվածներին:**

1. Այդ միջոցին մեր դիմաց երևաց հարքած նավաստիների մի խումբ, որ երգելով, պարելով առաջ էր գալիս: (*բազմակի անդամներ*)
2. Նավաստիներն անմիջապես շրջապատեցին նրան և սկսեցին հետը կատակներ անել. սկզբում՝ անմեղ, հետո՝ ավելի ու ավելի անվայել: (*բառակապակցություն*)
3. Ես մտքում պարծենում էի բարեկամովս, երբ տեսնում էի, թե ինչպես նա, ձեռքերը մուշտակի թերի մեջ խրած, մտնում էր եկեղեցու գավիթը: (*բառակապակցություն*)
4. Ինձ համար պարզ էր, որ նա հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս, կարծես նույնիսկ չէր հավատում նրա հիվանդությանը: (*նախադասություն*)
5. Չկար այլևս նրա ձայնի մեջ խրոխտություն, և խոսքերի մեջ՝ արագություն. կարկուտը հալվել էր տարիների սառնության մեջ: (*բառակապակցություն*)

**16. Ընդգծվածներից քանի՞ն են բայական բառակապակցություն:**

Նոր միջավայրը թեև ձանձրալի, բայց հետաքրքիր էր ինձ համար: Օրը յոթ ժամ արտագրելով իմ իշխանավորների ստեղծագործությունները՝ բնավ չէի նտածում, որ իմ միտքն ու զգացումները կարող են օր օրի բբանալ: Ես մի անձանոք մեքենայի շնչին մասնիկներից մեկն էի: Ինչ էր շինում այդ մեքենան՝ բոլորովին չէի հետաքրքրվում: Ինձ համար անհասկանալի, նույնիսկ ծիծառելի էր այն լրջությունը, որով իմ պաշտոնակիցները կատարում էին իրենց պաշտոնը՝ մտագրադ դեմքերով վազելով մի սեղանից մյուսը:

**17. Ընդգծվածներից նշել նախադասությունների քանակը:**

1. Զգիտես ինչու, երիտասարդը ստեղ-ստեղ իր փափուկ մատներով շփում էր ճակատը, մանկական աչքերը՝ կարծես ինչ-որ բան հարթելու համար:
2. Եվ ահա ես, որ ինձ համարում էի ճակատագրի խորք զավակ, գտա իմ բարձրագույն սկրիֆանքը՝ գիրքը:
3. Հարատև ընթերցանության ազդեցությամբ կյանքը հետզիետե փոխվում էր իմ աչքում, կամ, ավելի ծիշտ ասած, նա գունավորվում էր:
4. Անձանոթը նույն քառասուն տարեկան մի տղամարդ էր՝ կանաչ - դեղնագույն դեմքով, նոսր մազերով ու ցանցառ մորուքով:
5. Առավոտները նա ատյան մտնելիս մի քանի վայրկյան կանգ էր առնում դռների առջև, արագ քայլերով մոտենում էր գրասեղանին և արագ նստում տեղը:

**18. Նշել բարդ նախադասությունների քանակը:**

Սայթաքելով լայրծուն տախտակամածի վրա՝ քաշվեցի դեպի նավի ծայրը: Երկու ձեռներով ամուր բռնելով մի երկարե գլանից, որի վրա փաթաթված էր խարիսխի շղթան, նայեցի դեպի վեր: Նավը՝ որպես հարձակվելու պատրաստ վագր, բարձրացնում էր առջևի մասը: Ինձ թվում էր՝ նա պիտի զլիխվայր թափալվի իր առջև բացված վիհի մեջ: Երբեմն վայրագ կոհակներն ուժգին թափով բարձրացնում էին նրան իրենց բաշերի վրա, նետում այս ու այն կողմ: Ինքնըստինքյան հասկանալի է, դա տարերքների ցաւկուտ հեղնանքն էր:

**19. Նշել անենթակա նախադասության թվահամարները:**

1. Կյանքի հորձանուտում աննկատելիորեն գալիս է այն տարիքը, 2. երբ քննչալից հայացրով ես նայում ծառերի՝ կանաչից օրեցօր կարմրատակող, հետո դեղնող, թափվող, օրորվող, քամուց քշվող տերևներին: 3. Այդ դեպքերում սկսում եմ հաշվել այն հետզհետեւ պակասող տարիները, 4. որ իմ մոտավոր հաշվումներով մնում են ապրելու: 5. Եվ ես կարծում եմ՝ ժամանակն ու տարիներն ավելի արագ են անցնում: 6. Իմ՝ շատ ու շատ բան տեսած տարիների բարձունքում հիմա անցյալը մտովին ավելի հաճախ է այցելում ինձ:

**20. Նշել այն թվահամարները, որոնց դիմաց սխալ է նշված նախադասության տեսակը:**

1. Օրե՛ր, ծիլ-ծիլ մի ծո՛խս բերեք  
Պատանության կրակներից: (*անենթակա*)
2. Կանաչ-կարմիր մի ծիածան  
Ծայրը ծալած քարերի տակ: (*անվանական անդեմ*)
3. Որտե՞ղ են ննջում  
Իմ վաղնջական  
Առավոտները: (*թերի*)
4. Գիշե՞ր, գիշե՞ր, լուսուն,  
Անուշ թախծի լուսե երգ: (*անենթակա*)
5. Մեռնել անտրոտնջ հնազանդության  
Մեղմագին երգով, ժայռով քնքուշ: (*բայական անդեմ*)

**21. Նշել միակազմ նախադասությունների քանակը:**

1. Կա միայն մի խնդություն  
Արժան ու հավերժ,  
Լինել անգեն ու անտուն,  
Չարչարվել անվերջ:
2. Տեսա երազ մի վառ,  
Ուսկի մի դուռ տեսա:
3. Հեռացի՛ր, աշո՛ն, համրորեն լացող,  
Ողջո՛յն քեզ, մրրիկ ահեղաշայուն:
4. Նստել այստեղ, անվերջ նստել ու նայել  
Աշնանամուտին և քրքրել իին հուշերը:
5. Անձրև է կրկին, և խցիկն իմ խեղճ  
Մրսում է, դողում խոնավ բակի մեջ:

**22. Նշել թերի նախադասությունների թվահամարները:**

1. Առավոտ է: 2. Աղայանը դուրս է գալիս տնից՝ մի որևէ բարեկամ գտնելու և պարտք վերցնելու նպատակով: 3. Փողոցում նրան լուր են տալիս, թե Քուր գետը գիշերվա անձրևներից խիստ բարձրացել է և 4. ողողել քաղաքի արվարձաններից մեկը: 5. Նա շտապում է գետափ 6. և տեսնում, որ արվարձանի կես մասը ջրի տակ է:

**23. Ո՞ր քվահամարով նախադասություններն են անվանական անդեմ:**

1. Ցուրտ է դարձյալ, մութ՝ իմ ուղին,  
Սրտում՝ մահ և աշուն:
2. Արդյոք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու,  
Հերքիաթի պես էր, երազի նման:
3. Երազներ իմ անդարձ, ծաղիկներ իմ գարնան,  
Ի՞նչ կանչով ձեզ կանչեմ, ինչպե՞ս լամ ձեզ համար:
4. Մութ հավերժության դառնությունն զգալ,  
Եվ թախծել անհուն և անշար լինել:
5. Ա՛խ, այն գիշե՞րը՝ անսահման երկար,  
Այն լոռությո՞ւնը՝ մահու պես տխուր:

**24. Նշել բաղադրիչ թերի նախադասությունների քանակը:**

1. Երանի այն ձիավորին,  
Որ մեռնում է թամբի վրա:
2. Պարզ ջրի վրա եղեգող հանդարտ,  
Անդրդրոց կանգնած էլ չի շնչում:
3. Ինչո՞վ ես մեզ գերում, աշխարհ,  
Քիչ տալիս, շատ ենք առնում:
4. Մոտեցած երկնից աստղերը պայծառ,  
Ժպոտում են խաղաղ քո աչքերի պես:
5. Օգնի՞ր ինձ, որ քեզ օգնական լինեմ,  
Սուրբ մասունքներիդ օրինաբան լինեմ:

**25. Նշել թերի նախադասությունների քանակը:**

1. Ե՞յ անխելք մարդ, ե՞րբ տի քողնես՝ ապրողն ապրի սրտալի,  
Ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի:
2. Քուն թե արթուն՝ օրիս շատը երազ եղավ, անց կացավ,  
Երազն էլ՝ նուրք ու խուսափուկ, վոազ եղավ, անց կացավ:
3. Ի՞նչ իմանաս ստեղծողի գաղտնիքները անմեկին,  
Ընկեր տվավ, իրար կապեց էս աշխարհքում ամենքին:
4. Ես շնչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր,  
Ես լսում եմ նրա անլուռ կանչն ու հունչը ամենուր:
5. Անհիշելի վերհուշերի մշուշներում նրբաղուտ  
Երբեմն ասես զգում եմ ես, թե կհասնեմ Նրա մոտ:

**26. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց կազմում միակազմ նախադասություն կա:**

1. Մոայլ գիշերն է լրում,  
Խավար գիշերն ամենուր,  
Ես վառել եմ խավարում  
Իմ ճրագը ոսկեհուր:
2. Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն,  
Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին:
3. Կրկին եկար, անո՞չ գարուն,  
Նեղ փողոցիս ծառին վտիտ  
Բերիր քնքուշ ծիլ ու ժպիտ:
4. Ոչ մի հույս, ոչ մի լույս, իմ ճամփան մենավոր,  
Քո արցունքն ամոքիչ, քո ժպիտը չկա:
5. Վերջին տրտմության գիշերն է այսօր,  
Սենք ձեր մուր կյանքին լույսեր ենք բերում:

**27. Նշել բարդ համադասական նախադասությունների քանակը:**

1. Երբ ես կամեցա ոսկե արևի շողերը զրկել,  
Մարդիկ նենգամիտ խոնավ նկուղում ինձ շղթայեցին:
2. Ու նայում եմ ես դեպի ցած,  
Ուր դաշտերն են մրափում:
3. Իսկ հիմա ահա կանգնել ես ինձ մոտ  
Ու նախատում ես ժպիտով տխուր:
4. Մի՞թե չկա ոչ մի հոգի հարազատ,  
Մի՞թե չկա ոչ մի մոլար ուրվական:
5. Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,  
Մեր սարերը՝ անառիկ, վեհանիստ,  
Մեր արտերը՝ արևոտ ու հանգիստ:

**28. Նշել բարդ համադասական նախադասությունների թվահամարները:**

1. Սենք հեռացել էինք բավական, բայց ծնողներս դեռ կանգնած էին միևնույն տեղում: 2. Մայրս շարունակ հեկեկում էր, որը երևում էր նրա ուսերի վար ու վեր շարժումներից: 3. Հայրս չուխայի երկայն թևերի տակից բարձրացրեց իր ձեռքերը դեպի երկինք և իսկույն զցեց վայր: 4. Արդյոք նա իմ ճանապարհին էր օրինում, թե՞ իր բախտն անիծում: 5. Բայց զգում էի, որ իմ ներկայությամբ զապված արցունքն այժմ առատորեն հեղեղում է նրա հումկու դեմքը: 6. Ես շարունակ նայում էի հետ, սակայն նրանք այլևս չէին երևում:

**29. Նշել բարդ ստորադասական նախադասությունների թվահամարները:**

1. Փարիզի երկրորդ նշանավոր մասը Մոնմարտրն է՝ արտիստական արվարձանը և գիշերային զվարճությունների միջավայրը: 2. Այստեղ կյանքն սկսվում է կեսզիշերին, երբ թատրոններն ու համերգներն ավարտվում են: 3. Այստեղ են իրենց գիշերներն անցկացնում օտարականները, նրանք, ում համար Փարիզը միայն և միայն զվարճությունների վայր է: 4. Այստեղ բուն Փարիզը գործ չունի, որովհետև նա մի անտարեր և հեռավոր վկա է: 5. Մոնմարտրը համաշխարհային զվարճարան է, ուր շատ աննշան տեղ ունի ֆրանսիացին: 6. Այդ անթիվ սրճարանները, զվարճարանները միշտ լեցուն են օտարականներով, իսկ հաճախորդների տասը տոկոսը միայն ֆրանսիացիներ են:

**30. Նշել բարդ համադասական նախադասությունների թվահամարները:**

1. Ես տակավին ծանոթ չեմ այդ բանաստեղծի երկերին, բայց անունը լսել էի ու կարդացել նրա ստեղծագործությունները: 2. Ինչ ուզում եք ասեք, մարդու արտաքինն ազդում է դիտողի վրա: 3. Իմ առջև կանգնած էր ոչ ախորժելի դեմքով ու կեցվածքով մի մարդ, որ շրջիկ լաթավաճառի էր նման: 4. Նա չընդունեց իմ հայրենակիցների սիրալիր հրավերը, անգամ բարևի չարժանացրեց նրանց: 5. Անցան տարիներ, և ես այդ բանաստեղծին մի անգամ ևս տեսա. այս անգամ դարձյալ տեսա Փարիզում: 6. Սորբոնի համալսարանում մի խումբ հայ մտավորականներ Հովհաննես Թումանյանի մահվան առջիվ սգահանդես էին կազմակերպել, որին պետք է հրավիրվեին նաև օտարերկրացի մտավորականներ:

**31. Նշել այն թվահամարները, որոնցում նախադասությունների տեսակները սխալ են նշված:**

1. Ինձ թվում է, թե մի քանի անգամ  
Տեսել եմ արդեն հավիտենության  
Ամենավերջին ակնբարբը ես: (*բարդ ստորադասական*)
2. Հողի տակ են մեր հոգսերը անհոգ,  
Բարդու շրջյունը, շունը, գիշերը,  
Իսկ հողի վրա խշխշում են լոկ  
Հողոտ, մղեղոտ իմ վերիուշերը: (*բարդ համադասական*)
3. Քարե մրրիկ է, ու քարե բուր է,  
Քարե բողոք է, ու քարե բերդ: (*բարդ համադասական*)
4. Քեզ քախտն ուր էլ տարավ,  
Մտքով քո տանն էիր: (*բարդ ստորադասական*)
5. Եթե ես մի օր աշխարհից գնամ,  
Ո՞ւմ հառաջից ես դու վեր թռչելու: (*բարդ ստորադասական*)
6. Մեկն իմ աչքի փուշն է հանել,  
Մեկն իմ խոսքից մեղր է քամել: (*բարդ համադասական*)

**32. Ընդգծվածներից նշել ենթականների քանակը:**

1. **Հավերժություն**, աչքի լույս,  
Ուղևորդ է մի նորոգ,  
Կանաչ-կարմիր, ծիրանի,  
Շերմակ ու բիլ **Հայաստան**:
2. **Հարդազողը հարդ դարձնեմ**,  
Հարդից ջոկեմ աստղ ու լուսին  
Ու տուն բերեմ լուսը-լուսին:
3. **Վերիուշերս կրկին**  
Ինձ այնտեղ տարան,  
**Լեռնաշխարհը** տարան  
Այն երկնամերձ:
4. **Դեռ նոր է պայքում բողբոջը քո**,  
Տերևաթափ է իմ անտառում:
5. **Սանուշակագույն մշուշների մեջ**  
**Երգեր** են շաղում արտույտներն էլի:
6. **Այս իմ հրաշք աշխարհն է**, ուր  
Շողքը տեր է, շվաքը՝ հյուր:

**33. Նշել այն թվահամարները, որոնցում ենթական միշտ է ընդգծված:**

1. Օրը մաշվեց, քաշվեց-գնաց,  
Ո՞վ է արթուն, ո՞վ է քնած:
2. Եկել են, մեր ինչքը փախցրել,  
Մեզ վրա ծախել են մեր իրը:
3. Իմ բաժին աշխարհն այս մեծ աշխարհում  
Կերպի շուտով երգն իր կարապի:
4. Քանաստեղծություն, դու պիտի փրկվես  
Անձարակության համաճարակից:
5. Եվ ես չասացի ոչ ոքի ոչինչ  
Եվ ընտելացա մերժումի ցավին:
6. Նրանք, որ իմ հացով մեծացան,  
Չեն ներում դեռ մեղքերս:

**34. Նշել տրված նախադասությունների ենթակաների քանակը:**

1. Ի՞նչ է մնում գնացողին,  
Ի՞նչ է մնում ինձ անելու:
2. Ինքս ինձ էլ երանի տամ,  
Որ ձեզ պես թիկունք եմ ունեցել:
3. Ջրերը ծորից սար են բարձրանում,  
Անձրւ են դառնում արտերի վրա:
4. Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ,  
Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:
5. Ա՞յս, ինչեր, ինչեր, ինչեր են անում,  
Որ միլիոն տարվա մեր ծովխը կտրեն:
6. Ձեզ եմ դիմում, բոլո՞ր մարդիկ այս աշխարհի,  
Սի հին հարցով, որ, ավա՞ն, չի հնանում:

**35. Նշել տրված նախադասությունների ենթակաների քանակը:**

1. Հիմի բացել են հանդես,  
Երգիշները իմ անտես,  
Զա՞ն, հայրենի՝ ծղրիդներ,  
Ո՞վ է լսում հիմի ձեզ:
2. Կյանքից հարրած անցավոր,  
Ահա դարձյալ անցավ օր,  
Դու վազում ես դեպի մաս,  
Մահը բռնում հանցավոր:
3. Հոգիս տանը հաստատվել,  
Տիեզերքն է ողջ պատել,  
Տիեզերքի տերն եմ ես,  
Ո՞վ է արդյոք նկատել:
4. Մեռա՞ն, մեռա՞ն... Եվ ահա  
Խառնվել են կյանք ու մահ,  
Չեմ հասկանում աշխարհի  
«Կան ու չկան» ես հիմա:
5. Հե՞յ, ճամփանե՛ր, ճամփանե՛ր,  
Անդարձ ու հի՞ն ճամփաներ,  
Ովքե՞՞ր անցան ձեզանով,  
Ո՞ւր գնացին, ճամփանե՛ր:

**36. Ընդգծվածներից նշել ենթակաների թվահամարները:**

Մյուս անկյունում դեղնագույն պղնձե շրջանակի մեջ Մարիամ Աստվածածնի 1. պատկերն էր: Նրա առջև վառվում էր ձիթայուղի ապակյա կարմիր 2. կանքեղը: Ինքը՝ 3. աղջիկը, որ սկզբում թվաց գեղեցիկ, մոտիկից այլ 4. տպավորություն գործեց ինձ վրա: Նա շատ երիտասարդ էր, բայց աչքերի տակի 5. կապուտակները նրան տալիս էին մի տեսակ մաշված ու քրքրված պաճույժի 6. տեսք: Այդ կինը 7. Էմիլյան էր: Այդ վայրկյանին իմ մեջ ծագեց մի բուռն 8. կարեկցություն:

**37. Ո՞ր թվահամարների դիմաց է սխալ գրված շարահյուսական պաշտոնը:**

Անպարփակ 1. **Վիշտը** (*Ենթակա*) հոգու մեջ՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ աղամորդուն: Առավ նրան իր սրտի մեջ, մտավ նրա 2. **սիրտը** (*Ենթակա*), խոսք ասաց, 3. **խոսք** (*ուղիղ խնդիր*) լսեց և իմացավ՝ ամենուր՝ աշխարհի բոլոր ծայրերում էլ 4. **Վիշտը** (*Ենթակա*) մեկ է, 5. **սերը** (*Ենթակա*) մեկ: Եվ նա հյուսեց բոլորի համար իր 6. **երգը** (*ուղիղ խնդիր*): Վսեմափայլ 7. **երգիչը** (*Ենթակա*), անբաժան 8. **ցուպը** (*Ենթակա*) ձեռքին, թափառեց աշխարհեաշխարհ և մի օր վերադարձավ 9. **տուն** (*ուղիղ պարագա:*):

**38. Նշել գոյականով արտահայտված ենթակաների քանակը:**

1. Ի՞նչ է ասում ճամփաներին  
Հալված-մաշված այս կածանը:
2. Գնամ Գյազբելիս հողմերը շնչեմ,  
Գնամ հովերը շնչեմ Գյազբելիս:
3. Երեսիդ նայող չկա,  
Մասրենի՛, վայրի մասրենի:
4. Սենք իրար ճանաչում էինք,  
Իրար հետ հառաչում էինք  
Սեր դաշտի ծաղիկը ու ես:
5. Եվ դու այնքան ես հայ ու Հայաստան,  
Որ մինչև անգամ Հայաստանից դուրս  
Քո անցած բոլոր ճանապարհները  
Հայաստանոտ են:

**39. Նշել գոյականով արտահայտված ենթակաների քանակը:**

1. Սեկն իմ աչքի փուշն է հանել,  
Սեկն իմ խոսքից մեղք է քամել:
2. Նայում եմ գետին ու խորհում եմ ես,  
Հղացումներս էլ, լինում է մի պահ,  
Գնում են դեպի ակունքները պաղ:
3. Տեսնես ի՞նչ էին ասում իրար,  
Երբ լսում էին դոդանջը մեր,  
Մանուկ արևը սարերն ի վար  
Եվ մեռնող մութը ձորերն ի վեր:
4. Գնամ մարդկանց մոտ իմ բնաշխարհի,  
Որոնք դեռ հողում արմատներ ունեն  
Եվ հողի վրա՝ երազներ հողոտ:
5. Թող ազգերի կամքն անվարան  
Մահվան բերանը պատոի:
6. Ամեն-ամեն ինչ դարձել է անցյալ,  
Ու մենք առափնյա այգում ենք դարձյալ,  
Ծովն ափից փախել, փոխվել է այգին,  
Եվ այգում միայն նստարան կա հին:

**40. Նշել դերանունով արտահայտված ենթակաների քանակը:**

1. Ես ձեր խիղճն եմ, ինձ մի՛ խաբեք,  
Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք:
2. Կուզես պայրի՛ր, կուզես ճշա՛:  
Մեզ մարդու տեղ դնող չկա:
3. Նրանք, որ իմ հացով մեծացան,  
Չեն ներում դեռ չարած մեղքերս:
4. Երեխաներ ենք բոլորս մի տան,  
Ողջո՞յն քեզ, հրա՛շը հավիտենություն:
5. Եվ ո՞վ իմանա, թե այս խաղի մեջ  
Ով ի՞նչ է կորցնում և ի՞նչ է շահում:

**41. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում որոշյալ դերանուններով արտահայտված ենթական կա:**

1. Բոլորն այսպես թող կրկնվեր,  
Եվ չիմեր վերիուշ մի հին:
2. Ամենքի համար ամեն ինչ արել,  
Նստել արածիս վարձին եմ նայում:
3. Ու ճաց սիրտս վայելքից ամկայծ,  
Թվաց, թե մեկը կանչում է տրտում:
4. Օրինենք բոլորը, ինչ էլ որ գա,  
Եվ ընդունենք սրտով հոժար,  
Գուցե և նա մեր ցավն զգա:
5. Ո՞վ մեր հոգին խոցված  
Պիտի փրկե մահից,  
Եթե չկա Աստված:
6. Տեսնո՞ւմ ես՝ որքան, որքան արագ  
Անցնում է ամեն ինչ ու դառնում հուշ:

- 42. Նշել այն նախադասության թվահամարը, որում ածականով արտահայտված ենթակա կազմ:**
1. Կիրճերը խժողում են դարերին,  
Դարեր են կուլ տալիս կիրճերը,  
Ի՞նչ անեն ինձ ննան խեղճերը:
  2. Աշխարհից ես չեմ տրտնջում,  
Չեմ գանգատվում.  
Չէ՞ որ բոլորն են տանջվում,  
Բոլորն են տրտում:
  3. Նույն երգն եք երգում դուք, նույն իինը,  
Եվ քանի՞ դարեր, քանի՞ ,  
Որքա՞ն, որքա՞ն մտերիմ է  
Զեր դաշնը, սի՞րտ ու քամի՞ :
  4. Եկողները թող չիմանան  
Սոված օրեր ու սև տարի,  
Թող բոլորը գան ու գնան,  
Աշխարհին բան չպատահի:
  5. Թշնամին եկավ մութի պես կամաց,  
Ամենքն ահարեկ փախան դեպի սար:
- 43. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ենթակայի արտահայտությունը սխալ է նշված:**
1. Գիշեր ու ցերեկ համաշափ զարկով  
Աղմկում եք դուք, պողպատե՛ դւեր: (*գոյական*)
  2. Արդյոք ո՞վ հյուսեց ձեր դժկամ լեզուն,  
Ո՞վ շղթայեց մեզ ձեր մեռած կամքին: (*դերանուն*)
  3. Ի՞նչ անեմ ես՝  
Մոլորյաս՝ խեղճ ու կրակ,  
Իրար բերեմ բւեռները իմ հակառակ,  
Սեկմեկու հետ հաշտեցնեմ: (*ածական*)
  4. Օրերն ամեն ինչ առնում են տամուն,  
Ամեն-ամեն ինչ խառնում են իրար: (*գոյական*)
  5. Պատիվդ պահող չկա,  
Մասրենի՛, սարի՛ մասրենի: (*դերքայ*)

**44. Նշել այն նախադասության թվահամարը, որում թվականով արտահայտված ենթակա կա:**

1. Լուռ է երկիրը, երկինքը՝ ամպոտ,  
Մեկը բախծագին նայում է հեռուն:
2. Երդիկն ի վեր բրթուալով  
Իմ առաջին ճիշը թռավ  
Եվ առաջին ծիծեռնակի  
Ծիվ-ծիվի հետ  
Քիվից կախվեց բակի վրա:
3. Իսկ երկրորդները նրանք են, ովքեր  
Կոչված են կյանքի խորհուրդն օրհներգել:
4. Եվ քարեղեն հեքիաթ հյուսող  
Երկու ձեռք էլ ավելացավ:
5. Խփի՛ր, այս պահի կենացը խմենք,  
Մի վայրկյան հետո գուցե չինենք:
6. Քո կիրճերից զուր խմելու համար  
Ամպերը յոթ սև քրտինք են բափում,  
Եվ ընկույզենու արմատը համառ  
Յոթ յորգիսանի ժայռ է շաղափում:

**45. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ենթակայի արտահայտությունը սխալ է նշված:**

1. Աշխարհում այս աղոտ ես քնքուշ  
Մի հեքիաթ հյուսեցի քո մասին: (*դերանուն*)
2. Տիրությունս անուշ է, որպես  
Հեռավոր, հեռավոր կարլաչյուն: (*ածական*)
3. Ու եկողներն էլ խորհուրդ չեն տալու  
Փնտրել անհնարն ու անկարելին: (*ածական*)
4. Թող ամենքը ինձ մոռանան առհավետ,  
Ու բող ոչ ոք գերեզմանիս մոտ չգա: (*դերանուն*)

**46. Նշել դերանունով արտահայտված ենթակաների քանակը:**

1. Զերմ կարուտով սպասում եմ անհամբեր,  
Որ մեկը իմ փակ դրները կբանա:
2. Ո՞վ պիտի զա, գուցե գունատ մի ստվեր  
Լուռ ներս սողա ու նորից լուռ չքանա:
3. Սի՞թե չկար ոչ մի մոլար ուրվական,  
Որ ամոքեր քարացումը իմ գունատ:
4. Ի՞նչ մնաց ինձ. ուկյա մի ցանց, ուրիշ ոչինչ,  
Մարգարտաշար հուշերի գանձ, ուրիշ ոչինչ:
5. Ի՞նչ ես փնտրում, սի՞րտ տագնապող, անխնդում  
Մեր բանտն անել, զուր է տանջվել ու վայել:

**47. Նշել այն դերանունների բվահամարները, որոնցով արտահայտված ենթակա չկա տրված նախադասություններում (1. անձնական, 2. ցուցական, 3. հարցական, 4. հարաբերական, 5. որոշյալ, 6. անորոշ, 7. փոխադարձ, 8. ժխտական):**

1. Հիմա դուք կուռք եք, շքեղ բազին,  
Իսկ ե՞ս... ո՞վ եմ ես, մի հեգ անցորդ:
2. Հմայք ու դյուրանք անզոր են քո դեմ,  
Արդյոք ո՞վ գիտե անունդ անուշ:
3. Ա՞յս, եթե մեկը իմ սրտին նետեր նոր հույսերի փայլ,  
Մեղմաբար ասեր, քնքուշ համոզեր, որ նա կգտնի:
4. Ձեզ չի գգվի, տիսուր խոսքեր,  
Ցուրտ աշխարհում ոչ ոք, ոչ ոք:
5. Եվ թվում է, որ անեզը է ամեն ինչ,  
Որ ողջ կյանքը է մի անահման քաղցր նինջ:
6. Հիշում եմ խոսքեր, ակնարկներ անձայն,  
Մի լուսե պատկեր ցնորք աղջկա,  
Այն ամենը, որ երազ էր միայն,  
Այն ամենը, որ հավիտյան չկա:

**48. Նշել այն նախադասությունների քանակը (նաև քաղաքիչ նախադասությունների), որոնցում հարակատար դերբայով արտահայտված ենթակա կա:**

1. Ես կգամ որպես մոռացված մի երգ՝  
Հյուսված աղորքից, սիրուց ու ծաղկից:
2. Տեսնո՞ւմ է աստված, որ այսրան տարի  
Բան չի դրել մեր բախտի ամանում,  
Եվ դրածն էլ շատ է համարում:
3. Այնպես ես գալիս, այնպես ես գնում,  
Ո՞վ դու, արարո՞ն և ավերի՛չ,  
Որ դժվար է մարդ գիշի ընկնում  
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
4. Քանի՛, քանի՛, քանի՛ միլիոն տարվա  
Արած-դրածը քո տաճշված հոգու  
Մի բուռ մոխիր ու մուր կդարձնի:

**49. Նշել տրված հատվածի պարզ ստորոգյալների քանակը:**

Նա շատ անգամ էր դուրս եկել կովի դաշտ և այս անգամ էլ ձայն տվեց Գարիբալդիին և կանչեց հայրենիքի այն բոլոր քաջերին, որոնք ուրախությամբ կվովեին և կմեռնեին հայրենիքի համար: Այն ժամանակ քսան-քսանիինք տարեկան երիտասարդ էի: Ես ներկայացա նրան. այն ժամանակ մի փոքր ալեխառն էր նրա մորուքը: Ի՞նչ զեղեցիկ էր նա, իսկական տղամարդ, իսկ աչքերը փայլում էին հայրենիքի սիրով ու վրեժով:

**50. Նշել տրված հատվածի պարզ ստորոգյալների քանակը:**

Երբ դասաժամն ավարտվեց, ու աշակերտները պիտի ցրվեին, ընկերս, որ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն: Ուսուցիչը պատասխանեց, որ ինքը բաղաձայն է և երգ չի սովորեցրել, սակայն ավելացրեց, որ աշակերտների մեջ երգողներ կան, և առաջարկեց նրանց, թե ով կարող է, թող երգի: Փոքրերը սիրու չարին, մեծերն էլ քաշվեցին:

- Բոլորը մի ընդհանուր ազգային երգ պիտի գիտենան, օրինակ՝ «Մայր Արաքսին», որ շատ տեղին է. հենց նրա ափին եք, - ասաց ընկերս:

**51. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում պարզ ստորոգյալ կա:**

1. Աշնան մի պայծառ առավոտ էր: 2. Փոշոտ ցանկերի միջից փայլվլում էին խաղողի ոսկեղեն ողկույզները, նույն ու խնճորները. 3. ասես հրեղեն գնդակներ լինեին: 4. Հուրքի այգիներից լիուքյան անուշ բուրմուճըն էր խնկում: 5. Երկու ընկերով գնում էինք հինավորց Արմավիրի բլրի տակով: 6. Մենք քայլում էինք Երասխի հին հունով դեպի մի գյուղ՝ Երասխի ձախ ափին: 7. Սքանչելի էր Արարատյան դաշտը: 8. Մասիսը ուղղակի դիմացներս էր. 9. այնպես պարզ ու վճիռ էր:

**52. Նշել տրված հատվածի պարզ ստորոգյալների քանակը:**

Զիով դանդաղ գնում եմ այն գյուղը, ուր ջրաղաց ունեինք և ընդարձակ հողեր: Ահա լեռներ, ուր գիշերել եմ ոչխարների հոտերի մոտ, երբ ընկերներիս հետ հովիվ էի: Վաղուց ցամաքել է մեր ջրաղացի առուն, որովհետև ավերակ է մեր ջրաղացը: Նվիրական վայրեր են, ուր անցան իմ մանկությունն ու պատանեկությունը: Զիուս սմբակների տակից բարձրանում է ճանապարհի փոշին, և հուշերս ինձ երազ են թվում:

**53. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ստորոգյալի տեսակը սխալ է նշված:**

1. Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,  
Քնքուշ ու տրտում որպես իրիկուն: (*պարզ ստորոգյալ*)
2. Քնքուշ երազով պաճուճի՛ր հոգիս,  
Նստի՛ր մահճիս մոտ ու տիսուր երգի՛ր: (*պարզ ստորոգյալ*)
3. Թո՞ն որսդ, արի՛, քաջասի՛րտ բազե: (*բաղադրյալ ստորոգյալ*)
4. Ես տառապանքս բախս եմ համարում: (*պարզ ստորոգյալ*)
5. Ամենուրեք մի կարոտ ես դու նետել,  
Քո ստվերն ես փոել անծիր աշխարհում: (*բաղադրյալ ստորոգյալ*)
6. Այստեղ է լացել իմ մայրը  
Սորմոքն իր և իր օրորը: (*պարզ ստորոգյալ*)

**54. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ստորոգյալի տեսակը սխալ է նշված:**

1. Խավարն է գերել մեր հոգին այսօր  
Եվ լուսաբառ՝ հավետ մահապարտ: (*քաղաքայալ ստորոգյալ*)
2. Դուրս եմ գալիս ես, լուս թափառում,  
Մեզն է գրկում ինձ, հողմը՝ օրորում: (*պարզ ստորոգյալ*)
3. Պայծառ են աստղերը,  
Աստղերը շողուն են: (*քաղաքայալ ստորոգյալ*)
4. Լոռում է կոչը մարտական փողի,  
Մեռնում է տիսուր ամեն մի փափագ: (*պարզ ստորոգյալ*)
5. Երբ կիոզմես, կզազազես աշխարհից,  
Դարձի՞ր ինձ մոտ, վերադարձի՞ր դու նորից: (*պարզ ստորոգյալ*)
6. Պայծառ աշխարհում կլինենք մենակ,  
Ցավ կյանքի մեռնող լույսերից խարված: (*պարզ ստորոգյալ*)

**55. Նշել բաղադրյալ ստորոգյալների քանակը:**

1. Վաղուց է փախել աշխարհն իր հունից,  
Մեկ էլ ե՞րբ է նա իրեն գտնելու:
2. Տատրակները սեր են անում  
Պատշգամբիս քիվաքարին:
3. Կարծես մի զույգ սիրահարված  
Տատրակ դարձել և այս պահին  
Տիեզերքն է իջել հանկարծ  
Պատշգամբիս քիվաքարին:
4. Աշխարհն ինձ համար հովիտ է բարու,  
Ցավերն ինձանից դեռ հեռու էին:  
5. Հոգուդ կրակը թեժ պիտի պահես.  
Եղանակները վաղ են ցրտելու:

**56. Նշել բաղադրյալ ստորոգյալների քանակը:**

1. Դու իմ փնտրած մի հատն էիր,  
Բախսի իմ նվերը,  
Իմ առաջին հավատն էիր  
Եվ իմ վերջին սերը:
2. Եթե ձեր հոգուն մեղք եք արել,  
Հավերժության պես չեք երկարել  
Դուք բանաստեղծի երազներում,  
Չփո՞ն վայրկյաններ, ձեզ չեմ ներում:
3. Ջրվեժն օրնիբուն անքուն է,  
Ջրվեժը հրաշք է իրական,  
Թռիչք է ջրվեժի անկումը,  
Ջրվեժի արցունքը՝ ծիածան:
4. Դեռ ինչքան պիտի ջանալով ջանամ,  
Որ ամբողջանամ, ինչպես լեռներս:  
5. Ես ձեր խիլճն եմ, ինձ մի՛ խարեք,  
Ձեր թևերն եմ, ինձ մի՛ կապեք,  
Ինձ մի՛ կտրեք, ձեր երակն եմ,  
Ձեր արյունն եմ, ինձ մի՛ թափեք:

**57. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1. Ինձ մի տագնաապ է համակում,  
Մոտալուտ աղետի մի սարսափ,  
Սարվարդի լճերն են ցամաքում,  
Ընկնում են հույսերս թևաթափ:
2. Եվ ավելորդ ես դու նորերի մեջ,  
Խողանում ընկած հասկ ես ցորենի:
3. Մեր բաժին աստված, քո սիրտն էլ քար էր,  
Որ մեզ քարերը տվիր նվեր,  
Քայց քո կյանքը կարճ, մերը երկար էր,  
Ու երկարում է քարերն ի վեր:
4. Դու չինեիր այդքան անթերի,  
Ես չինեի այսպես ավերակ,  
Դու չուշանայիր, ես չշտապեի,  
Եվ աշխարհ գայինք միաժամանակ:
5. Մենք հոգի ենք, մի մարդ,  
Մի ընտանիք, մի տուն,  
Բազմալեզու, ազնիվ  
Մի ազգություն:
6. Դու ոչ Սայաք-Նովա,  
Ոչ էլ Քուչակ էիր,  
Ոչ էլ հոչակ փնտրող  
Հետին գրչակ էիր:

**58. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ստորոգելին արտահայտված է գոյականով:**

1. Ես մի ճամփորդ եմ մթնում մոլորված,  
Չեմ ուզում կանչել ցնորքս մեռած:
2. Ա-խ, ես սիրո ճամփի ափին  
Մենակ բուսած վայրի վարդ եմ:
3. Ե՞յ, զուլում բախտ, դու առյուծ ես,  
Խեղճ եղնիկ եմ ճանկիդ մեջ:
4. Իմ սիրտն այնտեղ է, ուր աստղամերձ  
Լեռներն են կանգնել՝ հագած կուռ զրահ:

- 59. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ածականով արտահայտված ստորոգելի կա:**

1. Սենակ մանկության օրերն են անուշ,  
Գողտրիկ ու բուրյան, չքնաղ, ոսկեփայլ:
2. Նա մի փոքրիկ աղջիկ է,  
Լուսափրիք աղավնի:
3. Լուռ է ամեն ինչ և ամենուրեք,  
Ժամանակը՝ անշարժ, և ողջ տիեզերք՝  
Լցված խորագգեստ, խորին լուսությամբ:
4. ԱՇԽ, երանի չէ՝ բյուր և բյուր անգամ,  
Որ կույր ու անգետ լինելի կրկին:
5. Հարմար է երկիրն ինձ համար,  
Ե՛վ ցուրտ, և լուռ, և ունայն,  
Հոգիս անհույս ու խավար,  
Սառը որպես գերեզման:

- 60. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ածականով արտահայտված ստորոգելի կա:**

1. Այսօր գրանք իրարու,  
Այսօր իրար չտանջենք,  
Լինենք անշար ու հլու,  
Հեկեկանք ու չամաչենք:
2. Ամայի փողոցում մեզ-մշուշ,  
Լոռություն է մեռած,  
Կարուտ է իմ սիրտը քո անուշ  
Գգվանքին, իմ երա՛զ:
3. Նրա խոսքերի մեղմ օրորում  
Աշխարիլ թվաց ինձ անեզերք:
4. Բայց դյուրիչ է մղձավանշն այս դժնափայլ,  
Որ գրկում է քեզ ահերով իր մթին:
5. Դու հայրատ չես, իմ հայրենիք,  
Տրտում ես դու և իմաստուն:

- 61. Նշել այն բաղադրյալ ստորոգյանների քանակը, որոնց ստորոգելին արտահայտված է դերանունով:**

1. Ես կույր եմ հիմա, անքախստ ու մենակ,  
Հավերժում կորած մի մոլոր ասուաց:
2. Առաջինները նրանք են, ովքեր  
Կարողանում են ամեն ինչ ճեղքել:
3. Ինչո՞ւ է այդպես, գլխի չեմ ընկնում,  
Եվ գլխի ընկնող կա՞ մեկը տեսնես:
4. Քո հոգու վրա կա մի վարագույր,  
Ո՞վ ես դու, ո՞վ ես, բնավ չգիտեմ:
5. Եվ բախիծ, և տրտունջ, և տանջանք,  
- Դո՞ւ ես այն, թե՞ աշխարհն է լացում:

**62. Նշել այն բաղադրյալ ստորոգյալների քանակը, որոնց ստորոգելին արտահայտված է դերանունով:**

1. Դարձյալ իջավ զիշեր, դարձյալ ու կրկին Մենակ ես դու, ինքդ քո դեմ՝ մերկ ու բաց:
2. Այնքան քնքշություն կա սրտում իմ, Այնքան մեղմություն՝ իմ հոգում:
3. Մենք մենակ ենք՝ ես ու դու, Ես ել դու եմ, ես չկամ:
4. - Ի՞նչ պիտի լինեմ կյանքից հետո, - Հարցում արի ես բնության: - Ինչ որ էիր կյանքից առաջ, - Այսպես տվեց ինձ պատասխան:
5. Հետ դառնար հիմա հասակս մատադ, Լինեի նորից այն խենք պատանին:

**63. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածները ստորոգելի են:**

1. Լինես քարի ու անքասիր, Ընկերներիդ սրտով սիրես:
2. Աստղերն են ժպտում լուսեղեն նազով, Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
3. Սիրտ իմ, այդ ո՞ւմ ես դու իզուր կանչում, Տես՝ զիշերն անցավ, աստղերը մեռան:
4. Ցուրտ ցերեկներից հավիտյան դժգոհ Սիրտս կարոտ է քո զգվանքներին:
5. Այնպես զգվող է երեկոն անափ, Ծաղիկներն այնպես նազով են փակվում:
6. Ես մի ճանփորդ եմ՝ մթնում մոլորված, Ու հոգնած սիրտս դարձել է խոնարի:

**64. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բաղադրյալ ստորոգյալ կա:**

1. Զգիտեմ՝ որտեղից է գալիս Զութակի հեկեկանքը տրտում:
2. Դու չկաս արդեն, դարձել ես զրույց, Երազ ես դարձել, հայրենական տուն:
3. Ո՞վ է շրջում անդադար, Ո՞ւմ է կանչում հիմա նա, Ես հեռու եմ, ես օտար, Ասացե՛ք՝ քող հեռանա:
4. Աղոթքս պարզ է և նրահյուս, Մենառողի վերջին կանչ, Հայտնվի՞ր որպես լույս արշալույս Իմ հոգուն մահատանջ:
5. Բացված է արդեն մի ուրիշ երկիր, Ես այստեղ եմ, բայց ուրիշ եմ հիմա:
6. Եղի՛ր դու էլ պայծառ ու հեզ, Հեքիաթ, հանգիստ ու երազ:

**65. Ընդգծվածներից նշել որոշիչների քանակը:**

1. **Արծաթաշող** առուն առվին  
Զայն է տալիս ու երգում,  
**Անտրոտոնց** է լալկան ուսին,  
Առուն առվի եզերում:
2. **Մեղմիվ** փովեց քնքուշ մութ՝  
Խորհրդավոր, թափանցիկ:
3. Գիշերվա փողոցները քափուր  
Շրջեցի տրտում ու **միայնակ**:
4. Կապույտ լույսերի ցոլքերում **ճռճուն**  
Հայտնվում է նա, **մեղմագին** փարվում,  
Գունատվում է **լուռ** ու էլ չի շնչում:
5. **Սաքուր** է իմ հոգին, ու հիմա  
Օրինում եմ վիճակս երկրային:
6. Կար հեռու մի երկիր քովչական,  
Արևն էր ոսկեղեն աշխարհում:

**66. Նշել ածականով արտահայտված որոշիչների քանակը:**

1. Փրկեցե՛ք ինձ այս բանտից, խավարից այս սրտախոց,  
Ստվերներից այս տրտում, ամրոխից այս համր ու հոծ:
2. Լույս երազների աղմուկը ահեղ,  
Համրույրը ուրիշ օրերի կզզամ:
3. Հիմա սոսիները ծաղկում,  
Ի՞նչ քաղցր կանչում են քեզ, Նո՞րք:
4. Անվանեցե՛ք ինձ հիմար,  
Կոչեցե՛ք հիվանդ,  
Զեռները Զեր պիտի հար  
Երգեմ մոլեռանդ:
5. Լուռ նստում եք պուրակում,  
Համր ու անխոս հեռանում,  
Ժպտում եք ինձ ու այգուն  
Ժպիտով խոր ու խոհուն:
6. Սիրում եմ պարզկա քո լեզուն,  
Զեռներդ՝ մաշված ու բարակ:

**67. Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում բոլոր ընդգծվածները ածականով արտահայտված որոշիչներ են:**

1. Հեքիարդ անվերջ օրորում,  
Իլիկդ խոսում է անուշ:
2. Ու զանգերն այն լալազին  
**Սեռնող իմ երկրում**  
Չեն հուզելու քո հոգին  
Տիրությամբ անհուն:
3. Եվ հյուսիսային հեռուներում ու ցրտում  
Կարծես ցոլաց իմ նախրյան արևն ալ:
4. Թշնամին եկավ մութի պես կամաց,  
Ամենքն ահարեկ փախան դեպի սար:
5. Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին մեր ավեր,  
Ո՞վ է քարզման մեր դարավոր տանջանքին:
6. Շեղքելով կապույտ անապատն անհուն՝  
Ուկե քարավաններն անցնում են կրկին:

**68. Նշել ածականով արտահայտված որոշիչների քանակը:**

1. Նուրբ ստվերները փոփում են քնքուշ,  
Կապույտ խավարն է երկինքը պատում:
2. Իմ դուռն է ծեծում քամին խոլական,  
Իմ պատերի տակ հեծում է անվերջ,  
**Սեղմիկ երգում է մեղեղին լալկան,**  
Ունում ամայի փողոցների մեջ:
3. Խաղաղ ժայիտը փոեց վրաս,  
**Սեղմիկ խոսեց և անուշ լուեց,**  
Ու քախծոտ կյանքս դարձավ երազ:
4. Անդարձ աշխարհի վարդագույն միզում,  
Կյանքի հեռավոր, անցած օրերում,  
Մի խորհրդավոր քախիծ էր հսկում:
5. Մաքուր է իմ հոգին, ու հիմա  
Օրինում եմ վիճակս երկրային:
6. Ես նստում եմ մենակ, մեն-մենակ,  
Եվ անվերջ երազում, ու կրկին  
Այս կյանքի աշխարհում դժգունակ  
Իր զարդերն է փոռում իմ հոգին:

**69. Նշել դերանունով արտահայտված որոշիչների քանակը:**

1. Ես գիտեմ մի թովիչ առասպել,  
Ուր ողջ կյանքը հրաշք է դառնում:
2. Միշտ նույն խոհերի շշուկին հլու,  
Միշտ նույն կարոտի կսկիծը պահած՝  
Ես դուրս եմ զայխ նորից շրջելու  
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:
3. Ուրիշ հավքեր են թռչում,  
Ուրիշ ցողեր են թրջում  
Հոգնած ոտքերս:
4. Այս գիշեր նորից լալիս է քամին  
Իմ դրան առաջ, իմ պատերի տակ:
5. Շատ երգեր կան իմ սրտում,  
Բայց ես էլ չեմ երգելու,  
Փախչում եմ լուր ու տրտում՝  
Չար հողմին հլու:
6. Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,  
Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:

**70. Նշել այն նախադասությունների թվականարմները, որոնցում դերանունով  
արտահայտված որոշիչ կա:**

1. Կար հեռու մի երկիր թովչական,  
Այս էր ոսկեղեն աշխարհում:
2. Եվ դու կերգես, զարթնա՛ծ աշխարհ, իմ առաջ,  
Կարձագանքես իմ ողջոյնին սիրառատ:
3. Մտքերից այս տարամերժ  
Ազատեցե՛ք ինձ,  
Մորմոքումից այս անվերջ,  
Անանց այս ցավից:
4. Դեռ ինչքան ջանք է հարկավոր,  
Որ պահենք հացը հոգևոր:
5. Խելագարվել է տիեզերքն ամբողջ,  
Աչքերը չոել իմ հոգու վրա:
6. Մարդիկ կան, որոնց հետմահու կյանքը  
Հատնում է վերջին ծանոթի մահով:

**71. Նշել դերբայներով արտահայտված որոշիչների քանակը:**

1. Այնտեղ հանգիստ կննջեմ մեռած իմ մոր հետ,  
Կզրկեն ինձ երազներ՝ դյութական հավետ:
2. Երազներից քարե ծաղիկ  
Եվ քարեղեն հերիաք հյուսող  
Երկու ձեռք էլ ավելացավ:
3. Հրճվի՛ր արևով, նայի՛ր արևին,  
Արևին նայող աշքե՛րը համբուրիր,  
Սարերին փարված ամպե՛րը համբուրիր,  
Քարերին ծաղկած մամո՛տը համբուրիր:
4. Վերջապես քի՞չ կան հրճվելու բաներ,  
Եվ լալու բաներ քի՞չ կան աշխարհում:
5. Մի անմայր մանուկ՝ հեկելկանքներից  
Հոգնած ու բեկված, ննջել է ուզում:
6. Ես չար հոսանքով մղված եմ հեռուն,  
Եվ անվերադարձ փակված է ուղին:

**72. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում որոշիչն արտահայտված է բառակապակցությամբ:**

1. Նրա եղբայրը քագավոր է՝ հզոր, պատերազմասեր. գնացել է մի աշխարհ և հիմա վերադառնում է:
2. Քաղցր է հայրենիքը, խորիրդավոր և անբացատրելի հզորություն ունի:
3. Կարմիր կակաչներով բոցավառված ցորենի մատադ արտերը ցոլում են ու ծուփ տալիս:
4. Իրար սիրող ընկերները խոսում էին մանկության քաղցր օրերից:
5. Մորթիների վրա մեծ քանակով կախված էին զանազան տեսակի և ոճի գենքեր՝ մանր ու խոշոր դաշույններ, սրեր, հրացաններ:
6. Ապա իր մշտապես ընտրած փողոցներով գնում էր տասնյակ տարիներից ի վեր իր հաճախած սրճարանը:

**73. Նշել հատկացուցիչների քանակը:**

1. Այդ ժամանակ մի մեծ տոնի առթիվ, իին սովորույթի համաձայն, պալատի առջև ձիարշավ տեղի ունեցավ:
2. Դրությունը անորոշ է. փող չունեմ, տանտիկինս ուզում է, ես նեղվում եմ. ընթրիքի, ճաշի փողը չեմ տվել, շորերս մաշվել են, վրաս ծիծաղում է հասարակությունը:
3. Հայրենի՛ Շիրակ, ինչքա՞ն քաղցր հուշեր ես արթնացնում իմ հոգում, և իմ հուշերի զմրության գետը քո նվիրական դաշտերով տանում է ինձ դեպի երջանիկ մանկություն:
4. Ջյունի վրայով սահում էր զյուղացու նախակերտ սահնակը, և ես այն զգացումն ունեի, թե լուսնի դաշտերի վրայով է, որ սահում ենք:
5. Նրանց հայացքի մեջ զարմանք չկար. զիտեին, որ իրենց սիրելի քահանան մի տեղին առակ ունի լեզվի տակ, որ հիմա պատմելու է:
6. Շանապարիի եղերին՝ դալար բումբի վրա, կանգնել էին երեք գեղջուկ պատանիներ՝ մախսադարձ մեջքներին կապած:

**74. Նշել գոյականով արտահայտված հատկացուցիչների քանակը:**

1. Կցրեմ կյանքի հուշերը ցավոտ  
Ու հերիաքային լույսեր կվառեմ:
2. Հողմը սրարշավ  
Հոգուս դալկացած ծաղիկ հույսերի  
Թերթերը տարավ:
3. Ինձ լուս մոռացան, ինձ չհիշեցին,  
Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս:
4. Նրա խոսքերի մեղմ օրորում  
Աշխարհը թվաց ինձ անեզերք,  
Կարծես հնչում էր իմ օրերում  
Աստղերի երկրում հյուսված մի երգ:
5. Ծեծված, տրորված աշխարհում անդուռ,  
Ո՞ւմ պիտի պարզի աչքերը տխուր  
Եվ ո՞ւմ պատի տակ խավար գիշերով  
Պիտի հանգչի նա մերժված ու խռով:
6. Արդեն արձաքն է ցոլում մեկ-մեկ  
Զեր ճնիս մազերի պարզ հյուսվածքում,  
Եվ Զեր ճակատին՝ պայծառ ու սեզ,  
Երկու ակոս է նուրբ սողոսկում:

**75. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածներից ոչ մեկը հատկացուցիչ չէ:**

1. **Ժայռի** գլխից վառ կակաչի  
Խարույկներ են թխում,  
**Կողքի** ժայռը, հանգիստ նստած,  
Ամպ ու մեզ է ծխում:
2. Երբ ձյուն է նստած **սարերի** վրա,  
Եվ դեռ չեն պայթել հունդերը հողում,  
**Որոտնարերդի** քարերի վրա  
Օձերն այդ պահին շապիկ են փոխում:
3. Ապրեցինք մենք **նրա** թևի տակ,  
Պահեցինք մեր խոսքն ու մեր համը,  
Շողիկն ու Շուշանը **մեր** հստակ,  
Եվ հուրիեր մեր Հայկն ու Արամը:
4. **Իրաք** ձուլվեցին իմ մեջ մահ ու կյանք,  
Հոգիս մատնեցիր **քո** մատախուղին:
5. Ապառաժներ են հոշոտում  
**Ժամանակի** ժամիքները,  
Իրար գլխի փուլ են զայխ,  
**Իրաք** հերքում հոխորտալով  
Ժամանակի ալիքները:

- 76. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածներից ոչ մեկը հատկացնուցիչ չէ:**
1. Նա փերին է զմռուխտ գետի,  
Յնորքերիս սիրելին,  
Դիցուին է իմ վառ սրտի,  
Վառ երգերիս նազելին:
  2. Կենսական ծովի հույզերի միջին  
Ես ժայռի նման կանգնած եմ ամուր,  
Կայծակն է զարկում իմ վես ճակատին,  
Ես **Ժայռի** նման կանգնած եմ ամուր:
  3. Երազ տեսա, **ձեր** տան առաջ  
Չուլալ աղբյուր կրխեր,  
Ձենը **մեղմիկ**, քաղցրակարկաչ,  
Չորս դիմ - ծուփ ծաղկունք էր:
  4. Դու գնացիր, ես մնացի  
Բյուր մարդկանց մեջ մեն-մենակ,  
Մրտիս խորքում դառը լացի,  
Խավարն իջավ կրծքիս տակ:
  5. Ու իհմա աշնան **մեզի** մեջ խավար,  
Ականջդ հառած **քո** սրտի ցավին,  
Օտար ափերում կանգնել ես շվար,  
Ինչ որ ունեիր, անդարձ գնացին:
- 77. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ածականով արտահայտված հատկացնուցիչ կա:**
1. Ավա՞ղ, խավարը և չարը դժնյա և այս աշխարհիս գոռ հզորների սուրն ու բռունցքը խորտակեցին քեզ:
  2. Ողբում եմ դառը վիճակդ դժնի, բռունցքի զոհ հազարամյա՝ ընկած ազգերի մեծ ճամփի վրա:
  3. Ողբում եմ նորից քո արտասվելի վիճակը անգութ, խավարի մեջ միշտ լույս որոնող իմ հայ ժողովուրդ, արդ առավոտից մինչև առավոտ ոտներիդ ներքև ես քեզ եմ հսկում:
  4. Եվ քո դարավոր ցաման, զայրույյի ամպրոպի շանթը արձակի՛ր իհմա, ջախի՛ր, ջախջախի՛ր բռունցք ու շղթա, նոր արև վառի՛ր մեր խավարամած, հոգնած բիբերին:
  5. Դու պետք է ապրես, դրւ կուզես ապրել, ո՞վ դրւ ախոյան լույսի, վսեմի:
- 78. Նշել դերանունով արտահայտված հատկացնուցիչների քանակը:**
1. Մեր՝ երեխաներիս աչքը չէր հեռանում նրանցից. ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:
  2. Այս գեղօքեղանքը սիրավառ սրտի, հրեղեն արցունքների և անծայր կարոտի մի ամբողջ հեքիաք էր:
  3. Սոխակներից յուրաքանչյուրը ճգնում էր իր երգով գերազանցել մյուսի երգին:
  4. Ես շատ էի լսել սոխակի երգերը, լսել ու հիացել, բայց բոլորի սրտերը գերող այսպիսի երգ առաջին անգամ էի լսում:
  5. Մենք նստեցինք իրար մոտ և երկար նայում էինք միմյանց. այսպես ճանաչեցինք իրար:
  6. Հալվեցին ծմռան սառույցները, գարուն եկավ, ծիծեռնակները վերադարձան իրենց բները, իսկ դու չդարձա՞ր, չդարձա՞ր:

- 79. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածները դերանունով արտահայտված հատկացուցիչներ են:**
1. Նրանք չընաղ երազներով գարդարում էին երիտասարդ գահակալի կյանքը և **ամենքին** իմաստություն էին սովորեցնում:
  2. Եվ հայրենի անձայր երկրի փոշոտ ուղիները **իրենց** հետ տանում էին նրա հոգին դեպի արձվարնակ լեռները:
  3. Շինականների խրճիբներում հնչեցնում էր բամբիոր, **որի** խինդն ու հառաջները արձագանքում էին այդ աշխարհի բոլոր ափերում:
  4. Հազար-հազար տարիների բռնության խավարը ցրվեց ժողովրդի հոգուց, և բացվեցին **ամենքի** աչքերը:
  5. Եվ տեսավ, որ նախկին ծովի կանաչ ալիքների փոխարեն, **որոնց** վրա նավերն էին օրորվում, հիմա ավագի դեղին հատիկներն են զալարվում:
- 80. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**
1. Այդ մի մատադ և խարսյաշ եղինիկ էր սև ու զինջ աչքերով որ ծածկվում էին երկայն նորրե բարթիչների տակ:
  2. Արդյոք գիտեր նա որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան ծնվել ու մեծացել էր այդ խոլ անտառներում:
  3. Մի գիշեր մի քամի գիշեր սարերից անսանձ փշում էր քամին դուռն ու պատուհանները ծեծում:
  4. Մեր երեխաններիս աչքը չէր հեռանում նրանցից և ուշիուշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:
  5. Այդ գեղգեղանքը սիրավառ սրտի անձայր կարուտի մի ամբողջ հերիաք էր մի դյուքսական հերիաք հազարան ծաղիկների բույրերով ներդաշնակված:
  6. Թե զյուղերում թե գինետներում բաժակի առաջ գուսանական բամբիոռվ երգում էր իր քաղցր ու տխուր զրույցները:
- 81. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բուն բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**
1. Ես ունեի մի խումբ ընկերներ հիշում եմ նրանցից ոմանց անունը Ալեքսանդր Նաջարյան Արել Ապրեսյան Արշակ Քալանթար:
  2. Թեև քաղաքը իրապույր չուներ այլևս սակայն ամեն ինչ մի ամբողջ աշխարհ էր դիտողի համար և նավքային արդյունաբերությունը և հանքերը և նավագնացությունը:
  3. Ամեն գարուն ձնածովին երևալուն պես գալիս էին արագիլները:
  4. Անցավ մի աղջիկ իր ընկերուի իների հետ մի աղջիկ ուրախ ու վճիռ ինչպես այն բարմագեղ գարունը:
  5. Հիշում եմ ինչ կտրիճ էիր դու արևակեզ զինավառ առյուծի բաշով կտրիճ:
  6. Քաղաքապետ իշխանը հպարտ ու վես ճոխ ու զարդարուն հագուստով այդ մարդը գալիս էր դանդաղ քայլերով շրջապատված շքախմբով:

**82. Նշել մասնական բացահայտիչների քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ինքը Գարիբաղին զայրացած պատուց կայսրի նամակը և պատռած կտորները ուղարկեց նրան:
2. Քառասուն-հիսուն կրծքից բխած այս հումկու և միահամուռ ձայնը որպես հայոց լեզու Երասխի շառաչի հետ փովելով Արարատյան աշխարհի վրա թվում էր թե պանում է ազատ Մասիսի ի վեր:
3. Հարսնաքար լեռը բավշյա զգեստ հազար ամպեղեն բարակ շղարշը երեսին ինչպես առասպելի հարս սպասում էր իր փեսային:
4. Հայրս որպես իմաստուն մարդ ինձ ասաց որ մարդ ինչ անելու է մինչև հիսուն տարեկանը պետք է անի:
5. Մինչև այժմ ես այն կարծիքին էի որ պիտի կովել և Տաճկահայաստանը ձեռք բերել և պաշտպանել իրեն ազատ երկիր:
6. Ես կհագնեմ ճամփորդի ոռմանտիկ շորեր սարեր ու ձորեր մաս կգամ կլինեմ աշուղների ու հովիվների մեջ ինչպես շրջմոլիկը:

**83. Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Վերը երկնի լազուրում ճախրում էին ծխածանաքև հավքերի երամները:
2. Նա հումորի ու երգիծանքի անսպառ պաշարներ ունեցող մարդ է այն եզակիներից է որ այդ հումորն ու երգիծանքը նախ և առաջ ինքն իրեն է ուղղում:
3. Մենք հայաստանցիներս մի մեծ խումբ ութունվեցի հոկտեմբերին վայրէջք կատարեցինք Բուենոս Այրեսի օդանավակայանում:
4. Դպրոցից մի քիչ հեռու իրենց տան առաջ ծիրանենու տունկերն էին ձգվում արևի ոսկեզօծ ճաճանչների տակ:
5. Իբրև փորձառու ռազմագետ նա գիտեր որ թշնամին շատ անգամ հարձակվում է շապասված ժամանակ:
6. Ամեն անգամ օտար երկրներում շրջագայելիս նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ մեջ միշտ ապրել է տուն վերադառնալու սպասման երանությունը:

**84. Նշել գոյականական անդամի լրացումների քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

Փոքրիկ օդակները լայնացան հալվեցին ձուլվեցին ծովի արևից փայլող անդրբը երեսին: Լառ-Մարգարը ոչ ոքի չասաց թե ինչու արցունքներ երևացին իր աշքերում երբ առաջին անգամ գնացքի պատուհանից հայրենին եզերքը տեսավ: Իր բնօրբանում պիտի ծլեին ծիրանի կորիզները: Լառ-Մարգարը գիշեր-ցերեկ առուների վրա էր լինում ջուրը բաժանում հսկում ջրտուքը առուների մաքրությանը հետևում:

**85. Նշել դերանունով արտահայտված ուղիղ խնդիրների քանակը:**

1. Չեմ նկատում օրերիս չուն,  
Ակնթարթ է թվում տարիս:
2. Բայց բևեռներս իրարից փախչում,  
Իրար լքում են զույգ բևեռներս:
3. Ես առնեի իմ գրկի մեջ  
Եվ իմ ցողով քեզ մաքրեի:
4. Կյանքում մի բան լավ հասկացա՝  
Մահվան ահը ծանր է մահից:
5. Փակվում են ակունքներն իմ երգի,  
Բախսոն իրե՞ն, թե՞ մեզ է ծանակում:
6. Արքաներն ինչքա՞ն են անհոգի,  
Նրանց խիդճն ո՞վ ալիտի ոռոգի:

**86. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում գոյականով արտահայտված ուղիղ խնդիր կա:**

1. Ա՛խ, սերունդնե՛ր աշխարհ եկած,  
Որ կանգնած եք հերքի,  
Գտե՛ք մեկին, որ մի հնարքով  
Այդ օրենքը հերքի:
2. Խաղն այնքան բարդ է,  
Որ կարող է հանկարծ  
Մարդը իր տունը քանդի:  
3. Ժայռեղեն ժանիքներ սրելով,  
Քարանձավ աչքերը չուելով՝  
Կիրճերը խժոում են դարերին:
4. Սեր ինչքը խլում, ծախում մեզ վրա  
Եվ հետո մեզ են մեզ վրա ծախում:
5. Սեր բարեկամները՝ ուսյալ, անուսում,  
Անեծքի դիմաց օրինանք են ուզում,  
Խլածի դիմաց՝ շնորհակալանք:
6. Սի բուռ դարձա կամաց-կամաց,  
Աճյունիս սափորին հասա:

**87. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ընդգծվածը ուղիղ խնդիր չէ:**

1. Սև երկինքը իջավ-փարվեց  
Սևեր հազած մեր լեռներին:
2. Խրտնած գետերի որոտի ահից  
**Քունը** փախցրած լեռներն են քրտնում  
Գիշերվա մեջ խոր ու տագնապալից:
3. **Ինձ** կիշեն ամեն անգամ  
Օրը բացվելիս,  
Քնարաբախ հավքն ու հովերն  
Իրար բախսվելիս:
4. Թող լճնկերներդ քեզ մտքով թաղեն,  
**Վախճանն** ավետեն քո մեծ հոգնության:
5. Քո վերջին շնչին, ավաղ, չհասա,  
Եվ չսեցի բառերդ վերջին:
6. Չե՛, ամայությունը, ասենք ուղղակի,  
Կապերն է կտրել, երես է առնում,  
Վերջին տնակը լրված գյուղակի  
Վերջին պառավի դագաղն է դառնում:

**88. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բոլոր ընդգծվածները ուղիղ խնդիր են:**

1. Իմ լացով իմ **այգին** ջրեցի,  
Իմ ջանքով իմ **սարը** բարձրացա:
2. **Պատասխանն** այս հարցի  
Ո՞ւմից ես իմանամ,  
Ի՞նչ հրաշքով բանամ  
**Դռները** անդարձի:
3. **Ծաղիկն** ու միրգն ո՞վ վայելեց,  
Որ ինձ փուշը մնաց բաժին,  
Ես իմ բաժին ամեն **փշին**  
Դրախտի ծառ ասեմ, գնամ:
4. **Մի հայրեն** ասեմ ես Էլ,  
Իմ ապրած օրերին ասեմ,  
**Օրինանքս՝** անցավորաց,  
Մաղթանքս նորերին ասեմ:
5. **Ի՞նչ** է ասում ճամփորդներին  
Հալված-մաշված այս կածանը,  
Ժամանակին հազար ու մի  
**Քայլեր** հաշված այս կածանը:

**89. Նշել դեբքայներով արտահայտված ուղիղ խնդիրների քանակը:**

1. Տեսնո՞ւմ է աստված, որ այսքան տարի,  
Բան չի դրել մեր բախտի ամանում,  
Եվ չդրածն էլ շատ է համարում:  
2. Դնում են իրենց մեղքն ինձ վրա  
Եվ հետո հերքում են հերքելս:  
3. Բայց և կրակն է պատրանք,  
Ե՛վ փնտրելն է անտեղի:  
4. Այնպես ես գալիս, այնպես զնում,  
Ո՞վ դու արարող և ավերիչ,  
Որ դժվար է մարդ գլխի ընկնում  
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:  
5. Քրից կարծես ծուխ է բարձրանում,  
Ինչո՞ւ է կորածն այսքան քաղցրանում:  
6. Հետ դասնալու ճար կա՞ որ,  
Տեսնես ո՞ւմ էր հարկավոր  
Այսքան ապրելս:

**90. Նշել հանգման անուղղակի խնդիրների քանակը:**

Տարիներ հետո, երբ ոսքս նորից ընկավ Օդեսա, շատ որոնեցի ծերունուն. ուզում էի նորից հանդիպել նրան, թռոանը, բայց չգտա: Կարոտով նայեցի նրա վաղեմի քնակարանին և վերիիշեցի նրա բոլոր խոսքերը: Ո՞վ գիտե, ո՞ւր է նա. արդյո՞ք սեղմել է մարդկանց կոշիկները կրծքին և համբերությամբ կարկատում է, թե՞ պատմում է գոյուրյան կովի դաժան ալիքների մասին, որոնք այնքան զրոեղ են աղքատներին փշրելու, գեղեցկությունները խորտակելու մեջ: Աչքերիս առաջ երևաց թռոնիկը, բարեց ինձ, մոտեցավ պատուհանին և խոհուն աչքերով նայեց սարերին:

**91. Նշել գոյականով արտահայտված հանգման անուղղակի խնդիրների քանակը:**

1. Ինչպես ծերունին ձայնով պառաված  
Զայնակցում է Ժիր թռոնիկի երգին,  
Այնպես էլ ծերուկ անտառը կամաց՝  
Արձագանք տալիս ջրի աղմուկին:  
2. - Կանգնեցե՛ք, - գոչեց, վլածինը ձեռքին,  
Կախարդ ծերունին հուզված տարերքին,  
Եվ լուռ, հնազանդ հանճարի ձայնին՝  
Մուր ալիքները փոթորկի ժամին  
Կտավի վրա կանգնած են ահա:  
3. Ասավ, սեղմեց սովալլոկ  
Զավակներին իր լանջին,  
Ու շրբունքի վրա դալուկ  
Սառավ համբույրը վերջին:  
4. Ո՛ւ քարշ եմ գալիս, ո՛ւ քարշ եմ գալիս,  
Անքուն ջրի պես դիպչում քարերին,  
Անշունչ քարին էլ երնեկ եմ տալիս:  
5. Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին,  
Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին:

**92. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերանունով արտահայտված հաճգման անուղղակի խնդիր կա:**

1. Ժայռը մտախոհ, իր մոայլ մտքի  
Հետևից ընկած, նայում է նրան:
2. Ու անդաբ զնում էին  
Քշված հողմի կատաղությամբ,  
Իրար կպած ու միասին  
Երկու սև ամայ, երկու սև ամայ:
3. Երեխի նման խարեցին ինձ շատ,  
Երազուն ու խենք երեխի նման,  
Ամեն հաճույքիս նայեցին միշտ խեթ,  
Վրդովմունք տվին ամեն մի վայրկյան:
4. Ի՞նչ իմանաս ստեղծողի գաղտնիքները անմեկին,  
Ընկեր տվավ, իրար կպեց էս աշխարհում ամենքին:
5. Ո՞վ անձառ Սին, որ ամենին միացնում ես մի կյանքում,  
Ամեն կյանքում ու երազում անտես, անկեզ բորբոքում:

**93. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում անջատման անուղղակի խնդիր կա:**

1. Մոտեցած երկնից աստղերը պայծառ  
Ժպտում են խաղաղ քո աչքերի պես:
2. Էլ չեմ անիծում ցավերը կյանքիս,  
Էլ չեմ տրտնջում վիճակից ունայն:
3. Անտուն անցորդից կիսնդրեմ ես հաց,  
Պայծառ աղբյուրի ջուրը կիսմեն:
4. Տիտուր մեռան կապուտաչյա  
Երազները երկնաշող,  
Գագաթներից ես ցած իջա  
Անդունդները սիրտ մաշող:
5. Մահից չեմ վախենում, գալիքին  
Նայում եմ հավատով,  
Կարոտ է սիրտս քո հմայքին  
Մաքուր ու հոգեթռով:
6. Եվ հարցնում եմ կրկին՝  
Զեռքս պրտիս դրած.  
- Կյանքից ինձ ի՞նչ մնաց,  
Ես ի՞նչ տվի կյանքին:

**94. Նշել դերանունով արտահայտված անջատման անուղղակի խնդիրների քանակը:**

1. Ես քեզնից դառնացած հեռացա,  
Ես քեզնից հեռացա ու լացի:
2. Պատասխանն այս հարցի  
Ո՞ւմից ես իմանամ,  
Ի՞նչ հրաշքով բանամ  
Դոները անդարձի:
3. Ի՞նչ եղավ: Մենք մեզանից  
Հեռացանք կամաց-կամաց,  
Մեկմեկու հիշել անգամ  
Թերացանք կամաց-կամաց:
4. Քեզանից նամակ չկա.  
Փոստատարն ամոթով մնաց,  
Իրենն էր մեղքը կարծես  
Շփորվեց, բողեց ու գնաց:
5. Աչք միշտ կուշտ կմնա,  
Հոգիդ՝ զոհ քեզ հասած քչից,  
Բոլորին բաժին կտաս  
Քո մաքուր-մաքրված խղճից:

**95. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ընդգծվածները անջատման անուղղակի խնդիրներ չեն:**

1. Օրե՛ր, ծիլ-ծիլ մի ծո՛խս բերեք  
Պատանության կրակներից,  
Մի լո՛յս բերեք հոգնած ու հեզ  
Շամփաս պահող ճրագներից:
2. Հայաստան երկրի  
Տարդեղի կարմիր կրղեհից հետո  
Սիջինաֆրիկյան միջօրենների  
Թանձր համբույրներն անգամ  
Շուրթերս վառել չկարողացան:
3. Խելքս քո խրատից չկշտացավ,  
Տվածից ու խլածից չկշտացավ,  
Անսիրտ քո կրակից չկշտացավ:
4. Եթե մինչև անգամ ինձ վտարած լինես  
Վերհուշերիդ վերջին խոնավ քարանձավից,  
Միևնույն է, կզամ, ինչ էլ լինի, կզամ:
5. Որ մինչև անգամ երբ քայլում եմ ես  
Մարգերի ծաղկած երազի վրա,  
Կրենցից անկախ մի բան հիշելիս  
Իմ ներքանները նվում են հիմա:
6. Անդունդների ծոցից, ջրվեժների բոցից  
Ես լսում եմ կարծես վերջին ճիշը նրա:

**96. Նշել միջոցի անուղղակի խնդիրների քանակը:**

1. Քեզ բախտն ուր էլ տարավ,  
Մտքով քո տանն էիր:
2. Ամպը հառաչում էր լեռան լանջին,  
Դողում, սարսում էր հասակով մեկ:
3. Երեւ ես մի օր աշխարհից գնամ,  
Ո՞ւմ սուտ մեղքով ես մեղքդ հերքելու:
4. Երգ ես, լցված եմ երգով,  
Իզուր է հերքելոյ:
5. Ես հարուստ էի: Ես կարող էի  
Իմ անհատնեկի երազանքներով  
Գնել յոթ երկինք ու տալ քեզ նվեր:

**97. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ընդգծվածը անուղղակի խնդիր չէ:**

1. Եկան, ոռնացին սաղարթներիդ մեջ  
Ու ոլորելով, **ճկելով** մեկ-մեկ  
Դալար ճյուղերդ փշրեցին, առան:
2. Եվ վերջապես ես չեմ կարող  
Չարհամարհել այն պատանուն,  
Որ հոր առաջ հորից խած  
**Գլխարկով** է հալարտանում:
3. Ես չեմ կարող չներշնչվել  
Ամեն բացվող **առավոտով**,  
Առավոտի բարի հույսով:
4. **Մեկով** իհացա, մեկից խոցվեցի,  
Այնքան փորձեցի, այնքան փորձվեցի,  
Բայց էությունս, ավա՞ն, մինչև վերջ  
Բաշխել, բաժանել չկարողացա:

**98. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերբայով  
արտահայտված խնդիրներ կան:**

1. Քնածին ո՞ւր ես ասում,  
Մի արթունի՛ ասա,  
Սահյանն է այս հողի տակ,  
Վնաս չունի, ասա՛:
2. Քա՞նի, քա՞նի, քա՞նի միլիոն տարվա  
Արած-դրածը մի տանջված հոգու  
Մի բուռ մոխիր ու մուր կդարձնի:
3. Եվ հիմա գնում ենք մեզ գտած՝  
Երգելով մեր հայրենն ու տաղը:
4. Զուրն ընկանք, կրակն ընկանք,  
Չմեռանք, բայց և չամրացանք,  
Խլացանք շատ լսելուց  
Եվ շատ լոելուց համրացանք:
5. Վկա է հողն այս ցավոտ,  
Թե ինչքան ցավի դիմացա,  
Բայց էլի օրինանք գալուս,  
Գնալուս միտքը չինացա:

**99. Նշել խնդիրների քանակը:**

1. Ծղբայված է իմ հոգին, գերի խանդոտ հուշերիս,  
Եվ չկա ինձ ազատում անվախճան այս գիշերից:
2. Նա իր բույրերով այրեց ու գնաց,  
Նա բերեց հոգուս մահու քաղցր կյանք:
3. Երանի նրանց, որ մութ բանտերում  
Եվ չարշարանքում դժնի որպես մահ  
Մաշեցին այնքան օրեր հրահրուն՝  
Գերված թշնամուց՝ անսիրտ ու անահ:
4. Կգամ ու կդառնամ գտած բախտի ժայտ  
Եվ հավատի ժայտ՝ տառապանքից մաշված,  
Արտասուքից խաշված դեմքիդ վրա:
5. Արտույտի երգին մի՛ խփեք քարով.  
Դա ամենամեծ մեղքն է աշխարհում:

**100. Նշել այն նախադասությունների թվակամարները, որոնցում կան  
վերաբերության և ներգործող անուղղակի խնդիրներ:**

1.Խոսում էինք մեր անցյալ օրերից, լավ հիշողություններից: 2. Մեկը իր տեսած երազն էր պատմում, մյուսը՝ տնից ստացած տեղեկությունները: 3. Ապա սկսվում էին ավելի համեղ զրույցներ մեր ճանապարհորդություններից, մանկությունից, սիրուց, արկածներից: 4. Ամեն ոք աշխատում էր սփոփել մյուսին: 5. Երբ դրսից մեկը մի բան էր ստանում՝ ծխախոտ, շաքար, միրզ, իսկույն սիրով բաժին էր հանում ուրիշներին: 6. Մեկը մյուսի կողմից սիրվում ու հարգվում էր:

**101. Նշել խնդիրների քանակը:**

1. Եվ մատներով նուրբ որպես հող  
Թմրած ու թույլ սրտիս դիպար,  
Հողմով տարար ամպը կապար,  
Լազուր ու լուրջ գարուն անուշ:
2. Արևավոր իմ պատանի, կարմիր է քո հարսնացուն,  
Սիրտս քո մոր, սիրտս քո մոր հեծեծանքով է լցված:
3. Դու կգաս ու կրկին հեքիաքով կոյութես,  
Լուսերես կցրես մառախուղն իմ հոգու:
4. Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս քարով,  
Բորբ արեկին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս քարով:
5. Թևերով թերև թռել է արդեն,  
Իմ արտույտն անուշ թռել է հեռուն:

**102. Նշել այն նախադասությունների թվականարները, որոնցում ընդգծվածը միջոցի անուղղակի խնդիր չէ:**

1. Ես չար հոսանքով մղված եմ հեռուն,  
Եվ անվերադարձ փակված է ուղին:
2. Սառն աչքերով եմ նայում ես հեռվում  
Մեռած օրերիս ցնորդին հիմա:
3. Ուզեցի, որ դու պայծառ ու մաքուր լույսերով անշեց  
Եվ խորհուրդներով դյուրես վերատին սիրտս տարագիր:
4. Դառը մենության ու անհուսության մթին վիհերում  
Իմ թույլ սիրտը կամեցա քաղցր հուշով ամոքել:
5. Շրջում եմ դարձյալ պուրակում այն հիմ՝  
Աշնան թախծախ երգով օրորված:
6. Ու խավարն անհուն զգվանքով թեթև  
Ծավալվեց շուրջս ու փովեց վրաս:

**103. Նշել տեղի պարագաների քանակը:**

1. Տարիներն արագ, ամպերի նման անցնում են անհետ,  
Մոխիր է հիմա իմ հոգում անուշ երազների տեղ:
2. Բոլոր հուշերը, բոլոր խոսքերը մարել են այնտեղ,  
Եվ այն, ինչ քաղցր էր, մաքուր էր, երազ, ննջել է հավետ:
3. Երկար տարիներ իրարից բաժան հեռու կողմերում  
Դու, ինձ մոռացած, ես, քեզ հիշելով, կյանք էինք մաշում:
4. Ու խավարն անհուն զգվանքով թեթև  
Ծավալվեց շուրջս ու փովեց վրաս:
5. Ու ոչ մի հեռվում լույս չէի փնտրում,  
Եվ համր էր ընդմիշտ աշխարհն ինձ համար:

**104. Նշել այն նախադասությունների թվականարները, որոնցում գոյականով արտահայտված պարագա կա:**

1. Անհաս երկնքից ասեղ առ ասեղ  
Ցուրտ ջրերի մեջ սուզվեցին նորա:
2. Երբ վարդ ամպերի հրդեհն է դողում,  
Իրիկնաժամին նստում եմ մենակ:
3. Գիշերվա փողոցներում թափուր  
Շրջեցի տրտում ու միայնակ:
4. Ծեծում են կուրծքս քամիները բիրտ,  
Հազար ձայներով անտառն է խոսում:
5. Կարծես թե ես եմ լալիս այդ երգում,  
Կարծես թե քեզ եմ կարտով երգում:

**105. Նշել դերանունով արտահայտված պարագաների քանակը:**

1. Եկա, որ այստեղ ձեզ համար այսօր  
Հրեղեն խոսքեր կռեմ ու խնդում,  
Լսեմ հաղթական մարտի ցնծություն:
2. Սիշտ նույն խոհերի շշուկին հլու,  
Սիշտ նույն կարոսի կսկիծը պահած՝  
Ես դուրս եմ գայիս նորից շրջելու  
Նեղ փողոցներն ու կրկեսները բաց:
3. Քույրս տարամերժ ձայն տվեց, անցավ.  
- Չեզ որտե՞ղ բաղեմ, վիշտ իմ մոլեզին,  
Ինչո՞վ բուժեմ քեզ, անբուժելի՛ ցավ:
4. Որքա՞ն փոխված եք, պճնված ճոխ,  
Ճեմում եք որպես դշխու հպարտ:
5. Ինչո՞ւ է այսպես սիրտս մղկտում,  
Այսպես, նոյեմբե՞ր, քո հողմի նման  
Լալիս անդադար և աղեկտուր,  
Կարծես նեղ լինի աշխարհն անսահման:

**106. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում  
լնդգծվածներից ոչ մեկը դերանունով արտահայտված պարագա չէ:**

1. Դու չգիտես դեռ՝ որքան անմիտ են  
Իմ ցնորդները և որքան խենք են:
2. Որքան դեռ տրտունջ, քանի տրտմություն  
Պիտի օրորեն օրերս կրկին:
3. Այնտեղ հանգիստ կննջեմ մեռած իմ մոր հետ,  
Կգրկեն ինձ երազներ դյութական հավետ:
4. Որպես ծաղիկն է անխոս գունատվում  
Ցուրտ շվաքի մեջ արևից հեռու,  
Այնպես թող սերը մեռնի իմ սրտում,  
Որ քաղցր կյանքիդ տխրանք չբերի:  
Կար մի դյութական ուրիշ ժամանակ,
5. Երբ նրա կանչի հրաշքին հլու,  
Ես թողնում էի օրերս մենակ:

**107. Նշել մակրայներով արտահայտված պարագաների քանակը:**

1. Կանչում է կրկին, կանչում անդադար  
Են չքնաղ երկրի կարոտը անքուն,  
Ու թևերն ահա փռած տիրաբար՝  
Թռչում է հոգիս, թռչում դեպի տուն։
2. Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,  
Երկնքի մթնած ամպերից իջներ,  
Ինչպես փոթորիկ սաստիկ սրբնթաց,  
Գյուղից սլացան մի խումբ կտրիմներ։
3. Սրբնթաց պախրա՞՝, թե՞ գայլ զիշատիչ  
Շեշտակի անցավ փարախի մոտով,  
Այծյա՞նը հանկարծ մոտակա ժայռից  
Անդունդը մի քար գլորեց ոտքով։
4. Թույլ-թույլ թևերը հազիվ քարշ տալով՝  
Տեղ հասավ մի կերայ, նայեց դեսուդեն։
5. Վաղուց, երբ մոտ էր երկրին երկինքը,  
Ու լսում էր դեռ մարդկանց տերն ինքը,  
Են լավ ժամանակ երկու մանուկներ  
Ունեին մի չար, մի անսիրտ խորք մեր։

**108. Նշել կապական կառույցով արտահայտված պարագաների քանակը:**

1. Տարան անտակ էն ժեռ քարից,  
Որ կանգնած է մինչ էսօր,  
Էն ահավոր քարի ծերից  
Գլորեցին դեպի ձոր։
2. Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ,  
Աշխարհի վրա, Զավախրի վրա,  
Ավերակ բերդին սև ամպի նման  
Ծուխն ու թշնամին չոքել են ահա։
3. Ամբողջ մի ամիս խումբը զինավառ  
Սարեր ու ձորեր ոտնատակ տվեց՝  
Չորան Սարոյին գտնելու համար,  
Որ սարից իջավ, Անուշին փախցրեց։
4. Էն մենավոր ծառի տակ  
Փոս փորեցին մի խորին,  
Առանց ժամ ու պատարագ  
Մեջը դրին Սարոյին։
5. Լուց ծերունին։ Իրար դեմ ու դեմ  
Թիկնած էինք թեժ կրակի շուրջը,  
Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին,  
Մեր դեմք խաղում զիշերվա շունչը։

**109. Նշել կապական կառույցով արտահայտված պարագաների քանակը:**

1. Չորե՞ր, ա՞յ ճորեր, սև, լայնաբերան,  
Սրտիս էս խորունկ վերքերի նման,  
Աստծու հարվածի հետքերն եք դուք էլ,  
Զեզ մոտ եմ զալիս, ուզում եմ երգել:
2. Անապատի մեջ՝ խավար ու տխուր,  
Ցրված քարերից մի քարի վրա,  
Գլխիկոր նստած մտախտի ու լուռ՝  
Աշխարհի մասին մտածում էր նա:
3. Երանի՝ քեզ, հայ ուխտավոր,  
Որ կարոտով ու սիրառատ  
Ուխտ ես գնում դեպ Այրարատ:
4. Ա՞խ, նա հոշոտվեց մեր աչքի առջև  
Եվ մեր զգայուն սրտերը նույնպես,  
Ոսկի երազներ միքածի նման  
Մեր անապատում չքացան անհետ:
5. Ու բարձրացնում է հրեշն ահուելի,  
Իր գլուխը բարձրացնում է վեր,  
Բարձրացնում մինչև բարձունքը բերդի,  
Մինչև մօտքուլի պալատն ու տներ:

**110. Ընդգծվածներից նշել պարագաների քանակը:**

1. Տարածեց ձեռքը իշխանը փութով,  
Լոեց դահլիճը պերճ ապարանքի,  
Պատվիրակները պատմեցին վշտով  
Թշվառ վիճակը մայր հայրենիքի:
2. Զայրացավ հոգին քաջ զորավարի,  
Համհարզները իր սաստիկ զայրացան,  
Առավ ընկերներին հին կոհվների,  
Եվ հողը հայրենի թռղին, հեռացան:
3. Գնացին նրանք. սահմանը չանցած՝  
Շինականն արտից առավ մի բուռ հող,  
Լցրեց քսակը և արագընքաց  
Հասավ իշխանի ապարանքը ճոխ:
4. Հին հայրենիքի մեղեղիները հին  
Մեղմ կարկաչեցին առվակների պես,  
Գուսանը վառման երգեց սրտագին  
Ծերմակ լեռների կատարները վես:
5. Աչքերը լցված սրտի արցունքով՝  
Խոնարհում է հեզ գլուխն արքենի,  
Եվ երեք անգամ անհուն կարոտով  
Համբուրում է նա հողը հայրենի:

**111. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի ժամանակի պարագա կա:**

1. Եղել է հնում պերճ արևելքում  
Մի քաջ զորավար հայրենապաշտպան,  
Առանց ընկճելու երկրի թշնամուն՝  
Նրա սուրբ երբեք չի մտել պատյան:
2. Անհուն նախանձի կրքով տոշորուն՝  
Մի օր խնջույքում արքայական տան  
Մի զորականի՝ անհայտ, անանուն,  
Ժպտաց սիրալիր, դրվատեց նրան:
3. Երբ դաշտերում՝ մերկ ու տիսուր,  
Ցուրտ քամին է շառաչում,  
Ամեն անգամ զգում եմ նորից  
Զրույցն այս խեղճ պառավ մոր:
4. Ինձ թվում է, թե մի քանի անգամ  
Հերքել եմ արդեն  
Ես անդարձության օրենքն անողոք,  
Մի քանի անգամ զնացել - եկել,  
Ապրել եմ այսպես ու ապրում եմ դեռ:
5. Եվ ի՞նչ իմանա՞ շենք հանդիպելու  
Ամենավերջին սահմանի վրա,  
Գուցե հենց այստեղ և այս նույն պահին,  
- Խփի՞ր, այս պահի կենացը խմենք,  
Մի վայրկյան հետո գուցե չլինենք:

**112. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկ ձևի պարագա կա:**

1. Քեզ բախտն ուր էլ տարավ,  
Մտքով քո տան էիր,  
Դու կիրճերում փրփրած  
Ջո Որոտանն էիր:
2. Ես շիմացա, թե ինչու,  
Դու շիմացար, թե ինչպես  
Պատահեցին մեկմեկու  
Մեր երազներն առանց մեզ:
3. Մի դատարկված ամպի նման  
Եկել եմ ես,  
Որ ջուր տանեմ քո ձորերից  
Դաշտի ծարավ ծաղիկներին:
4. Կանգնել է նա լուռ ու հանդարտ.  
Քայլեց, ալիսի հետը տանի,  
Բայց ո՞ւր տանի այս մի պատառ  
Ինքնուրյունը Հայաստանի:
5. Ու դրդում է հասակով մեկ  
Մանկությունս վայրի,  
Վախենում է՝ հրդեհի մեջ  
Ցնցոտիներն այրի:
6. Սիրտն առնեի ծարավ մարդկանց  
Ու զնայի կարկաչելով,  
Աչք փակվեր ժամանակին,  
Ցամաքելս չտեսնեի:

### **113. Նշել պատճառի պարագաների քանակը:**

1. Քանաստեղծություն, դու պիտի փրկվես  
Անձարակության համաճարակից,  
Այս ներմուծական ախտ ու վարակից,  
Քանաստեղծություն, դու պիտի փրկվես:
2. Մի հավք ծկլթաց ծառի սաղարթում,  
Վախից վայր ընկավ ծաղիկը ձեռքից:
3. Ձեռքիս ստվերից կուրծքդ բրթուց,  
Եվ ուշրս գնաց մազերիդ բույրից:
4. Հավերժից փախչող մի պահ գողացանք  
Եվ մեր մտքի մեջ թաքուն պահեցինք:
5. Ինչո՞ւ են քարերը մոռացել քայլելը,  
Երևի տարիքը արածը արել է:

### **114. Ընդգծվածներից նշել չափի պարագաների քանակը:**

1. Խորհուրդն այնքան խրթին,  
Եվ խաղն այնքան բարդ է,  
Որ կարող է հանկարծ  
Մարդը իր տունը քանդի:
2. Հնար լիներ, մի անգամ ել  
Ես ինձ կրկնեի,  
Արտույտների երամի հետ  
Գյազբել թռչեի:
3. Ինձ կիշշեն ամեն անգամ,  
Երբ մտնեն անտառ,  
Լսեն խելոք կաղնիների  
Հեքիաքներն անբառ:
4. Կարուտներս էլ վեր են կենում,  
**Խումբ-խումբ** գնում, նստոտում են  
Պապենական թռնիդ շուրթին:
5. Վերջին անգամ արի նստենք,  
**Մի քանի** բառ ասեմ, գնամ:

### **115. Նշել հիմունքի և գիշման պարագաների քանակը:**

Հայրս, ըստ իր սովորության, չհամբուրեց ինձ: Այդ լրին ու ինքնամփոփ մարդը, չնայած  
իր թիկնեղ լինելուն, շատ փիսրուն էր: Կյանքի դաժանությունը ստիպել էր նրան բռնել  
միակ որդու ձեռքը և, հակառակ իր կամքին, զցել անհայտության ծովը: Ես գնում էի մի  
երկիր՝ տարբեր աշխատանքներ անելու՝ նայած ինչ կպատահեր: Հորս անսպասելի  
սնանկությունը մեզ վերցրել էր թանկագին գորգերից և տարել հակառակ ուղղությամբ:  
Ես շունեի գոյության կովի համար ոչ մի միջոց, բացի իմ պատանի հասակից և  
պողպատյա առողջությունից: Բայց ես, ի հեճուկս կյանքի դառնությունների, գտա իմ  
աշխատանքը:

**116. Նշել դերբայական դարձվածների քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ես գնում էի ոչ թե հարստություն ձեռք բերելու այլ մի կտոր հաց շահելու մորս ու երկու քույրերիս համար:
2. Ես չունեի ոչ մի նպատակ ոչ մի երազ քացի օրվա պարենս վաստակելուց և հորս պարանոցի վրա մի ավելորդ լուծ չդառնալուց:
3. Միակ փափազս շարունակել ուսումս վաղուց մերել էր ինձ համար:
4. Բայց զգում էի որ իմ ներկայությամբ զապված արցունքը այժմ առատորեն հեղեղում է նրա հումկու դեմքը:
5. Կուչ եկա գինու երկու տակառների միջև ճիգ անելով զայել արտասուս անարդար պատժված մանկան պես:

**117. Նշել այն նախադասությունների քվահամարները, որոնցում մեկից ավելի դերբայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նրա գորշագույն կմախքը սքողվելով խավարի շղարշով արյուն ու մարմին է ստանում ու ճիգ թափելով կենդանանում է:
2. Նա անընդհատ պտտվում է ինքն իր շուրջը դեախ ծովը արձակելով շլացուցիչ նետեր դա փարոսն է հաստատված քաղաքի բարձրագույն շինության վրա:
3. Մեկը բարձրահասակ էր խոժողված բարկացած դեմքով և թանձը ու երկայն մորուքով իսկ մեջքին կպած էր արևի նման փայլվելող մի լայնաբերան դաշույն:
4. Կեսօրին բարձրացավ ներհակ քամի նավն սկսեց երերալ կարծես մեզ նախազգուշացնելու համար բայց այդ մեզ չխանգարեց ժամանակին ճաշի նստելու և ախորժակով ուտելու:
5. Երերալով ու սայթաքելով քաշվեցի դեախ նավի ծայրը երկու ձեռքերով ամուր բռնելով մի երկարեւ հաստ զլանից երկյուղած նայեցի դեախ վար և սարսուռ պաշարեց ինձ:

**118. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ընդգծվածները դերբայական դարձվածներ են (նախադասությունները կետադրված չեն):**

1. Ամեն անգամ նորանոր ալիքների հսկա դեղերի հանդիպելիս ինձ պատում էր սարսափիլ:
2. Նավը հետ էր ցատկում շունչ առնելու որպեսզի նորեն դիմադրի զայրացած թշնամուն:
3. Երբեմն քամուց գազազած վայրագ ալիքները ուժգին թափով բարձրացնում էին նավը իրենց բաշերի վրա:
4. Դա տարերքների ցաւկու հեզնանք էր թվում էր ծովը իր դեախ վերև ցատկող հորձանքներով թքում է երկնքի երեսին:
5. Նավը մի պահ պտտվեց օդի մեջ արագորեն վար իջնելով տնքաց այնպես որ կարծես նրա ողնաշարը կոտրվեց:

**119. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ընդգծվածները դերբայական դարձվածներ չեն (նախադասությունները կետադրված չեն):**

1. Նավապետի ձայնն այլևս նախկին վատահությամբ չէր հնչում մարդն ընկճվել էր նկատվելու չափ:
2. Չորացած սալորը նրան չէր օգնել թեև ինչպես երևում էր շուրջը թափված կորիզներից շատ էր կերել:
3. Նրա փոքրիկ գլուխն անզոր ընկել էր կրծքի վրա և օրորվում էր աջ ու ձախ թելի վրա կախված տանձի նման:
4. Փոքրիկը նրա կիսամերկ մարմնի վրա չէր ազդել ինչպես հողմերը չեն ազդում տերևաթափ և չորացած կաղնու վրա:
5. Կյանքի պարզեցներին արժանանալու համար պետք է մարդկանց սիրտը շահելու շնորհը ունենալ:
6. Նա ոչինչ չասաց պարզ էր որ նա իմ խորապես հուզված ձայնի մեջ և գունատված դեմքի վրա զգաց ինչ-որ սպառնալիք:

**120. Նշել դերբայական դարձվածների քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

Վերջապես մեկը երեքից հոնքերը կիտելով բաց արեց դրամարկղը և խորը նայելով երեսիս դրեց իմ առջև խնդրած գումարը: Ես շունչ առնելով շտապեցի դուրս: Այդ թղթադրամները կարծես այրում էին դողացող ձեռքերս: Տալով դրանք կառապանին ես քաշվեցի նեղ փողոցներից մեկի անկյունը և ազատություն տվեցի երկար ժամանակ զսպված արցունքներիս: Տանջվում էի ոչ միայն բարոյապես այլև ֆիզիկապես կարծես մի կենդանի ու շնչող մարմնից կտրվել էր մի մասը և զցվել բոցավառված խարույկի մեջ: Իհարկե այժմ աղոտ լուսավորված այդ խանութի մեջ ինձ ծաղրում են ու հայինում և վաղն իմ բացահայտ ստորանալը հայտնի է դառնալու մեր բոլոր ազգականներին որքան պիտի դառնանա մայրս լսելով իր որդու ապիկարությունը:

**121. Նշել այն նախադասությունների թվակամարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված:**

1. Անպարփակ վիշտը հոգու մեջ ամփոփած՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգ աղամորդուն: (*Ճնշի պարագա*)
2. Ամրոցի վիհի վրա կիսով չափ ձգված հարկաբաժնի մի սենյակում բազմել էր մի մարդ: (*որոշիչ*)
3. Պարապապատի վրայից զինվորները տեսան մի խումբ հեծյալների՝ ամրոցին արագ մոտենալը: (*Ենթակա*)
4. Կենսաբրթիոն ավյունով զարթնած՝ դաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազօրյա կյանքին: (*որոշիչ*)
5. Արտակը մոտ գնաց պատուհանին, փոքր-ինչ ձգվեց առաջ՝ ճանաչելու մոտեցողներին: (*Ապատակի պարագա*)

**122. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում դերքայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված:**

1. Անպատմելի դառնությունների ու տանջանքների շղթա եղավ կյանքն այն օրից, երբ հեծելագունդը ուղղվեց դեպի հայրենիք՝ ձերքազատվելով պարսիկների քինախնդիր հետապնդումներից: (*Ժամանակի պարագա*)
2. Շիշտ է, ուխտյալ ժողովրդի զինվորագրվելը հուսադրող էր, բայց ինքը մտահոգ էր ծայրաստիճան: (*Ենթակա*)
3. Լճի հյուսիսարևելյան ափին՝ դեմ հանդիման արձանացած լեռան վեշին, փռված էր հինավորց մի ավան: (*Որոշիչ*)
4. Հովհանսեան մի գաղց օր՝ այդ ճանապարհով անփութորեն բարձրանալիս, տեսա մի երիտասարդի: (*Ժամանակի պարագա*)
5. Չնայած եղանակի վատ լինելուն՝ Լևոնը վաղ առավոտից մինչև ուշ երեկո շրջում էր փողոցներում և փնտրում իր կորուստը: (*զիջման պարագա*)

**123. Նախադասություններից քանի՞ն են բարդ համադասական:**

- 1) Արծիվն արծիվ է երկնքում իր ջինջ,  
Օվկիանի խորքում արծիվն է ոչինչ:
- 2) Ամեն պալատ մեղքի որջ է, քանի մի մուր խրճիթ կա դեռ...
- 3) Քանի՝ ձեռքից եմ վառվել,  
Վառվել ու հոր եմ դառել...
- 4) Ու՞ր է արդյոք հիմա նա. ո՞ղջ է արդյոք, թե՞ մեռած  
Եվ ի՞նչ դռներ է ծեծել, մայր իմ անուշ ու անգին...

**124. Նախադասություններից քանի՞ն են բարդ ստորադասական:**

- 1) Հրաշք լիներ, կրկնվեր  
Այն հրաշքը իրական,  
Առուն ստվերս տաներ  
Զաղացանի աղջկան:
- 2) Աշխ, կռունկ, իմ մանկության  
Կիրճի՞ց ես քոած զնում,  
Թե՞ հայց հին «Կռունկի»  
Սիջից ես քոած զնում:
- 3) Ծիածանը տեղս լիներ՝ կսևանար դավից...
- 4) Թե մորդ անգամ մտքից հանես,  
Քո մայր լեզուն շմոռանաս...

**125. Նախադասություններից քանի՞ն են բարդ ստորադասական:**

- 1) Նրանց սերը ծնվել էր աննկատ, ինչպես մի զիշերում բացվում է մուգ մանուշակը:
- 2) Սոնան մանկության առվակի ջրե՞րն էր կարոտել, թե՞ պատահմամբ մոտեցավ հնձանի դրնակին...
- 3) Դիլան դային հետ նայեց. մարդ չկար, աշնան մերկ դաշտերն էին:
- 4) Ու խշշոցը կաքավներին հասավ թե չէ, իսկույն փոռալով իջան արևոտ արտերի վրա:

**126. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ենթակա երկրորդական նախադասություն կա:**

- 1) Ով քնած եք, արթո՛ւն կացեք...
- 2) Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ,  
հազար-բյուր անգամ երանի նրան...
- 3) Կոյփ զնացող ընկեր տղերքից նա է միշտ ուրախ, ով լավ ձի ունի...
- 4) Ինչ տալիս եմ, այն է մնում  
Գանձարանում իմ սրտի...
- 5) Թագավորին զարմացնում էր, որ իշխանները չեն հրաժարվում մայրաքաղաքը  
պաշարմամբ գրավելու մտքից:

**127. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- 1) Ամենքին կարելի է ներել, բայց ոչ նրան, ով կոչված է կառավարելու մարդկանց:
- 2) Ինչ որ կապված է մանկության լուսավոր օրերի հետ, չի մոռացվում:
- 3) Թագավորը քաշվեց Կաքավարեր և սպասում էր, որ իշխաններն օգնության հասնեն:
- 4) Իշխանը հայացքը շրջում էր այս ու այն կողմ՝ տեսնելու համար, թե ով է արձագանքում  
իր կոչին:
- 5) Ով մի անգամ խարում է, նրան այլևս չես հավատում:

**128. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- 1) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր  
Ուղիների ժապավեններն անհամար...
- 2) Չեմ սիրում, երբ թիկունքիս հետևից օտարն իմ նամակն է կարդում:
- 3) Զգացվում է, որ շուտով ցրտերն ընկնելու են:
- 4) Ա՛յս, արդյոք ո՞ր է այն ձեռքը սուրբ,  
Որ պիտի ցմահ փայփայէ ինձ...
- 5) Երանի քեզնով այնպես գերվեի,  
Որ թվար՝ նոր եմ քսան տարեկան...

**129. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսու՞մ հանգման անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն կա:**

- 1) Գտա՞ք մեկին, որ հավատար,  
Թե դեռ բրդե խանձարուրից  
Մատուցել եք բերդ ու ոստան,  
Վաճը ու մատու Հայաստանին:
- 2) Հաջողությունը ժպտում է նրան, ով լավ գիտի նրանից օգտվելու ձևը:
- 3) Վերջապես մոտեցանք մի շենքի, որ չորս կողմից պատված էր աշտարակավոր  
պարսպով:
- 4) Եվ ահա հայտնվում է նա, ում, պարզվում է, սպասել էիր ողջ կյանքիդ ընթացքում:

**130. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն ունեն խնդիր երկրորդական նախադասություն:**

- 1) Հավատում եմ ես՝ կգա ժամանակ,  
Կցնդեն վայրի օրերը վայրագ...
- 2) Երբեք մի՛ հակածառիր այն մարդուն, ով իրեն անսխալական է համարում:
- 3) Երանի նրան, ով հայրենական  
Խաղաղ հարկի տակ ննջում է հիմա:
- 4) Հպարտանում եր, որ նման զավակներ է մեծացրել:

**131. Տրված քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն ունեն անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն:**

- 1) Ով համարձակ է, նա է շահում:
- 2) Գիտեր, որ այնտեղ սրտի թրթիռով են սպասում դրսից եկած լուրերին:
- 3) Ում հավատում եք, նրան էլ ընտրե՛ք ձեզ առաջնորդ:
- 4) Ում վստահել եր իր սրտի գաղտնիքը, այսօր նրանից խուսափում էր ամեն կերպ:

**132. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն ունեն անուղղակի խնդիր երկրորդական նախադասություն:**

- 1) Սի՞թե կարելի է արդարացնել այդ հանցանքը նրանով, որ ոճրագործը վրեժի մաղձով էր լցված:
- 2) Արծիվն ու կաղնին վիճեցին այն քանի շուրջ, թե ով է իրենցից ավելի երկար ապրում:
- 3) Իմաստունն ում կմոտենա, նրան էլ կդարձնես քո ուղեկիցը:
- 4) Մի՛ զլացեք օգնել նրանց, ովքեր կարոտ են օգնության:

**133. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսո՞ն ստորոգելի երկրորդական նախադասություն կա:**

- 1) Ամենակարևորը, սակայն, մեզ համար այն էր, որ մեր տոհմը հոչակված էր իր ազնվորթյամբ:
- 2) Այն էլ իմացանք, որ կտրվելուց հետո է միայն երևում ծառի բուն հաստությունը:
- 3) Ես այն եմ եղել, ինչ որ եղել եմ...
- 4) Վասն է այն բռչունք, որ աղտոսում է սեփական բույնը:
- 5) Գեղեցիկ հագուստը չէ, որ մարդուն ազնվացնում է:

**134. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն ունեն պարագա երկրորդական նախադասություն:**

- 1) Չեմ վերադառնա իմ ընտանյաց գիրկը, մինչև վերջին հագարացին չհալածեմ հայրենիքի սահմաններից:
- 2) Չեմ մոռանա այն օրը, երբ Աշոտն այցելեց մեզ:
- 3) Ես որ պատահեց, մեր Դավիթ հսկան  
Մի մանուկ էր դեռ՝յոթ-ութ տարեկան:
- 4) Գյուղը, որտեղ ծնվել է քանաստեղծը, գտնվում է սահմանի վրա:

**135. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն ունեն պարագա երկրորդական նախադասություն:**

- 1) Պարզ չէ՝ երբ է գալու ավգյան ախոռները մաքրելու ժամանակը:
- 2) Որտե՞ղ է ընկած այն քարը հիմի,  
Որ հողիս վրա շիրիմ պիտ լինի...
- 3) Որտեղ կհոգնիս, գլուխդ վա՛ր դիր  
Ժեռ քարերի մեջ, փշերի վրա...
- 4) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,  
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

**136. Տրված քարդ ստորադասական նախադասություններից որո՞նք ունեն որոշիչ երկրորդական նախադասություն (նշել համարները):**

- 1) Նրա արնաշաղախ դեմքն ազդել էր ինձ վրա այնչափ, որ գիշերները երազում անգամ հալածում էր ինձ:
- 2) Երկրաշարժից հետո մենք ստիպված էինք ամբողջ ընտանիքով տեղափոխել խոհանոցում և ախոռատանը, որը հրաշքով փրկվել էր ավերումից:
- 3) Իմ երազներն ինձ սլացնում էին հեռու, անձանոթ աշխարհներ, ուր իմ պատանեկան երևակայությունն ստեղծել էր այնքան եղեմներ:
- 4) Իսկ անրիկ ու անհամար ճայերի տարմերը, որ բառել էին նավերի խաչաձև կայմերի վրա, ինձնից ավելի բախտավոր էին:
- 5) Կնոջ ձեռքի շարժումը նշան էր այն բանի, որ մենք պետք է ներս մտնենք:

**137. Տրված քարդ ստորադասական նախադասություններից որո՞նք ունեն ենթակա երկրորդական նախադասություն (նշել համարները):**

- 1) Ինչ որ վաստ է համարվում, դրանից երես դարձրու:
- 2) Ներկաների համար պարզ էր, որ կինը հիվանդի խոսքերին նշանակություն չէր տալիս:
- 3) Ինձ շատ զարմացրեց, որ դրսում բերանից կրակ թափող այդ մարդն այդպես ընկճված էր իր տանը:
- 4) Գիտեմ, որ դու անկեղծորեն ուզում էիր ինձ բարություն անել:
- 5) Որքա՞ն ողորմնի էր այդ պահին նրա փառահեղ մուշտակը, որ այդքան պատկառանք էր ներշնչել ինձ:
- 6) Երևում է, որ կնոջ սրտում տարիներով կուտակված թույն կար:

**138. Տրված քարդ ստորադասական նախադասություններից որո՞նք ունեն ուղիղ խնդիր երկրորդական նախադասություն (նշել համարները):**

- 1) Մենք չենք հանդուրժում, երբ մեզ մոլորեցնում են հարազատ մարդիկ:
- 2) Հերոսները նրանք են, ովքեր կարողանում են արհանարիել մահը:
- 3) Մեզ ավելի հաճելի են նրանք, ովքեր պաշտպանում են մեզ ոչ իրենց շահի համար:
- 4) Ինչ որ կատարվում է երկրի վրա, Աստծու կամքով է կատարվում:
- 5) Զգացի, որ երկրաշարժ չէ, այլ մի ուրիշ աղետ:

**139. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք ունեն խնդիր երկրորդական նախադասություն (նշել համարները):**

- 1) Ես տեսնում էի, որ գնացողները խղճում էին մնացողներին՝ որպես բախտից զրկվածների:
- 2) Նրա սև գլխարկն այնքան յուղոս էր, որ փայլում էր սափրիչի կաշվե սրոցի պես:
- 3) Բոլորովին չէր հետաքրքրվում, թե ինչ էր անում այդ մեքենան:
- 4) Նա երևի չէր հավատում, որ մի որևէ մահկանացու կարող էր ինքն իրեն զրկել այդ հաճույքից:
- 5) Աբգար Հռվիաննիսյանը շար չէր, թեև իր լրագրում հաճախ էր ծաղրում պատվավոր մարդկանց:

**140. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Թեև Աստվածաշունչը պատվիրում է սուտ երդում չտալ, բայց մարդը Հիսուսից և բոլոր աստվածներից առաջ պաշտել է սուտը:  
Չնայած Աստվածաշնչի՝ սուտ երդում չտալու պատվերին՝ մարդը Հիսուսից և բոլոր աստվածներից առաջ պաշտել է սուտը:
- 2) Խուսափենք այնպիսի իրավիճակներից, երբ մեզ գովում են ուրիշների ներկայությամբ:  
Խուսափենք այնպիսի իրավիճակներից ուրիշների ներկայությամբ մեզ գովելու ժամանակի:
- 3) Ոչ մի աղքատ չի կարող հասկանալ, թե ինչ դրդապատճառ ունի հարուստի բարե-պաշտությունը:  
Ոչ մի աղքատ չի կարող հասկանալ հարուստի բարեպաշտության՝ ինչ դրդապատճառ ունենալը:
- 4) Նա, ով չի հանդուրժում սուտը, պետք է ողջունի ամուսնալուծությունը:  
Սուտը չհանդուրժողը պետք է ողջունի ամուսնալուծությունը:

**141. Բարդ ստորադասական նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Վտանգավոր է, երբ անարժանը բարձր գնահատական է ստանում հեղինակավոր մարդուց:  
Վտանգավոր է անարժանի՝ հեղինակավոր մարդուց բարձր գնահատական ստանալը:
- 2) Պետք է խոստովանենք, որ երբեմն մենք ենք մեր խոսակիցներին մղում ստախոսության:  
Պետք է խոստովանենք մեր՝ մեր խոսակիցներին երբեմն ստախոսության մղելը:
- 3) Այն օրից, երբ սկսել եմ քայլել, ճաշակել եմ կյանքի դառնությունը:  
Քայլել սկսելուս օրից ճաշակել եմ կյանքի դառնությունը:
- 4) Թեև ինքը զավակներ չուներ, հարգված էր բոլորից:  
Չնայած իր՝ զավակներ չունենալուն՝ հարգված էր բոլորից:

**142. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Իմ մանկական տվյալների աղբյուրն այն էր, ինչ որ տեսնում ու լսում էի ոչ միայն դրսում, այլև տանը:  
Ոչ միայն դրսում, այլև տանը տեսած ու լսած իմ մանկական տվյալների աղբյուրն էր:
- 2) Երևի նրա մանկական սիրտը նախազգում էր, որ մի օր այդ փորձանքը պատահելու է:  
Երևի նրա մանկական սիրտը նախազգում էր այդ փորձանքի՝ մի օր պատահելը:
- 3) Իսկ ի՞նչն է, որ զբաղեցնում է մեծ փիլիստիայի միտքը:  
Իսկ ի՞նչն է զբաղեցնում մեծ փիլիստիայի միտքը:
- 4) Այդ անկորչելի ուժն էլ հենց այն է, որ պահում է տիեզերական հավասարակշռությունը:  
Այդ անկորչելի ուժն էլ հենց տիեզերական հավասարակշռությունը պահողն է:

**143. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Պատեհ առիթով չստողը նման է նրան, ով չի վերցնում գետնին ընկած դրամը:  
Պատեհ առիթով չստողը նման է գետնին ընկած դրամը չվերցնողին:
- 2) Ով առաջին անգամ ծով է տեսնում, պետք է իր բերանը ուկոր դնի:  
Առաջին անգամ ծով տեսնողը պետք է իր բերանը ուկոր դնի:
- 3) Տասու աղաղակեց այնպիսի մի տարօրինակ ձայնով, որ կարծես դժոխքից էր հնչում:  
Տասու աղաղակեց կարծես դժոխքից հնչող մի տարօրինակ ձայնով:
- 4) Երբ վիրավորը ցավերից գանգատվում էր, պառավը հանդիմանում էր նրան:  
Պառավը հանդիմանում էր ցավերից գանգատվող վիրավորին:

**144. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված պարզի:**

- 1) Տասնյոթ տարեկանում ես այնքան միամիտ էի, որ հավատացի Բալասան ապոր կատակին:  
Տասնյոթ տարեկանում այնքան միամիտ լինելուս պատճառով ես հավատացի Բալասան ապոր կատակին:
- 2) Թե արձանն էլ պիտի հանեք, պատվանդանը զուր եք քանդում:  
Արձանը հանելու դեպքում պատվանդանը զուր եք քանդում:
- 3) Ամենահաճելի զրուցակիցը նա է, ով չի հակադրվում մեր ստերին:  
Մեր ստերին չհակադրվողը ամենահաճելի զրուցակիցն է:
- 4) Ես գնում էի մի երկիր, որ ապաստան էր դարձել շատ բախտախնդիրների համար:  
Ես գնում էի շատ բախտախնդիրների համար ապաստան դարձած մի երկիր:

**145. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Հիշում եմ այն երջանիկ օրը, երբ ծնողներս ինձ տեղափոխեցին եկեղեցական դպրոց:  
Հիշում եմ ծնողներիս՝ ինձ եկեղեցական դպրոց տեղափոխելու այն երջանիկ օրը:
- 2) Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է նրանցից, ովքեր  
դասավանդել են իրեն պատանության տարիներին:  
Իր արվեստի շատ գեղեցկություններ արտիստն ստացել է պատանության տարիներին  
իրեն դասավանդածներից:
- 3) Ես չգիտեի՝ ինչ տարբերություն կա փողոցի և դպրոցի միջև:  
Ես չգիտեի փողոցի և դպրոցի տարբերությունը:
- 4) Բախտավորություն է, եթե խելքի համապատասխան գործ ես գտնում:  
Բախտավորություն է խելքի համապատասխան գործ գտնելով:

**146. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Որդեկորույս մայրը արդյոք կհավատա՞”, թե քո որդուն զոհ ես բերել իր զավակի հանդեալ  
տածած սիրո համար:  
Որդեկորույս մայրը արդյոք կհավատա՞” քո որդուն՝ իր զավակի հանդեալ տածած սիրո  
համար զոհ բերելուդ:
- 2) Եթե բժիշկներն իրոք ճանաչեն մարդուն, կամաչեն իրենց կատարած ավերածու-  
թյունների համար:  
Մարդուն ճանաչելու դեպքում բժիշկներն իրոք կամաչեն իրենց կատարած ավերածու-  
թյունների համար:
- 3) Սերը ստից կազատվի, եթե հոգուց մարմնին անցնելիս անունը փոխի:  
Սերը ստից կազատվի հոգուց մարմնին անցնելիս անունը փոխելու դեպքում:
- 4) Մարդիկ հաճախ կամազուրկ են համարում նրան, ով չի կարողանում ստել:  
Ստել չկարողացողին մարդիկ հաճախ կամազուրկ են համարում:

**147. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Ներհակ ուժերի հակամարտությունն է, որ հնարավոր է դարձնում գոյության  
մշտնջենական ընթացքը:  
Ներհակ ուժերի հակամարտությունն է հնարավոր դարձնում գոյության մշտնջենական  
ընթացքը:
- 2) Չնայած մենք մշտապես դատապարտում ենք սուտը, երբեք չենք խորշում օգտվել նրա  
ծառայություններից:  
Չնայած մեր՝ սուտը մշտապես դատապարտելուն՝ երբեք չենք խորշում օգտվել նրա  
ծառայություններից:
- 3) Ես ունեի մի մայր՝ զմայլելի մի գեղեցկուիկի, որ ծնվել էր իր ճակատագիրը լոռությամբ  
կրելու համար:  
Ես ունեի մի մայր՝ իր ճակատագիրը լոռությամբ կրելու համար ծնված զմայլելի մի  
գեղեցկուիկի:
- 4) Միջավայրը, որ ծնեց մեծ գրողին, թաղված էր անթափանց խավարի մեջ:  
Անթափանց խավարի մեջ թաղված միջավայրը ծնեց մեծ գրողին:

**148. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Ոչ ոք չի ստուգել, թե որ պահից են սկսում ստել մանուկները:  
Ոչ ոք չի ստուգել մանուկների՝ ստել սկսելու պահը:
- 2) Ես խուսափում էի մորեղբորս տուն գնալուց, որովհետև նրա կինը մի անբարեհամբույր արարած էր:  
Ես խուսափում էի մորեղբորս տուն գնալուց նրա կնոջ անբարեհամբույր բնավորության պատճառով:
- 3) Գուցե ինձ ծովը նետեի, եթե լինեի բավականաշափ քաջ և բավականաշափ հիմար:  
Գուցե ինձ ծովը նետեի բավականաշափ քաջ և բավականաշափ հիմար լինելուս դեպքում:
- 4) Ես շտապեցի հեռանալ դժբախտ կնոջ մոտից, որպեսզի փարատեմ ծանր տպավորություն:Ես շտապեցի հեռանալ դժբախտ կնոջ մոտից՝ ծանր տպավորությունս փարատելու համար:

**149. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:**

- 1) Նրանք չեն տրտնջում իրենց ծանր աշխատանքից, քանի որ իրենց համար է ստեղծված այդ լայնածավալ, խորհրդավոր ու գեղեցիկ ծովը:Նրանք չեն տրտնջում իրենց ծանր աշխատանքից՝ այդ լայնածավալ, խորհրդավոր ու գեղեցիկ ծովի՝ իրենց համար ստեղծված լինելու պատճառով:
- 2) Կառամատույցից ես դիտում էի, թե ինչպես է խարիսխը կամաց-կամաց դուրս գալիս ծովից:  
Կառամատույցից ես դիտում էի կամաց-կամաց ծովից դուրս եկող խարիսխը:
- 3) Երբ մարդը գործում է ենթագիտակցարար, նա չի ստում:  
Ենթագիտակցարար գործող մարդը չի ստում:
- 4) Մեզ համար տհաճ է, երբ մեզանից քույլերը խարում են մեզ:  
Մեզ համար տհաճ է մեզանից քույլերի՝ մեզ խարելը:

**150. Տրված քարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Դուք նկատե՞լ եք, որ մենք միշտ հարգանքով ու սիրով ենք խոսում մեր մեռած քարեկամների մասին:  
Դուք նկատե՞լ եք մեր՝ մեր մեռած քարեկամների մասին միշտ հարգանքով ու սիրով խոսելը:
- 2) Մայրս մինչև անգամ պարծեցավ, որ զավակն իր կամքով ուսումնարան է մտել:  
Մայրս մինչև անգամ պարծեցավ իր կամքով ուսումնարան ընդունված զավակով:
- 3) Ամենավտանգավորն այն սուտն է, որ քիչ է տարբերվում ճշմարտությունից:  
Ամենավտանգավորը ստի՝ ճշմարտությունից քիչ տարբերվելն է:
- 4) Երբ հորս փափախի սուր ծայրը չքացավ ճանապարհի փոշու մեջ, ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:  
Հորս փափախի սուր ծայրը ճանապարհի փոշու մեջ չքացալուց հետո ինձ պաշարեց արտասովոր տրտմություն:

**151. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Զկա այլևս մարդու համար անապական երջանկություն այն օրից, երբ նա բաժանվում է ծնողների գուրգուրանքից:  
Զկա այլևս մարդու համար անապական երջանկություն նրա՝ ծնողների գուրգուրանքից բաժանվելու օրից:
- 2) Թեև անգրագետ էր, նա լավ գիտեր ուսման հարգը:  
Չնայած անգրագետ լինելուն՝ նա լավ գիտեր ուսման հարգը:
- 3) Ես, որ ինձ համարում էի ճակատագրի խորք զավակ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը:  
Ես, ինձ ճակատագրի խորք զավակ համարելով հանդերձ, գտա իմ բարձրագույն սփոփանքը՝ գիրքը:
- 4) Ինձ պարտավորեցրին երկու ամիս ծառայել առանց որևէ ամսականի, մինչև որ ձեռագիրս շտկեմ:  
Ինձ պարտավորեցրին երկու ամիս ծառայել առանց որևէ ամսականի մինչև ձեռագիրս շտկելս:

**152. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Ամենասուրբ հարաբերություններն անգամ կխարիսվեին, եթե դրանցում խապառ բացակայեր սուտը:  
Ամենասուրբ հարաբերություններն անգամ կխարիսվեին դրանցում սուտը խապառ բացակայելու դեպքում:
- 2) Պատգամավորներից ովքեր վերադարձել էին գործուղումից, հանդես եկան հաշվետվությամբ:  
Գործուղումից վերադարձած պատգամավորները հանդես եկան հաշվետվությամբ:
- 3) Ստեփանը, որ իինգ տարով փոքր էր ինձնից, այծյամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով:  
Ինձնից իինգ տարով փոքր Ստեփանը այծյամի արագությամբ թռչկոտում էր չոր տատասկների վրայով:
- 4) Ստով ներծծված են մարդկային կյանքի բոլոր ոլորտները, քանի որ մարդն ուղղակի կենսական պահանջ ունի ստելու:  
Մարդկային կյանքի բոլոր ոլորտների՝ ստով ներծծված լինելու պատճառով մարդն ուղղակի կենսական պահանջ ունի ստելու:

**153. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Ստերը գորանում են, երբ հենվում են ճշմարտության վրա:  
Ճշմարտության վրա հենվող ստերը գորանում են:
- 2) Եվ այդ վայրկյաններին նա իմ աշքում մեկն էր այն հերոսներից, որ տատս նկարագրում էր իր հեքիաթներում:  
Եվ այդ վայրկյաններին նա իմ աշքում մեկն էր տատիս՝ իր հեքիաթներում նկարագրած հերոսներից:
- 3) Մնացած հավասար պայմաններում ամենից համոզիչ ստում են նրանք, ովքեր իշխանություն ունեն:  
Մնացած հավասար պայմաններում ամենից համոզիչ ստում են իշխանություն ունեցողները:
- 4) Ինձ զարմացրեց, որ նա չգանգատվեց ճանապարհի դժվարություններից:  
Ինձ զարմացրեց նրա՝ ճանապարհի դժվարություններից չգանգատվելը:

**154. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպ-ված պարզի (նշել համարները):**

- 1) Երբ երկարի շղթան վիրթսարի օձի պես փաթաթվել էր նավի կտուցին, աշակերտները խմբովին սկսեցին երգել: Երկարի շղթան վիրթսարի օձի պես նավի կտուցին փաթաթվելուց հետո աշակերտները խմբովին սկսեցին երգել:
- 2) Հույս չունենաք, թե գրասիրտ մարդուն կրոնեք ստախոսության մեջ: Գրասիրտ մարդուն ստախոսության մեջ բռնելու հույս չունենաք:
- 3) Կատարյալ հուսահատության պահին դրանք հեռանում են մեզանից, ինչպես առնետներն են լքում սուզվող նավը: Կատարյալ հուսահատության պահին դրանք հեռանում են մեզանից սուզվող նավը լքող առնետների նման:
- 4) Թեպետ հոգատարությունն ամեննին էլ սիրո նշան չէ, այն սիրուց ավելի է գնահատվում ամուսինների կողմից: Չնայած հոգատարության՝ ամեննին էլ սիրո նշան չլինելուն՝ այն սիրուց ավելի է գնահատվում ամուսինների կողմից:

**155. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպ-ված պարզի (նշել համարները):**

- 1) Սենք խնամքով և հաշվենկատորեն ստեղծել ենք արտահայտություններ, որոնք գործածվում են միայն սուտը քողարկելու համար: Սենք խնամքով և հաշվենկատորեն ստեղծել ենք արտահայտություններ սուտը քողարկելու նպատակով գործածելու համար:
- 2) Կառուվ ճամփորդությունն այնքան էր հոգնեցրել ինձ, որ ամբողջ մարմինս ջարդվում էր: Կառուվ ճամփորդության՝ ինձ հոգնեցնելու պատճառով ամբողջ մարմինս ջարդվում էր:
- 3) Եթե բոլոր մարդիկ միանգամից հրաժարվեն ստելուց, աշխարհում աներևակայելի խառնաշփոթ կառաջանա:
- 4) Բոլոր մարդկանց՝ ստելուց միանգամից հրաժարվելու դեպքում աշխարհում աներևակայելի խառնաշփոթ կառաջանա:
- 5) Աշխատե՛ք հեռու մնալ մարդուց, ում սիրում եք: Աշխատե՛ք հեռու մնալ ձեր կողմից սիրված մարդուց:

**156. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպ-ված պարզի (նշել համարները):**

- 1) Խոսակցություն վարելու առիթը հեշտությամբ զիջում ենք նրան, ով հաստատում է մեր սուտը: Խոսակցություն վարելու առիթը հեշտությամբ զիջում ենք մեր սուտը հաստատողներին:
- 2) Մարզիկը ժամանակին նկատեց, որ կատաղի կենդանին մոտենում է ճաղավանդակին: Մարզիկը ժամանակին նկատեց, ճաղավանդակին մոտենում է ճաղավանդակին:
- 3) Մարզիկը ժամանակին նկատեց ճաղավանդակին մոտեցող կատաղի կենդանուն: Շատ ստեր կան, որոնք մեր ամենօրյա ցավերի պես սովորական են դարձել մեզ համար:
- 4) Մեզ համար մեր ամենօրյա ցավերի պես սովորական դարձած շատ ստեր կան: Այդ կենսախինոյ մարդու մեջ գնահատելին այն էր, որ երբեք խրատներ չեր տախս: Այդ կենսախինոյ մարդու մեջ գնահատելի էր երբեք խրատներ չտալը:

**157. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպ-ված պարզի (նշել համարները):**

- 1) Նայում էի գեղեցիկ մակույկներին, որ կարապների նման սահում էին այս ու այն կողմ: Նայում էի կարապների նման գեղեցիկ այս ու այն կողմ սահող մակույկներին:
  - 2) Շնչման լկտի ձևերից մեկն է այն, որ պարտապանը պարտքից ավելին է վերադարձնում:
  - 3) Չի կարելի ուրանալ, որ սուտը երբեմն ամոքիչ ազդեցություն է գործում:
  - 4) Չի կարելի ուրանալ ստիշ՝ երբեմն ամոքիչ ազդեցություն գործելը:
- Ես նախանձում էի նրանց, ովքեր ճամփորդում էին այդ նավերով:
- Ես նախանձում էի նրանց՝ այդ նավերով ճամփորդողներին:

**158. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Ես հավատում էի, որ Գասպարի համար անկարելի բան չկա ծովային աշխարհում:
- 2) Ես հավատում էի ծովային աշխարհում Գասպարի համար անկարելի բան չլինելուն:
- 3) Նա շարունակում էր հրամաններ տալ իր շուրջը ժողոված մի խումբ երիտասարդների, որ երևի իր փոքրավորներն էին:
- 4) Նա շարունակում էր հրամաններ տալ իր շուրջը ժողոված մի խումբ երիտասարդների՝ երևի իր փոքրավորներին:
- 5) Ներս էր մտնում թե չէ, Խաչանը հերթով հարցնում էր բոլորին իրենց առողջության մասին:
- 6) Ներս մտնելուն պես Խաչանը հերթով հարցնում էր բոլորին իրենց առողջության մասին:
- 7) Յավոր, նա է ավելի սիրված ու հարգված, ով ամենից քիչ է խղճի հետ հաշվի նստում:
- 8) Յավոր, ավելի սիրվածն ու հարգվածը խղճի հետ ամենից քիչ հաշվի նստողն է:

**159. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք են սխալ փոխակերպված պարզի (նշել համարները):**

- 1) Այն ժամանակ Արծրունին դեռ չեր զրկվել իր ահազին կալվածքից, որ Թիֆլիսի խոշորագույն շինությունն էր:
- 2) Այն ժամանակ Արծրունին դեռ չեր զրկվել Թիֆլիսի խոշորագույն շինությունից՝ իր կալվածքից:
- 3) Իմ միտքն սկսել էր զրադաշտ այդպիսի հարցերով, որոնք կապ չունեն պաշտոնիս հետ:
- 4) Իմ միտքն սկսել էր զրադաշտ պաշտոնիս հետ կապ չունեցող հարցերով:
- 5) Այն օրվանից, երբ իմ անունը տպագրված տեսա, այլևս ճակատագիրն ինձ համար խորթ մայր չէր:
- 6) Իմ անունը տպագրված տեսնելուս օրվանից այլևս ճակատագիրն ինձ համար խորթ մայր չէր:
- 7) Իր ստորադրյալների վերաբերմամբ գոռող ու կոպիտ՝ նա դառնում էր պոչը փորի տակ թաքցրած աղվես, հենց որ դիմում էր իր մեծավորներին:
- 8) Իր ստորադրյալների վերաբերմամբ գոռող ու կոպիտ՝ նա դառնում էր պոչը փորի տակ թաքցրած աղվես իր մեծավորներին դիմելուն պես:

**160. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք չեն կարող փոխակերպվել պարզի (նշել համարները):**

- 1) Այն ագահությունը, որով թալանում ենք բնությունը, խոսում է մեր բարոյական նկարագրի մասին:
- 2) Ես որոշեցի լող տալ սովորել, թեև ծով մտնելուց երկյուղ ունեմ:
- 3) Երանի նրանց, ում կյանքն ազատել է կենցաղի հեղձուցիչ ճահճից:
- 4) Ես միայն մատնացույց կանեմ քեզ այն անկյունները, ուր կատարվում են աղետալի անցքեր:

**161. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Իր նմանների հետ հարաբերությունների մեջ մտնելու պահից մարդը միշտ դիմել է ստի ծառայությանը:  
Այն պահից, երբ մարդը հարաբերությունների մեջ է մտել իր նմանների հետ, նա միշտ դիմել է ստի ծառայությանը:
- 2) Իմ՝ գրականությամբ պարապելը կատարյալ ինքնանահատակություն էր:  
Այն, որ ես գրականությամբ էի պարապում, կատարյալ ինքնանահատակություն էր:
- 3) Այստեղ ևս Արձրունուն օգնության եկան անձնական հաշիվներով դեկավարվողները:  
Այստեղ ևս Արձրունուն օգնության եկան նրանք, ովքեր դեկավարվում են անձնական հաշիվներով:
- 4) Թերարժեքության բարդույթով տառապողներին հաճախ բուժում են ինքնախարենությամբ:  
Նրանց, ովքեր տառապում են թերարժեքության բարդույթով, հաճախ բուժում են ինքնախարենությամբ:

**162. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Ամենաբարձր դիրքի հասածները ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց:  
Ովքեր հասել են ամենաբարձր դիրքի, ավելի հաճախ են մոլորեցնում սովորական մարդկանց:
- 2) Բարեկամներին ճշմարտությունն ասելու համար հաճախ ցավ ենք ապրում:  
Ցավ ենք ապրում, քանի որ բարեկամներին հաճախ ասելու ենք ճշմարտությունը:
- 3) Քնած մանկան նման գեղեցիկ է հուսահատ ողբացողը:  
Հուսահատ ողբացողը գեղեցիկ է՝ նման այն մանկանը, որ քանած է:
- 4) Հավերի շրջելու պատճառը մշտապես կուշտ ու ապահով լինելն է:  
Հավերը չեն թռչում, քանի որ մշտապես կուշտ ու ապահով են:

**163. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Երբեմն սուտ խոսելու միակ նպատակը ասելիքը լավ պարզաբանելն է:  
Երբեմն սուտ են խոսում, որպեսզի ասելիքը լավ պարզաբանեն:
- 2) Կնոջը հմայք տվող գարդերը տղամարդուն նողկալի են դարձնում:  
Այն գարդերը, որոնք հմայք են տալիս կնոջը, տղամարդուն նողկալի են դարձնում:
- 3) Ազահությունը հանկարծակիի է գալիս հանկարծակի հարստացածի առատաձեռնությունից:  
Ազահությունը հանկարծակիի է գալիս նրա առատաձեռնությունից, ով հանկարծակի է հարստացել:
- 4) Բավականաչափ գարգացում ունենալու դեպքում նա կարող էր լինել բավական լավ հրապարակախոս:  
Եթե բավականաչափ գարգացում ունենար, նա կարող էր լինել բավական լավ հրապարակախոս:

**164. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Այսօրվա հանգիստ պայմաններում ստեղծագործողները չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրչի մարդկանց վիճակը:  
Նրանք, ովքեր ստեղծագործում են այսօրվա հանգիստ պայմաններում, չեն կարող պատկերացնել այն ժամանակվա գրչի մարդկանց վիճակը:
- 2) Ռաֆֆին ամեն օր հորդորում էր Շիրվանզադեին մի խոշոր գործ գրել ամսագրի համար:  
Ռաֆֆին ամեն օր հորդորում էր Շիրվանզադեին, որ մի խոշոր գործ գրի ամսագրի համար:
- 3) Հավանաբար շատ դժվար է քաղաքականությամբ գրավող կանանց գործը:  
Հավանաբար շատ դժվար է այն կանանց գործը, ովքեր գրավում են քաղաքականությամբ:
- 4) Իսկական ընկերները ապառիկ շահը կանխիկ շահից գերադասողներն են:  
Իսկական ընկերներ են նրանք, ովքեր ապառիկ շահը գերադասում են կանխիկ շահից:

**165. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են ճիշտ փոխակերպված բարդի:**

- 1) Բժիշկը պիտի ամաշի հանիրավի իրեն մատուցված երախտագիտությունից:  
Բժիշկը պիտի ամաշի նրանցից, ովքեր իրեն հանիրավի երախտագիտություն են մատուցում:
- 2) Ստեղծագործող դերասանի գերազանց արժանիքները թվարկելիս Փափազյանն առաջնային է համարում նրա իմացականության աստիճանը:  
Երբ Փափազյանը թվարկում է ստեղծագործող դերասանի գերազանց արժանիքները, առաջնային է համարում նրա իմացականության աստիճանը:
- 3) Պատժվելուս պատճառը հոր՝ բողոքականներին չսիրելն էր:  
Պատժվեցի, որովհետև հայրս բողոքականներին չէր սիրում:
- 4) Ամենացանկալի ստերը հորինողներին բանաստեղծ են կոչում:  
Նրանց, ովքեր ամենացանկալի ստերն են հորինում, բանաստեղծ են կոչում:

**166. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Յուրաքանչյուր երևույթ, հասնելով ուռճացման ժայր կետին, միշտ վերափոխվում է իր հակուտնյային:  
Յուրաքանչյուր երևույթ, որը հասնում է ուռճացման ժայր կետին, միշտ վերափոխվում է իր հակուտնյային:
- 2) Մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի հանդիպելիս հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:  
Երբ մեր քաջարի որսորդները խոշոր ու վտանգավոր որսի են հանդիպում, հրացանը հենում են կենդանու եղջյուրների վրա ու կրակում:
- 3) Թուրք մոլլայի զիլ ձայնը կոչ էր անում հավատացյալներին՝ փառաբանել երկնային տիրոջը:  
Թուրք մոլլայի զիլ ձայնը կոչ էր անում հավատացյալներին, որ փառաբանեն երկնային տիրոջը:
- 4) Ծերմակ մորուքով զարդարված նրա բարի դեմքը անբացատրելի հմայք էր տալիս ծերունի վարպետին:  
Ծերունի վարպետի բարի դեմքը, որ զարդարված էր ծերմակ մորուքով, անբացատրելի հմայք էր տալիս նրան:

**167. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Ազատվելով մորս գրկից՝ ես կառք նստեցի:  
Երբ ազատվեցի մորս գրկից, ես կառք նստեցի:
- 2) Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց՝ քաղաքի միակ վիրաբույժին կանչելու:  
Նրանցից մեկն անմիջապես վազեց փողոց, որ կանչի քաղաքի միակ վիրաբույժին:
- 3) Իմ հանցանքը աքսորված ուսանողների հետ ծանոթանալս էր:  
Այն, որ ծանոթացել էի աքսորված ուսանողների հետ, իմ հանցանքն էր:
- 4) Բանվորը հարստահարվում էր այսօր գործատեր դարձած երեկվա բանվորից:  
Բանվորը հարստահարվում էր երեկվա բանվորից, որն այսօր գործատեր է դարձել:

**168. Տրված պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում մերձավորին ճարպկորեն կոխսկոտելով առաջ գնացողը:  
Այդ միջավայրում նախանձի առարկա էր դառնում նա, ով մերձավորին ճարպկորեն կոխսկոտելով առաջ էր գնում:
- 2) Նախքան հրատարակության հանձնելս հողվածներս կարդում էի Աբգար Հովհաննիսյանին:  
Նախքան հողվածներս հրատարակության կհանձնեի, ոլլանք կարդում էի Աբգար Հովհաննիսյանին:
- 3) Զարմանալին Ռաֆֆու անտարբեր լինելն էր արևելյան երաժշության հանդեպ:  
Զարմանալի էր, որ Ռաֆֆին անտարբեր էր արևելյան երաժշության հանդեպ:
- 4) Թուրքիայից փախած հայերը գալիս էին «Մշակի» խմբագրատուն:  
Երբ Թուրքիայից հայերը փախչում էին, գալիս էին «Մշակի» խմբագրատուն:

**169. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Ես, գրաղված լինելով միայն գրական աշխատանքով, չէի հետաքրքրվում նրանց գործերով:  
Ես, որ գրաղված էի միայն գրական աշխատանքով, չէի հետաքրքրվում նրանց գործերով:
- 2) Ստախոսի փաստարկը մեռած մարդուն վկայակոչելն է:  
Ստախոսի փաստարկն այն է, որ վկայակոչում է մեռած մարդուն:
- 3) Հորեղբայրս, զինետնից հարբած դուրս գալով, հանդիպում է իր քրոջ որդուն:  
Երբ հորեղբայրս հարբած դուրս է գալիս զինետնից, հանդիպում է իր քրոջ որդուն:
- 4) Համբարձումը չէր վիրավորվում իր մասին արտասանված սրախոսություններից:  
Համբարձումը չէր վիրավորվում, երբ իր մասին սրախոսություններ էին արտասանվում:

**170. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞սն են սխալ փոխակերպված բարդի:**

- 1) Մի քանի բաժակ Շամախու զինի խմելուց հետո նա երեսուն տարով ջահելանում էր:  
Երբ մի քանի բաժակ Շամախու զինի էր խոսում, նա երեսուն տարով ջահելանում էր:
- 2) Նահանգապետին ներկայանալու հեռանկարը կատարյալ պատիճ էր Համբարձումի համար:  
Այն հեռանկարը, որ պիտի ներկայանար նահանգապետին, կատարյալ պատիճ էր Համբարձումի համար:
- 3) Արձրունու՝ Զվիցերիա ուղևորվելուց հետո երեք մարդ կամեցան խմբովին շարունակել «Մշակի» հրատարակությունը:  
Երբ Արձրունին ուղևորվեց Զվիցերիա, երեք մարդ կամեցան խմբովին շարունակել «Մշակի» հրատարակությունը:
- 4) Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները երկրից արտագողթածների բազմությունը:  
Այդ մառախլապատ երկնքի տակ է անցկացնում իր տարիները այն բազմությունը, որն արտագողթել է երկրից:

**171. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված բարդի (նշել համարները):**

- 1) Թշնամուց ճշմարտություն ակնկալող կանխական հավատում է ստիճան:  
Ով թշնամուց ճշմարտություն է ակնկալում, կանխական հավատում է ստիճան:
- 2) Ես հետ էի նայում մերձավորներից բաժանվող արտորականի նման:  
Ես հետ էի նայում արտորականի նման, որ բաժանվում է մերձավորներից:
- 3) Վերջացնելով իր սովորական աղոթքը՝ տասու ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:  
Երբ վերջացրեց իր սովորական աղոթքը, տասու ներքնակի տակից դուրս բերեց մի փոքրիկ կապոց:
- 4) Նրա կարծիքով անընդհատ տեղափոխություններիս պատճառը գեղեցիկ տանտիրուիի կամ հարևանութիներ փնտրելու էր:  
Նրա կարծիքով ես անընդհատ տեղափոխվում էի, որովհետև գեղեցիկ տանտիրուիի կամ հարևանութիներ էի փնտրում:

**172. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված բարդի (նշել համարները):**

- 1) Այդ մարդը ծնվել էր առավելագույնը մի դպրոցի վարիչ կամ լրագրի շնորհալի աշխատակից լինելու:  
Այդ մարդը ծնվել էր, որ առավելագույնը մի դպրոցի վարիչ կամ լրագրի շնորհալի աշխատակից լիներ:
- 2) Բաֆֆին ձեռքերը ծալած չեր սպասում մուսաների՝ իրեն այցելելուն:  
Բաֆֆին ձեռքերը ծալած չեր սպասում, որ մուսաները այցելեն իրեն:
- 3) Թիֆլիս տեղափոխվելով՝ պատահմամբ ընկա հեղափոխական մտավորականների մի շրջան:  
Երբ տեղափոխվեցի Թիֆլիս, պատահմամբ ընկա հեղափոխական մտավորականների մի շրջան:
- 4) Ինձ համար ցավալի էր այդ հրաշալի մտավորականին այդպիսի ողորմելի վիճակի մեջ տեսնելը:  
Ինձ համար ցավալին այն էր, որ այդ հրաշալի մտավորականին տեսնում էի այդպիսի ողորմելի վիճակի մեջ:

**173. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված բարդի (նշել համարները):**

- 1) Իր անձի մասին գովասանքներ լսելիս այդ պատկառելի մարդը շփոթվում էր շոյված մանկան պես:  
Իր անձի մասին գովասանքներ լսելիս այդ պատկառելի մարդը շփոթվում էր մի մանկան պես, որը շոյված է:
- 2) Հանդիսությունների ժամանակ ասված ստերին ոչ ոք ուշադրություն չի դարձնում:  
Ոչ ոք ուշադրություն չի դարձնում ստերին, եթե դրանք ասվում են հանդիսությունների ժամանակ:
- 3) Նախքան պատանու հարցին պատասխանելը նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:  
Նախքան կպատասխաներ պատանու հարցին, նա ուղեպայուսակից հանեց զանազան ուտեստներ:
- 4) Մորեղբայրս պատվիրեց ինձ խնամքով մի որևէ բան գրել տեսրի էջի վրա:  
Մորեղբայրս պատվիրեց ինձ, որ խնամքով մի որևէ բան գրեմ տեսրի էջի վրա:

**174. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված բարդի (նշել համարները):**

- 1) Գրագիրները թույլ էին տալիս Համբարձումին իրենց հետ կատակներ անել:  
Գրագիրները թույլ էին տալիս, որ Համբարձումը իրենց հետ կատակներ աներ:
- 2) Յանկանալով ամեն գնով վեր բարձրանալ՝ նա անընդհատ խոնարհվում էր իր մեծավորի առջև:  
Քանի որ նա ցանկանում էր ամեն գնով վեր բարձրանալ, անընդհատ խոնարհվում էր իր մեծավորի առջև:
- 3) Այդ դառնությունները խոր ակոսներ են զցում մարդու սրտի վրա՝ հավիտյան չջնջվելու համար:  
Այդ դառնությունները խոր ակոսներ են զցում մարդու սրտի վրա, որպեսզի հավիտյան չջնջվեն:
- 4) Նախքան Ուուաստան գնալս «Մշակ» լրագրին ուղարկել էի մի փոքրիկ անստորագիր թղթակցություն:  
Նախքան կգնայի Ուուաստան, «Մշակ» լրագրին ուղարկել էի մի փոքրիկ անստորագիր թղթակցություն:

**175. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից որո՞նք են ճիշտ փոխակերպված բարդի (նշել համարները):**

- 1) Նավաստիները գնում էին ձկնորսների մոտ՝ իմանալու գետաբերանի ուղղությունը:  
Նավաստիները գնում էին, որ ձկնորսների մոտ իմանան գետաբերանի ուղղությունը:
- 2) Ես կառապանի հետ ժամեր շարունակ քայլում էի մի բարեկամի կամ ծանոթի հանդիպելու հույսով:  
Ես կառապանի հետ ժամեր շարունակ քայլում էի՝ հույս ունենալով, որ կհանդիպեմ մի ծանոթի կամ բարեկամի:
- 3) Սամսնն սպասում էր մեկի՝ իր փառավոր անցյալով հետաքրքրվելուն:  
Սամսնն սպասում էր, որ մեկը կհետաքրքրվի իր փառավոր անցյալով:
- 4) Նա բոլորին համոզելու շափ եռանդուն էր քարոզում իր կասկածելի գաղափարները:  
Նա այնքան եռանդուն էր քարոզում իր կասկածելի գաղափարները, որ համոզում էր բոլորին:

**176. Նախադասությունն ավարտելու դեպքում քանիսի՝ ստորադաս նախադասությունները կլինեն ենթակա:**

- 1) Միանգամայն անհավատալի էր, որ .....
- 2) Ինձ համար պարզ դարձավ, որ.....
- 3) Գիտեի, որ.....
- 4) Հավաքվածների համար անհասկանալի էր, որ.....
- 5) Ոչ ոքի չասաց՝ .....

**177. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որո՞նք ունեն հատկացուցիչ երկրորդական նախադասություն (նշել համարները):**

- 1) Թանկարժեք քարերն ապացուցում էին, որ նա վերջերս հանդիպել է թագավորի:
- 2) Միաժամանակ զավակն եմ նրա, Որ դեռ չի ծնվել աշխարհի վրա:
- 3) Երկուսիս էլ ժամանակ էր պետք հասկանալու, որ մաքրեինք ուղեղներս հնարավոր կասկածներից:
- 4) Մենք չարտաքերեցինք նրանց անունները, ովքեր ամենին չօժանդակեցին մեզ այդ հարցում:
- 5) Նա երջանիկ էր և գիտեր՝ ինչու է ապրում:

**178. Ո՞ր նախադասություններում է դերբայական դարձվածք կատարում անուղղակի խնդրի պաշտոն (նշել համարները):**

- 1) Իրենից խորհուրդ հարցնողներին երբեք հուսախար չէր անում:
- 2) Ստուգում էր ձայնագրված ժապավենները՝ պարզելու դրանց պարունակությունը:
- 3) Արվեստի երկու հսկաների հոգում անթեղված կայծը հրդեհ է դառնում ներկա ժամանակի մարդու համար:
- 4) Նա սպասում էր հրավիրյալների ներս մտնելուն:
- 5) Տանջանքից փախչողները դառն ու թշնամի անապատում գտան իրենց մահը:

**179. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:**

- 1) – Մենք այնքան մտերմացել ենք, քույր Սեղա, որ ես ազատ կարող եմ իմ քանի կարծիքները հայտնել քեզ, - ասաց իշխանը ժպտալով:  
Իշխանը ժպտալով ասաց Սեղային, որ իրենք այնքան մտերմացել են, որ ինքը ազատ կարող է իր մի քանի կարծիքները հայտնել նրան:
- 2) Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել մոտենամ ու ասեմ.  
– Ես քո որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:  
Մոսկվայում մի քանի անգամ հանդիպելով Տարկովսկու հորը՝ քիչ է մնացել մոտենամ ու ասեմ, որ ես իր որդի Անդրեյին ճանաչում եմ, ես Անդրեյի տաղանդի երկրպագուն եմ:  
3) – Եթե ձեր ծնողները շատ սիրելուց ձեզ կուոք են դարձել, բարի՛ եղեք նրանցից զոհ չպահանջել, - դառնացած ասում էր ուսուցիչը:  
Ուսուցիչը դառնացած ասում էր, որ եթե նրանց ծնողները շատ սիրելուց իրենց կուոք են դարձել, ապա թող նրանք բարի լինեն նրանցից զոհ չպահանջել:  
4) – Եթե ձեր հանձնաժողովը չընդունի մեր սկզբունքները, միևնույն է, մենք շարունակելու ենք մեր գործը, - հանգիստ պատասխանեց Հակոբյանը:  
Հակոբյանը հանգիստ պատասխանեց, որ եթե նրանց հանձնաժողովը չընդունի իրենց սկզբունքները, միևնույն է, իրենք շարունակելու են իրենց գործը:

**180. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:**

- 1) – Պատրաստվե՛ք զնալու, - դիմելով մեզ՝ ասաց տանտերը, - ձեր կառքն արդեն պատրաստ սպասում է մեր իջևանատան բակում:  
Տանտերը, դիմելով մեզ, ասաց, որ պատրաստվենք զնալու, մեր կառքն արդեն պատրաստ սպասում է նրանց իջևանատան բակում:
- 2) – Դուք դե՞մ եք այն պնդմանը, որ թշնամին ձեզ հետ հաշտության կզնա միայն այն ժամանակ, երբ դուք նրան մի լավ ջարդ կտաք, - դիմելով դակիճում նստածներին՝ ասաց բանախոսը:  
Բանախոսը, դիմելով դակիճում նստածներին, ասաց, թե նրանք դե՞մ են այն պնդմանը, որ թշնամին նրանց հետ հաշտության կզնա միայն այն ժամանակ, երբ նրանք նրան մի լավ ջարդ կտան:  
3) – Դուք պետք է համոզեք նրանց, - ասաց ինձ Լևոնը.- նրանք ինձ չեն հավատում, բայց Ձեզ կհավատան:  
Լևոնն ինձ ասաց, որ ես պետք է համոզեմ նրանց. նրանք իրեն չեն հավատում, բայց ինձ կհավատան:  
4) ‘Դասամիջոցին պրոֆեսորը մոտեցավ ինձ և ասաց.  
– Լավ կլինի, որ կարդաս իմ հոդվածը. այնտեղ օգտակար նյութ կգտնես ավարտա- ճառիդ համար:  
‘Դասամիջոցին պրոֆեսորը մոտեցավ ինձ և ասաց, որ լավ կլինի, որ կարդաս իր հոդվածը, այնտեղ օգտակար նյութ կգտնեմ ավարտաճառիս համար:

## 181. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են ճիշտ:

- 1) – Եթե եղբայրը նկարչությամբ է պարապում, - ասացի օրիորդին, - ես կարող եմ ձեզ օգտակար լինել ցուցահանդեսի հարցում:  
Օրիորդին ասացի, որ եթե իր եղբայրը նկարչությամբ է պարապում, ես կարող եմ իրեն օգտակար լինել ցուցահանդեսի հարցում:
- 2) Դու Վրեժին այդ օրը ասացիր.  
– Ես չեմ կասկածում քո ազնվությանը, սիրելին, բայց մեր գործում դու պետք է նաև մի փոքր հաշվենկատ լինես:  
Դու Վրեժին այդ օրը ասացիր, որ չեմ կասկածում նրա ազնվությանը, բայց ձեր գործում նա պետք է նաև մի փոքր հաշվենկատ լինի:
- 3) – Նշի՛ր մի թղթի կտորի վրա այն ամենը, ինչ որ անհրաժեշտ են համարում, - ասաց մայրը. - Երեկոյան, երբ հայրդ վերադառնա, ես ամեն ինչ կկարգադրեմ:  
Մայրն ասաց, որ նա նշի մի թղթի կտորի վրա այն ամենը, ինչ որ անհրաժեշտ է համարում. Երեկոյան, երբ նրա հայրը վերադառնա, ինքն ամեն ինչ կկարգադրի:
- 4) – Ես քաղաքում չեմ ուզում մնալ, - լացակումած ասում էր Երեխան, - հայրիկ, ես ուզում եմ քեզ հետ վերադառնալ մեր գյուղը:  
Երեխան լացակումած ասում էր հորը, որ ինքը չի ուզում քաղաքում մնալ, ինքն ուզում է նրա հետ վերադառնալ իրենց գյուղը:

## 182. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ /նշել համարները/:

- 1) – Դու Երեխային քո՞ն մեզ մոտ, Ավետ ապեր, ես կհազցնեմ, կպահեմ նրան, ինչպես որդուս, - ասաց Պետրոսը:  
Պետրոսը Ավետ ապորն ասաց, որ նա Երեխային քողնի իրենց մոտ, ինքը կհազցնի, կպահի նրան, ինչպես իր որդուն:  
Մայրը բռնեց Ստեփանի ձեռքը՝ ասելով.
- 2) – Աստծու սիրուն, դու մի՛ զնա, ես ինքս կզնամ. Եթե ինձ վրա բարկանա, ես ձայն չեմ հանի, իսկ դու հաստատ կրիվ կսարքես:  
Մայրը բռնեց Ստեփանի ձեռքը՝ ասելով, որ նա քող չզնա, ինքը կզնա. Եթե իր վրա բարկանա, ինքը ձայն չի հանի, իսկ նա հաստատ կրիվ կսարքի:
- 3) – Մի՞թե Դուք ինձ չեք հիշում, - զարմացած դիմեց ինձ անձանոքը, հետո ավելացրեց, - ես ձեր տանը երկու անգամ եղել եմ Զեր եղբոր՝ Ասատորի հետ:  
Անձանոքը զարմացած դիմեց ինձ, թե մի՞թե ես իրեն չեմ հիշում, հետո ավելացրեց, որ ինքը մեր տանը երկու անգամ եղել է իմ եղբոր՝ Ասատորի հետ:  
– Տարար Երեխայիս կորցրիր, - ասաց Շուշանը, երբ լսեց Ավետի խոսքերը:  
Երբ լսեց Ավետի խոսքերը, Շուշանն ասաց, թե նա տարավ իր Երեխային կորցրեց:
- 4)

### 183. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են սխալ:

- 1) -Այ տղա, դու այնպես ես խոսում, կարծես մենք երեկ ենք ծանոթացել, -  
հանդիմանում էր Հրանտը Աշոտին՝ իր մտերիմ ընկերոջը:  
Հրանտը Աշոտին՝ իր մտերիմ ընկերոջը, հանդիմանում էր, թե այ տղա, դու այնպես ես  
խոսում, կարծես մենք երեկ ենք ծանոթացել:
- 2) – Իմ անունը, հարգելին՝, գուցե քեզ ոչինչ չի ասում, բայց նկատի ունեցիր, որ  
ակադեմիական թատրոնն արդեն բեմադրել է իմ պիեսը, - ակնոցն ուղղելով՝  
ասաց երիտասարդը:  
Երիտասարդը, ակնոցն ուղղելով, ասաց, որ իր անունը նրան գուցե ոչինչ չի  
ասում, բայց թող նա նկատի ունենա, որ ակադեմիական թատրոնն արդեն  
բեմադրել է նրա պիեսը:
- 3) – Ես տեսնում եմ, - ասաց Աստղիկը երիտասարդին, - դու նույնիսկ մեր քաղը կարգին  
չես ճանաչում, մինչդեռ որպես ցրիչ՝ քաղաքը հինգ մատի պես պիտի իմանայիր:  
Աստղիկը երիտասարդին ասաց, որ ինքը տեսնում է՝ նա նույնիսկ իրենց քաղը կարգին  
չի ճանաչում, մինչդեռ որպես ցրիչ՝ քաղաքը հինգ մատի պես պիտի իմանար:
- 4) – Կարդալ չգիտեմ, զորավա՛ր, - մեղավոր ձայնով ասաց շինականը, - բայց գիտեմ,  
որ այդ գրքի մեջ մեր պատմությունն է, մեր աղոթքը:  
Շինականը մեղավոր ձայնով ասաց զորավարին, որ ինքը կարդալ չգիտի, բայց  
գիտի, որ այդ գրքի մեջ մեր պատմությունն է, մեր աղոթքը:

### 184. Ուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞ն են սխալ:

- 1) – Ես տնօրենին կխնդրեմ, որ քեզ համար նպաստ դուրս գրեն, - ասաց Հովհաննյանը  
և կարծես իր ասածից ամաչելով՝ ավելացրեց. - դու լավ տղա ես, բոլորս սիրում  
ենք քեզ, իսկ ամենից շատ ես եմ սիրում:  
Հովհաննյանն ասաց, որ ինքը տնօրենին կխնդրի, որ նրա համար նպաստ դուրս  
գրեն, և կարծես իր ասածից ամաչելով՝ ավելացրեց, որ նա լավ տղա է, իրենք  
բոլորը սիրում են իրեն, իսկ ամենից շատ նա է սիրում:
- 2) Աշխենը, կամենալով արտահայտել իր երախտագիտությունը, հուզված ասաց.  
– Քա՛ղցրս, դու միայն հրամայի՛ր, իսկ մենք պատրաստ ենք  
կատարելու քո բոլոր ցանկությունները:  
Աշխենը, կամենալով արտահայտել իր երախտագիտությունը, հուզված ասաց,  
որ նա թող միայն հրամայի, իսկ իրենք պատրաստ են կատարելու նրա բոլոր  
ցանկությունները:
- 3) – Ընորհակալ եմ, մա՛յր, - հուզված ասաց որդին, - որ վիշտը զմուեցիր քո սրտում  
և այդպես սքանչելի կարողացար խարել ինձ՝ քո որդուն:  
Որդին հուզված ասաց մորը, որ ինքը շնորհակալ է, որ նա վիշտը զմուեց իր  
սրտում և այդպես սքանչելի կարողացավ խարել իրեն՝ նրա որդուն:
- 4) Հարցնում եմ Ուոլենին.  
– Պատկերացնո՞ւմ ես՝ ինչ պիտի զգացած լինի զորավարը, եթե իր թիկնապահից  
լսել է քաղաքի անկման լուրը:  
Ուոլենին հարցնում եմ, թե նա պատկերացնում է արդյոք՝ ինչ պիտի զգացած  
լինի զորավարը, եթե իր թիկնապահից լսել է քաղաքի անկման լուրը:

**185. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ /նշել համարները/:**

- 1) – Եթե որևէ բանի հավատում ու այն սիրում ես, ապա արժե, որ դրան նվիրես ողջ կյանքի, - ոգեշնչված ասաց արեղան և ավելացրեց. - դուք բոլորդ ել պարտք ունեք կատարելու, ինչպես ես, որ ծառայում եմ Աստծուն:
 

Արեղան ոգեշնչված ասաց և ավելացրեց, որ եթե որևէ բանի հավատում ու այն սիրում ես, ապա արժե, որ դրան նվիրես ողջ կյանքի. նրանք բոլորն ել պարտք ունեն կատարելու, ինչպես ինքը, որ ծառայում է Աստծուն:
- 2) Աստղագնացը մի պահ նայեց շուրջը, հետո ասաց.
 

– Կնոջ հաղորդե՛ք, որ երբ վերադառնամ, մի-մի բաժակ սառը շամպայն կխմենք իրար հետ, իսկ եթե չվերադառնա, թող նա համոզի նրա երեխաներին, որ իրենց հայրը շարունակում է թոշել:

Աստղագնացը մի պահ նայեց շուրջը, հետո ասաց, որ իր կնոջը հաղորդեն, որ երբ ինքը վերադառնա, իրենք մի-մի բաժակ սառը շամպայն կխմենք իրար հետ, իսկ եթե չվերադառնա, թող նա համոզի նրա երեխաներին, որ իրենց հայրը շարունակում է թոշել:
- 3) Ուուրենը հանդիմանական շեշտով ասաց.
 

– Քո պնդումը, թե մենք միշտ ավելի շատ առաջնորդներ ենք ունեցել, քան կովող զինվորներ, ես չեմ ընդունում:

Ուուրենը հանդիմանական շեշտով ասաց, որ նրա պնդումը, թե իրենք միշտ ավելի շատ առաջնորդներ են ունեցել, քան կովող զինվորներ, նա չի ընդունում:
- 4) Իր վերջին նամակում Սավա Ստեֆանովիչը գրել էր. «Զավակներս, ես զնացի դեպի մահ՝ մաքուր և անմեղ. ներեցե՛ք ինձ, եթե երբեք ձեզնից մեկին նեղացրել եմ»:
 

Իր վերջին նամակում Սավա Ստեֆանովիչը գրել էր իր զավակներին, որ ինքը զնաց դեպի մահ՝ մաքուր և անմեղ. թող նրանք ներեն իրեն, եթե երբեք նրանցից մեկին նեղացրել է:

**186. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ /նշել համարները/:**

- 1) – Ես խոնարհվում եմ ձեր վշտի առաջ, - ասաց գերմանացի գրողը և մի փոքր լոելով՝ ավելացրեց. - ամեն գրող, յուրաքանչյուր մարդ իր երկրի պատմության, նաև այդ պատմության ամենադառը հատվածի ժառանգորդն է:
 

Գերմանացի գրողն ասաց, որ նա խոնարհվում է մեր վշտի առաջ, և մի փոքր լոելով՝ ավելացրեց, որ ամեն գրող, յուրաքանչյուր մարդ իր երկրի պատմության, նաև այդ պատմության ամենադառը հատվածի ժառանգորդն է:
- 2) Ես շոյեցի Առաքելոց եկեղեցու պատը և մտովի ասացի նրան. «Մի՛ շրջիր դեմք, սիրելին, մի՛ խոռովիր, դու բոլորովին ել պարտված չես, դու պահպանում ես մեր հողը, դու մեր կնիքն ես այս հողի վրա»:
 

Ես շոյեցի Առաքելոց եկեղեցու պատը և մտովի ասացի նրան, որ չշրջիր դեմքը, չխոռովի, նա բոլորովին ել պարտված չէ, նա պահպանում է իրենց հողը, նա իրենց կնիքն է այս հողի վրա:
- 3) «Թող ների ինձ ընթերցողը, - գրում է Սիլվա Կապուտիկյանը «Զարավանները դեռ քայլում են» գրքում, - եթե հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին. հանգամանքների բերումով դեպքերն ու հանդիպումները զարգացել են իմ՝ հայրենիքից եկած հրավիրյալի շուրջը»:
 

Սիլվա Կապուտիկյանը «Զարավանները դեռ քայլում են» գրքում գրում է, որ ընթերցողը թող ների նրան, եթե հաճախ հանդիպի անձնական դերանվան առաջին դեմքի հոլովումներին. հանգամանքների բերումով դեպքերն ու հանդիպումները զարգացել են նրա՝ հայրենիքից եկած հրավիրյալի շուրջը:
- 4) – Բարձրանալու համար պետք է նախ սողալ սովորես. սա ես կյանքիս դառը փորձից եմ ասում, - խրատում էր ծերուկը:
 

Ծերուկը խրատում էր, որ բարձրանալու համար պետք է նախ սողալ սովորես. սա ինքը իր կյանքի դառը փորձից է ասում.

## 187. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:

- 1) Զրուցակից դառը հեգնանքով ասաց ինձ, որ եթե իրենցից որևէ մեկը ցանկանար պատասխանել իմ հարցին, ապա ես կիմանայի անողոք ճշմարտությունը:
  - Եթե մեզնից որևէ մեկը ցանկանար պատասխանել քո հարցին, ապա դուք կիմանայիք անողոք ճշմարտությունը, - դառը հեգնանքով ասաց ինձ զրուցակից:
- 2) Սևամորթը, ի զարմանս նրանց, մաքուր հայերենով ասաց, որ իր մայրը հայուիի է, Կիլիկիայից. նա է իրեն հայերեն սովորեցրել:
  - Սևամորթը, ի զարմանս ձեզ, մաքուր հայերենով ասաց.
  - Իմ մայրը հայուիի է, Կիլիկիայից. նա է ինձ հայերեն սովորեցրել:
- 3) Հայրը որդուն հարցրեց, թե երբ իրենք Բեյրութում էին, նա հասցրեց արդյոք ծանոթանալ Վահանի հետ:
  - Երբ դուք Բեյրութում էիք, հասցրի՞ր ծանոթանալ Վահանի հետ, - հարցրեց հայրը որդուն:
- 4) Չորավարը մտասույզ ասաց, որ ինքը չի սիրում, որ մարդ կովի է գնում մեռնելու համար, և ավելացրեց, որ երկի ճիշտ չեն վարվել մեր պատմիշները, երբ հայ զինվորին միայն նահատակի լուսապսակ են հացցրել:
  - Չեմ սիրում, որ մարդ կովի է գնում մեռնելու համար, - մտասույզ ասաց զորավարը և ավելացրեց. - Երկի ճիշտ չեն վարվել մեր պատմիշները, երբ հայ զինվորին միայն նահատակի լուսապսակ են հացցրել:

## 188. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են ճիշտ:

- 1) ‘Դիմելով դահլիճում նստած հայ հրամանատարներին՝ գեներալն ասաց, որ ինքը զարմանում է, թե ինչու ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում է իրենց, երբ նրանց հրամանատարությամբ հայ զինվորները կովում են անձնազնիաբար’:
  - Դիմելով դահլիճում նստած հայ հրամանատարներին՝ գեներալն ասաց.
  - Զարմանում եմ, թե ինչու ռազմաճակատում անհաջողությունը հետապնդում է ձեզ, երբ ձեր հրամանատարությամբ հայ զինվորները կովում են անձնազնիաբար:
- 2) Տեր Մարտիրոսն ասաց, որ իր ատրճանակը պահում է վերջին օրվա համար և հավանաբար դրանով էլ վերջ կտա իր կյանքին, եթե այլ ելք չտեսնի:
  - Ատրճանակս պահում եմ վերջին օրվա համար, - ասաց տեր Մարտիրոսը, - և հավանաբար դրանով էլ վերջ կտամ կյանքին, եթե այլ ելք չտեսնեմ:
- 3) Նա ինձ հիշեցրեց, որ մենք ծանոթացել ենք անցյալ տարի, երբ նույն գնացքով վերադառնում էինք. ես՝ մեր փորձակայանից, ինքը՝ իրենց ամառանոցից:
  - Մենք ծանոթացել ենք անցյալ տարի, - հիշեցրեց նա ինձ, - երբ նույն գնացքով վերադառնում էինք. Դուք՝ Ձեր փորձակայանից, ես՝ մեր ամառանոցից:
- 4) Օրիորդ Սահակյանը Եվային ասաց, որ ինքը եկել է նրան ուրախացնելու. ինքն այսօր նամակ է ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է իրենց:
  - Եկել եմ քեզ ուրախացնելու, Եվա, - ասաց օրիորդ Սահակյանը. - այսօր նամակ է ստացել Աշխենից. տոներին նա այցելելու է մեզ:

**189. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ /նշել համարները/:**

- 1) Ուսւ գեներալին դառնալով՝ Անդրանիկն ասաց, որ ոմանք կարծում են, թե ինքն ըմբոստ է ու անհնազանդ, սակայն ինքը հույս ունի, որ նա՝ մեծարգո գեներալը, այդպես չի մտածում իր մասին:  
Դառնալով ոսւ գեներալին՝ Անդրանիկն ասաց.  
– Ոմանք կարծում են, թե ես ըմբոստ եմ ու անհնազանդ, սակայն ես հույս ունեմ, որ Դուք, մեծարգո՝ գեներալ, այդպես չեք մտածում իմ մասին:
- 2) Վահագն Դավթյանը մի առիթով գրել է, որ ինքը գրաբարից երբեք թարգմանություններ չի կատարել, բայց ներքուստ զգում էր, որ դա շատ ավելի դժվար է, քան որևէ օտար լեզվից թարգմանելը:  
– Ես գրաբարից երբեք թարգմանություններ չեմ կատարել, բայց ներքուստ զգում էի, որ դա շատ ավելի դժվար է, քան որևէ օտար լեզվից թարգմանելը, -  
մի առիթով գրել է Վահագն Դավթյանը:
- 3) Նա ինձ ասաց, որ Մոսկվայում հանդիպել է եղբորս, և նա ասել է, որ շուտով վերադառնալու է, քանի որ կարոտել է ինձ և քույրերիս:  
– Մոսկվայում հանդիպել եմ եղբորդ, և նա ասել է, որ շուտով վերադառնալու է, քանի որ կարոտել է քեզ և իր քույրերին, - ասաց նա ինձ:
- 4) Վահանը Բաղամյանին վրդովված ասաց, որ նա սկսեց բարձր նոտաներից, և հենց սկզբում էլ նրա ձայնը խզվեց, իսկ այժմ, երբ զուգերգն իրենք դեռ չեն ավարտել, նա արդեն հոգնել է:  
Վահանը Բաղամյանին վրդովված ասաց.  
– Դու սկսեցիր բարձր նոտաներից, և հենց սկզբում էլ քո ձայնը խզվեց, իսկ այժմ, երբ զուգերգը դեռ չենք ավարտել, դու արդեն հոգնել ես:

**190. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ /նշել համարները/:**

- 1) Եվան Աշխենին հարցրեց, թե ինչ կզգար նա, եթե հանկարծ իմանար, որ նրա պաշտած երիտասարդը խարեւա է և ոչ միայն նրան է խարել, այլև իրեն:  
– Ի՞նչ կզգայիր, եթե հանկարծ իմանայիր, որ քո պաշտած երիտասարդը խարեւա է և ոչ միայն քեզ է խարել, այլև ինձ, - հարցրեց Եվան Աշխենին:
- 2) Թագուհին Աշոտին ասաց, որ վերջապես եկել է նրա մոտ՝ խոսելու իրենց տանջող ցավի մասին, և հուզված ավելացրեց, որ նա չխանգարի իրեն, եթե մինչև անգամ իր զրոյցն անհաճո լինի նրան:  
– Վերջապես եկել եմ քեզ մոտ՝ խոսելու մեզ տանջող ցավի մասին, - ասաց թագուհին Աշոտին և հուզված ավելացրեց. – չխանգարես ինձ, եթե մինչև անգամ զրոյցն անհաճո լինի քեզ:
- 3) Յու. Վեսելովսկուն ուղղված նամակում Նար-Դոսը գրել է, որ ոսւ նորագոյն գրողներից ինքը շատ է սիրում Չեխովին. նրա ամենափոքր գործն անգամ, իր կարծիքով, բազմահատոր վեպ արժե:  
«Ուսւ նորագոյն գրողներից ես շատ եմ սիրում Չեխովին. նրա ամենափոքր գործն անգամ, իմ կարծիքով, բազմահատոր վեպ արժե», - գրել է Նար-Դոսը Յու.  
Վեսելովսկուն ուղղված նամակում:
- 4) Սահականույշը արքային ասում էր, որ ինքը նպատակ ուներ գալ և միանալ նրա հետ, սփոփել նրա վշտացած սիրտը և ստիպել նրան վերադառնալ Ոստան՝ իր արքունիքը:  
– Նպատակ ունեի գալ և միանալ քեզ հետ, սփոփել քո վշտացած սիրտը և ստիպել քեզ վերադառնալ Ոստան՝ քո արքունիքը, - ասում էր Սահականույշը արքային:

## 191. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ /նշել համարները/:

- 1) Անդրանիկը երկար նայեց հին ընկերոջը՝ Արշավիրին, հետո ասաց, որ ինքը գիտի, որ նա ոչ միայն իր զենքի ու կռվի, այլև իր գաղափարի եղբայրն է, և թող նա իմանա՝ ով օգնության ձեռք է մեկնում հային, նա իր աստվածն է:  
Անդրանիկը երկար նայեց հին ընկերոջը՝ Արշավիրին, հետո ասաց.  
- Գիտեմ, որ ոչ միայն զենքիս ու կռվիս, այլև գաղափարիս եղբայրն ես, և իմացի՛ր՝ ով օգնության ձեռք է մեկնում հային, նա իմ աստվածն է:
- 2) Քահանան, դիմելով իմաստասերին, ասաց, որ չնայած նրա դատողություններին ինքը համաձայն չէ, չի ուզում շարունակել վեճը, քանի որ ինքը չի կարող ապացուցել Աստծու գոյությունը աշխարհի միջոցներով:  
Դիմելով իմաստասերին՝ քահանան ասաց.  
- Չնայած Ձեր դատողություններին համաձայն չեմ, չեմ ուզում շարունակել վեճը, քանի որ չեմ կարող ապացուցել Աստծու գոյությունը աշխարհի միջոցներով:  
3) Գերմանացին հայ պատվիրակներին հանգստացրեց՝ ասելով, որ նրանք թող վստահեն Գերմանիայի օգնությանը. ինքը խորհուրդ կտար նրանց՝ անհապաղ օգտվել նպաստավոր առիթից:  
Գերմանացին հայ պատվիրակներին հանգստացրեց՝ ասելով.  
- Վստահեք Գերմանիայի օգնությանը. խորհուրդ կտայի ձեզ՝ անհապաղ օգտվել նպաստավոր առիթից:
- 4) Եվան Ծահյանին ասաց, որ իրեն թվում է, թե նա ինչ-որ սարսափելի բան գիտի, որ չի ուզում ուղղակի ասել երևի նրա համար, որ վախենում է, թե ինքը կհիասքափվի:  
- Ինձ թվում է, - ասաց Եվան Ծահյանին, - թե Դուք ինչ-որ սարսափելի բան գիտեք, որ չեք ուզում ուղղակի ասել երևի նրա համար, որ վախենում եք, թե կհիասքափվեմ:

## 192. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են սխալ:


- 1) Խմբագրի աշխատասենյակ խուժեցին մի խումբ երիտասարդներ և առանց այլայլության ասացին, որ իրենք նրա մոտ են եկել իրենց գյուղի հողերը իրենց դարավոր թշնամու ոտնձգություններից պաշտպանելու հարցով:  
Խմբագրի աշխատասենյակ խուժեցին մի խումբ երիտասարդներ և առանց այլայլության ասացին.  
- Մենք Ձեզ մոտ ենք եկել մեր գյուղի հողերը մեր դարավոր թշնամու ոտնձգություններից պաշտպանելու հարցով:
- 2) Աշխենն ասաց, որ ինքը և իրենց մի քանի վարժուիհիներ ուզում են մի ներկայացում տալ բարեգործական նպատակով, և դառնալով Եվային՝ հարցրեց, թե նա չէր համաձայնի արդյոք խաղալ Ռուզանի դերը:  
- Ես և մեր մի քանի վարժուիհիներ ուզում ենք մի ներկայացում տալ բարեգործական նպատակով, - ասաց Աշխենը և դառնալով Եվային՝ հարցրեց. - չէ՞ր համաձայնի խաղալ Ռուզանի դերը:
- 3) Նա քեզ համոզում էր, որ, իր կարծիքով, ինքը միայն ճշմարտությունն է ասել, և իրենց վիրավորվածներն են քեզ հավատացրել, որ ինքը սխալվում է:  
- Իմ կարծիքով, - համոզում էր նա քեզ, - ես միայն ճշմարտությունն եմ ասել, և քեզնից վիրավորվածներն են նրան հավատացրել, որ ես սխալվում եմ:
- 4) Թագուհին հրամայել էր քեզ, որ պատվով ընդունես սուրբանդակին և նրան անմիջապես առաջնորդես իր ընդունարանը:  
- Պատվով՝ ընդունիր սուրբանդակին և անմիջապես առաջնորդիր նրան իմ ընդունարանը, - հրամայել էր քեզ թագուհին:

**193. Անուղղակի խոսքի փոխակերպումներից քանի՞սն են սխալ:**

- 1) Աշխենն իր նամակում Եվային գրել էր, որ ինքը զարմացած է, որ նա ոչինչ չի գրում վերջին դեպքերի մասին, և ավելացրել, որ հենց որ ինքը ճանապարհ ընկնի, կայարանից կհեռազրի նրան: «Զարմացած եմ, որ ոչինչ չես գրում վերջին դեպքերի մասին, - իր նամակում գրել էր Աշխենը Եվային և ավելացրել. – հենց որ ճանապարհ ընկնեմ, կհեռազրեմ յեզ»:
- 2) Ստեփանը քրոջը հորդորում էր, որ այս սառնամանիքին տանը մնա, թեև ինքը հասկանում է, թե որքան է նա ուզում իր հետ կայարան գնալ: - Այս սառնամանիքին կմնաս տանը, - հորդորում էր Ստեփանը քրոջը, - թեև հասկանում եմ, թե որքան ես ուզում նրա հետ կայարան գնալ:
- 3) Դիմելով մեզ՝ Ստ. Չորյանն ասաց, որ կան գրական շատ խնդիրներ, որոնցով ինչպես հարկն է չեն զբաղվում ո՞չ իրենք՝ գրողները, ո՞չ էլ մենք՝ քննադատներս: Դիմելով մեզ՝ Ստ. Չորյանն ասաց. - Կան գրական շատ խնդիրներ, որոնցով ինչպես հարկն է չեն զբաղվում ո՞չ իրենք՝ գրողները, ո՞չ էլ նրանք՝ քննադատները:
- 4) Եվան հարցրեց հորը, թե նա պատկերացնում է արդյոք, թե ինչ սարսափելի հարված կլինի Աշխենի համար, եթե նա գա և իմանա, որ Արմենակն այլևս չկա: – Պատկերացնո՞ւմ ես, հայրիկ, թե ինչ սարսափելի հարված կլինի Աշխենի համար, եթե նա գա և իմանա, որ Արմենակն այլևս չկա, - հարցրեց Եվան:


**194. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ես հավատացրի, թերևս համոզեցի նրան, որ հույսը իրական բան է, և հուսացողը կհաղթի:




**195. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Առաջին օրերը կարծում էի, որ նա ներում չի ստանա, բայց կարեկցության բուռն զգացումն թույլ չէր տալիս ինձ, որ մեղադրեի նրան:




**196. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Շատ անգամ ճակատամարտեց նա, շատ անգամ հաղթող դուրս եկավ, բայց մի անգամ՝ մի դժբախտ օր, անակնկալի եկավ. կիրճի մեջ շրջապատվեց թշնամու խմբերով:




**197. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Երբ մի անգամ նրա մոտ մտա, նա կռացել էր մի հիմ կոչիկի վրա, որը սեղմել էր ծերացած ծնկների մեջ, և կրունկին մեխեր էր խփում:




**198. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ես ասացի, որ նորություն չունեմ, և սկսեցի զննել սենյակը, որ մի շատ աղքատիկ, անզարդ և նույնքան էլ մութ սենյակ էր:




**199. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ես չվախեցա, որովհետև շունը հանգիստ նայում էր ինձ, և երևում էր, որ վրաս հարձակվելու ոչ մի միտք չունի:




**200. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Օրը կիրակի էր, գյուղը հանգստանում էր դաշտային աշխատանքներից, և այդ պատճառով դպրոցը լիբն էր աշակերտներով, ինչպես բացատրեց ուսուցիչը:




**201. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Երբ դասաժամը վերջացավ, և աշակերտները պիտի ցրվեին, ընկերու, որ շատ երգ սիրող էր, խնդրեց ուսուցչին, որ աշակերտները մի երգ երգեն:




**202. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Սիասին կարդում էինք, միասին զբունում, և անհավատակի չպիտի լինի, եթե ասեմ, որ զրեթե միասին ու միևնույն ձևով էինք խորհում միևնույն բանը:




**203. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Չափազանցված գուցե թվա, եթե ասեմ, որ այդպիսի մի գեղեցկուհի ո՛չ տեսել էի, ո՛չ երազել:




**204. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Թեև մենք իրարից մինչև օրս գաղտնիք չունեինք, բայց վերջերս զգալի կերպով նա լրակյաց էր դարձել, խուսափում էր խոսել այն զգացմունքների մասին, որ բռնկվել էին իր հոգում:




**205. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ես հանգստացած և նույնիսկ քննեցի, իսկ երբ զարքնեցի, տեսա, որ սովորական օրերից ավելի երկար եմ քննել:




**206. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Անցել են տարիներ, լույս եմ ընծայել բանաստեղծությունների մի շարք, որ հրաշքի ու կախարդանքի մի շրջան է բացել գործականության մեջ, թարգմանվել հայտնի լեզուներով. ամենուրեք հիացած են իմ հանձարով:




**207. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Այն դեպքից հետո, երբ քաղաքից դուրս երկու սրիկա հարձակվեցին վրան ու կողոպտեցին ժամացույցն ու քսակը, վարժապետն այլևս ժամացույց չառավ՝ ասելով՝ մարդ շատ ժամ ժամանակ կունենա, եթե քիչ մտածի ժամանակի մասին:




**208. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Վերադարձին խնդրել էր կնոջը, որ թե՛ վարձը տա, թե՛ ազատի բնակարանը, բայց կինը հրաժարվել էր՝ պատճառաբանելով, թե հիմա փող չունի:




**209. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Վարժապետը սկզբում չէր համաձայնել, ապա համաձայնել էր այն պայմանով, որ կինը գոնե վճարի վարձը, որպեսզի ինքն էլ կարողանա պանդոկում ապրել, և հարցը դրանով լուծվել էր:




**210. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Եվ տեսնում էր՝ այդ ճանապարհը ձգվում է ցորենի արտերի և խաղողի այգիների միջով, ծայրին մի սպիտակ տնակ կա, բակում՝ մի խնձորենի, որի վրայից երկու մասուկներ ժպտալով թարիկները մեկնում են իրեն:




### 211. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Առավոտյան տակավին նոր էինք նախաճաշի նատել, երբ մեծ եղբայրս այլայլված ներս ընկավ, զիսարկը մի կողմ ձգեց և ուզում էր խոսել, ուզում էր անկեղծանալ:




### 212. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Մեկիս գործած մեղքի համար երկուսիս հավասար էին պատժում, ու կարեղին այն էր, որ ոչ մեկս մյուսին չէր կշտամբում, քանի որ վերջին հաշվով նույնն էր ստացվում, որովհետև ինձ պատժում էին նրա մեղքի համար, նրան՝ իմ:




### 213. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Աշնան մեղմ արևի մեջ գեղեցիկ էին ծիծեռնակների լուս բները, այգու խճառքնիները, որոնք դեռ ունեին մի երկու խճառ, շիկավուն շունը, որը պառկել էր իմ ոտքերի մոտ ու ննջում էր, և կեռասի ծառը, որ հանկարծ սկսեց ծվծվալ:




### 214. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Ես հասկացա, որ աշնան մեղմ արևի մեջ ամեն ինչ գեղեցիկ է, և միակ տգեղը ես եմ, որովհետև ձևացնում եմ, թե գրքի պատճառով չեմ ուզում մեր խոզերը փնտրելու գնալ:




### 215. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Նրանք ինձ հազցրին բրդե տաք ու փափուկ վերնազգեստ, որ մայրիկս էր երեկոները գործել ինձ համար, հազնել տվյալները ուստինե տակերով թեթև կոչիկներ, որպեսզի կաշվե կոչիկներով խոտերի վրա հանկարծ չսայթաքեմ, և ինձ նայեցին գուրգուրանքով, քանի որ վերնազգեստն ինձ շատ էր սազում, և ես իրենց որդին էի:




### 216. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Ես տեսա ուրուրի գողունի թոփչը թփուտից թփուտ, բայց մտածեցի, որ շանը տանում եմ նույնքան կարևոր գործի, ինչքան կարևոր է հավերի հսկողությունը, և սուլոցով կանչեցի շանը:




### 217. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Մոմը, որն ամրացված էր ձեռագրի կազմի վրա, լուսավորում էր սենյակը, բայց այն շատ խավար էր, վանականները հազիկ էին կարդում մատյանները, կկոցում էին աչքները, որոնք ընտելացել էին խավարին:




### 218. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Ես նստեցի ծառի հետևյալ և որպեսզի խաբեմ ինքս ինձ, թե որն է բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին զիրքը:




### 219. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Տանջալից միտք էին անում մարդիկ, երբ մթին քարանձավից դուրս գալով՝ նրանց մոտեցավ մի մենակյաց իմաստուն, որ հասկանում էր հողմերի ու աստղերի լեզուն և մարդկանց բախտն էր գուշակում:




### 220. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:

Ասում են՝ Արագածի չորս կատարները չորս քոյրերի հավերժության հոլշարձաններն են, որ բարձրացել են իրենց սրտերի մեծության չափ, իսկ վերևում կախված Լուսաստղը մոր տրտմալի աչքն է, որ գիշեր-ցերեկ նայում է իր աղջկներին:




**221. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ես չգիտեմ՝ Թումանյանն արդյոք իմ խորհրդին հետևեց, թե գուցե մի ուրիշի խորհուրդը լսեց, երբ ես, սակայն, առաջին անգամ տեսա տպագրված «Անրախս վաճառականները», ծովի այն ալեկոծման երկար ու բավականին արհեստական նկարագիրը այլևս չկար:



**222. Ո՞րն է նախադասության ճիշտ գծապատկերը:**

Ուր քամիները սանձ չունեն և վազվում են խելագար թափով, և ժայռերը լալիս են մրրիկների հետ, այդ խրոխս լեռան կատարին մեն-մենակ ցցված է այս սգավոր ծառը, որ անհաս բարձունքից հսկում է աշխարհի վրա:



**223. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- 1) Առջևից գնում էր տարեց որսորդ Ավետը, նրա հետևից՝ Գարեգինը, իսկ վերջում՝ խմբի ամենակրտսեր անդամն էր՝ Աշոտը:
- 2) Հրացանդ պատրաստ պահիր, Գարեգին. այստեղ արջեր շատ կան, - զգուշացրեց Ավետ ապերը:
- 3) Կածանից պոկվող քարերը դդրյունով գլորվում էին ներքև, տեղահան անում ուրիշ քարեր ու մինչև ձորը հասնելը մեկը դառնում էր հազար:
- 4) Հեռվում՝ կապտարարույր մշուշի մեջ թաքնված, երեսում էր սարը՝ փեշերը պատած խիտ թփուտներով, իսկ կատարը՝ անտառով:

**224. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- 1) Միակ ուղևորը, որը լոելյայն նստած լաստանավի աջ եղրին, մի ձեռքով խաղում էր կապույտ կոհակների հետ, նկարիչ Փանոս Թերլեմեզյանն էր:
- 2) Տասներեքերորդ դարում՝ օրբատօրե փքքող Անի քաղաքում, ապրում էր մի իշխան՝ Անանիս անունով:
- 3) Փոքրիկներից ութ-ինը քայլ հեռու՝ հինավորց տաճ շեմին, նստած էր մի երիտասարդ կին՝ գույնգգույն զգեստով. նա այդ երեխաների մայրն էր:
- 4) Բոլորն արդեն զիտեին՝ պատվավոր հյուրը ժամանում է, և պատրաստվում էին լստ պատշաճի դիմավորելու նրան:

**225. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- 1) – Կրեմ-լցնեմ ամբարն ու գնամ գործի, - խորհում էր նա, բայց չէր շտապում. ծխում էր ու պտտվում ցորենի շեղչի շուրջը:
- 2) Հազիվ աչքը փակել էր՝ երբ քաղցից արյան ծարավի լվերը վխտալով հարձակվեցին փափկալենցաղ հյուրի վրա:
- 3) Դեռ լույսը չբացված էր հազնվել Հազրոն և թախտին մեկնված ծխում էր՝ սպասելով օրվա բացվելուն:
- 4) Դեմուղեմ հուռքի արտերն են՝ կանաչ գոտինով, բարձունքի վրա ծերուկ հովիվը, կոթնած իր անբաժան ձեռնափայտին, հետևում է ոչխարների հոտին:

**226. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ չկա:**

- 1) Դժվար էր ասել՝ ե՞րբ և ո՞վ էր կորիզը նետել եկեղեցու գմբեթին, բայց ավելի դժվար էր ըմբռնել՝ ինչպես էր կորիզը, հարմարվելով ճեղքում, ծիլ տվել:
- 2) Գիտեմ՝ եկող գարնանն էլ ծառը կծաղկի, հետո պտուղ կտա, և զյուղի տղաների հերթական սերունդը չհամբերելով կմագլի վեր՝ պոկելու դեռևս կանաչ պտուղները:
- 3) Հետո նրանք կնստեն վերևում՝ կիսավեր գմբեթի վրա, կսեղմվեն իրար՝ ճգնելով տեղավորվել ծիրանենու հովից թրթռացող ստվերում:
- 4) Նայելով ծառին՝ ես անընդհատ զարմանում ու մտքում հարց եմ տալիս.  
– Ինչպե՞ս ես դիմանում, ծիրանի՝ ծառ:

**227. Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Կարծում եմ, եթե ես այստեղ գայի հազար տարի առաջ, այս քարանձավները կինեին կենդանի տներ, բակերը՝ աշխատութ երեխաների գոռում-գոչյունից զվարք կզբնային, թոնիրներից հացի ախորժակ գրգռող բույր կելներ և գետը նման չէր լինի երգեհոնին, որի՝ վաղուց սիրելի դարձած հնչյուններն այժմ հնչում են ոչ ոքի համար:

**228. Քանի՞ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:**

Հինավորց եկեղեցու կորնթարդ զմբեթը խարիսլվել էր հիսուն-վաքսուն տարի առաջ, բայց ամբողջովին չէր ավերվել. մինչև օրս կանգուն է զմբեթի կեսը և հինա էլ վերև բարձրացող անմիտ հետաքրքրասերներից շատերը, չըմբռնելով այդ պատմական հուշարձանի կարևորությունը, իրենց անմահ անուններն են փորագրում գավթի՝ դեռևս կանգուն մնացած պատերին:

**229. Քանի՞ ստորակետ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Դիմացը նեղ ձորն էր ճանկոված վերքի նման լեռների ճերմակ մարմնին կպած ձորում հայրենի գետը սառցակեղև քարերի մեջ խեղդված և մանկության արահետը որ թփերի մեջ գալարվելով ձգվում էր դեպի գյուղ:

**230. Քանի՞ ստորակետ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Ապա Մուշեղը Վասակի որդին Սեծ Հայքի քաջակորով սպարապետը հայ բարձրաշխարհիկ ազնվականներից ընտրեց քառասուն հազար թրծված մարդիկ միաբան և միակամ ընտիր և հավատարիմ պատրաստեց նրանց համար երիշարներ զենք և ուտեստ ու բանակեց Աստրապատականի կողմերում հայոց աշխարհը անագորույն թշնամու ուտնագություններից պաշտպանելու:

**231. Քանի՞ ստորակետ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Փրփրահույզ ծովն էլ ասում են մարդու պես հոգի ու ճակատագիր ունի և մարդու պես թախծում է ու ցնծում պոռթեկում փորորկվում է ու հանդարտվում տառապում սառցե շղթաների ներքո և գարնան արևի առաջին շողերի հետ մոլեգնում ու կարեվեր խոցված գազանի նման փշրում է կապանքները:

**232. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Նրա դիմաց աստիճաններից քիչ ձախ դրան փեղկերի արանքում կանգնած էր տարօրինակ այցելուն իսկ միջօրեի արևի պատուհաններից թափանցող ոսկեզօծ ճառագայթները բեկվում էին նրա տարիների տառապանքից երեմնի փայլը կորցրած պղտոր ու փոքր-ինչ արնակալած աչքերի մեջ:

**233. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Ծերունու մտապատկերում արթնացան Մարութա սարը ճերմակ մետաքսաքողը դեմքին սարի փեշին գառնարած Զորոն մի պատանի այծի մորթուց կարած անդրավարտիքով որ կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը զարկված ագռավի պես թարտալով ընկնում էր ձորը:

**234. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Գետը թվում է կապույտ գոտի է անաղարտ ձյան վրա մոռացված որ ջրվեժ առ ջրվեժ խորանալով գնում-կորչում է երկարածիկ կիրճի մեջ:

**235. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Հանդիսատեսները կամաց-կամաց հոգնեցին ու ծանձրացան բայց աճպարարն այլս ոչ ոքի չեր տեսնում և ոչինչ չեր լսում նրա հիացմունքից հրդեհված հայացքը տեսնում էր միայն պտտվող ձիերին իսկ մարդիկ սառն ու անտարբեր առօրյա հոգսերով տարված ու անկարող ըմբռնելու այդ վեհ պատկերը հերթով լրում էին կրկեսը:

**236. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ նախադասության մեջ:**

Ով թերթել է արևելահայ մամուլը ուշադրության առնելով նրանում տպագրված բանաստեղծությունները չի կարող նկատած չլինել որ 1908-10 թվականներից սկսած այդ մամուլի էջերում բոլոր բանաստեղծությունները տերյանական են դառնում իշխում են տերյանական մշուշիներն ու տիսրությունը տերյանական բառնտրությունը արտահայտությունները մեղեղիականությունը:

**237. Քանի՞ բութ պետք է դնել հետևյալ հատվածում:**

Խորդութորդ ճանապարհի հոգնությունից ընդարձացած գնում էին ձիավորները ծանր մտքերի մեջ խորասուզված: Նրանք լուսայն ձիերն էին համեմատում իրար ուշիուշով դիտում որոշելու որի ձին կտանեն որինը կրողնեն որի սանձն ու թամբը տերը շալակած տուն կրերի:

**238. Ո՞ր նախադասություններում միջակետ պետք է դնել (նշել համարները):**

- 1) Ինչքան ժամանակ է անցել այդ օրից և միթե հնարավոր է այդքան նման երկու դեմք նույնիսկ նուրբ շրբունքներն ու նրանց շարժումներն են նույնը:
- 2) Ամեն անգամ երք կինը կռանում էր ուղղվում կամ քայլում խսիրի վրայով զնզում էին նրա թիվ արծարագօծ սուրմաները նրանց զնզոցը հիշեցնում էր քաղցրահնչյուն զանգակների մեղմ ծինգոց:
- 3) Առաքելոց եկեղեցին բռչունի նմանություն ունի միայն դիմացից նա բողնում է նատած վարդապետի տպավորություն:
- 4) Քարհատները հոգնել էին ու նրանց ձայները հազվադեպ էին լսվում չկար կեսօրվա աշխուժությունն ու եռանդը:

**239. Ո՞ր նախադասությունների մեջ բութ պետք է դնել /նշել համարները/:**

- 1) Բանաստեղծի բնակարանի ընդարձակ պատշգամբը կախված Թիֆլիսի բուսաբանական այգու գեղատեսիլ համայնապատկերի վրա հյուրերի զվարք հավաքույթների մշտական վայրին էր:
- 2) Այդ տան դրնով ներս մտնողը վայելում էր Թումանյանի միշտ համերաշխ ու ասպեցական ընտանիքի սրտարացությունն ու ջերմությունը ըմբոշինում տանտիրուիկի Օլգայի պատրաստած համեղ կերակուրմերը:
- 3) Սի օր երբ վաղորդայնին տնից դուրս էր գալիս Թումանյանը տեսնում է որ տանն ինչ-որ պատրաստություն կա հանել են մեծ ու փայլուն կարսան դրել կրակին:
- 4) Ելնում է տնից ու որտեղ պատահում է որևէ ծանոթի հրավիրում է իրենց տուն խաշ ուտելու:

**240. Ո՞ր նախադասությունների մեջ ստորակետ չպետք է դնել /նշել համարները/:**

- 1) Ինքն իր մեջ ամփոփված ու մռայլ այդ մարդը հազվադեպ էր խոսում որևէ մեկի հետ և շրջապատի մարդկանց իր անձին վերաբերող հարցերին անորոշ և կցկուոր պատասխաններ էր տալիս:
- 2) Բանտի իրեն թշնամանքով վերաբերվող միջավայրում նա նախկինում շատ բան չէր նկատում և չէր էլ ուզում նկատել զգվում էր ամեն ինչից և ամենքից:
- 3) Այս դիպվածից շատ տարիներ անց Սիրիում մի գյուղացի ներկայանում է դատարան զղաղով իր սահմոկեցուցիչ արարքի համար և խնդրելով դատել իրեն մարդասպանին:
- 4) Նրանք հաղթել էին պարսիկների մի զորամասի մարտից հետո սակայն ազատ արձակելով իրենց կողմից գերեվարվածներին:

**241. Ո՞ր նախադասություններում կետադրական սխալ չկա /նշել համարները/:**

- 1) Կամսարյանը, հանկարծակի եկած, մի վայրկյան մնաց անխոս, ապա նորից սկսեց նայել շորջը՝ տեսնելու այն, ինչ որ գյուղացին «գյուղ» էր անվանում:
- 2) Վերջինս տաճ աղյուսե պատին հենելով ձեռքի փողխը՝ անշտապ մոտեցավ հյուրին՝ քաղցրածվիտ ողջունելով և տուն հրավիրելով նրան:
- 3) Թագուհու՝ երփնավառ քարերից կերտված քարեզարդ առանձնարանը:
- 4) – Մայր Սեղա, - լուսաբանություն խախտեց քագուիին, - հիշու՞ն ես՝ մեկ-երկու ժամ առաջ հովանոցում ասացիր, թե վաղուց հայտնի է քեզ՝ ինչ վիշտ է կրծում իմ սիրտը, քայց չես համարձակվել խոսել՝ հավատացած լինելով՝ դրանով իմ վերքերը պիտի նորոգես:

**242. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում և-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Նա անդադրում քափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում անպարփակ վիշտը հոգու մեջ և ցավակից եղավ անօք մարդուն: 2. Առավ նրան իր սրտի մեջ իմացավ աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է և սերը մեկ: 3. Նա հյուսեց բոլորի համար իր երգը եղավ այլայլ երկրներում և մի օր վսեմափայլ երգիչը հոգնաբեկ վերադարձավ հայրենի տուն: 4. Երգի մրմունջով ելավ Արագածի գագաթը լուսահորդ ու ճերմակափառ և ընկողմանեց բույրիթույր ծաղիկների մեջ: 5. Շախրում էին ծիածանաթե հավքերի երամները վերը երկնի լազուրում և միմյանց ձայն էին տախս հոգեթրթիո դայլայլով: 6. Ներքընում նա տեսավ քաղաքներ շեներ և լսեց հայարան չնաշխարհիկ երգը հերկվորի:

**243. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում և-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1. Ծիկնեցին Մեծ ու Փոքր Մասհսների գագաթները և երկնքի կանաչ-կապույտը ժպտաց վաղորդայնի շողերով: 2. Արաքսը սրբնթաց դեպի Ծարուրի դաշտն էր տանում իր ջրերը լափլիզելով աջ ու ձախ կողմերի քարակարկառները և տեղ-տեղ ողողում ափամերձ տարածքները: 3. Դաշտավայրը գրկաբաց ողջունում էր հանապազորյա կյանքին և այստեղ-այնտեղ պլացիկ քարդիների արանքներից դեպի երկինք էին ոլորվում ծխի կապույտ ժապավենները: 4. Արաքսի ափին այգեստանների ծոցում առավտուն էր դիմավորում Արտաշատը և այն մատնում էր մայրաքաղաքի եռուզեռը: 5. Հարավարևմտյան մուտքի դուռը բացվել էր արդեն և երկու հասակավոր պահակներ աշքները գցել էին Արաքսի պղտոր ջրերին: 6. Դեմք ճգվում էր նեղ կամուրջը, որ դիմավորում էր գետի մոլեգին հարվածներին և երևում էր գարնանային վարարումը սպառնում էր նրա քարակերտ սյուներին:

**244. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում և-ից առաջ ստորակետը սխալ է դրված:**

1. Այդ պահին պարեկն ուշիուշով նայում էր դեպի հարավ-արևմուտք՝ Մասիսի կողմը, և այնտեղ ինչ-որ բան էր սկին տալիս:
2. Հայտնվեց կարճ ու գնդիկ մի զորական՝ կորովի շարժումներով, և ընդառաջ գնաց եկվորներին:
3. Նա մոտեցավ գրակալին, և վերցնելով մագաղաթյա մատյանը՝ զգուշորեն բաց արեց նշան դրած էջը:
4. Օրն այնպես քննուց էր, և շուրջբոլորը՝ խաղաղ, որ մղում էր միմիայն երազանքի:
5. Նրա թե՛ կշտամբալից, և թե՛ սպառնազին ձայնից սրափվեցին կովողները:
6. Այո՛, սրանք՝ այս զինվորները, և՛ ուժ են, և՛ հույս, և՛ կյանք:

**245. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում և-ից առաջ ստորակետը չպետք է դրվի:**

Հակասական կցկոտուր էին նախարարների մասին լուրերը և հոգեխոռով կասկածն ու վարանքը խեղորում էին Հովսեսի կաթողիկոսին: Հոգեհույզ սրտմաշուր էր ապրում Վեհափառը և նա փութագնաց սուրհանդակներ առաքեց երկրում մնացած նախարարներին խստագոյնս պատվիրելով անմիջապես գալ Արտաշատ: Մայրաքաղաքը լոել էր քաշվելով իր մեջ և իր տխուր օրվա վերջին ժամերն էր ապրում: Ասուն նախարարը թիկնապահների հետ քաղաքադռնից ներս մտավ և նժույզին խթանելով մոտեցավ կաթողիկոսի նստավայրին: Թիկնօթոցից վեր կենալով կաթողիկոսը բարեհամբույր դիմավորեց իշխանին որը փոքր-ինչ շառագունեց և նրա աջն առնելով մնաց կանգնած:

**246. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ստորակետի գործածության սխալ կա:**

1. Ահա հենց այդ կամարակապ շենքի խորքում՝ երեք զմբերի տակ, էր տեղավորվել հայոց առաջին տպարանն՝ այդ անդուր ու անպատուհան շինությունը:
2. Այժմ մեկնված խոնավ այծենականի վրա, թիկն տված մի քարաքեկորի, նա կիսարաց աչքերով նայում էր վաղորդայնի սառը շողերին:
3. Վանականների խցերը թաղված էին խոր լուսաթյան մեջ, և միայն ինչ-որ տեղից որպես սրտի հառաչանք լսվում էր գիշերահսկիչ վանականի թախծալի սաղմնուերգությունը:
4. Համարյա ամեն զիշեր արթնանում էր հանկարծ, տենդափայլ աչքերով նայում իր շուրջը, սակայն, գետնափորի թանձր խավարն ու գերեզմանային լուսաթյունը հիշեցնում էին, որ այդ բոլորն անդարձ երազ է:
5. Քիչ հետո նա զգուշորեն անցավ կամարակապ ու կիսախավար միջանցքը և, շունչը պահելով, ականջը մոտեցրեց սևացած դրներից մեկին:

**247. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում ստորագետի գործածության սխալ կա:**

1. Ծերունին, ինչպես երևում էր, մտքի թելք չկտրելու համար սկսեց տենդորեն լրացնել նախադասությունը մինչև վերջակետ, որից նրա դոդոջուն ձեռքի մեջ ավելի քախծալի սկսեց ճոճուալ եղեգնյա գրիչը:
2. Երբ Արարատյան ավերված աշխարհը վերջապես շունչ քաշեց նվաճողների կամայականություններից, Փիլիպոս կաթողիկոսը վերադարձավ Էջմիածին՝ կաթողիկոսի նստավայր և արագ զարկ տվեց ավերված կոթողների վերաշինմանը:
3. Երբ գալիս էր երեկոն, ու նրա արևավառ ամպերը հրդեհում էին շրջակա լեռները, նա մենակ նստած ճորաբերանի մի ժայռի վրա, հետևում էր ամպերի խաղին, ունկնդրում վտակի աղեկտուր խշշոցը:
4. Միրիկը թեև վտանգավոր չէր, սակայն ծովաջուրը առատորեն հոսում էր և քափիվում թիավարների թիկունքին, իսկ ուղևորները կուչ էին եկել՝ ծածկվելով, ով ինչպես կարող էր:
5. Ծովով նա պիտի անցներ խսպանական ափերով, ըստ ընդունված ուղեգծի՝ պիտի կանգ առներ մի քանի նավահանգիստներում, ապա մինչև Ամստերդամ պիտի կտրեր մոտ քասերկու օրվա ճանապարհ:

**248. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում քացահայտչից հետո ստորագետ չպիտի դրվի:**

1. Ի վերջո հեռագիր ստացվեց որ այսինչ օրը Սարոյանի աճյունասափորը ժամանում է երկու հոգու նրա մեծահարուստ ընկերների ուղեկցությամբ:
2. Մի խոսքով ինչպես ինքը քանաստեղծն է ասում իրեն ճանաչելը մի քիչ դժվար է ինքը մի քիչ քարդ է:
3. Նրա խոսքերը ինձ հայիս կարեվեր ցավ պատճառեցին առաջին անգամ էի նման քան լսում:
4. Գլխավոր հրապարակում Թերթրում ջահել տղաներ ու պարուիխներ էին կանգնած իրենց ներկապնակներով կտավակալներով պատրաստ նկարելու գրուաշրջիկներին:
5. Շուրջ եկավ իր մեծ երկրպագուն Մարտեն Հակոբյանն էր ճայն տալիս իրեն ձեռնափայտով օդում ինչ-որ շարժումներ անելով:

**249. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ստորագետի գործածության սխալ կա:**

1. Դեմքի ջղային կծկումով վեր կացավ տեղից, առանց հրաժեշտ տալու մոտեցավ սրճարանի դռանը, մի վայրկյան կանգ առավ ու դիմեց մեծ քանաստեղծին:
2. Ինչ-որ մեկի հուզարարավ ճայնից գամվեց տեղում. թվաց՝ ոչ թե մի մարդ, այլ ամբողջ սրճարանը ճայնեց իրեն:
3. Պոտղոմեոսը, հասկանալով գիտության կարևորությունը, սկսեց նրանից, որ հիմնադրեց գրադարան՝ դարձնելով այն գիտական հաստատություն՝ ակադեմիայի պես մի քան:
4. Ի վերջո, թող դա զարմանալի չթվա՝ կարգ է սահմանվում Ալեքսանդրիայի նավամատույցին մոտեցող ամեն մի նավի համար վճարել մի արժեքավոր մագաղաք, պապիրուս կամ նման մի քան՝ որպես մաքս:
5. Տարիներ հետո, երբ ես սրտաթրթիո հոգով ու անձկությամբ կուացա՝ Սեծարենցի ցուրտ շիրիմը համբուրելու, ինձ թվաց՝ նա՝ անզուգական պոետը, խոսեց ինձ հետ արևի հանդեպ տածած բուռն կարոտով:

**250. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում ստորակետի գործածության սխալ կա:**

1. Իմ փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ և երրորդ հարկերի մեջտեղում, իսկ նեղիկ պատուհանը բացվում էր հանդիպակաց տան կտուրի ուղղությամբ:
2. Այսօր էլ հիշողության դաշտում տեսնում եմ մեզ՝ հինգ անապաստաններիս՝ կանգնած վրան հնամաշ գորգ զցած, վիթխարի մի ծանրոցի վրա:
3. Մայրս, որ նավի օրորումից գունատվել էր, հենց ոտք դրեց գետնին, անմիջապես վերագտավ այտերի վարդագույնը, իսկ մորաքույրերս՝ Աննան ու Գայանեն, երջանկությունից բռչկոտում էին:
4. Ստեղծվեց ինքնատիպ մի այրութեն՝ երեսունվեց տառերով և հազարերեքհարյուրամյա լեզուն ձեռք բերեց սեփական զրանշանները:
5. Ահա այդպիսի մի եկեղեցում՝ մեր փոքրիկ աղոթատանը, քահանան, ինձ պահելով մկրտության ավազանի վրա, երեք անգամ տվել էր ավանդական հարցը:

**251. Տրված հատվածում նշել ստորակետերի քանակը:**

Մահամերձ էր մայրիկս հոգեվարքի մեջ: Անխոռվ հոժարակամ սպասում էր վախճանին որին սպասել էր ինչպես նավազնացության մեկնելուն են նախապատրաստվում: Անձնվիրության համարյա իննունամյա բարձունքում մինչ կփակեր կյանքի մեծ փակագիծը իմ դիմաց ծեր մայրիկս էր անփոփոխ անխաքար: Նա շուտով հեռանալու էր ինձնից և հարազատներին պարզեց տաքուկ ու հավատարիմ սիրո ութառունվեց տարիները պետք է վերջանային մի քանի վայրկյանում:

**252. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց տեղում ստորակետ պետք է դրվի:**

Պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված (1) հոմերոսյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են (2) հունական շողողուն առասպեկների տեսքով: Այդ առասպեկներում պատկերների են վերածվում վաղնջական հասկացությունները որ ունեին մարդիկ բնական երևույթների մասին (3) կամ ներկայացվում է աշխարհի թշնամական ուժերի նախնյաց պայքարը: Նրանցում մարդկային հոգու խանդավառ բնապահությունը (4) իր թարմությամբ զուգվում-զարդարվում է լույսի սաղարթների ու ջրերի հանդերձով: Հունական հրաշքն անհրաժեշտ էր (5) ողջ հին աշխարհը նախապատրաստել էր նրա զալուատը: Բեղուն լրության մեջ (6) երբ հելլենները իրենց մեջ կուտակում էին հողի ուժը (7) Եգիպտոսն ու Ասորեստանը պահպանում էին իրենց առաջնությունը: Դարաշրջանի վաղնջության շունչը սակայն (8) նրանց տիրել էր (9) թևարափ արել:

**253. Նշել այն նախադասությունների թվակամարները, որոնց տեղում ստորակետ պետք է դրվի:**

Մուշեղ բերդակալը սակայն (1) ավելորդ համարեց կանանց զրույցներին մասնակցել: Նա մինչև անգամ կարողիկոսի մոտ չմնաց (2) թեպետ կցանկանար նրա իմաստուն խոսքերը լսել: Այդ ճիշտ է (3) մեծ բախտավորություն կլիներ նրա համար բայց նա պարտաճանաչ մարդ էր և զիտեր (4) իրավունք չունի իր հոգու վայելքով տարվելու: Այդ պատճառով էլ հենց որ Վեհափառի բերած լուրն իմացավ (5) անմիջապես դեպի զորանցները աճապարեց և առանց վայրկյան իսկ հապաղելու սկսեց ամրոցի պաշտպանության համար հարկ եղած կարգադրություններն անել: Լինելով փորձառու ռազմագետ (6) նա զիտեր (7) թշնամին շատ անգամ հարձակվում է այնպիսի ժամանակ (8) երբ ոչ ոք չի սպասում նրան:

**254. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:**

1. Հիշեց սպարապետի Հայոց աշխարհի պաշտպանության մասին հրամանն ու պատվերները Տիգրոն գնալուց առաջ:
2. Մի պահ Ատոմը կարկամեց անակնկալ էր այս ամենը չտեսնված չլսված և անկարող եղավ միանգամից ըմբռնել ինչ կատարվեց իր աչքերի առջև:
3. Երկիրը տագնապի մեջ էր և ինքը Գնունյաց իշխանը պատասխանատու լինելով երկրի առջև արձակեց երկիրը պաշտպաննելու իր հրամանը:
4. Մինչ Արծվին կապտասխաններ երկրորդ նետք սուրաց պարզ էր նետաձիգը հեղեղատի մյուս ափին էր իրենց դեմ դիմաց:
5. Փախչողի նժույգը արագուտն ու կատաղի ճարպկորեն թոցնելով հեծյալին վերջապես հասավ Արծվին նժույգին:

**255. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:**

1. Իբրև հպատակ երկրի հեծելագունդ այրումին Գարեգին Սրբանատյա իշխանի գլխավորությամբ մասնակցում էր պարսից արևելյան թշնամիների դեմ մղվող անվերջանալի պատերազմներին:
2. Բայց և զիտեր ուրիշ ճամփա չկար միմիայն այս անբարբառելի տաժանքների միջով անցնելով էր այրումին փրկվելու և Հայոց աշխարհի հասնելու:
3. Սահմոկում էր Գարեգինը որը սկզբում մաքառում էր ճիզ բափելով սակայն ի վերջո ինքն էլ ընկրկեց ու դաժանացավ սրտում մի խոր ու ցավագին խայթ:
4. Նրա միտքը թուավ-հասավ հայրենի եզերը Տարոն Մշո խաղաղ անդաստանները ուկեծուի արտերի պաղպաջուն ջրերի հոգին ջերմացնող հեքիաթային շշունջներով օծված:
5. Այնտեղ արևագալին շեների երդիկներից երկինք էին ձգվում ծխի կապույտ քուլաները հետո սայլվորներն են դուրս ելնում շարժվում դեպի հանդերը դաշտային աշխատանքի:

256. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:

1. Ωικαιωνική στολή με παντελόνια και πουκάμισο ή παντελόνια και πουκάμισο με γιλέκο. Τα παντελόνια δεν πρέπει να είναι παντελόνια με λάστιχο ή παντελόνια με τσέπη. Τα πουκάμισα δεν πρέπει να είναι πουκάμισα με λάστιχο ή πουκάμισα με τσέπη.
  2. Στολή με παντελόνια και πουκάμισο με γιλέκο ή παντελόνια και πουκάμισο με τσέπη. Τα παντελόνια δεν πρέπει να είναι παντελόνια με λάστιχο ή παντελόνια με τσέπη. Τα πουκάμισα δεν πρέπει να είναι πουκάμισα με λάστιχο ή πουκάμισα με τσέπη.
  3. Στολή με παντελόνια και πουκάμισο με γιλέκο ή παντελόνια και πουκάμισο με τσέπη. Τα παντελόνια δεν πρέπει να είναι παντελόνια με λάστιχο ή παντελόνια με τσέπη. Τα πουκάμισα δεν πρέπει να είναι πουκάμισα με λάστιχο ή πουκάμισα με τσέπη.
  4. Στολή με παντελόνια και πουκάμισο με γιλέκο ή παντελόνια και πουκάμισο με τσέπη. Τα παντελόνια δεν πρέπει να είναι παντελόνια με λάστιχο ή παντελόνια με τσέπη. Τα πουκάμισα δεν πρέπει να είναι πουκάμισα με λάστιχο ή πουκάμισα με τσέπη.
  5. Στολή με παντελόνια και πουκάμισο με γιλέκο ή παντελόνια και πουκάμισο με τσέπη. Τα παντελόνια δεν πρέπει να είναι παντελόνια με λάστιχο ή παντελόνια με τσέπη. Τα πουκάμισα δεν πρέπει να είναι πουκάμισα με λάστιχο ή πουκάμισα με τσέπη.

257. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:

1. Ողջ կյանքում ճիշտ է միայնակ եր եղել բայց աչքերի լուսից զրկվելոց հետո անսպասելիորեն պրոդում եր առանձնության աքցանից բիրտ ու դժինեմ:
  2. Թող տեսնեն ու խմանան գայլ Արշավիրն օրհասական ժամին իրենց հետ է մտածեց և անեղնափայտին կորնած դուրս ելավ դաստակերտից քայլերն ուղղեց բլուրն ի վեր:
  3. Ամեն անգամ օտար երկրներում շրջագայելիս նոր աշխարհներ տեսնելու հաճույքի հետ ճիշտն ասած մեջս միշտ ապրել է տուն վերադառնալու սպասման երանությունը:
  4. Եվ չգիտեմ ինչու որոշում եմ տուն հասնելու հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նատեմ ու գնամ Թալինի շրջանի Վերին Սասնաշեն գյուղը ուր ազգականներ չունեմ իսկ ընկերներ շատ:
  5. Հարցուփորձ անելով գտա տունը և պարզվեց տանտեր Գևորգ Հակոբյանը գնացել է Զերմոնկ բուժվելու:

258. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:

1. Նա ասում էր ամենից ավելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ ինքն է ուզում ծափահարել Լուիզային բեմի վրա բայց ոչ այստեղ Օդեսայում այլ այնտեղ Իտալիայում:
  2. Նա է նա ինքը որովհետև նույն հնչյուններն են այս անգամ արդեն առնականորեն հարուստ, նաև վեհասալաց:
  3. Մեկ ամիս անց Տիգրոնից եկավ մի նոր բարձրաստիճան սուրիանդակ հայտնելու արքայից արքան իր քաղաքն է հրավիրում նաև տիկին Փառանձեմ թագուհուն:
  4. Միակ նարդը որ կողմնակից էր պարսից արքայի հրավերն ընդունելուն Հայր Մարդպետն էր պալատի և բազավորական տան կալվածքների կառավարիչը:
  5. Թագուհին դիմեց դեպի նեղ կամարակապ պատուհանը որ նայում էր Գեղա լեռան բարձունքներին և որտեղից մեղմ սյուրն էր մտնում սենյակ կարծես հովացնելու բազուհու հովանունքից այրվող հոգին:
  6. Կարծես ծանր աշխատանքից հոգնարեկ նա աչքերը դարձեց դեպի Սեղան ոքք ձեռքերը կրծքին խաչած լուր անհազած շրջապատից նայում էր հեռուն:

**259. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում մեկից ավելի բութ պետք է դրվի:**

1. Գարդմանն այն ժամանակ հույս էր ներշնչում նրա տերը Սահակ Սևադան հսկում էր այնտեղ մի հզոր առյուծի նման:
2. Դեռ ամրոցի մատուցներին չհասած նա լսեց եղջերափողի երեկոն ավետող ձայնը որ նշան էր ամրոցը փակելու:
3. Մոտակա գյուղերից հավաքված լծկան եզներով շարունակ դեպի քուուի ափն էին տարվում հսկայական գերաններ որոնք եգերացները ուղենու դալար ճյուղերով կապկալով միացնում էին և լաստեր կազմում իջեցնելով գետը:
4. Մի քանի հազարից կազմված հեծելախմբերը բռնեցին գետափի ուղղությամբ ձգվող դաշտավայրը դասավորվելով շարքերով որոնցից յուրաքանչյուրին առաջնորդում էր մի իշխանազն զորավար:
5. Չինվորները թեպետ համակ գրահազգեստ թաքցրել էին նիզակներն ու վահանները կարծել տալու համար թշնամուն զինված չեն գալիս իրենց մոտ:

**260. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բութի գործածության սխալ կա:**

1. Հոմերոսի պատմության ամենից լուսաճաճանչ մտքի հնոցում ծնված պոեմները վերացած աշխարհի արձագանքն են՝ հունական շողշողուն առասպելների տեսքով:
2. Դարաշրջանի վաղնջական շունչը, սակայն, տիրել էր նրանց, թևաթափ արել. ջահը գունատվելով՝ հետզհետե թերվում էր նոր ցեղի կողմը:
3. Հելլենական ակերի և Միջերկրականի կենտրոնում գտնվող կղզիների բնակիչները տեսնում էին՝ ինչպես են ծովի խորքից ավելի ու ավելի շատ առագաստներ գալիս դեպի իրենց կողմը:
4. Բացված ձեռագրի մի կեսը թվում է՝ կապույտ ստվերի մեջ է, մյուսը՝ երկարյա եռաժանի մոնակալի դեղնակարմիր կայծկլտուքների տակ, և նրա վրա փայլվելով նշմարվում էին նոտրագիր տողերը:
5. Նրանից քիչ հեռու՝ կաղնեփայտե սևացած գրակալի առջն՝ կապարե գրիչը ատամների մեջ սեղմելով, քսանամյա Աստվածատուրը թերթում էր հայ-լատիներեն բառարանը:

**261. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բութի գործածության սխալ կա:**

1. Հետո տրորեց քունքերն ու վեր կենալով՝ քաշեց գրապահարանի վարագրուրը և վերցեց ուղտի դեղնավուն կաշվով պատած տեսքը՝ դարչնագույն մանր նոտրագրով լցված:
2. Միալար անձրևն ու լուսակնատներից փշող միջանցիկ քամին իրենց՝ տիհաճություն բերող սարսուներով ավելի էին խորացրել այն թախիծը, որ նրան տիրել էր՝ աշխատանքն սկսելիս:
3. Այդ պահերին նա կանգ էր առնում, նայում վեր և փակ կոպերի առջև լողացող մանուշակագրույն անսահմանության ջերմությամբ երջանիկ՝ հիշում Միքուզի խիստ պատվերը՝ կազմուրվել, ամրապնդվել:
4. Հակառակ դրան Ուսկան արեղան բարձրահասակ էր. փաթաթված այծենու սև սքեմի մեջ՝ նա արձանացել էր վարպետից մի քանի քայլ հեռու և հետևում էր վլճնի կախարդական խաղերին:
5. Ինչ էր մտածում այդ պահին՝ դժվար էր ասել. նրա երազուն աչքերը գամվել էին ասես կախարդական ծաղկազարդերից ծնունդ առնող աղավնաք հրեշտակի վրա:

**262. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բուքի գործածության սխալ կա:**

1. Արեղան երբեք՝ ոչ մի տեղ՝ ոչ երազներում, ոչ եկեղեցիների յուղաներկ սրբապատկերներում, չեր տեսել այդպիսի կենդանի հրեշտակի՝ այնքան հարազատ, այնքան ծանոթ:
2. Այդ շինվածքը, որ ծաղկանոցի շարունակությունն էր, կառուցվել էր հեռավոր գավառներում բնակվող ուխտավորների համար, որոնք եկեղեցիներ չունենալու պատճառով՝ ամեն տարի գալիս էին տոնակատարությունների:
3. Երբեմն գլուխը հետ զցելով՝ կլցած աչքերով՝ նայում էր փորագրվածին, հետո՝ դեպի կայարանի խորքը և ինչ-որ բառեր շշնջում:
4. Առանց սրեմի, միայն շապիկով, որի թևքերը վեր էր քշտել՝ երևան հանելով հաղթ բազուկները, ավելի նմանվում էր երիտասարդ փայտահատի, քան վանականի:
5. Մոտենալով վարպետին՝ Ռուկանը ծնկի էր իջնում նրա կողքին և մեկ-մեկ նայում արդեն փորագրված պատրաստի ծաղկատառներին. ո՞վ գիտի՝ մեկ էլ ե՞րբ կտեսնի:

**263. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բուքը դրված է ստորոգյալի գեղջնան տեղում:**

1. Զոհրապը մի քանի ձնագնդի սարքեց մայրերի փեշերի մոտ կանգնած երեխաների համար, հետո՝ իր ու կնոջ համար, և սկսեցին դրանք ուրախ նետել միմյանց վրա:
2. «Կովկասի» տապալման երկրորդ պատճառը հաճախադեպ ապառիկ վճարումներն էին, որովհետև այցելուները՝ մեծ մասամբ ուսանողներ, ուտում-խմում էին, պարտքատերում ստորագրում էին ու անհետանում:
3. Զոհրապը ապշած էր նրանով՝ նրա երկիհարկանի տների ծաղկազարդ պատշգամբներով, խաղողի՝ պատերն ի վեր ձգվող որթերով, աշխույժ փողոցներով:
4. Նրանք՝ այդ վառվուն երիտասարդները, հաճախ իրենց հետ բերում էին գերմանացի երաժշտասեր ուսանող-ուսանողուիների, որոնք գալիս էին ոչ միայն երգելու, այլև հայերեն հոգևոր երգեր լսելու:
5. Նրանց մի մասը կովում էր աշտեներով, երկար նիզակներով, մյուս մասը՝ նետաձիգ գնդերը՝ լայնալիճ աղեղներով ու թունավոր նետերով:

**264. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում բուքը դրված է բացահայտչի տեղում:**

1. Արքայի նավակը՝ դրոշներով զարդարում, գնում էր առջևից, իսկ լաստերը զույգ-զույգ հետևում էին նրանց:
2. Դրանք ամենօրյա գրառումներն էին՝ երբեմն երեք-չորս տողից ոչ ավելի, որ երևի ապագայում պիտի դառնային նոր ծրագրած հուշամատյանի հենքը:
3. Ամենափրկիչ վանքի բակում՝ հարավային պարսպի տակ գտնվող գետնախորշում, քրքրված այծենակածի վրա թեք էր ընկել Ռուկանը:
4. Հայոց գետերի հինգ մեծամեծ նահատակները՝ Տիգրիս, Եփրատ, Քուր, Երասխ, Փասխ, իրենց վրա կամորջներ չէին հանդուրժում:
5. Իմ դժվարին ճանապարհին ամեն տեսակ դառնություններ եմ ճաշակել՝ երեսիս փակված դռներ, հեղնամբով ու արհամարհանքով լի ժայտներ, կատակի տակ սրողված շարախտություններ:

**265. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում բութով տրոհված է հետադաս ծավալուն որոշիչը:**

1. Մենք մի գաղթական հայ ընտանիք էինք՝ զուսպ, համեստ ու համերաշխ, կապված մեր լեզվին, սովորություններին ու եկեղեցուն:
2. Իմ կարիերայի՝ պարտություններով ու դժվարություններով լի առաջին տարիներին միշտ հայրս, մայրս, քույրս իմ կողքին էին:
3. Իմ փոքրիկ սենյակը՝ առանձին սանդուղքով ու մուտքով, գտնվում էր տան երկրորդ ու երրորդ հարկերի մեջտեղում:
4. Տուփի քացեցի. քավշյա բարձիկի վրա դրված էր մի ոսկեկուտ հրաշալի մատանի՝ վրան իմ անվան սկզբնատառերը փորագրված:
5. Մարսելի գերեզմանոցը՝ նոճիածածկ ծառուղիներով, ոսկետառ շիրմաքարերով, քամիների ժամանակ լցվում էր պշրագեղ դաշտերի և սոճուտի օգլխիչ խեժահոտով:

**266. Նշել այն նախադասության թվահամարը, որում բութի գործածության սխալ կա:**

1. Իմ՝ ինժեներական դպրոց ընդունվելու առիթով սրտի ավելորդ գեղումներ չեղան, որոնք ավարտվում են գրկախառնումներով կամ մեջք թիրֆացմելով:
2. Մարդ պետք է վարժ լիներ նրանց՝ խորաքարույց և խոսուն աչքերի շարժումներին, որպեսզի կարողանար նկատել, որով մեկը մյուսին հայտնում էր՝ ժամանակն է:
3. Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը՝ Հին Եգիպտոսն իր բնեոներով, Բարելոնն ու Ասորեստանն իրենց գրանիտե մորուքավոր ցլամարտերով:
4. Հայր Վրբանեսի՝ կղզու մասին պատմությունն ինձ ծանոթ էր. Սերաստացի Միհթարը Վենետիկի հոգևոր խորհրդից ստացել է և հայ կարողիկական միաբանություն հիմնադրել:
5. Թող ինձ ներեն աշխարհի չորս ծագերում ապրող վանեցիները, եթե իմ վեպի՝ ընթերցողին անսովոր մեծ ու փոքր կերպարները ներկայացվեն ոչ որպես սրբեր:

**267. Տրված հատվածում նշել բութերի քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

Սենյակի դուռը բացվեց հայրս էր մեջքը ուղիղ աչքերում քնքշության ցոլքեր և հոգնությունը քողարկող ժպիս: Կոացավ համբուրեց ինձ մի քանի օր չսափրված մարդու սիրո այդ սրտառուց արտահայտությունը այտերս ծակող համբույրը հանկարծ ինձ համար բացահայտեց հորս որոշումը որ նա կայացրել էր մի երկու օր առաջ այն երեկո երբ միջնորմի հետևից թաքուն փորձում էի լսել նրա և նորս մորաքոյլերիս Աննայի ու Գայանեի խոսակցությունը բայց չկարողացա թեև ականջներս սրել էի:

**268. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց տեղում բութ պետք է դրվի:**

Գարնանային գիշերն արդեն կիսվել էր (1) նա դեռ երկար նայում էր անորոշ մի կետի: Հետո տրորեց քունքերն ու վեր կենալով (2) քաշեց գրապահոցի վարագույրը: Սկզբում նա ձեռքը վերցրեց ուղիղ դեղնավուն կաշվով պատված (3) նեղ ու երկարուկ տեսքը (4) դարչնագույն մանր նոտրագորով լցված: Դրանք ամենօրյա գրառումներն էին (5) երբեմն երեք-չորս տողից ոչ ավելի: Սերբռնդմերք թևավոր խոսքերի փոքրիկ գրչանկարների հետ միասին հանդիպում էին այլաբանական երկտողեր թե հայ և թե օտարազգի բանաստեղծներից: Հետո նա թերեց այն էջերը որոնք վերաբերում էին իր վաղ պատանեկությանը (6) երբեմն չափից ավելի կանգ առնելով միայն իրեն հայտնի դեպքերի վրա: Այդ պահերին ցավագնորեն կծկվում էր նրա (7) մոմի լույսից կաթնավուն դարձած դեմքը: Զգիտես ինչո՞ւ (8) նրա հայացքը կանգ առավ գրառումների քանիյոթերորդ էջի պարբերության վրա այն պարզ է (9) Եզվիտ Պարուսացի դարանակալ թշնամու մասին էր:

**269. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնց տեղում բութ պետք է դրվի:**

Երկու շաբաթից ավելի էր (1) նա գտնվում էր այդ գետնափորում և մենության մեջ դառն ու անհուսալի խոհերը հետզհետե ջլատելով նրա ուժերը (2) գերեզմանային թմրություն էին բերել հոգուն: Խավարի մեջ հազիվ գծագրվող դեմքն այժմ արտահայտում էր խոր հուսահատություն և շողերի վրա գամփած աչքերն անշարժ էին (3) ինչպես մեռյալի աչքերը: Նա բարձի փոխարեն զիլի տակ էր դնում կաշեկազմ «Նարեկը» (4) այն ընթերցելու և հոգով ապաշխարելու համար: Ամեն առավոտ (5) օրվա ուտելիքը բերելիս սպասավորը միշտ դժգոհում էր որ հայր սուրբը սպասին ձեռք չի տվել: Արեղան տխուր ժպտում էր (6) հանգստացնում պատանուն (7) ասելով (8) լավ է զգում: Ու սկսում էր հարցուփորձը (9) դրսի աշխարհից ակնկալելով նորություններ:

**270. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում միջակետ պիտի դրվի:**

1. Ամստերդամ հասնելու համար նա երկու ճանապարհ ուներ մեկը ցամաքով որ ընդամենը մի ամիս կտևեր մյուսը ծովով որ կրկնակի ճանապարհ պիտի խլեր նրանից:
2. Դեռ ուսանելու տարիներին Ներսես Մեծը Կեսարիայում ապրում էր կնոջ Սանդուխտի հետ Սանդուխտը վախճանվեց այդ նույն քաղաքում որտեղ ծնվեց Սահակը:
3. Ես քափ-քրտինք կտրեցի դողացի ամբողջ մարմնով հանդիսատեսը լուռ էր ու անտարբեր:
4. Ահա և վարագույրն է բարձրանում տեսա բոլորը ոտքի են ելել և ակնթարք իսկ չանցած դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից:
5. Վարագույրը բացվեց և ես պետք է բեմ մտնեմ բայց ինձ այնպես եմ զգում կարծես ուզում եմ ջուրը նետվել սակայն լողալ չգիտեմ:

**271. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում միջակետ պիտի դրվի:**

1. Հայրս դասավորեց ճամպրուկն ու վերցրեց իր գործիքը պատերազմ լիներ թե չլիներ նա չէր ուզում բաժանվել թառից և հետմիջօրեին ճանապարհ դրինք նրան:
2. Բայց Ազնավորյանների ընտանիքին օգնելու ժամանակը ամենայն հավանականությամբ դեռ չէր եկել անբարեհաջող դեկավարման և անօրինակ ճգնաժամի հետևանքով երկար հոգեվարքից հետո ռեստորանը փակվեց:
3. Նրանք միակն էին որ արդարացրին հորս վատահությունը ու այդ էր պատճառը անկասկած որ հայրս երկար ժամանակ ուզում էր շրջել Աղիս Արեբայում դեռ պատանեկան տարիների երազանքն էր դա:
4. Ինչպես է հորս հանդիպել երբ և որտեղ են ամուսնացել չգիտենք չկան եկեղեցիներում պահպանվող պսակադրությունների մատյանները ավաղ մեր եկեղեցիները թալանվեցին ու ավերվեցին:

**272. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում միջակետ պետք է դրվի:**

1. Այդ ինձ չքավարարեց և ես ուզեցի ընթերցողին դարձնել վանեցի ուր էլ նա ծնված լիներ:
2. Ուշ երեկոյան մարում են հինավորց քաղաքի տների լույսերը առտնին հոգսերից առօրյայի խոլ աղմուկից հոգնարեկ քաղաքը փակում է իր թարթիչները:
3. Եթե իմ հաջողվել է իմ այրվող այգեստանների ծովար հասցնել մեր մեծ նախնիների ստեղծած կորողների բարձրությանը այն ժամանակ ես հանգիստ սրտով կարող եմ ապրել:
4. Քաղաքը հեռվից հեռու նման է մի փթթուն անտառի երբ ներս ես մտնում նրա կանաչ դարպասներից առաջդ բացվում են ծառաստանների մեջ թաքնված տները:
5. Հյուրերին դիմավորեց Միհրանը այդպես էր քահանայի անունը և խորին ակնածանքով ողջունեց նրանց տարավ լայն բացված պատուհաններով մի օրեան:

**273. Նշել այն նախադասությունների թվականաբները, որոնցում միջակետի սխալ գործածություն կա:**

1. Այս անգամ, սակայն, արյունը հակառակ ազդեցություն ունեցավ. ամբոխը մի պահ սոսկահար կարկամեց, վիրավոր գազանի նման գալարվեց ու առաջ շարժվեց:
2. Եվ կատարվեց անկարելին. դիպուկ գնդակներից ընկնող անհամար զոհե՞րը, թե՞ քայլերգը ազդեցին գրոհող խաժամութիւն փրա. դժվար է ասել:
3. Ու մի օր Էլ. 1908 թվականն էր արդեն, թուրք սահմանադրության թիթեյա զանգերի դողանջները ականջին հասան:
4. Ես չհավատացի աչքերիս. Ակսելը լալիս էր, և հորդ արցումքները ողողել էին տիսրամած դեմքը:
5. Քարձրանում ենք Սեծ լոռեցու առաջին ապրումների կախարդական օրուանը՝ Դսեղ. սա այն ճանապարհն է, որով մարդ չի կարող անցնել առանց սրտաբրթիո զգացումների:

**274. Տրված հատվածում նշել միջակետերի քանակը (նախադասությունները կետադրված չեն):**

Չնայած չափազանց բուլությանը մայրիկս ձեռքը դանդաղ հանում էր վերմակի տակից գուցե այլևս չի էլ տեսնի ինձ սակայն մատները խարխափում են սավանների վրա ուզում էր հանդիպել իրեն պարզած ձեռքերիս: Տենդորեն ծվարելով սիրո այդ հեղեղի մեջ սեղմում են նրա գունատ նրբացած ձեռքը որ հավատացնեմ այստեղ եմ: Նայում են սպիտակ գեղեցիկ ձեռքերին թվում էր նրանք կրում են ասեղով աշխատելու հին հետքերի ազնվությունը: Ժամանակի անընդհատ հոսքի մեջ երբեւ չենք ասել թե սիրում ենք միմյանց ընդհանուր խոհեմությամբ վախենում էինք ընդգծել շարունակական անքարույց ճշմարտությունը:

**275. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում փակագծեր պիտի դրվեն:**

1. Հաջորդ օրը առավոտյան գնացինք Սուրբ Ղազար կղզի Վենետիկ այցելող հայը ուխտավայր դարձած այս կղզին տեսնելու առիթը չպիտի բաց թողնի աշխարհի բազում նշանավոր մարդիկ են եղել այստեղ:
2. Շունն անմիջապես հորս ճանաչեց պոչը ճոճելով մերքընդմերթ հորս ոտքերին քանսվելով այս էր նրա գոկության և ուրախության արտահայտությունը մեզ առաջնորդեց մինչև վանք:
3. Եկեղեցու ներքին բակը մի եղենական պարտեզ է գեղեցիկ ծառերով ու վարդի թփերով զարդարուն այստեղ է հանգչում Միսիքար արքահոր սուրբ շիրիմ:
4. Հայրս պատմեց նա սիրում էր պատմել հայտնի մարդկանց մասին որ երբ անգլիացի մեծ քանաստեղծը ինչ-որ ժամանակ գալիս է Վենետիկ այցելում է նաև Սուրբ Ղազար կղզի ուր սովորում է նաև հայերեն:
5. Եվ իհմա իհսուն տարի անց նստած եմ դեմ հանդիման հոլիվուդյան այդ կենդանի կինոեգենդի հետ իր ամառանոցում այդ տաղանդավոր հայը տասնամյակներ շարունակ ցնցել է կինոաշխարհը:

**276. Նշել այն նախադասությունների քանակը, որոնցում փակագծեր պիտի դրվեն:**

- Ես հաճույքով ունկնդրում էի Անրիի հայերենը պետք է խոստովանեմ նա լավ էր տիրապետում հայերենին նրա հանդարտ ու առնական ձայներանգը և մենք փայրկյան առ վայրկյան հարազատանում էինք:
- Նա խոսում է իր կարոտի և Հայաստան գալու ցանկության մասին հպարտանում է մեր վերածննդով զայրույթով հիշելով 1915 թվականը այդ պահին նրա աչքերը լցվում են ցասումով:
- Լու Անջելեսի կինոսրահներից մեկում կայանալու էր «Մուսա լեռան քառասուն օրը» ֆիլմի առաջին դիտումը Մամուլյանը ափսոսանքով հայտնում է որ տարիներ առաջ չի կարողացել նկարահանել Ֆրանց Վերֆելի այդ երկը:
- Վարագույրը բարձրացավ տեսա բոլորը ոտքի են ելել ակնթարք իսկ չանցած դահլիճը թնդաց որոտընդոստ ծափերից:
- Այս աշխարհից հեռանալու գաղափարը ի դեպ այն միշտ ուղեկցում է մարդուն որքան էլ չուզենաս դառնում է գիշերներիդ անմելին ուղեկիցը և հավատացյալ ես թե ոչ ընկնում ես կյանքի ու մահվան անլույծ հարցումների մեջ:

**277. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում փակագծեր պետք է դրվեն:**

- Երազում էի անդորրավետ մի անկյուն աշխարհից ու աղմուկից հեռու ուր կտեղափոխենի իմ դաշնամուրն ու գրասեղանը կկարողանայի ներանձնանալ խորհել ու թղթին հանձնել երգերս միայն այս ձևով կգտնենի հանգիստ:
- Ի վերջո դժվար կյանքս ու խարված սերերս են որ ինձ դարձին այն ինչ կամ և համարձակվում եմ ասել և հավատացեք սա ինքնազովություն չե ես ինձ դուք եմ գալիս:
- Քաղաքի այս թաղամասն ուղղակի անօրինակ ու անկրկնելի էր գեղեցկության ու արվեստի սիրահար Զոհրապը ապշած էր նրանով աշխույժ փողոցներով բազմամարդ հրապարակներով:
- Շուրջըլորը գույների ժայռերի տոռն էր ամեն ոք անում էր այն ինչ անցնում էր իր մտքով բայց բոլորը միասին ստեղծում էին մի հերիաքային վառ ու գունեղ փարիզյան մթնոլորտ:

**278. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում փակագծեր պետք է դրվեն:**

- Զոհրապը մտավ Լատինական թաղամաս կամ ինչպես անվանում են Ուսանողների հանրապետություն Սորբոնի վաթուն հազար ուսանող ունեցող աշխարհահոչակ համալսարանն այնտեղ է գտնվում հանդիպելու էր Արշակ Չոպանյանին:
- Երկար ժամանակ այդ գրադարան-ակադեմիայի տնօրենն էր Էրատոսթենեար որն առաջինը չափեց այն էլ ապշեցուցիչ ծզգրտությամբ սա անհավատալի կարող է թվականի տրամագիծը:
- Ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցարույր զեփյուռը շոյում էր նրա գրգռված նյարդերը և պարզեցում հոգեկան անդորր Աստվածատուրն իրեն գրեթե կազդուրված էր զգում:
- Երկար ժամանակ պառկած լինելուց նա քայլում էր հաճելի գլխապտույտով սիրում էր մենակ զրոսնել և մերթընդմերք թիկունքի տակ զգում սպիացած վերքի թույլ տնքոցը:
- Երբ սպարապետը մոտեցավ նրան մարդը արդեն երևաց տարեց մի գեղջուկ էր անվրդով նայեց եկվորին վեր կացավ արժանապատվորեն բարեկով:

**279. Նշել այն նախադասությունների քանակը, որոնք ճիշտ են կետադրված:**

1. Եվ լրելյայն մի իրարանցում սկսվեց. տանտիրուիին թեքվում, երեխաների ականջին ինչ-որ բաներ էր ասում և ճամփու դնում:
2. Հիմա էլ նոյն զգացումն եմ ապրում Միացյալ Նահանգներում՝ զարմանք պատճառելով թե՛ ուղեկիցներիս և թե՛ հյուրընկալ հայրենակիցներիս:
3. Եվ, չգիտեմ ինչու, որոշում եմ՝ տուն հասնելուս հենց հաջորդ օրը ավտոմեքենա պիտի նստեմ ու գնամ Թալինի շրջանի Վերին Սասնաշեն գյուղը:
4. Քամին Արագածի արեկի ոսկեզօծումից զարթնող բնության թովչական գրկում աստղերի արցունքից գոյացած վճիռ լճակի փաղաքուշ հովը կրերի, հորդացած ջրերի խենթությունն ու ծաղիկների նրբարույրը:
5. Ուզեցի ափսոսանքով իրաժեշտ տալ, մի ուրիշ անգամ այցելելու խոստումով, բայց այդ լեռնուիին փխրուն ու փոքրամարմին, մեծ ուժով բռնեց թևերից՝ նստեցնելով սեղանի մոտ:

**280. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Ահա և ինքը՝ վարսունվեցամյա Վիլյամ Սարոյանը՝ Ֆրեզնոյի հյուրանոցներից մեկի նախասրահում կանգնած:
2. Ես, կանգնած տաճարի կենտրոնում, նայում եմ վեր. հայրատ եմ, որ այնտեղ՝ ամենավերևում՝ երկնքին մոտիկ՝ այն իրաշք զմբերն է, որ վերակառուցել է Տրդատ ճարտարապետը:
3. Մեր ուղեկարը՝ շատ գեղեցիկ մի թրբուի՝ Ստամբուլի համալսարանն ավարտած, ամենայն մանրամասնությամբ պատմում էր համարյա բոլոր որմնանկարների ու խճանկարների մասին:
4. Մեզ պատմում է նաև միջնադարյան զմբերի կործանվելու և վերակառուցվելու մասին, բայց, հասկանալի է՝ չի տալիս Տրդատ ճարտարապետի անունը:
5. Սուրբ Սոֆյայի տաճարն անգամ չորս կողմից շրջապատված է մինարեթներով. քրիստոնեական շքեղաշուր տաճարը հետագայում մզկիթի է վերածվել և կցվել են այդ չորս մինարեթները:

**281. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Սարոյանը ինձ հարցրեց հորս՝ Մայքլ Առլենի մասին, որի հետ մտերիմ էր, որքան էլ նրանք՝ իբրև գրչեղբայրներ, տարբեր էին միմյանցից:
2. Շուրջըլորը՝ ճամփեղրյա ողջ տարածքում, միմիայն տախտակաշեն տնակներ էին երևում՝ ճանապարհաշինարարների ժամանակավոր կացարանները:
3. Ներքեւում անդնդային խորություններն էին, որտեղից հազիվ լսելի էր լինում անցնող գետերի խոլ դրդյունը, վերևում ուղրածիք ժայռեր, որ ամեն րոպե սպառնում էին խորտակվել և ամեն ինչ ծածկել իրենց ահարկու փլատակների ներքո:
4. Սարդիկ, այդ անթափանց ու սաղարթախիտ անտառներին մերձենալիս, այնքան զարհուրելի զազաններից չեն վախենում, որքան թափուտ որդերում ապրող բնակիչներից:
5. Բայց եթե զա այն պահը, երբ դու քեզ վեր զգաս հասարակությունից, անմիջապես քո՞յ քեմը և զմա՝ Փարիզի արվարձանները. դու այնտեղ կգտնես շատ պարուիիների, ինչպիսին դու ես:

**282. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. Սեղափորը հայրս է եղել. անձնագրային սեղանի մոտ կանգնած՝ նա մի պահ չգիտես ինչու մոռանում է մորս ազգանունը և ստիպված ասում առաջին մտացածին ազգանունը:
2. Սի օր էլ Լևոնը (տանը Լոլո էինք անվանում) իր դասընկերներին՝ յոթ-ութ տղաների, հավաքել, բերել էր մեր հյուրասրահը՝ զվարճանալու:
3. Տղան պատրաստվեց կոտրել նրա համառությունը, մանավանդ տեսնելով՝ վերջինս խորտակում է իր՝ քառասուն տարիների հեղինակությունը:
4. Լևոնը, բոցկլտացող աչքերը չոելով, որոտի նման պայրեց.
- Այս տան տերերից մեկը ես եմ. ծառան իրավունք չունի խառնվելու. դուքս այս տնից:
5. Գողոն ձայն-ծպտուն չհանեց ոչ թե նրա համար, որ չեր կարող պատաժանել, այլ լցվեց դառը վշտով. քառասուն տարի ծառայել է այս տանը, հենց իրեն՝ Լևոնին մեծացրել էր իր թևերի վրա:

**283. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Նայի՛ր, որդի՛ն, Ֆրանսիան է, - ասաց հայրս՝ հայացքն ուղղած երկնքի համապատկերի վրա՝ շամանդադի մեջ նշմարվող ծովափին:
2. - Այո՛, տխուր է և վտանգավոր. վատ ժամանակներ են, սրբազն՝ վատ. թող Զեր աղորքները փրկեն հայոց ազգին. - ասաց զորականը՝ խոր հառաչելով:
3. «Եվ ինչո՞ւ է այդպես, ո՞վ է մեղավորը, - դառնացած մտորում էր նա: - Մի՞թե քիչ է փայլատակել հայոց քուրը իրավունքի և ազատության ճակատամարտերում»:
4. – Հայ՛ր սուրբ, - անհամարձակ ճայնով նրան դիմեց ազուլեցին, - ես այդպես էլ չիմացա՝ ինչ կրիվ էր երեկ գիշեր:
5. Վանականը հոգնած հայացքով նայեց նրան՝ ասելով.  
- Նրանք՝ այդ խեղճ քրիստոնյաները, կերան ու վայելեցին քո հացը, ապա վիրավորանքի խոսքեր ասացին քո ազգի հասցեին:

**284. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Լո՛յս տվեք, առանց այն էլ սիրտս մբապատ է, - բացականչեց թագուհին և դիմեց դեպի նեղ պատուհանը:
2. – Օհան ապերը գրքեր շատ ուներ, - շարունակեց ընկերս ընդհատված գրույցը: - Սի կիրակի, պատշաճամբում նստած, նա կարդում էր հին գրքերից մեկը:
3. – Իմ հայրը, իշխան, - ասաց, - անիրավ է եղել քո տոհմի առջև: Ես մեծապես ցավում եմ դրա համար:
4. «Ես կալվածքներ չեմ փնտրում այս պատերազմում, - մտածում էր իշխանը», - այլ հայրենիքի ապահովություն:
5. Մուշեղ սպարապետն ասաց հուզված ճայնով.  
- Իմ տե՛ր, դու այստեղ կատարեցիր քո առաջին սիրագործությունը՝ մոռանալով տոհմին հասած աղետը և քո անձնական վիշտը:

**285. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. – Սքանչելի է, - շշնջաց նա՝ ուղիղ ելնելով: - Որպես դեսպան՝ ես երջանիկ եմ, որ իմ վսեմափայլ թագավորին պիտի մատուցեմ այս հրաշագործությունները:
2. - Գահը պատրաստված է մեր շատ հարգելի վաճառականապետի հոր՝ նախկինում անվանի ոսկերիչ պարոն Սահրադի անմիջական հսկողության ներքո, - խոնարհվելով պատասխանեց Հռվիաննեար:
3. - Դու որոշել ես ինչ-որ անարժանների պատճառով թողնել աշխատանքդ ու հեռանալ, - լսվեց նկարչապետի կշտամբական ձայնը. – կարծում ես՝ դրանով չարյաց արմատները կչորանա՞ն:
4. «Ճշմարի՛տն Աստված, մենք ձգտում ենք լուսու ու հայրենյաց ազատության, - մտածում եր իշխանը՝ մի պահ նայելով հետզիետե բորբոքվող մոմին»:
5. Աստվածատուրը զարմացավ՝ պատասխանելով.  
- Ես մինչ այդ էլ վարանում էի: - Երբ հանգեցի այդ մտքին, նա արդեն ամուսնացել էր:

**286. Նշել այն նախադասությունների թվահամարները, որոնցում կետադրական սխալ կա:**

1. «Որքա՞ն ծանոթ է այդ հայացքն ինձ, - մտածում էի ես: Որտե՞ղ էի պատահել, ե՞րբ ես տեսել նրան»:
2. Իշխանը պատասխանեց.  
- Ո՛չ, իմ հայրենիքից դուրս չեմ եղել երեք: Ի՞նչ տարօրինակ հանդիպում է սա, ի՞նչ խորհուրդ ունի այս:
3. - Խեղճ ծերո՛վկ. խելքդ թոցրել ես, - բարձրաձայն ծիծաղեց առաջնորդը:
4. - Եթե չգիտեք, ապա ինչո՞ւ եք գրում ու կաճառներում իրար կոկորդ պատում, - ասաց շահը. -շուտ պատասխանի՛ր:
5. «Ես խղճում էի իմ ափում բույն դրած, այստեղ ծնված ու սնված արարածներին. մի՞թե մեր երկիրն էլ այսպիսի թռչունի բույն չէ, - խորհում էր վարդապետը»:

**287. Նշել՝ տրված թվահամարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Վագրը հանդարտ հեռացավ դեպի շամբուտը նրա հետևից հլու-հնազանդ կորյունը: Բարեն ապշած հիացընով նայում էր հեռացող գազանին թավշյա խոհուն աշքերով: Վագրը այդ իմաստուն կենդանին գիրք կանգ առավ և աղամորդու իմաստուն հանդիսավորությամբ հետ դարձրեց գլուխը:

1. տրոհվող հատկացուցիչ
2. բացահայտիչ
3. ստորոգյալի գեղչում
4. տրոհվող որոշիչ
5. տրոհվող դերքայական դարձված

**288. Նշել՝ տրված թվահամարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Այդ վայրկյաններին նրա աշքերը ցոլցում էին քամին մեղմորեն ծածանում էր թավշյա մազերը ուրցի ծաղիկներով զարդարում փոփոացնում դարձածալքերով շորը ընդգծելով վտիտ մարմինը: Մարանը ուրցի բույրով այդ աղջիկը պացիկ հասակով մեկ կանգնում էր և անէացած նայում լուրթ երկնքին: Ներանփոփի հազիկ նկատելի նյարդային շարժումով նա անընդհատ հյուսում-քանդում էր ծամերը:

1. բացահայտիչ
2. տրոհվող որոշիչ
3. տրոհվող դերքայական դարձված
4. տրոհվող հատկացուցիչ
5. բազմակի անդամներ

**289. Նշել՝ տրված թվահամարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Եթե երգուիին դուրս եկավ թատրոնից երկրպագուներով շրջապատված Իցկոն բարձր աղաղակեց: Չաղշենկոն ձեռնափայտով հետ մղելով նրան մոտեցավ երգչուիուն և տվեց նրան իր ձեռքի հուզմունքից ճնոթած բուլղթը: Անշուշտ այդ նրա ոտանավորն էր հատկապես օրվա առիթով գրված:

1. բացահայտիչ
2. միջանկյալ բառ
3. տրոհվող հատկացուցիչ
4. տրոհվող դերքայական դարձված
5. տրոհվող որոշիչ

**290. Նշել՝ տրված թվահամարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Լևոնի ծանր հառաջանքները ողբը հեծկլտանքը կսրատում էին սիրտս: Մայրը Ալմաստը հուսահատությունից չգիտեր ինչ աներ: Ծանոթ նավաստիները խնդրում էին Լևոնին շարունակել հաճախել պանդոկները և նվագել խոստանալով նրա համար նոր կիթառ գնել: Մի օր վերջապես նա գնաց «Արքայական յախտա» մի նոր կիթառ ձեռքին: Մի չնչին գումար դարձյալ վերականգնեց նրա վշտերից փշրված հույսերը:

1. բացահայտիչ
2. տրոհվող հատկացուցիչ
3. բազմակի անդամներ
4. տրոհվող որոշիչ
5. տրոհվող դերքայական դարձված

**291. Նշել՝ տրված թվահամարների դիմաց գրվածներից որոնք կան տվյալ հատվածում (նախադասությունները կետադրված չեն):**

Եթե հասավ բերդասարի ստորոտին երևաց Գարդմանը սպիտակ պարիսպներով հզոր աշտարակներով որոնք բարձրանում էին բերդի արևմտյան կողմից և աջ ու ձախ ձգվելով միանում հյուսիսային մասի անմատչելի լեռնալանջին: Իշխանը հիշեց ութ թե ինը տարի առաջ յուր և արքայորդու Աշոտի մուտքն այս ամրոցը: Այն ժամանակ արդարև նույնպես ուրախ չէր իր սիրտը:

1. տրոհվող դերքայական դարձված
2. բացահայտիչ
3. տրոհվող հատկացուցիչ
4. բազմակի անդամներ
5. տրոհվող որոշիչ

**292. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Լեռան գագաթին թառած այդ անմատչելի ամրոցը, որ մուրք իջնելուն պես սարսուազդու տպավորություն էր թողնում ամեն անցորդի վրա, մոտեցող իշխանի սիրտը տխրությամբ համակեց:

1. լեռան – հատկացուցիչ, թառած - որոշիչ
2. ամրոց - ենթակա, իջնելուն պես – ձևի պարագա
3. տպավորություն էր թողնում - բաղադրյալ ստորոգյալ, ամեն – որոշիչ
4. մոտեցող – որոշիչ, սիրտը - ենթակա
5. անցորդի վրա - տեղի պարագա, համակեց – պարզ ստորոգյալ

**293. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Երկար ժամանակ ոչինչ չէր լսում, բայց հանկարծ խոր լրության մեջ նրա ականջին հասավ խոլ հառաջի մի ձայն, որից վայրկենապես պայծառացավ նրա մեջ այդ մտահոգված դեմքը, ու նա կամացուկ բախեց դուռը:

1. երկար ժամանակ – չափի պարագա, չէր լսում - բաղադրյալ ստորոգյալ
2. ոչինչ - ենթակա, հանկարծ – ձևի պարագա
3. նրա – հատկացուցիչ, ականջին – հանգման անուղղակի խնդիր
4. հասավ - պարզ ստորոգյալ, մոտահոգված – ձևի պարագա
5. դեմքը - ենթակա, կամացուկ – ձևի պարագա

**294. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, որդին՝ Սամվելը, վերադարձավ Աշտիշատի վաճքից և անմիջապես մորը հայտնեց իշխանի գալստյան մասին:

1. հաջորդ օրը – ժամանակի պարագա, վերադարձավ – պարզ ստորոգյալ
2. վաղ առավոտյան – ժամանակի պարագա, մորը – հանգման անուղղակի խնդիր
3. վաճքից - անշատման անուղղակի խնդիր, անմիջապես – ձևի պարագա
4. հայտնեց – պարզ ստորոգյալ, իշխանի – հատկացուցիչ
5. Սամվելը - ենթակա, գալստյան մասին – վերաբերության անուղղակի խնդիր

**295. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Խոնարիին մի քանի օր չէի տեսել, ու թվում էր՝ էլ չեմ տեսնելու, սակայն մի անգամ էլ նրան հանդիպելու ցանկությամբ կանգ առա նրանց տան առաջ և բաց դռնով նայեցի ներս:

1. **Խոնարիին** – հանգման անուղղակի խնդիր, **չէի տեսել** – պարզ ստորոգյալ
2. **էլ** – ժամանակի պարագա, **նրան** – հանգման անուղղակի խնդիր
3. **մի քանի օր** – չափի պարագա, **կանգ առա** - բաղադրյալ ստորոգյալ
4. **նրանց** – հատկացուցիչ, **տան առաջ** – տեղի պարագա
5. **բաց դռնով** – տեղի պարագա, **նայեցի** – պարզ ստորոգյալ

**296. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ-, որ արտասանելու էր Խոնարիի քույրը, և երբ վարագույրը շարժվեց, փոքրիկ աղջիկը մանկան զիլ ձայնով սկսեց արտասանել:

1. **ընդմիջումից հետո** - ժամանակի պարագա, **հանդեսի** – հատկացուցիչ
2. **երկրորդ** - որոշիչ, **պիտի սկսվեր** - բաղադրյալ ստորոգյալ
3. **որ** – ուղիղ խնդիր, **արտասանելու էր** – պարզ ստորոգյալ
4. **քույրը** - ենթակա, **Խոնարիի** – հատկացուցիչ
5. **երբ** – ժամանակի պարագա, **զիլ** – որոշիչ

**297. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քանակը:**

Ինչքան հեռանում էինք գյուղից, այնքան ավելի էր խտանում անտառը. հանդիպում էինք հաստարուն ծառերի, որոնց ճյուղերն իրար էին խառնվել և կախվել արահետի վրա:

1. **ինչքան** – չափի պարագա, **հեռանում էինք** – պարզ ստորոգյալ
2. **անտառը** - ենթակա, **հաստարուն** – որոշիչ
3. **ծառերի** – հատկացուցիչ, **ճյուղերը** - ենթակա
4. **որոնց** – հատկացուցիչ, **իրար** – ուղիղ խնդիր
5. **խառնվել էին** – պարզ ստորոգյալ, **արահետի վրա** - տեղի պարագա

**298. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների քվահամարները:**

Երբեմն այդ մարդու հիշողության մեջ մի դեմք այնպես է մեխանիզմ, որ տասնյակ տարիներ հետո էլ հիշում ես խորությամբ. ասես երեկ ես տեսել:

1. **երբեմն** – ժամանակի պարագա, **մարդու** – որոշիչ
2. **հիշողության մեջ** – տեղի պարագա, **մի դեմք** - ենթակա
3. **այնպես** – ձևի պարագա, **մեխանիզմ** – բաղադրյալ ստորոգյալ
4. **տասնյակ** – որոշիչ, **հետո** – ժամանակի պարագա
5. **խորությամբ** - ձևի պարագա, **երեկ** – ժամանակի պարագա

**299. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների թվահամարները:**

Իշխանը անմիջապես ճանաչեց նրան, որովհետև ճրագը նա էր բռնել. այդ անակնկալ հանդիպումը տիրեցրեց իշխանին:

1. **իշխանը** - ենթակա, **որովհետև** – պատճառի պարագա
2. **ճանաչեց** – պարզ ստորոգյալ, **նրան** – հանգման անուղղակի խնդիր
3. **ճրագը** – ուղիղ խնդիր, **բռնել էր** - բաղադրյալ ստորոգյալ
4. **այդ** - որոշիչ, **հանդիպումը** - ենթակա
5. **տիրեցրեց** – պարզ ստորոգյալ, **իշխանին** – հանգման անուղղակի խնդիր

**300. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների թվահամարները:**

Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորագնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտրի Մարզպետունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելու համարեց լոելը:

1. **Սևադան** - բացահայտիչ, **խորագնին** – ձևի պարագա
2. **որպեսզի** – նպատակի պարագա, **փնտրի** – պարզ ստորոգյալ
3. **իր** – հատկացուցիչ, **հոգու ներսը** – տեղի պարագա
4. **խորհրդավոր** – որոշիչ, **պատասխանը** - ենթակա
5. **ակնարկի** – հատկացուցիչ, **լոելը** - ուղիղ խնդիր

**301. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների թվահամարները:**

Նա գիտեր՝ Աստված պատժում է հանցավորին և օգնում է արդար մարդուն, նաև գիտեր, որ իր թագավոր ամուսինը հանցավոր էր Ամրամի առաջ, և պիտի հաղթեր վերջինը, բայց այդ մասին ոչինչ չխոսեց:

1. **գիտեր** – պարզ ստորոգյալ, **Աստված** - ենթակա
2. **հանցավորին** – ուղիղ խնդիր, **օգնում է** - պարզ ստորոգյալ
3. **իր** – հատկացուցիչ, **թագավոր** - ենթակա
4. **հանցավոր էր** - բաղադրյալ ստորոգյալ, **վերջինը** - ենթակա
5. **այդ մասին** – վերաբերության անուղղակի խնդիր, **ոչինչ** - ենթակա

**302. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների թվահամարները:**

Քաղաքը, ուր անցավ իմ ոսկեծամ մանկությունը, իիմա ապրում է իմ հոգում, շատ հաճախ հուշերիս մեջ մշուշային գծերով ժպտում է ու ինձ տանում դեպի իմ հայրենի բնօրրանը:

1. **ուր** – տեղի պարագա, **անցավ** – պարզ ստորոգյալ
2. **իմ** – հատկացուցիչ, **ոսկեծամ** – որոշիչ
3. **մանկությունը** – ուղիղ խնդիր, **մշուշային** – որոշիչ
4. **ժպտում է** - պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
5. **հայրենի** – որոշիչ, **դեպի բնօրրանը** – տեղի պարագա

**303. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների բվահամարները:**

Միջօրեին տաքանում է հողը, այգեստանները տիվանդորքի մեջ անշարժանում են. գոյանում է կարծես հանձարեղ նկարչի կախարդական վրձնահարվածի մի չնաշխարհիկ բնանկար, և օդը հագենում է հողի ու արևի արբեցնող բուրմունքով:

1. **միջօրեին** – ժամանակի պարագա, **հողը** - ենթակա
2. **տաքանում** է – պարզ ստորոգյալ, **հանձարեղ** – որոշիչ
3. **նկարչի** – հատկացուցիչ, **բնանկար** – ուղիղ խնդիր
4. **կախարդական** – ձևի պարագա, **վրձնահարվածի** – հատկացուցիչ
5. **արբեցնող** – որոշիչ, **բուրմունքով** – միջոցի անուղղակի խնդիր

**304. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների բվահամարները:**

Ընդամենը այս եմ երգել, ու եթե ինձ հաջողվել է իմ այրվող այգեստանների ծովսը հասցնել մեր մեծ նախնիների ստեղծած փառապանծ կոթողների բարձրությանը, այն ժամանակ ես հանգիստ սրտով կարող եմ ապրել:

1. **այս** – ուղիղ խնդիր, **երգել եմ** - բաղադրյալ ստորոգյալ
2. **ինձ** – հանգման անուղղակի խնդիր, **այրվող** – որոշիչ
3. **իմ** – հատկացուցիչ, **փառապանծ** – որոշիչ
4. **բարձրությանը** – հանգման անուղղակի խնդիր, **ես** - ենթակա
5. **այն ժամանակ** – ժամանակի պարագա, **ծովսը** – ուղիղ խնդիր

**305. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարրերակների բվահամարները:**

Այսօր՝ առավոտյան, գնալու եմ դարձյալ, որպեսզի իհանամ Էրեբունու գումավոր որմնանկարներով. իրենց երանգների բազմազանությամբ ու բարձրությամբ այդ արտաստվոր պատկերները ինձ հմայել էին առաջին անգամ Հայաստան այցելությանս ժամանակ:

1. **առավոտյան** - ժամանակի պարագա, **գնալու եմ** - պարզ ստորոգյալ
2. **Էրեբունու** - հատկացուցիչ, **գումավոր** - որոշիչ
3. **որմնանկարներով** - միջոցի անուղղակի խնդիր, **իրենց** - հատկացուցիչ
4. **պատկերները** - ենթակա, **ինձ** - հանգման անուղղակի խնդիր
5. **հմայել էին** - բաղադրյալ ստորոգյալ, **առաջին անգամ** – ժամանակի պարագա

**306. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Սուլաց իշխանը՝ Արտակը, իջավ նժույզից, սանձը տվեց թիկնապահին և զգուշորեն մոտ գնաց այն խրճիթին, որտեղ ապաքինման էր թողել Անահիտին:

1. **իշխանը** - ենթակա, **իջավ** – պարզ ստորոգյալ
2. **Արտակը** - ենթակա, **նժույզից** – տեղի պարագա
3. **սանձը** – ուղիղ խնդիր, **թիկնապահին** – հանգման անուղղակի խնդիր
4. **զգուշորեն** – ձևի պարագա, **խրճիթին** – հանգման անուղղակի խնդիր
5. **որտեղ** – տեղի պարագա, **թողել էր** - բաղադրյալ ստորոգյալ

**307. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Ամբողջ օրը զբոսնելուց հետո նա տուն էր վերադառնում բարձր տրամադրությամբ. ժայռերի շիկացած լանջերից իջնող ուրցաբույր զեփյուր շոյում էր նրա զրգոված նյարդերը և պարզեցված հոգեկան անդորրը:

1. **ամբողջ օրը** – ժամանակի պարագա, **նա** - ենթակա
2. **վերադառնում էր** – պարզ ստորոգյալ, **բարձր տրամադրությամբ** - ձևի պարագա
3. **ուրցաբույր** – որոշիչ, **զեփյուր** - ենթակա
4. **նրա** - հատկացուցիչ, **զրգոված** – որոշիչ
5. **նյարդերը** - ենթակա, **հոգեկան** – որոշիչ

**308. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Ամառային գիշեր էր. Ուկանը անցավ հյուսիսային պարսպի մոտով և կանգ առավ այն խրճիթի լուսամուտի տակ, որտեղից առկայժում էր բեկրեկուն լույսը:

1. **ամառային** – որոշիչ, **գիշեր էր** – պարզ ստորոգյալ
2. **Ուկանը** - ենթակա, **կանգ առավ** - բաղադրյալ ստորոգյալ
3. **այն** – որոշիչ, **խրճիթի** – հատկացուցիչ
4. **լուսամուտի տակ** – տեղի պարագա, **որտեղից** – տեղի պարագա
5. **առկայժում էր** – պարզ ստորոգյալ, **բեկրեկուն** – որոշիչ

**309. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Երազում էի անդրբավետ մի անկյուն, ուր կտեսնեի իմ դաշնամուրն ու զրասեղանը, կկարողանայի ամփոփվել ինքս իմ մեջ, թղթին հանձնել երգերս, որ հետևողմերս շարունակեն իմ գործը:

1. **երազում էի** – պարզ ստորոգյալ, **անդրբավետ** - որոշիչ
2. **մի անկյուն** – ուղիղ խնդիր, **ուր** – տեղի պարագա
3. **դաշնամուրը** - ենթակա, **իմ մեջ** – տեղի պարագա
4. **թղթին** – հանգման անուղղակի խնդիր, **երգերս** – ուղիղ խնդիր
5. **հետևողմերս** - ենթակա, **իմ** – հատկացուցիչ

**310. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Հինգ նյարդային օր տևեց սպասումը, և առավոտյան ես ու Ռառը ազարակների վաճառքի գործակալության տիրուհու մոտ գնացինք, որն իր կարծիքը հրամցրեց գյուղի տների մասին:

1. **հինգ** - չափի պարագա, **տևեց** – պարզ ստորոգյալ
2. **սպասումը** - ենթակա, **առավոտյան** – ժամանակի պարագա
3. **Ռառը** - ենթակա, **ազարակների** – հատկացուցիչ
4. **տիրուհու մոտ** – տեղի պարագա, **որն** - ենթակա
5. **իր** – հատկացուցիչ, **տների մասին** – վերաբերության անուղղակի խնդիր

**311. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Երեկոները մենք հաճախ էինք հավաքվում, սիրով հիշում զվարճայի պատմություններ մեր անցյալից, երգում էինք թախծոտ և ուրախ երգեր, արտասվում, որովհետև հայր միշտ էլ զգացմունքային է:

1. **Երեկոները** – ժամանակի պարագա, **մենք** - ենթակա
2. **հաճախ** – որոշիչ, **հավաքվում** էինք – պարզ ստորոգյալ
3. **սիրով** – ձևի պարագա, **պատմություններ** – ուղիղ խնդիր
4. **մեր** – հատկացուցիչ, **անցյալից** – վերաբերության անուղղակի խնդիր
5. **թախծոտ** – որոշիչ, **զգացմունքային է** - բաղադրյալ ստորոգյալ

**312. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Սրտմաշուկ կասկածը և հուսալքությունը, բեմ մտնելու երկյուղը շատ անզամ իմ անքուն գիշերների ուղեկիցն են եղել, սակայն ցավագնորեն զսպել եմ արցունքներս ու կուշ եկել:

1. **սրտմաշուկ** - որոշիչ, **կասկած** - ենթակա
2. **գիշերների** – հատկացուցիչ, **կուշ եկել** - բաղադրյալ ստորոգյալ
3. **իմ** - հատկացուցիչ, **անքուն** - ձևի պարագա
4. **ուղեկիցն են եղել** - բաղադրյալ ստորոգյալ, **ցավագնորեն** - ձևի պարագա
5. **զսպել եմ** - պարզ ստորոգյալ, **արցունքներս** - ուղիղ խնդիր

**313. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Պոլսից հետո, որտեղ երկրորդ ձերբակալումից Զոհրապը մի կերպ էր գլուխն ազատել, Փարիզում կյանքը նոր իմաստ էր ստացել քառասունյոթամյա գրողի համար. հիմա նա վերջապես զգում էր ապրելու հրճվանքը:

1. **որտեղ** – տեղի պարագա, **երկրորդ** - որոշիչ
2. **ձերբակալումից** - անջատման անուղղակի խնդիր, **մի կերպ** – ձևի պարագա
3. **հիմա** - ժամանակի պարագա, **նա** - ենթակա
4. **կյանքը** - ուղիղ խնդիր, **քառասունյոթամյա** - որոշիչ
5. **զգում** **էր** - պարզ ստորոգյալ, **հրճվանքը** – ուղիղ խնդիր

**314. Նշել նախադասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարրերակների բվահամարները:**

Լեռների ու անտառների հարուցած դժվարությունների պակասը լրացնում էին գետերը, որոնք անցնում էին քարեղեն խորին հատակի վրայով և երկու կողմերից պարիսպների նման ժայռերի միջով:

1. **հարուցած** – որոշիչ, **դժվարությունների** – հատկացուցիչ
2. **պակասը** – ուղիղ խնդիր, **լրացնում էին** – պարզ ստորոգյալ
3. **գետերը** - ենթակա, **քարեղեն** – որոշիչ
4. **որոնք** - ենթակա, **հատակի վրայով** – տեղի պարագա
5. **պարիսպների նման** – որոշիչ, **ժայռի միջով** – տեղի պարագա

**315. Նշել ճախաղասության շարահյուսական վերլուծության ճիշտ տարբերակների թվահամարները:**

Գարնան արևային օրերը հիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է գալու, և դասերն ավարտելուց հետո նոյն ճանապարհով պիտի վերադառնամ քաղաք և երբեք չպիտի տեսնեմ Զորագյուղը:

1. **արևային** – որոշիչ, **օրերը** - ենթակա
2. **հիշեցնում էին** – պարզ ստորոգյալ, **ինձ** – հանգման անուղղակի խնդիր
3. **շուտով** – ժամանակի պարագա, **մայիս** - ենթակա
4. **գալու է** - պարզ ստորոգյալ, **նոյն** – որոշիչ
5. **պիտի վերադառնամ** – պարզ ստորոգյալ, **երբեք** – ժամանակի պարագա:

## ԳԼՈՒԽ V

## ԿՍՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔ

### 1. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Կարմրաթեկները՝ այդ չքնաղ թռչունները, թեև առանձին կարգ են կազմում թռչունների տարատեսակ դասակարգության մեջ, բայց այդ կարգը բաղկացած է ընդամենը մեկ տեսակից՝ հենց իրենից՝ կարմրաթեկներից, որն ունի իրար խիստ նման երեք ենթատեսակ: Հենց անունից էլ ինքնըստինքյան պարզ է, որ այս թռչունի հովհարածն թերը կարմիր են, բայց իրականում կարմրագույն են նրանց թերի եղբերը, ինչպես նաև երկար-երկար ոտքերը և կտուցի կեսը: Հանրածանոթ ֆլամինգոն է սա, որի անունը տալիս անմիջապես պատկերացնում ենք հուռքի բուսականությամբ, յուրօրինակ ծառերով և փրփրահոս գետով արևադարձային ճոխ մի բնապատկեր, որում ֆլամինգոններն են կանգնած պաղպաջուն ջրի ափին՝ հաճախ մի ոտքը ծալած: Հայաստանում կարմրաթեկները ո՞չ ձմեռում են, ո՞չ էլ ձագ է հանում, բայց չվելիս անցնում է մեր կողմերով:

- 1) Կարմրաթեկները թռչունների դասակարգության մեջ առանձին կարգ է կազմում՝ ունենալով իրար խիստ նման երեք տարատեսակներ:
- 2) Ֆլամինգոյի անունը տալիս միշտ պատկերացնում ենք արևադարձային ճոխ մի բնապատկեր, որում ֆլամինգոնները, միշտ մի ոտքը ծալած, կանգնած են պաղպաջուն ջրի ափին:
- 3) Կարմրաթեկները նույն ֆլամինգոններն են, որոնց հովհարածն թերը, երկար ոտքերը և կտուցի կեսը կարմրագույն են:
- 4) Չնայած Հայաստանը կարմրաթեկների համար ձմեռելու և ձագ հանելու նախընտրելի վայր չէ, սակայն տեղից տեղ տեղափոխվելիս նրանք անցնում են մեր կողմերով:

### 2. Ո՞ր միտքն է հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Հազար ինը հարյուր քանաներկու թվականին անգլիացի Աշանավոր հնէարան Հովարդ Քարտերի գլխավորությամբ Եզիպտոսում՝ Նեղոսի ձախ ափին, երկարատև որոնումներից հետո գետնի տակից լույս աշխարհ հանվեց ստորերկրյա մի քարակոփ դամբարան: Այն պատկանում էր եզիպտական փարավոններից մեկին՝ Թուրանիամոնին, որն իշխել է մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ: Դամբարանի քողարկված մուտքը հայտնի դարձավ այն պահին, երբ ամեն ինչ ստուգելուց հետո պեղումներ կատարող Քարտերը որոշեց դադարեցնել աշխատանքները: Հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարի, և պարզվեց, որ մարդիկ գտնվում են ստորերկրյա դամբարանի մուտքի մոտ: Մուտքը կնքված էր ամենանշանավոր փարավոնների կմիջներով և Եզիպտոսը թշնամիներից պաշտպանող Անյուրիս կոչվող շան դիմանելարով:

- 1) Թուրանիամոնը Եզիպտոսի փարավոններից է, որն իշխել է մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ:
- 2) Եզիպտական դամբարանների մուտքը կնքված է լինում Անյուրիս կոչվող շան դիմանելարով և հայտնի փարավոնների կմիջներով:
- 3) Հազար ինը հարյուր քանաներկու թվականին Հովարդ Քարտերը Եզիպտոսում հայտնաբերեց մեզանից երեք հազար հինգ հարյուր տարի առաջ իշխած Թուրանիամոն փարավոննի դամբարանը:
- 4) Թուրանիամոնի դամբարանը փնտրելիս Քարտերը որոշել էր դադարեցնել աշխատանքները, երբ հանկարծ բանվորներից մեկը հանդիպեց մի քարի, և հայտնաբերվեց դամբարանը:

### 3. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Ալեքսանդրիայի փարոսի վրա պետք է գրվեր թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու անունը, սակայն նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը այս անօրինության հետ չի հաշտվում՝ համարելով այն ապօրինություն, և լրելյան դիմում է խորամանկության: Մարմարիոնի վրա քանդակում է հետևյալը. «Կինզացի Սոստրատեսն այս նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների»: Հետո այս գրվածքը ծեփում է քարակ շերտով, որ մասրազնին դիտելիս էլ չնկատվի, ապա վրայից գրում է արքայի անունը՝ աներկրայորեն համոզված լինելով, որ ամենակարող ժամանակը ծեփը կպոկի, և աշխարհին հայտնի կրառնա իսկական ստեղծողի անունը: Այդպես էլ լինում է: Կոքողը կանգուն մնաց մոտ յոթ հարյուր տարի, բայց տասնչորսերորդ դարում հուժկու երկրաշարժը կործանեց այն:

- 1) Փարոսի նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու պահանջով այն նվիրում է փրկարար աստվածներին՝ ի սեր ծովագնացների:
- 2) Սոստրատեսը իր խորամանկությունը թաքցնելու նպատակով մարմարիոնի վրայի գրվածքը ծածկած նոր շերտի վրա գրում է թագավորի՝ Պտղոմեոս Ֆլորենցիացու անունը:
- 3) Փարոսի նախագծող և ճարտարապետ Սոստրատեսը հույս ուներ, որ իրենցից հետո խելացի մարդիկ կկարողանան բացահայտել և իմանալ փարոսի իսկական ստեղծողի անունը:
- 4) Փարոսը իր գոյության մոտ յոթ հարյուր տարիների ընթացքում դիմանում է բնության բազում արհավիրքների, բայց, ի վերջո, երկրաշարժից կործանվում է:

### 4. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:

Եյֆելյան աշտարակը ժամանակին եղել է աերոդինամիկայի, այսինքն՝ մարմինների անկման ժամանակ օդի դիմադրությունն ուսումնասիրող գիտության, ինչպես նաև ֆրանսիական ռադիոյի կենտրոնը: Այդտեղ կատարված տարատեսակ փորձերով են խորազնին ուսումնասիրվել օդերևութաբանական շատ հարցեր: 19-րդ դարի վերջերին աշտարակը ռադիոհաղորդումների հեռարձակման փորձերի կենտրոն էր, իսկ հազար ինը հարյուր քաններկու թվականին այստեղից հաղորդվեց առաջին ռադիոհամերգը: Երեք տարի անց աշտարակից կատարվեց հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը:

Աշտարակի բարձրությունը երեք հարյուր մետր է: Իհարկե, ժամանակին նման բարձրությունը ռեկորդային էր, իսկ այսօր այն դրանով չի ապշեցնում, բայց Եյֆելյան աշտարակն իր յուրօրինակ գրավչության շնորհիվ մնում է գրոսաշրջիկների նախընտրած վայրը, և տարեկան այդտեղ մի քանի միլիոն մարդ է այցելում:

- 1) Ամենասկզբում աշտարակը եղել է հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման կենտրոնը, որտեղ էլ կատարվել են առաջին փորձերը:
- 2) Աշտարակը եղել է աերոդինամիկայի և ֆրանսիական ռադիոյի կենտրոնը, որտեղ կատարված տարատեսակ փորձերով են ուսումնասիրվել օդերևութաբանական բոլոր հարցերը:
- 3) 20-րդ դարի քսանական թվականներին Եյֆելյան աշտարակից է կատարվել հեռուստատեսային հաղորդման առաջին փորձը:
- 4) Եյֆելյան աշտարակի երեք հարյուր մետր ռեկորդային բարձրությունը այսօր էլ ապշեցնում է տարեկան այդտեղ այցելող մի քանի միլիոն գրոսաշրջիկների:

**5. Ո՞ր միտքը չի հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Աշխարհի երկրորդ հրաշալիքը Ալեքսանդրիայի հիասքանչ փարոսն է, որի կառուցումը մեր թվականությունից առաջ է սկսվել՝ երրորդ դարի սկզբներին՝ Պտղոմեոս թագավորի օրոք, որն այդ ժամանակ իշխում էր Եգիպտոսում: Նա որոշեց ականակիր գիշերներին քաղաքին մոտեցող նավերի համար Ալեքսանդրիայի նավահանգիստն ավելի ապահով դարձնել և կառուցել մի ուղեցույց աշտարակ: Հետաքրքիր է հենց փարոս անվանման ծագումը: Այն հիմնվեց ափամերձ մի կանաչազարդ կղզյակի վրա, որը առագաստի տեսք ունենալու պատճառով կոչվում էր Ֆարոս, այսինքն՝ առագաստ: Երբ կղզու վրա կառուցեցին լուսատու բարձրաբերձ աշտարակը, այն նույնպես սկսեցին այդպես անվանել: Հետագայում «ֆարոս» բառն արդեն ձեռք բերեց այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը փոխարինվեց «փ» հնչյունով:

Չնաշխարհիկ փարոսը մի երկնակարկառ շինություն էր, որն ամբողջովին կառուցված էր սպիտակ մարմարից:

- 1) Ալեքսանդրիայի փարոսի կառուցումը սկսվել է Պտղոմեոս թագավորի օրոք և ավարտվել մեր թվականությունից առաջ երրորդ դարի սկզբներին:
- 2) Փարոսի կառուցումով Պտղոմեոսը նպատակ ուներ Ալեքսանդրիայի նավահանգիստն ավելի գրավիչ դարձնել՝ ապահովագրված լինելով թշնամիների հարձակումներից:
- 3) Առագաստի տեսք ունենալու պատճառով աշտարակը կոչվել է Ֆարոս, որն էլ հետագայում ձեռք է բերել այժմյան իմաստը, իսկ հայերենում «ֆ» հնչյունը փոխարինվել է «փ» հնչյունով:
- 4) Կանաչազարդ կղզյակի վրա ամբողջովին սպիտակ մարմարից կառուցված ուղեցույց աշտարակը մութ գիշերներին պետք է ապահով դարձներ նավահանգիստ մտնող նավերի ճանապարհը:

**6. Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

- 1) Եգիպտական այս առեղծվածային կորողի վեհապանձ ուրվագիծը անբաժան է քարակոփ բուրգերի վիթխարի համայնապատկերից:
- 2) Աշխարհի յոր հրաշալիքներից մեկից՝ Քեռփսի բուրգից, չորս հարյուր մետր հեռու գտնվում է ամենամեծ սֆինքսը:
- 3) Հինավորց մի ավանդություն ասում է, որ նրա խստահայաց դեմքը Թեփրեն փարավոնին է:
- 4) Դա մի հսկայական քանդակապատկեր է՝ առյուծի սարսուզու մարմնով, ծանր ու զորեղ քարերով, բայց մարդու գլխով:

- 1) 2, 4, 3, 1
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

7. **Նախադասությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Խսկապես, եզրակացնելու ոչ մի հրաշալիք մարդկային անհագուրդ երևակայությանը այնքան սնունդ չի տալիս, որքան առեղծվածային բուրգերը, որոնք աշխարհի բոլոր ժայրերից մարդկանց քաշում են դեպի Եզրակացնություն:
2. Այդ հուշարձանները աներկրայորեն հաստատում են, որ, հիրավի, փրփրահոս Նեղոսի կանաչազարդ հովիտը իր ժամանակին եղել է մարդկության քաղաքակրթության օրրաններից մեկը:
3. Եզրակացները պատկանում են այն ժողովուրդների թվին, որոնք՝ որպես ինքնուրույն ժողովուրդ, պատմության բատերաբեմից դարեր առաջ են հեռացել, բայց սերունդներին հավերժական հուշարձաններ են բողել:
4. Եզրակացները բոլոր հուշարձաններն ել աչքի են ընկնում իրենց գեղեցկությամբ ու ապշեցուցիչ վեհությամբ, սակայն դրանց մեջ առանձնակի տեղ են գրավում բուրգերը, իսկ բուրգերի շարքում՝ Քենոփսի հիանալի բուրգը:

- 1) 4, 3, 1, 2
- 2) 3, 4, 2, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 2, 4, 1

8. **Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Իշխանադուստր Շահանդուխստր ձորում մի մատուռ է կառուցել տալիս, որտեղ ապաշխարելով ապրում է մինչև կյանքի վերջը, իսկ ժայռը կոչվում է Շահանդուխստի ժայռ:
2. Շահանդուխստը՝ իշխանի դուստրը, հրաշագեղ էր, չքնաղ. նրա գեղեցկությունը զարմանք էր պատճառում տեսնողներին: Նայողին թվում էր՝ նյութեղեն չէ, այլ կարծես կերտված է լիալուսնի նրբանուրբ շողերից, արևի թրթոռուն ճառագայթներից ու ծաղիկների անուշաբույր նեկտարից:
3. Քամու ուժգին հոսանքով ու աներևույթ զորությամբ նա, իր ձիու վրա նստած, անվնաս իջնում է ձորի խորիսորատը:
4. Մի օր, երբ օրիորդը ուղեկցող խմբով անցնում էր մի ապառաժոտ վայրով, հանկարծ երկնակարկառ քարաժայի գլխից նրա վրա հարձակվեցին զինյալներ: Եվ որպեսզի չընկնի գայլաբարու այլազգիների ձեռքը, որոնք Շահանդուխստի հոչակված գեղեցկության պատճառով կամենում էին նրան հափշտակել, օրիորդը խաչակնքում է ու ձիու հետ թռչում քարաժայոից:

- 1) 2, 4, 3, 1
- 2) 2, 3, 4, 1
- 3) 2, 3, 1, 4
- 4) 3, 1, 2, 4

**9. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Բրոնզաձույլ հսկայի հեղինակը՝ Զարեսը, շատ անքուն և տանջալի գիշերներ անցկացրեց՝ անխոնջ աշխատելով արձանի յուրաքանչյուր տարրի վրա առանձին-առանձին: Ըստ պատմիչների՝ կերտվածքի բարձրությունը երեսունչորսից երեսունինը մետր էր՝ չհաշված մարմարյա հղկված պատվանդանը:
  2. Հին Հունաստանի Հռոդոս կղզում մեր թվականությունից շատ առաջ՝ չորրորդ դարում, դորիական ցեղի բնակիչները կանգնեցրին արևի աստծու՝ Հելիոսի վիթխարի արձանը՝ ի նշան թշնամու դեմ տարած պանծալի հաղթանակի:
  3. Ցավոր, բրոնզե հսկան կանգուն մնաց ընդամենը հիսունվեց տարի. Երկու հարյուր քսանինը թվականին չքնաղագեղ Հռոդոսը ենթարկվեց տարերային մեծ աղետի՝ աշխարհացունց երկրաշարժի: Չղիմանալով ստորգետնյա ցնցումներին՝ ծնկներից կոտրվեց և տապալվեց Հելիոսի արձանը:
  4. Բրոնզաձույլ արձանի մասին լուրը անմիջապես տարածվեց հելլենիստական աշխարհով մեկ՝ դեպի Հռոդոս ճգելով բյուրավոր ճամփորդների:
- 1) 2, 3, 1, 4  
 2) 1, 4, 2, 3  
 3) 2, 3, 1, 4  
 4) 2, 1, 3, 4

**10. Պարբերությունները նշող թվերի դասավորության ո՞ր տարրերակն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) տրամաբանական և քերականական ճիշտ կառուցվածքին:**

1. Հազար ինը հարյուր վարսունչորս թվականի երկրաշարժից հետո թեքությունն ավելի մեծացավ, և Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
  2. Պիզա քաղաքը իր միջնադարյան ճարտարապետական նախշազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անքասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի գրուաշրջիկների համար:
  3. Վեհապանն կոթողի բարձրությունը հասնում է հիսունչորսուկես մետրի, իսկ սանդուղքների թիվը երկու հարյուր իննունչորս է: Աշտարակի ահռելի ծանրությունը տասնչորս հազար իինգ հարյուր տոննա է, և մարմարինե այդ հսկա զանգվածը թեքված է չորս մետր երեսունվեց սանտիմետր:
  4. Պիզայում հիացմունք պարզեսող, առինքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթուացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապատճեն է թեք աշտարակը:
- 1) 2, 4, 3, 1  
 2) 4, 2, 3, 1  
 3) 2, 3, 1, 4  
 4) 2, 1, 3, 4:

## ԳԼՈՒԽ VI ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ

1. Ո՞ր շարքում նշված բոլոր լեզուներն են պատկանում հնդեվրոպական լեզվաընտանիքին:

- 1) անգլերեն, վրացերեն, ուզբեկերեն, ռուսերեն
- 2) ուկրաիներեն, թուրքերեն, պարսկերեն, ճապոներեն
- 3) հունարեն, քրդերեն, գերմաներեն, տաջիկերեն
- 4) չինարեն, ֆիններեն, հոլանդերեն, բուլղարերեն

2. Ո՞րտեղ է հիմնադրվել և գործել Սխիթարյան միաբանությունը:

- 1) Նոր Զուղայում
- 2) Ամստերդամում
- 3) Ս. Ղազար կղզում /Վենետիկ/
- 4) Աստրախանում

3. Ո՞վ է «Քառօհիք հայկակեան լեզուի» բառարանի հեղինակը:

- 1) Ս. Ավգերյան
- 2) Ս. Չամչյան
- 3) Բ. Կեսարացի
- 4) Ս. Սեբաստացի

4. Քառարանների ո՞ր տեսակին է պատկանում Հայկական սովետական հանրագիտարանը:

- 1) ուղղագրական
- 2) ստուգաբանական
- 3) հանրագիտական
- 4) ճյուղային

5. Քառարանների ո՞ր տեսակին է պատկանում Հ. Աճառյանի «Արմատական բառարանը»:

- 1) կենսագրական
- 2) հանրագիտական
- 3) ստուգաբանական
- 4) ուղղախոսական

6. Ո՞ր տողում նշված բոլոր ազգանուններն են պատկանում օտարազգի հայագետների:

- 1) Վավիլով, Պետրով, Լիխտենգոլց
- 2) Սեյե, Մառ, Հյուրշման
- 3) Պետերման, Գողել, Բաուման
- 4) Կարստ, Ֆեյդի, Շնեյդերման

**7. Ո՞ր բարբառի հիման վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:**

- 1) Մարադայի
- 2) Պոլսի
- 3) Կարնո
- 4) Խոյի

**8. Ո՞ր նախադասությունն է արևելահայերեն:**

- 1) Առավոտ ծեզին ամենից կանուխ նա էր վեր կենում:
- 2) Աս տարի կանուխ սկսա ճամփորդել, անմատչելի ամայություններե անցա:
- 3) Բայց մենք ալ ի՞նչ պիտի ըստինք:
- 4) Այո, ակներև էր՝ անհանգիստ կրնեի զինքը:

**9. Ո՞ր նախադասությունն է արևմտահայերեն:**

- 1) Ցերեկը պապս նստում էր դարպասի քարին կամ էլ պառկում բակի թախտին:
- 2) Նրա համար ամենից մեծ հաճույքը արտերն ու այզին ջրելն էր:
- 3) Պատուհանիս քով նստած՝ ուշադրությամբ կը նայիմ դիմացի պարտեզը:
- 4) Զիերը հազեցել էին կանաչից և մեզ նման մեկնվել էին գարնան արևի տակ:

**10. Ո՞ր հայերենով է հետևյալ հատվածը:**

Երբա՛ լ, երբա՛ լ, երբա՛ լ անձայն, անհանդես,  
Երբա՛ լ առվին պես՝ մարգերու տակ անտես.  
Կապույտին մեջ հեզ, հողմավար ամպին պես...

- 1) գրաբարով
- 2) միջին հայերենով
- 3) արևելահայերենով
- 4) արևմտահայերենով

**11. Ո՞ր հայերենով է հետևյալ հատվածը:**

Դու քո ձեռօրդ ես հոր փորել  
Եւ քո կամօրդ ի ներս մտեր,  
Չայս ու՞մ կամիս դու մեղադրել,  
Խնդիր կու գան զբեզ տանել:

- 1) գրաբարով
- 2) միջին հայերենով
- 3) արևելահայերենով
- 4) արևմտահայերենով

**12. Ո՞ր դարերում է միջին հայերենը եղել կենդանի լեզու:**

- 1) 10 – 12-րդ դդ.
- 2) 12 – 16-րդ դդ.
- 3) 11- 17-րդ դդ.
- 4) 14 – 17-րդ դդ.

13. Արևմտահայերենում սահմանական ներկան կազմվում է.

- 1) ած մասնիկով
- 2) ում մասնիկով
- 3) կը մասնիկով
- 4) կու մասնիկով

14. Նշվածներից որո՞նք են սխալ:

- 1) Եղիշեն ստեղծագործել է գրաբարով:
- 2) Կորյունը ստեղծագործել է միջին հայերենով:
- 3) Սայաթ - Նովան ստեղծագործել է Թիֆլիսի բարբառով:
- 4) Վարդան Այգեկցին ստեղծագործել է աշխարհաբարով:
- 5) Հ. Պարոնյանը ստեղծագործել է արևմտահայերենով:

15. Խոսողների քանակով աշխարհի 2000 լեզուների մեջ ո՞ր տեղն է գրավում հայերենը:

- 1) 99-րդ
- 2) 963-րդ
- 3) 38-րդ
- 4) 452-րդ

16. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ՀԱՅ, ի, գ. 1. Ալյուրից թխած ամենօրյա ուտելիք: 2. Հացահատիկ (ցորեն, զարի): 3. Հացահատիկի արտեր: ..... 8. փիսր. Ապրուստ, ապրուստի միջոց: .....  
-Հաց զցել՝ դնել-սեղան պատրաստել:

- 1) ստուգաբանական
- 2) ուղղագրական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

17. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

ԵՐԿԱՆ (սեռ. ի, յետնաբար ի, ի-ա հլ.) «զաղացք, զաղացքի բար» ՍԳԲ., Կոչ., որից՝ երկանաբար Դոկ. Ժե 2 .....  
=Բնիկ հայ բար հնիս. grawana-ձնից, որի մեջ -awa- տալով ա՝ ձևացրել է հլ. \*կրան->երկան. ....  
Մառ, զնդ. asman «քար» բառի հետ, ճիշտ ինչպես պր. asma=hj. երկին ..... «

- 1) ստուգաբանական
- 2) թարգմանական
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

18. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

*ՀԵՐԿԵԼ, Ար. (զյուղտնտ.) Ակոսել, Վարել, ցելել, (հզվ.) արորել, գութանել, (հնց.) ձլել, հերկագործել, (բրբ.) փեշխել, գութնել.....*

- 1) դարձվածաբանական
- 2) բարբառային
- 3) հոմանիշների
- 4) բացատրական

19. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

*ԱԶՔԵՐԸ ԼԱՅՆ ԲԱՆԱԿ ԼԱՅՆ ԲԱՅ ԱՆԵԼ,- 1. Մի անակնկալ բանի վրա զարմանալ, ապշել: Ոչինչ չհասկանալով՝ նա նա աչքերը լայն բացած նայեց նախագահին: 2. Լավ իմանալ, հասկանալ բանի էությունը: Մի կորացած աչքերդ լայն բաց արա: 3. Ուշադիր հետևել: Աչքերդ լայն բաց, որ ամեն բան տեսնես:*

- 1) հոմանիշների
- 2) դարձվածաբանական
- 3) բարբառային
- 4) բացատրական

20. Հետևյալ բառարաններից որի՞ բնույթին է համապատասխանում տրված բառահոդվածը (բառահոդվածը բերվում է կրճատումներով):

*Լ ՃԵՐ, բնական ջրավազաններ ցամաքի խոր մասերում (գոզավորություններում): Գոյանում են ոելինֆաստազացման տարրեր, երբեմն՝ մի բանի պրոցեսների հետևամբով: Հաստ ծագման լիմում են տեկտոնական (Վաս, Գայլասու), հրաբխային (Աժդահակ, Արմաղան), արգելափակման (Ակնա, Փարվանա). .... ....: Երկրագնդի վրա L. զբաղեցնում են ցամաքի 1, 8%-ը:*

- 1) ստուգաբանական
- 2) դարձվածաբանական
- 3) հանրագիտական
- 4) բացատրական

**ԳԼՈՒԽ VII****ՊՆԴՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆՉ****1. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Բառասկզբի *ու, ի, է* ձայնավորները մի քանի բառերում հնչյունափոխում են *ը-ի*:  
Եթե գաղտնավանկով վերջացող բառը աճում է, ապա գաղտնավանկի *ը-ն* պարտադիր ընկնում է:
- 2) Սղումը հնչյունափոխության տեսակ չէ:
- 3) Փակ վանկի *ու* ձայնավոր հնչյունը կարող է սղվել, դառնալ *վ/կամ էլ ը:*
- 4) Յու երկինչյունը կարող է ենթարկվել ընդամենը երկու հնչյունափոխության՝ դառնալ *ե* կամ գաղտնավանկի *ը:*
- 5) Գրական հայերենում հնչյունափոխության կարող են ենթարկվել բոլոր ձայնավորները և *ույ, յու, այ, յա* երկինչյունները:

**2. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հապավումը բառակազմության եղանակ է:
- 2) Նույն բառի մեջ երկու ածանց չեն կարող իրար կողք գտնվել:
- 3) Արմատների նման կարող են հնչյունափոխվել նաև նախածանցներն ու վերջածանցները:
- 4) Վերջածանցների թվին են պատկանում *եր, ներ, իկ, այք, ք* հոգնակերտները:
- 5) Ցանկացած բայ կարող է ստանալ *չ* նախածանց:
- 6) Բայական ածանցները միջածանցներ են:

**3. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենում կան *-ու, -ե, -ո* վերջածանցներ և *ց-, տ-*, *չ-* նախածանցներ:
- 2) Հայերենում կան *ամ-*, *ի-* նախածանցներ, ինչպես նաև *-ամ, -ի* վերջածանցներ:
- 3) *Պար, սոսոր, գույն, առ, տար, գին, տրամ, գեր* բաղադրիչները և ածանցներ են, և արմատներ:
- 4) *Չ-, տ-, ապ-* նախածանցները, ավելանալով ցանկացած բառի, նրան հաղորդում են ժխտական իմաստ:
- 5) Ածանցը վերջավորությունից տարբերվում է նրանով, որ ածանցով նոր բառ է կազմվում, իսկ վերջավորությամբ՝ *ոչ*:
- 6) Հոգնակերտ որոշ մասնիկներ և ածանցներ ձևով նույն են, այսինքն՝ համանուններ են:

**4. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենը ունի տասը խոսքի մաս, որոնցից նյութական իմաստ են արտահայտում միայն գոյականը, ածականը, թվականը, դերանունը և բայը:
- 2) Կապերը և շաղկապները արտահայտում են հարաբերություններ և նախադասության անդամ մեծ մասը չեն դառնում:
- 3) Եղանակավորող բառերը /վերաբերականներ/ արտահայտում են դատողական վերաբերմունք, իսկ ձայնարկությունները՝ զգացական:
- 4) Հայերենում դեմքի կարգը բնորոշ է բայերին և դերանուններին, իսկ եղանակի կարգը՝ եղանակավորող բառերին և բայերին:
- 5) Կան բառեր, որոնց խոսքիմասային պատկանելությունը նախադասությունից դուրս որոշելն անհնար է:
- 6) Որոշ խոսքի մասեր, ինչպես՝ գոյականը, ածականը, թվականը կարող են հոդ ստանալ, կիրառվել փոխանվանաբար:

**5. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Գոյականները, ինչպես նաև փոխանվանաբար գործածվող ածականները կարող են հոլովել արտաքին և ներքին հոլովումներով:
- 2) Բացառական հոլովը կազմվում է *ից կամ ուց վերջավորություններով, ներգոյականը՝ ում վերջավորությամբ կամ բառի սեռական հոլովածն զումարած մեջ կապ կաղապարով:*
- 3) Հարակատար, ենթակայական և անորոշ դերբայները փոխանվանաբար կիրառվելիս հոլովում են *ի արտաքին հոլովմամբ:*
- 4) Հոգնակիով դրված բառի՝ այս կամ այն հոլովմանը պատկանելը որոշելու համար բառը անհրաժեշտ է դարձնել եզակի:
- 5) Ժամանականից բառերի մի մասը ենթարկվում է *վա արտաքին հոլովման, իսկ ում, ուրյուն ածանցներով վերջացող բառերը հոլովում են ամ արտաքին հոլովմամբ:*
- 6) Բացառական հոլովով դրվում են ներգործող, միջոցի անուղղակի խնդիրները, պատճառի, իհմունքի պարագաները, գոյական որոշիչը և այլն:

**6. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենի բոլոր գոյականները հոլովում են կամ արտաքին *ի, ու, ամ, վա, ոջ, ց, կամ էլ ներքին ա, ո հոլովումներով:*
- 2) Հոլովի կարգը բնորոշ է միայն գոյականներին, իսկ խոնարհումը՝ բայերին:
- 3) Գրական հայերենում գոյականի բոլոր հոլովները կարող են որոշիչ հոդ ստանալ:
- 4) Գործիական հոլովով դրվում են ներգործող, միջոցի անուղղակի խնդիրները, իհմունքի պարագան և այլն:
- 5) Կան գոյականներ, որոնք՝ որպես հասարակ անուն, հոլովում են մի հոլովմամբ, իսկ որպես հատուկ՝ մեկ այլ հոլովմամբ:
- 6) *Ի հոլովումը հայերենի ընդհանրական հոլովումն է, որի շրջանակները ընդլայնվում են նաև այն բանի հաշվին, որ այլ հոլովումների պատկանող բառերը ևս կարող են հոլովել ի հոլովմամբ:*

**7. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Բազմավանկ բոլոր բառերը հոգնակի թիվը կազմում են *–մեր հոգնակերտով:*
- 2) Բոլոր գոյականներին բնորոշ է թվի քերականական կարգը /ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի/, և հոգնակին կազմում են *եր, մեր, իկ և այլ մասնիկներով:*
- 3) Միավանկ բոլոր գոյականները հոգնակին կազմում են *եր հոգնակերտով, բացառություն են կազմում միայն գրաբարյան բաղաձայնահաջորդ և վերջնահնչյուն ունեցող բառերը:*
- 4) Գաղտնավանկով վերջացող երկանկան գոյականները /այսպես կոչված՝ մեկուկեսվանկանիներ/ հոգնակին կազմում են *եր հոգնակերտով, մի շարք գոյականներ էլ՝ անք, ենք, ոնք, ունք ածանցներով:*
- 5) Եթե գոյականը *մեր-ով* է վերջանում, ուրեմն այն պարտադիր դրված է հոգնակի թվով:
- 6) Թվի քերականական կարգ ունեն գոյականը, ածականը, դերանունը, բայը:

**8. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Բայի եղանակաժամանակային ձևերը թվով տասնչորսն են:
- 2) Բայի դիմավոր ձևերից բաղադրյալ են միայն վեցը:
- 3) Սահմանական եղանակն ունի 5 անցյալ, 1 ապանի և 1 ներկա ժամանակաձևեր:
- 4) *Մ, ս, -զրո, նք, ք, մ վերջավորություններ ստանում են բոլոր կանոնավոր բայերը լղձական ապանիում:*
- 5) Անցյալ կատարյալում *ա, ար, ավ, անք, աք, ամ* վերջավորություններ ստանում են միայն *մ, չ* սոսկածանց ունեցող բայերը:
- 6) Բազմապատկանական բայերը իհմնականում խոնարիկում են և խոնարիման պարզ բայերի օրինաչափություններով:

**9. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Բոլոր սուկածանցները ընկնում են անցյալ կատարյալ ժամանակում, վաղակատարում, հարակատարում և հրամայականում:
- 2) Եխոնարհման բոլոր, այսպիսի հրամայականում ստանում են իր վերջավորություն:
- 3) Եթե բայց ունի պատճառական կամ կրավորական ածանց, ապա պատկանում է եխոնարհման:
- 4) Եխոնարհման բոլոր բայերի անորոշ և վաղակատար դերբայները կազմում են քերականական համանուներ:
- 5) Հայերենի բոլոր բայերը անկատար դերբայ կազմում են ում վերջավորությամբ:
- 6) Ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների բոլոր ժամանակաձևերը պարզ դիմավոր են:

**10. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենի անկախ դերբայներն են անորոշը, ենթակայականը, հարակատարը և ժխտականը:
- 2) Բոլոր կախյալ դերբայները /ձևաբայերը/ օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հետ միասին կազմում են սահմանական եղանակի բաղադրյալ ժամանակները:
- 3) Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին՝ մասնիկ հավելելով:
- 4) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմվում է 2 տիպի վերջավորություններով՝ կախված այն բանից, թե բայը ինչ խոնարհման է պատկանում:
- 5) Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս ապառնի ժամանակ և կազմվում են եղակիում՝ ի՛, ա՛, ո՛, իոզնակիում ե՛ք վերջավորությունների միջոցով:
- 6) Եխոնարհման պարզ բայերը սահմանական եղանակի 2 բաղադրյալ ժամանակաձևեր կազմում են անորոշ դերբայի և օժանդակ բայի ներկա ու անցյալ ձևերի միջոցով:

**11. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենի դերբայներից երեքը կարող են կատարել որոշչի պաշտոն:
- 2) Հայերենի դերբայներից երեքը կարող են կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
- 3) Հայերենի դերբայներից մեկը միայն ժամանակի պարագայի պաշտոնով է գործածվում:
- 4) Հայերենի դերբայներից երկուսը կարող են կատարել ստորոգելիի պաշտոն:
- 5) Հայերենի դերբայներից միայն երեքն են կազմում բաղադրյալ դիմավոր ձևեր:
- 6) Հայերենի բոլոր բայերն ունեն դերբայական յոթ ձևեր:

**12. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Հայերենում բոլոր բայերը, առանց բացառության, ունենում են ել կամ այլ վերջավորությամբ անորոշ դերքայ:
- 2) Անորոշ դերքայը հոլովկում է ու արտաքին հոլովմամբ և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի հետ բաղադրում սահմանական եղանակի 7 ժամանակներից երկուսը:
- 3) Բոլոր անկախ դերքայները նախադասության մեջ կարող են հանդես գալ որոշչի շարահյուսական պաշտոնով:
- 4) Անորոշ դերքայը բացառականով դրվելիս կարող է նախադասության մեջ հանդես գալ ժամանակի, պատճառի, հիմունքի, նպատակի պարագաների շարահյուսական պաշտոններով:
- 5) Անկանոն բոլոր բայերը անկանոնություն դրսուրում են թե՛ անցյալ կատարյալում, թե՛ հրամայականում:
- 6) Անորոշ, ենթակայական, հարակատար դերքայները կարող են կիրառվել որպես ստորոգելի:

**13. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Պատճառական բոլոր բայերը գերազանցապես ներգործական սեռի են:
- 2) Կրավորական ածանց ունեցող բայերը կարող են լինել կրավորական կամ չեզոք սեռի:
- 3) Չ սուկածանց ունեցող բայերի մի մասը չեզոք սեռի է, մյուսը՝ ներգործական:
- 4) Ներգործող անուղղակի խնդիր ստանում են կրավորական բայերը, իսկ հանգման անուղղակի խնդիր՝ ներգործականները:
- 5) Անջատման անուղղակի խնդիր ստանում են միայն չեզոք և ներգործական բայերը:
- 6) Այս խոնարհման բոլոր կանոնավոր բայերի եզակի հրամայականը կազմվում է այլ վերջավորությամբ, իսկ հոգնակին՝ եք:

**14. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Կրավորական, բազմապատկական և պատճառական բայերի անցյալ կատարյալը կազմվում է 2 տիպի վերջավորություններով:
- 2) Այս խոնարհման բոլոր կանոնավոր բայերի ըլքական ապառնի ժամանակի եզակի երրորդ դեմքն ու եզակի հրամայականը ունեն նույն ձևը:
- 3) Ն, չ սուկածանցներն ընկնում են անցյալ կատարյալում, վաղակատարում, ենթակայականում և հարակատարում:
- 4) Պատճառական բայերի եզակի հրամայականը կազմվում է ո՛, իսկ հոգնակին՝ եք վերջավորությամբ:
- 5) Հարակատար և ենթակայական դերքայները, օժանդակ բային միանալով, կարող են դառնալ բաղադրյալ ստորոգյալ:
- 6) Բազմապատկական բայերը կազմվում են բազմապատկական ածանցներով կամ բայարմատի կրկնությամբ, իսկ պատճառական բայերը՝ միայն պատճառական ածանց ստանալով:

**15. Քննողել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) **Գալ, տալ, լալ բայերը անկատար դերբայ կազմելիս դրսերում են անկանոնոթյուն, իսկ ուտել, լինել, գնալ, դառնալ բայերը անցյալ կատարյալ, վաղակատար, հրամայական կազմում են արմատի փոփոխությամբ:**
- 2) **Պարզ են այն բայերը, որոնց կազմում չկա որևէ բայական կամ այլ ածանց:**
- 3) **Հարադրավոր և գուգադրական բայերի առաջին բաղադրիչը մնում է անփոփոխ:**
- 4) **Կրավորական սեռի բայերն ունենում են ներգործող անուղղակի խնդիր, որն արտահայտվում է միայն **սեռական հոլով գումարած կռղմից կապ** կառույցով, ինչպես նաև բացառական հոլովով:**
- 5) **Որոշ բայերի հարակատար, համակատար և ենթակայական դերբայները դարձել են գոյականներ:**
- 6) **Ենթակայական, հարակատար, անորոշ դերբայները կարող են գործածվել գոյականաբար, հոլովվել ի հոլովմամբ և ունենալ գոյականին բնորոշ շարահյուսական պաշտոններ:**

**16. Քննողել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) **Բաղադրյալ դիմավոր ժամանակածեր ունի միայն սահմանական եղանակը:**
- 2) **Հայերենի բոլոր բայերը անխտիր կարող են կազմել հարակատար, համակատար, անորոշ և ենթակայական դերբայներ:**
- 3) **Անկանոն բայերը խոնարհվելիս բոլոր ձևերում դրսերում են անկանոնոթյուններ:**
- 4) **Կախյալ դերբայները /ձևաբայեր/ օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հետ կազմում են սահմանական և ենթադրական եղանակների համապատասխան ժամանակածերը:**
- 5) **Տալ բայի հարադրությամբ կազմված պատճառական բայերը խոնարհվելիս առաջին բաղադրիչը պահում են անփոփոխ։ Խոնարհվում է միայն **տալ բայը**:**
- 6) **Պատճառական, սոսկական և կրավորական ածանցներ ստանալիս բայերը դառնում են և խոնարհման:**

**17. Քննողել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) **Եթե բայը կազմված է արմատի կրկնությամբ, ուրեմն բազմապատկական է:**
- 2) **Եթե բայն ունի **տալ բաղադրիչը**, ապա պատճառական է:**
- 3) **Բայի կազմում գտնվող ցանկացած ածանց բայածանց է:**
- 4) **Բոլոր բայերը կարող են ստանալ չ նախածանց:**
- 5) **Բայական ածանցները միջածանցներ են:**
- 6) **Ան և ան սոսկածանց ունեցող բայերը **առ խոնարհման են**:**

**18. Քննողել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) **Կան բայեր, որոնց անկատար և համակատար դերբայները համանուններ են:**
- 2) **Փախչել, բռչել, ուռչել, սառչել, դիպչել, կորչել, հանգչել, կառչել, կպչել բայերում առկա է չ սոսկածանց:**
- 3) **Ոչ բոլոր սոսկածանցներն են ընկնում անցյալ կատարյալ ժամանակում:**
- 4) **Ա խոնարհման բոլոր բայերը ըղձական ապահնի եղանակի երրորդ դեմքում և ժխտական դերբայում ունենում են նույն ձևը:**
- 5) **Դիմավոր և անդեմ բայերին բնորոշ են եղանակի, ժամանակի, դեմքի, թվի, ինչպես նաև սեռի քերականական կարգերը:**
- 6) **Բոլոր եղանակների բայածները ունեն 3 դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ:**

**19. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Դերանվան բոլոր տեսակներով (բացի փոխադարձից) արտահայտված ենթակա ունեցող նախադասության ստորոգյալը կարող է լինել թե՛ դրական, թե՛ ժխտական խոնարհման:
- 2) Բուն բացահայտչի և բացահայտյալի շարադասությունը փոխելիս նրանց պաշտոնները չեն փոխվում:
- 3) Նախադասության ենթական ցանկացած խոսքի մասով արտահայտված լինելու դեպքում կարող է ստանալ որոշիչ լրացում:
- 4) Ենթական կարող է արտահայտվել նաև բայով:
- 5) Ենթական նախադասության գլխավոր անդամ է, և առանց նրա նախադասություն լինել չի կարող, եթե չհաշվենք զեղչման դեպքերը:
- 6) Ենթական և ստորոգյալը ունենում են նաև դիմային համաձայնություն:

**20. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Որոշիչը, հատկացուցիչը և բուն բացահայտիչը կարող են դրվել իրենց լրացյալից թե՛ առաջ, թե՛ հետո:
- 2) Ի տարբերություն կախյալ դերբայների /ձևաբայերի/ անկախ բոլոր դերբայները նախադասության մեջ կարող են կատարել որոշիչ շարահյուսական պաշտոն:
- 3) Որոշիչն արտահայտվում է ածականով, թվականով, գոյականով, դերանվամբ, կապական կառույցով, բառակապակցությամբ և այլն:
- 4) Հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով, լինում է տրոհվող և չտրոհվող:
- 5) Բուն բացահայտիչն ու բացահայտյալը կապակցվում են համաձայնությամբ, որը սովորաբար լինում է թվով, դեմքով, սեռով ու հոլովով:
- 6) Նախադաս և հետադաս դիրքերում որոշիչ դերբայական դարձվածը անջատվում է բութով:

**21. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Բացահայտիչը բացահայտյալից անջատվում է բութով, իսկ բացահայտիչից հետո միշտ ստորակետ է դրվում:
- 2) Նախադաս և հետադաս նպատակի պարագաները նախադասության մյուս անդամներից անջատվում են բութով:
- 3) Բարդ համադասական նախադասության համադաս նախադասությունները իրարից կարող են անջատվել ստորակետով, միջակետով կամ փակագծով:
- 4) Հեռացած հատկացուցչի վրա բութ է դրվում, եթե նրա և հատկացյալի միջև ընկել է գոյական, ածական կամ դերանուն խոսքի մասերից որևէ մեկը:
- 5) Եղանակավորող բառերը և ձայնարկությունները նախադասության մյուս անդամներից միշտ անջատվում են ստորակետով:
- 6) Եթե հետադաս թվարկվող ենթակաները անորոշ առումով են, ապա դրանցից առաջ դրվում է բութ:

**22. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Համադասական բոլոր շաղկապները կարող են կապակցել նախադասության համադասանդամներ:
- 2) *Ի հեծուկս, հանձին, փոխանակ, փոխարեն, զերդ կապերը նախադրություններ են, իսկ զատ, հանդերձ, դիմաց կապերը՝ հետադրություններ:*
- 3) Որոշ դեպքերում նախադասությունից դուրս անհնար է որոշել, թե տվյալ բառը շաղկա՞պները կապակցված է կամ այլ դեպքերում:
- 4) Կրկնադիր և զուգադիր շաղկապները լինում են ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական:
- 5) Երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապվում է ստորադասական շաղկապներով կամ հարաբերական դերանուններով, որոնցից մի քանիսի գեղշման ժամանակ բութ է դրվում:
- 6) Որոշ կապեր առաջացել են գոյականներից, ածականներից, դերբայններից՝ նրանց իմաստի մթագնման հետևանքով:

**23. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Դերանունները մատնանշում են առարկա, առարկայի հատկանիշ կամ հատկանշի հատկանիշ չտարբերակված կերպով, և նրանց բոլորին հատուկ է հոլովի կարգը:
- 2) Դերանվան ութ տեսակներն ել նախադասության մեջ կարող են հանդես գալ ենթակայի շարահյուսական պաշտոնով:
- 3) Հարաբերական դերանունները հարցականներից տարբերվում են նրանով, որ դառնում են նախադասության անդամ, ինչպես նաև երկրորդական նախադասությունը կապում են գլխավորին:
- 4) Դերանվանական հոլովման պատկանող դերանունների բոլոր հոլովաձները տարբերվում են գոյականի համապատասխան հոլովաձներից թե՛ հիմքով, թե՛ իրենց կազմությամբ:
- 5) *Ես, դու, նա, մենք, դուք, նրանք, ինքը, իրենք անձնական դերանունները հոլովվում են գոյականներից տարբեր՝ դերանվանական հոլովմամբ:*
- 6) Ցուցական դերանուններից շատերի կազմության մեջ առկա են այս, այդ, այն, պես, քան, ինչ, չափ, տեղ արմատները:

**24. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Դասական թվականները ցույց են տալիս առարկայի թվային կարգ և միշտ կազմվում են քանակական թվականներից երրորդ ածանցով:
- 2) Հարյուրից բարձր բոլոր թվականները կազմությամբ բարդ են:
- 3) Թվականը նախադասության մեջ կարող է հանդես գալ որոշչի շարահյուսական պաշտոնով:
- 4) Դասական բոլոր թվականները կազմությամբ ածանցավոր են, իսկ կոտորակայինները՝ բարդանցավոր:
- 5) Հայերենի այբուբենի բոլոր տառերն ունեն թվային արժեք և կարող են փոխարինել, այսպես կոչված, արաբական թվանշաններին:
- 6) Բաշխական թվականները կամ ածանցավոր են, կամ կրկնավոր բարդություններ, իսկ քանակական թվականներից բոլոր տասնյակները՝ միայն բարդ բառեր:

**25. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Ածականները լինում են 2 տեսակ՝ որակական և հարաբերական: Որակական բոլոր ածականներին բնորոշ է համեմատության աստիճաններ ստանալը:
- 2) Ածականը չթեքվող խոսքի մաս է, սակայն, փոխանվանաբար կիրառվելով, կարող է դառնալ ենթակա, խնդիր, պարզ ստորոգյալ և այլն:
- 3) Որոշ գոյականներ կրկնավոր բարդություն դառնալիս վերածվում են ածական խոսքի մասի:
- 4) Ածականը ցույց է տալիս առարկայի հատկանիշ և դառնում է միայն գոյականական անդամի լրացում:
- 5) **Գոյյն** բաղադրիչով վերջացող բոլոր բառերը որակական ածականի գերադրական աստիճան են:
- 6) Որակական և հարաբերական բոլոր ածականները, ըստ կազմության, կարող են լինել պարզ, ածանցավոր, բարդ և բարդածանցավոր:

**26. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

- 1) Ստացական հոդերը փոխարինում են անձնական դերանվան սեռական հոլովին:
- 2) Արդի հայերենում ցուցական հոդերը փոխարինում են ցուցական *այս*, *այդ* դերանուններին:
- 3) Հայերենում *ս, դ, մ /թ/* հոդեր կարող են ստանալ միայն գոյականները և դերանունները:
- 4) Ստացական հոդ ունեցող գոյականը որոշ դեպքերում կարող է ունենալ անձնական դերանվան սեռական հոլովածեով հատկացուցիչ:
- 5) Բաղաձայնով վերջացող բառերը միշտ ստանում են *թ* որոշիչ հոդ, որ չեն կարող ստանալ ձայնավորով վերջացող բառերը:
- 6) Հայերենի բոլոր գոյականները իրենց բոլոր ձևերով կարող են որոշյալ առումով հանդես գալ:

**27. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Ածականի գերադրական աստիճան կազմող երկու ածանցները կարող են հանդես գալ նաև որպես արմատներ:
2. Ածականակերտ ածանցներից մի քանիսը, ինչպես **-ական, -ային, -ենի, -յան**, կարող են բաղադրել նաև գոյականներ:
3. **-Գոյյն** վերջածանցով կարելի է կազմել որակական բոլոր ածականների գերադրական աստիճանը:
4. Արմատական ածականները կարող են լինել որակական և հարաբերական:
5. Որոշ ածականներ կարող են կիրառվել նաև որպես կապ:
6. Ածական որոշիչը կարող է ունենալ մակրայով արտահայտված լրացում:

**28. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Հայերենում առկայացման քերականական կարգն ունի երկու դրսեորում՝ որոշյալ և անորոշ առումներ:
2. Անորոշ առումով դրված գոյականները ցույց են տալիս խոստին և խոսակցին անձանոք անձ կամ առարկա:
3. Գոյականի անորոշ առումն արտահայտվում է միայն որոշյալ հոդերի բացակայությամբ:
4. Գոյականի որոշյալ առումն արտահայտվում է *թ* կամ *մ* հոդի միջոցով:
5. *Ն* հոդը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ, իսկ *թ* հոդը ձայնավորով սկսվող բառերից առաջ կարող է դառնալ *մ* կամ *մնալ* անփոփոխ:
6. *Ս, դ* հոդեր ունեցող գոյականները նույնպես որոշյալ առում ունեն:

**29. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Ծեշտի հետ կապված հնչյունափոխությունը տեղի է ունենում ձայնավորի՝ շեշտից գրկվելու կամ տեղափոխության պատճառով:
2. **Աև ու** ձայնավորները հազվադեպ են հնչյունափոխությունը:
3. **Է/ և ի** ձայնավորները կարող են սղվել:
4. Սղվում են ոչ միայն ձայնավորները, այլև երկինչյուն կազմող **J** բաղաձայնը:
5. **Յու** երկինչյունը կարող է հնչյունափոխությունը:
6. Բառավերջի **ի** ձայնավորը **-ակամ** ածանցից առաջ հնչյունափոխություն է **J**-ի:

**30. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Եթե բայի կազմության մեջ կա **-ուս** ածանցը, ապա այդ բայը պարտադիր բազմապատկական է:
2. Բազմապատկական բոլոր բայերը **ա** խոնարհման են:
3. Կրկնակի բաղաձայն ունեցող բնածայնական բայերը բազմապատկական են:
4. Ոչ բոլոր բայերից է հնարավոր կազմել բազմապատկականներ:
5. Արմատի կրկնությամբ կազմված ոչ բոլոր բայերն են բազմապատկական:
6. Ե'վ արմատի կրկնությամբ, և' ածանցներով կազմված բազմապատկական բայերից **Վ** ածանցով հնարավոր է կազմել կրավորականներ:

**31. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Սահմանական եղանակը ունի բայի բոլոր ժամանակները:
2. Սահմանական եղանակը ունի միայն բաղադրյալ ժամանակաձևեր:
3. Որոշ բայեր սահմանական եղանակի մի քանի ժամանակաձևեր չունեն:
4. Սահմանական եղանակի ոչ բոլոր ժամանակաձևերն են կազմվում դերբայներով:
5. Բայի ներկա ժամանակը հնարավոր է արտահայտել միայն սահմանական եղանակով:
6. Բոլոր կախյալ դերբայները կազմում են սահմանական եղանակի ժամանակաձևեր:

**32. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Դերբայները չունեն բայի քերականական կարգերից ոչ մեկը:
2. Հայերենի դերբայները հինգն են:
3. Հարակատար դերբայը ունի **ած** վերջավորություն:
4. Ոչ բոլոր դեպքերում է բայական արմատով **և ած-ով** կազմված բառը հարակատար դերբայ:
5. Հարակատար դերբայը կարող է հոլովել, հոդ ստանալ և հոգնակի կազմել:
6. **Ծառահատված տարածք** բառակապակցության մեջ ընդգծված բառը հարակատար դերբայ չէ:

**33. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Ներգոյական հոլովը կազմվում է **-ում** վերջավորությամբ կամ **մեջ** կապով:
2. Ոչ բոլոր բառերը ունեն ներգոյական հոլով:
3. Ներգոյական հոլովով կարող են դրվել տեղի, ժամանակի և նպատակի պարագաները:
4. Ներգործող, հաճաման, անշատման, վերաբերության անուղղակի խնդիրներից ոչ մեկը ներգոյական հոլովով չի դրվում:
5. **Ով** դերանունը ներգոյական հոլով չունի:
6. Ներգոյական հոլովով դրված գոյականը կարող է հանանալություն կազմել նոյնարմատ բայանուն գոյականի հետ:

**34. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Ուղիղ խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որը ներգործում է ենթակայի վրա:
2. Ուղիղ խնդիրը կարող է արտահայտվել միայն գոյականով:
3. Ուղիղ խնդիրը կարող է դրվել ուղղականաձև, տրականաձև և գործիական հոլովով:
4. Ուղիղ խնդիրը լրացում կարող են ունենալ միայն ներգործական սեռի բայերը:
5. Ուղիղ խնդիրը ունեցող նախադասությունը կրավորական կառույցի վերածելիս ուղիղ խնդիրը դառնում է ենթակա կամ ներգործող խնդիր:
6. Ուղիղ խնդիրը կարող է լինել նախադասության մեկ անդամ, ինչպես նաև արտահայտվել երկրորդական նախադասությամբ:

**35. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է կապվել գերադասին **որ, երբ, որտեղ** հարաբերականներով:
2. Որոշիչ ստորադաս նախադասությունը լրացնում է գերադասի գոյականով կամ դերանունով արտահայտված անդամին:
3. Որոշիչ ստորադաս նախադասությամբ բարդ նախադասության գերադաս բաղադրիչում կարող են լինել **այնքան, այնպիսի** հարաբերյալները:
4. Որոշիչ ստորադաս նախադասությունը կարող է լրացնել գերադասի ստորոգելիին:
5. Փոխակերպման դեպքում որոշիչ ստորադաս նախադասության ստորոգյալը վերածվում է անորոշ, հարակատար կամ համակատար դերբայների:
6. Որոշիչ ստորադաս նախադասության ստորոգյալը կարող է բաղադրյալ լինել:

**36. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Գոյականի հոգնակի թիվը ցույց է տալիս երկուսից ավելի առարկա:
2. Բազմավանկ բառերի հոգնակի թիվը կարող է կազմվել **եր** և **մեր** վերջավորություններով:
3. Որոշ միավանկ բառերի հոգնակին կազմվում է **մեր** վերջավորությամբ:
4. Անձ ցույց տվող հատուկ անունները հոգնակի թվում կարող են գրվել և' մեծատառով, և' փոքրատառով՝ նայած նրանց արտահայտած իմաստի:
5. Բառակզբում գաղտնավանկ ունեցող բառերի հոգնակին կազմվում է **եր** վերջավորությամբ:
6. Որոշ գոյականների հոգնակին կազմվում է **իկ, այք, անի** վերջավորություններով:

**37. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **Ու** հոլովման ենթարկվում են բոլոր այն բառերը, որոնք վերջանում են **ի-ով**:
2. **Ու** հոլովման ենթարկվող բառերի բացառականը կազմվում է **ից** և **ուց** վերջավորություններով:
3. **Ու** հոլովման է ենթարկվում բոլոր բայերի անորոշ դերբայը:
4. **Ու** հոլովման ենթարկվող բառերի մի մասում **ու** վերջավորությունը դրվում է բառակերջի **ի-ի** փոխարեն, որոշ բառերում ավելանում է բառի վերջին:
5. **Ու** հոլովման ենթարկվող **ի** վերջնահնչյուն ունեցող բառերի գործիական հոլովը կարող է կազմվել **ի-ի** անկումով կամ առանց **ի-ի** անկման:
6. **Ոչ որ** դերանունը ենթարկվում է **ու** հոլովման:

**38. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Ներգործական սեռի բայերը **զ** ածանց ստանալով դառնում են կրավորական:
2. Պատճառական բայերը հիմնականում ներգործական սեռի են:
3. **Չ** սովորական ունեցող բայերից ոչ մեկը ներգործական սեռի չէ:
4. Ներգործական սեռի բոլոր բայերը **ե** խոնարհման են:
5. Ներգործական սեռի բայերը ենթադրում են ուղիղ խնդիր լրացում:
6. Ներգործական սեռի բայերը հանգման անուղղակի խնդիր լրացում չեն կարող ունենալ:

**39. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **Առաջ, դեմ** բառերը կարող են հանդես գալ որպես կապ և որպես մակրայ:
2. **Որեն, ովհին** ածանցները կազմում են մակրայներ:
3. Մակրայները դառնում են ոչ միայն բայով, այլև ածականով արտահայտված անդամի լրացում:
4. **Երրևէ, երրևիցէ** բառերը մակրայներ չեն:
5. Մակրայը չի կարող դառնալ բաղադրյալ ստորոգյալի մաս:
6. Մակրայներով կարող են արտահայտվել ձևի, ժամանակի, տեղի, չափ ու քանակի և նպատակի պարագաները:

**40. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Եթե բայի մեջ առկա է **ացն, եցն** կամ **ցն** տառակապակցությունը, ապա այդ բայը պատճառական է:
2. **Հիշեցրեցի, բարձրացրեցի** բայաձները սխալ են կազմված:
3. **Տայլ** հարադրությամբ կազմված բայերը պատճառական են:
4. Պատճառական բայերի եզակի հրամայականը կազմվում է **ու** վերջավորությամբ:
5. Պատճառական բայերի և **ե** խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալ ժամանակաձները տարբեր կազմություններ ունեն:
6. **Խոմնիացնել** բայը ներգործական սեռի չէ:

**41. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **-Ություն** ածանցով կազմված բոլոր բառերը գոյականներ են:
2. **-Ական** ածանցով միևնույն արմատից կազմված բառը կարող է լինել և գոյական, և՝ ածական:
3. Երկու գոյականական արմատով կազմված բառը կարող է լինել ածական:
4. Միայն նախածանց ունեցող բառը գոյական չի կարող լինել:
5. **Ան-ը և նախածանց է, և վերջածանց:**
6. Գոյականական արմատներից **-իչ** ածանցով կազմվում են միայն ածականներ:

**42. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Հայերենում հոլովկում են գոյականները, առարկա ցույց տվող դերանունները, բոլոր անկախ դերբայները և փոխանվանաբար գործածված այլ խոսքի մասեր:
2. Կան առարկա ցույց տվող որոշ բառեր, որոնք չունեն ուղղական հոլով:
3. Ու հոլովման ենթարկվող բառերի բացառականը ձևով տարբերվում է այլ հոլովումների ենթարկվող բառերի բացառականից:
4. **Ան** արտաքին, **ա** ներքին և **ո** ներքին հոլովումների ենթարկվող բառերի գործիականը կարող է կազմվել և **ով,** **ևք**, **ևք** վերջավորություններով:
5. Բացառական, գործիական և ներգոյական հոլովները որոշիչ հոդ չեն ստանում:
6. Հայերենի բոլոր հոլովները ունեն համապատասխան վերջավորություններ:

**43. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Որոշ շաղկապներ կարող են լինել և՝ համադասական, և՝ ստորադասական:
2. **Թե** -ն միշտ ստորադասական շաղկապներ է:
3. Որոշ դեպքերում գուգաղիք շաղկապների բաղադրիչներից մեկը լինում է համադասական, մյուսը՝ ստորադասական:
4. Համադասական շաղկապները դառնում են նախադասության անդամ, ստորադասականները՝ ոչ:
5. **Այսինքն, ուրեմն, ուստի** բառերը համադասական շաղկապներ են:
6. **Քանի դեռ, մինչդեռ** բառերը շաղկապներ չեն:

**44. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Կան բառեր, որոնք և՛ կապ են, և՛ շաղկապ՝ նայած կիրառության:
2. Կապական բառերը կարող են լինել նաև մակրայ, ածական և այլն:
3. **Առիթ** բառը միայն կապ է:
4. **Առիթ և պատճառ** բառերը միայն գործիական հոլովով կարող են հանդես գալ որպես կապեր:
5. **Դորս, մերս** բառերը միայն մակրայներ են և չեն կարող հանդես գալ որպես կապեր:
6. Կապերը կարող են հանդես գալ բոլոր հոլովներով դրված գոյականների հետ:

**45. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Հրամայական եղանակը ունի միայն մեկ դեմք և մեկ ժամանակ:
2. Դրական հրամայականը պարզ ժամանակաձև է, արգելականը՝ բաղադրյալ:
3. Հայերենում կանոնավոր բայերի եզակի հրամայականը ունի երեք տիպի վերջավորություններ՝ **իի, ա, ու:**
4. Անկանոն բայերը հրամայական եղանակում անկանոնություն են դրսենորում:
5. Հարադրավոր բայերի արգելական հրամայականի **մի** մասնիկը դրվում է հարադիրի և բայի միջև:
6. Հոգնակի արգելական հրամայականը կազմվում է **միի** մասնիկով:

**46. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **Եմ, դառնալ, թվալ, երևալ** և այլ բայեր տարբեր խոսքի մասերի հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ:
2. Բաղադրյալ ստորոգյալ կարող է կազմվել գոյականով, ածականով, թվականով, դերանունով:
3. Բաղադրյալ ստորոգյալ կարող է կազմվել կախյալ դերբայներով(ձևաբայերով):
4. Բաղադրյալ ստորոգյալները բայի բաղադրյալ ժամանակաձևներ են:
5. **Արտիստը զլուխ էր տախի հանդիսատեսին:** Այս նախադասության մեջ բաղադրյալ ստորոգյալ կա:
6. **Դառնալ** բայը միշտ կազմում է բաղադրյալ ստորոգյալ:

**47. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Բառը կոչվում է ածանցավոր, եթե ունի միայն մեկ արմատ և մեկ ածանց:
2. Բառը կոչվում է բարդ, եթե ունի ունի մեկից ավելի արմատ և ոչ մի ածանց:
3. Եվ բարդ, և ածանցավոր բառերի կազմում կարող են լինել անկախ գործածություն շունեցող արմատներ:
4. Վերջածանցները միշտ լինում են բառի վերջում:
5. **Վերալիցքավորում** բառում կա 4 ածանց:
6. Բարդ բառերի բաղադրիչ արմատները կարող են կապակցվել հոդակապով, ինչպես նաև **և**-ով, **ու**-ով:

**48. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. Հոմանիշ բառերը սովորաբար պատկանում են միևնույն խոսքի մասին:
2. Հոմանշային շարք են կազմում ոչ միայն բառերը, այլև դարձվածքները:
3. Հոմանշային շարքեր ունենում են բոլոր խոսքի մասերը, բացի դերանուններից, կապերից և շաղկապներից:
4. **Մայրաքաղաք** և **քաղաքամայր** հոմանիշներն իրարից տարբերվում են ոչ թե իմաստով, այլ ոճականորեն:
5. Հոմանշային շարքի ելակետային բառը ամենաքիչ գործածություն ունեցողն է:
6. Հոմանշային շարքի բոլոր բառերը միշտ կարող են փոխարինել իրար:

**49. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **ԱՅ** հոլովման ենթարկվող բառերից մի քանիսը կարող է հոլոլովվել նաև **վա** հոլովմամբ:
2. **ԱՅ** հոլովման ենթարկվող բոլոր բառերը կարող են հոլոլովվել նաև **ի** հոլովմամբ:
3. **Յ** հոլովման ենթարկվող բառերը որևէ այլ հոլովմամբ չեն կարող հոլոլովվել:
4. Բառավերջի վանկում երկինչյուն ունեցող բոլոր բառերը ներքին թերման են:
5. Բոլոր գոյականների հոգնակինները պատկանում են **ի** հոլովման:
6. **ՈՉ** հոլովման ենթարկվող բառերի մի մասը կարող է հոլոլովվել նաև **ա՛՛** հոլովմամբ:

**50. Բնորոշել տրված վեց պնդումներից յուրաքանչյուրը ճիշտ է, սխալ է, չգիտեմ բառերով:**

1. **ՈՒ** հոլովման ենթարկվում են **ի**-ով վերջացող բառերը և **ուս** ածանցով գոյականները:
2. Հայերենի հոլովումները յոթն են:
3. Տարվա եղանակների բոլոր անունները ենթարկվում են և **աճ**, և **վա** հոլովումների:
4. **Տեր** վերջնաբաղադրիչով բոլոր բառերը ենթարկվում են **ոզ** հոլովման:
5. **Ո** ներքին հոլովման ենթարկվում են միայն **հայր**, **մայր**, **եղբայր** բառերը և այն բարդությունները, որոնց համար դրանք վերջնաբաղադրիչ են:
6. **Յ** հոլովման ենթարկվում են միայն **աճը**, **եճը**, **ոճը** ածանցով հավաքական գոյականները:

**ԳԼՈՒԽ VIII****ՈՇԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

- 1. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Խոնվում են մտքիս հանդեպ բանակները անհամար,  
Տրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,  
Ու զարդարար ոհմակները աղաղակով վայրենի,  
Ավարմներով, ավերմներով, խնջույքներով արյունի,  
Որ դարձրին քեզ մշտական սև ու սուզի մի հովիտ,  
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժախտ,  
Ողբի՝ հայրենիք,  
Որբի՝ հայրենիք:

- 2. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել (նշել համարը):**  
Ծանր նստել է քարափը ձորում՝  
Հյուրընկալ տերը մանկության ձորի:  
Ծանր նստել է և ամեն մեկին  
Իրեն արժանի պատիվն է տախս,  
Վայրի աղավնուն՝ հանճարը վայրի,  
Մոլորված ամային իր քիվն է տախս,  
Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:

- 1) համեմատություն
- 2) անձնավորում
- 3) մակդիր
- 4) հանգավորում
- 5) շրջադասություն

- 3. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Այնքան նման է ձյունի պատառին  
Լուսնեղջյուրը, որ լեռան ուսին է,  
Զյունի պատառն էլ լեռան կատարին  
Կարծես մայր մտնող կիսալուսին է:

- 4. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

...Ողջո՞ւն քեզ, Աստված, դողոդ էակին,  
Շողին, փղքին, ալվոյն ու վանկին,  
Դու որ ճակտիս վարդն ու բոցն աշերու  
Խըլեցիր թըրթումս շրթանց, թոիչն հոգվույս,  
Ամպ տրվիր աշացս, հեք տրվիր սրբտիս,  
Ըսիր՝ մահվան դրուն ինձ պիտի ժըպտիս,  
Անշուշտ, ինձ կյանք մը պահած ես ետքի,  
Կյանք մ'անհուն շողի, բույրի, աղոքի...

5. **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Բաղաձայնույթ, հանգավորում, շրջադասություն, փոխաբերություն:

Ծփում է ծովն ալեծածան,  
Ծրփում է սիրտը տրդի.  
Գոռում է ծովն ահեղաձայն,  
Նա կրովում է կատաղի...

6. **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Հանգավորում, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, մակդիր:

Կախվել է ժայռը անդունդի վրա  
Եվ դարեր այդպես կախված է մնում,  
Չըերի մեջ են ոսքերը նրա,  
Իսկ գլխին հոգնած ամպերն են քնում:

7. **Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել (նշել համարը):**  
...Եվ այդ քարեղեն երկնքի միջից  
Մասրի մի թուփ է գլխիվայր բուտել,  
Որ դալարել է երկնքի շնչից,  
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

- 1) հանգավորում
- 2) մակդիր
- 3) անձնավորում
- 4) չափազանցություն

8. **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Հանգավորում, բաղաձայնույթ, շրջադասություն, համեմատություն, փոխաբերություն, չափազանցություն:

Սոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին,  
Սոսին՝ իմ սեղ հարսի պես՝  
Լուսնի ոսկե կուժն ուսին...

9. **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն:

Պատուհանըս մատնահարեց ու անցավ  
հովն հերարձակ աշունին.  
Չարաճրձի ինչպես աղջիկ մը, ինչպես  
Խաղընկեր մը՝ դրբան ետին մոռցըված՝  
Պատուհանըս մատնահարեց ու անցավ,  
հովն հերարձակ աշունին:

- 10. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Ամպերով գոռաց երկինքը զարհուր,  
Ցավից անձրևը կարկուտի փոխվեց,  
Անեծք կայծակեց ու լացեց անհույս,  
Ու մնաց լուսինն աչքում երկնքի՝  
Որպես մի շիթը սառած արցունքի:

- 11. Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը չի գործածվել:**  
1. Փոխաբերություն, 2. մակդիր, 3. շրջադասություն, 4. չափազանցություն:

Բաց արավ ցերեկն իր աչքը պայծառ  
Աշխարհի վրա, Զավախրի վրա,  
Ավերակ բերդին, սև ամայի նման,  
Ծուխն ու թշնամին չորել են ահա:

- 12. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Փոխաբերություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Գիշերն ընկավ, բանձրացավ մութը,  
Ու նվաղեցին ձեները տրտում,  
Հոգնեցին, հանգան... Ծերուկ Դերեդը<sup>1</sup>  
Սգում էր մենակ խավար անդնդում:

- 13. Տրված քանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:**  
Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,  
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,  
Արնանման ծաղիկների ու վարդերի բույրը վառման  
Ու նախրյան աղջիկների հեղաճկուն պարն եմ սիրում:

- 14. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Փոխաբերություն, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Սարերի ծոցից սարեր են ծլում,  
Շարժվում են կարծես սարերը տեղից,  
Ծառն իրենից մեծ ստվեր է ծնում,  
Եվ օրը արդեն գնում է ձեռից:

- 15. Ընդգծվածներից քանի՞սն են մակդիր.**  
*Իոզնած* ամպեր, *կապոյտ* մրրիկ, *սև* կրակ, *խարտյաշ* քամի, *բռչող* կյանք, *գժված* քամի:

- 16. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Անձնավորում, մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում:

Կածանը պուտ-պուտ շապիկը հանել,  
Հանել թողել է  
Մարմանդի պուտ-պուտ քարերի վրա,  
Հևսսպառ եկել,  
Ծալվել, ծալծլվել, կծիկ է դառել  
Եվ արևկող է արել գետափի  
Չոլավոր կապույտ քարերի վրա:  
Մի բուռ է, բայց դուք, օտարուիհնե՛ր,  
Այդպես մի՛ նայեք, երկար է կարգին,  
Կծիկը բացես, քարափներն ի վեր,  
Ծայրը կհասնի մինչև Ծիր-կաթին:

- 17. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Մակդիր, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն, հանգավորում, անձնավորում:

Մասուրը շիկնեց բփին...  
Հավքերը երամ են կապում,  
Արտերի վրա հնձած՝  
Կոռունկի կանչեր են կաքում:  
Եղեգը խոլ սուլցով  
Չեության վախն է փարատում,  
Իսկ առուն՝ հրաժեշտի  
Իր տխուր գազելն է կարդում:

- 18. Տրված քանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:**  
Սարի հետևում շողերը մեռան,  
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.  
Տխուր երեկոն զարկել է վրան,  
Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

- 19. Տրված քանաստեղծական հատվածում քանի՞ մակդիր կա:**  
Խորհրդավոր է երկինքը երազուն,  
Վարսաթափ ուրի, դողդոջուն եղեգ.  
Արծաթ խոսքերով աղբյուրն է խոսում,  
- Սիրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:

- 20. Տրված հատվածում քանի՞ համեմատություն կա:**  
«Գիշերների պես սևարույր են և արևի պես ոսկի են նրանց մազերը, որ խուժել են նրանց լուսեղենն մեջքերի վրա, և փարաթվում են կարոտի պես նրանց նազելի պարանոցներով և արբեցուցիչ բուրմունքով ողկոյզ-ողկոյզ կախ են ընկնում ծյունապատ կրծքերի վրա, ինչպես սև ու ոսկի ամպերը Կուեն-Լուիի ձյուների վրա»:

- 21. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Մակդիր, շրջադասություն, փոխարերություն, չափազանցություն, համեմատություն, անձնավորում:

«Նրանց մազերի ողկույզներից աղամանդե և մարգարիտի հատիկների պես ջրերի կաթիլները ցայտում են վեր ու վար վազող շատրվանների հետ, և վարդաջրի գոհարները քրքջալով, ծիծաղելով ցատկում են հեռու, ընկնում Չինգիզ խանի ճակատի վրա և սառչում»:

- 22. Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել:**  
Մակդիր, փոխարերություն, շրջադասություն, չափազանցություն, համեմատություն:

«Հինավուրց բափառականի մոայլ շրթները նորից գալարվեցին, և արգահատանքի մի հայացք դաշույնի պես շողաց նրա աչքերում»:

- 23. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Խոսելով իր անձնական հույզերի, թախծի կամ ուրախության մասին՝ բանաստեղծն արտահայտում է այնպիսի տրամադրություններ, որոնք հասկանալի ու հարազատ են շատերին, կարող են արձագանք գտնել նրանց հոգում: Բանաստեղծի մեծությունը չափվում է նրանով, թե որքանով լայն է այն հանրությունը, որի ապրածն ու զգացածն է արտահայտում նա:

- 1) պաշտոնական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) հրապարակախոսական

- 24. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Հարգելի՝ պարոն Խաչատրյան, ԱՍՀ և Համաշխարհային բանկի հետ ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ համաձայնագրերում առկա՝ Կենտրոնական բանկին առնչվող միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկացնում ենք, որ Կենտրոնական բանկը հետևում է նշված միջոցառումների գրաֆիկին և սահմանված ժամկետներում կկատարի ստանձնած պարտավորությունները:

- 1) գեղարվեստական
- 2) պաշտոնական
- 3) գիտական
- 4) հրապարակախոսական

**25. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Երևանի պետական համալսարանի 90-ամյա պատմության մեջ արժանի տեղ է զբաղեցնում նաև մայր կրթօջախի հնագույն ամբիոններից մեկը՝ ԽՍՀՄ պատմության ամբիոնը:

Խորհրդային Հայաստանի լուսավորության ժողկումի հրամանով 1930-1931 թթ. ուսումնական տարում ԵՊՀ-ում անցկացված վերակազմավորման արդյունքում հիմնադրվեց Խորհրդային Միության ժողովուրդների պատմության ամբիոնը: Նրա կազմավորման նպատակը, անշուշտ, չէր սահմանափակվում զուտ պատմագիտական խնդիրներով ու ստանում էր քաղաքական նշանակություն: Խորաստեղծ ամբիոնի առջև անմիջապես խնդիր դրվեց լուսաբանել բազմազգ պետության մեջ ապրող ժողովուրդների պատմությունը, ջատագովել նրանց միջև բարեկամությունը, որը կազմում էր երկրի քաղաքական դեկավարության պաշտոնական քարոզության գլխավոր ուղղություններից մեկը:

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) պաշտոնական
- 4) հրապարակախոսական

**26. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Հրապարակախոսությունը գրավոր խոսքի մի տեսակ է, որի միջոցով հրապարակայնորեն (լրագրերով, հանդեսներով, երթեմն զրբերով) հանրությանը տեղեկացնում է հասարակական-քաղաքական, տնտեսական ու գիտամշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների մասին, քննարկվում, վերլուծվում, քննադատվում ու արմերվում են տվյալ ժամանակի հասարակական կյանքի կարևոր խնդիրներն ու երևոյթները:

- 1) հրապարակախոսական
- 2) գիտական
- 3) գեղարվեստական
- 4) պաշտոնական

**27. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:**

Հ. Թումանյանի «Անուշ» պոեմի մեջ ապրում և շնչում է հայ կուսական գյուղը՝ զատված դարաշրջանի սոցիալական հարաբերություններից, մի գյուղ, սակայն, որ հենց այդ վիճակում ընդհանուր եղբեր ունի հնի, մի որոշ չափով էլ գալիքի հետ:

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) պաշտոնական
- 4) հրապարակախոսական

**28. Գործառական ո՞ր ոճին են հատուկ տրված բառերը.**

Ճեն, ախպեր, գլուխ տանել, քուշ, պռոշ, գլխի ընկնել, ճութ, քուր, գել, քեֆ:

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) առօրյա-խոսակցական
- 4) հրապարակախոսական

**29. Գործառական ո՞ր ոճին են հասուկ.**

Խոսքի հանպատրաստից լինելը, անկաշկանդությունը, ոչ պաշտոնական բնույթը, խոսակիցների անմիջական մասնակցությունը հաղորդակցման գործընթացին:

- 1) գեղարվեստական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

**30. Բնութագրումներից որը գործառական ո՞ր ոճին է վերաբերում:**

1. Արտահայտում է անմիջական հարաբերություններ, ունի անբռնազբու, մտերմական երանգներ:
2. Ունի խոսքի կանոնակարգված շարադասություն, ավելի հաճախ ուղղակի բայերի փոխարեն կիրառվում են նրանց հարադրական ձևերը:
3. Նրան հասուկ է խոսքի արտահայտության ճշգրտությունը, տերմինների և մասնագիտական բառերի լայն գործածությունը:
4. Գործածվում է զանգվածային հաղորդակցության անհրաժեշտության դեպքում:
5. Լեզուն մշակված է, երբեմն հանդիպում են բարբառային, օտարարան և այլ ոճի տարրեր:
6. Նրանում կարող են գործածվել լեզվական բոլոր միջոցներն ու ոճական հնարանքները, որոնք բնորոշ են ոչ միայն լեզվի զարգացման տվյալ փուլին, այլև նախորդ փուլերին:

- |                      |                                 |
|----------------------|---------------------------------|
| ա. գիտական           | 1) 1-ա, 2-բ, 3-զ, 4-ե, 5-ե, 6-դ |
| բ. պաշտոնական        | 2) 1-զ, 2-բ, 3-ա, 4-դ, 5-ե, 6-ե |
| գ. առօրյա-խոսակցական | 3) 1-ա, 2-զ, 3-բ, 4-դ, 5-ե, 6-դ |
| դ. հրապարակախոսական  | 4) 1-դ, 2-ե, 3-զ, 4-ա, 5-ե, 6-բ |
| ե. գեղարվեստական     | 5) 1-զ, 2-բ, 3-ա, 4-ե, 5-ե, 6-դ |

**31. Գործառական ո՞ր ոճին են հասուկ.**

Խոսքի հակիրճությունը, շարադրանքի սեղմությունը, լեզվական միջոցների խնայողական գործածությունը:

- 1) գիտական
- 2) գեղարվեստական
- 3) առօրյա-խոսակցական
- 4) հրապարակախոսական

**32. Գործառական ո՞ր ոճին են հասուկ.**

Խոսքի ընդհատումը, գեղչումը, սեղմությունը, հարադիր բայերի ու դարձվածքների հաճախակի գործածությունը:

- 1) գեղարվեստական
- 2) առօրյա-խոսակցական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

**33. Պնդումներից քանի՞սն են ճիշտ:**

1. Գեղարվեստական գրականության լեզուն դեռևս գրական լեզու չէ:
2. Պատմաբառերի գործածությունը ավելի շատ բխում է անհրաժեշտությունից, անփոխարինելիությունից, քան ոճական որոշակի նպատակադրումից:
3. Նորաբանությունները գործածվում են միայն լեզվի զարգացման որոշակի փուլում:
4. Առօրյա-խոսակցական ոճը տվյալ լեզվի ոչ գրական գոյածն է:
5. Գեղարվեստական ոճում բացահայտվում են տվյալ լեզվի միայն գործուն շերտերը:

**ԳԼՈՒԽ IX****ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Ինչպիսի՞ վեպ է անվանել Խաչատոր Արովյանը իր «Վերք Հայաստանին»:
  - 1) Ժամանակակից
  - 2) ազգային
  - 3) պատմական
  - 4) լուսավորական
2. Խաչատոր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞նք են ճիշտ (նշել համարները):
  1. Վեպում կան չափած հատվածներ:
  2. Նրանով է սկսվում Խ. Արովյանի գրական ժառանգության հրատարակման պատմությունը:
  3. Վեպում կան ամենատարբեր խավերի մարդկանց կերպարներ, որոնք մարմնավորում են ժողովրդի կենցաղը, բարքերը, հույզերը, կրթերն ու մտորումները:
  4. Վեպում Արովյանը իդեալականացնում է նահապետական հայ գյուղը, ցույց տալիս ժողովրդի հազարամյա սովորույթների հմայքն ու գեղեցկությունը:
  5. Վեպի առաջին գլուխը սկսվում է նահապետական հայ գյուղի բարքերի ու կենցաղի նկարագրությամբ և ավարտվում քաջ Աղասու՝ պարսիկ սարդարի հարեմի համար Թագուհուն առևանգելու եկած ֆառաշներին պատուհասելու պատմությամբ:
  6. Սկզբում հեղինակը վեպը գրել է գրաբար, ինտ միայն վեպի լեզուն դարձրել է աշխարհաբար:
3. Խաչատոր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպում ինչպե՞ս է վարվում Աղասին Թագուհուն առևանգելու եկած ֆառաշների հետ:
  - 1) Երկուսի գլուխն է բոցնում, մեկի ուսը կտրում, մյուսի աղիքները թափում:
  - 2) Բոլորին հալածելով վոնդում է գյուղից:
  - 3) Բոլորին սպանում է:
  - 4) Ընդառաջ գալով սարդարի հրամանին՝ որոշում է ֆառաշների հետ Թագուհուն ու նրա մորը ուղեկցել Երևանի բերդ՝ սարդարի դուռը:
4. Խաչատոր Արովյանի «Վերք Հայաստանի» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.
 

«...Մեկ աշքը քոռ, դունչը ծուռը, Էնակս որ միրքի կես փայլը մնացել էր երեսի վրա ցից էլած, խճճված, կես փայլն էլ բողազին, չանին կպել, չորացել, էնքան խոսացել էր ու հարայ տվել»:

  - 1) տանուտեր Օհաննեսին
  - 2) գյուղացի Հարությունին
  - 3) զգիր Կոտանին
  - 4) Հասան Խանին

**5. Սեղբերված հատվածներից քանի՞սն են Խաչատոր Արովյանի «Վերը Հայաստանի» վեպի հերոս Աղասու Վերաբերում:**

1. «Տանուտերի տղեն էր, աղքատի ու նաշարի ընկեր»:
2. «Նրա սուրահի բոյը, նրա թոխ-թոխ աչքերը, նրա դալամով քաշած ունքերը, նրա աննման, գեղեցիկ պատկերը, նրա անուշ լեզուն, քաղցր ձենը, նրա լեն թիկունքը, բարձր ճակատը ու ոսկեթել ճալվերը մարդի խելք էին տանում»:
3. «Էս հասակը հասել էր, քսան տարին անց կացել, նա դեռ հորնընոր առաջին էնապես էր, ինչպես մեկ անմեղ զառը»:
4. «Չատ մոր աչք մնացել էր կարոտ, որ նրան իր փեսա շինի, նրա գլխովը պտիս գա: Զահել աղջկերքը, նրա ձենը կամ անունը լսելիս, ուզում էին, որ հոգիները տան»:
5. «Թուրքերը նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում: Չատ անգամ, կրիվ քցած վախտը, հենց նրա ձենն իմանում էին թե չէ, ճանձի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, զյում ըլում»:
6. **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Վայ էն ազգին, որ աշխարքում անտեր ա,  
Վայ էն երկրին, որ թշնամու գերի ա,  
Վայ էն խալխին, որ ինքն իր կյանքն, աշխարքը  
Չի պահպանի ու հարամու ծեռ կտա:

- 1) «Վերը Հայաստանի», Խաչատոր Արովյան
- 2) «Արարսի արտասուրը», Ռափայել Պատկանյան
- 3) «Սասնա ծոեր» («Սասունցի Դավիթ» համահավաք քնազիր)
- 4) «Հայրենի հողը», Ավետիք Բասհակյան

**7. Խաչատոր Արովյանի «Վերը Հայաստանի» վեպից ո՞ւմ խոսքն է ներկայացված տրված հատվածում:**

«Զաղաքը որ մտնում եմ, հենց իմանաս, թե աշխարք սով ա ընկել. Էլ ո՞չ խեր կա, ո՞չ բարաքյաք: Հացն ու ջուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ո՞ւմ դրու գնաս, ո՞ւմ ձեռդ դեմ անես: Բազի վախտ էլ տեսել եմ, որ դրաներումը կիտուկ-կիտուկ մանեթները, ոսկին ածած, ամեն մեկ փող համարելիս, էնապես գիտես, թե փողատիրոջ հոգին հետն ա լուրս գալիս, էնապես են սրբարթում իրանց խազինի վրա»:

